ԱՐՏԱՀԵՍ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Գունավոր երազներ



ԵՐԵՎԱՆ 2011

ՀՏԴ 891.981-8 Քալանթարյան
ԳՄԴ 84Հ
Ք 141

Գիրքը նվիրվում է Արտաշես Քալանթարյանի ծննդյան 80–ամյակին

Քալանթարյան Արտաշես
Ք 141 ԳՈՒՆԱՎՈՐ ԵՐԱԶՆԵՐ / Արտաշես Քալանթարյան.— Եր.: «Զանգակ–97», 2011.— 280 էջ:


Արտաշես Քալանթարյանը ծանոթ է հանրությանը որպես վիպասան, դրամատուրգ, երգիծաբան և հրապարակախոս: Նրան մեծ հռչակ բերեցին նաև հեռուստաբեմադրությունները և հատկապես Հայաստանում առաջին հեղինակային՝ «Իմ տունը քո տունն է» հաղորդաշարը: Սակայն ստեղծագործական գործունեության ընթացքում Արտաշես Քալանթարյանը նաև մի շարք պատմվածքներ, վիպակներ, դրամատիկ և նույնիսկ չափածո գործեր է ստեղծել մանուկների ու պատանիների համար, որոնք տպագրվել են ամսագրերում ու հանդեսներում, տեղ գտել դպրոցական դասագրքերում, հեռարձակվել և հրապարակվել առանձին գրքույկներով: Այս գիրքը առաջին փորձն է միավորել տարբեր տարիների տպագրված և անտիպ մանկական և պատանեկական ստեղծագործությունները:

ՀՏԴ 891.981-8 Քալանթարյան
ԳՄԴ 84Հ

ISBN 978–99941–1–940–0

© Քալանթարյան Արտաշես, 2011
© «Զանգակ–97» հրատ., 2011

ԻՆՉՈ՞Ւ



Տատն ասում է՝ լվացվի՛ր:
Լիլիթն ասում է՝ ինչո՞ւ:
— Որ երեսդ մաքրվի:
Լիլիթն ասում է՝ ինչո՞ւ:
— Որ սիրուն բալիկ դառնաս:
Լիլիթն ասում է՝ ինչո՞ւ:
— Որ լավ աղջիկ մեծանաս:
Լիլիթն ասում է՝ ինչո՞ւ:
Տատն արդեն բարկացավ՝
Մեկ էլ չասես դու ինչու,
Եվ Լիլիթը զարմացավ՝
Ինչո՞ւ չասեմ ես ինչու:





Սոնա Գասպարյան, 4 տ.

ԱՐՍԵՆ

Սիրուն Արսենի գլուխը շեկլիկ
Պատիժ է դարձել իր տիրոջ համար,
Մեկ ընկնում է ցած, խփվում է գետնին,
Մեկ էլ ցատկում է գնդակի նման։

Ինչ նետեն նրա գլխին է դիպչում,
Ուր գնա՝ քթից ելնում է ծուխը
Եվ լաց է լինում Արսենը՝ ինչո՞ւ,
Ի՞նչ մեղք է գործել իմ խեղճ գլուխը։

Մի տեղ քերծվում է, մի տեղ ընկնում փոս,
Մի տեղ ուռչում է փուչիկի նման
Եվ հառաչում է Արսենը անհույս,
Սաղավարտ է պետք իմ գլխի համար։

Այնժամ մայրիկը ասում է՝ Արսե՛ն,
Սաղավարտ պետք չէ, իմ սիրուն տղա,
Միայն թե այնտեղ, ուր ոտքեր են պետք,
Պարտադիր չէ, որ դու գլխով խաղաս…

ԱՐՏԱ՛Կ, ԿԱՏԱ՛Կ ԱՐԱ

Ես հինգ տարեկան եմ: Իմ անունն Արտակ է: Իմ կարծիքով՝ դա շատ գեղեցիկ անուն է: Բոլորը չունեն: Մեր շենքում, օրինակ՝ ընդամենը մեկ, երկու, երեք, ութ, տասնչորս Արտակ կա:

Դա շատ լավ է և շատ վատ է: Երբ որ մեկը պատշգամբից կանչում է.

— Արտա՛կ...

Մենք բոլորս թողնում ենք խաղը ու վերև ենք նայում:

Դա շատ վատ է:

Երբ որ Սամվելիկը տրորում է բակի կանաչը, դռնապան Մաթոս քեռին բարձր ձայնով ասում է.

— Խելո՛ք մնա, ա՛յ Արտակ:

Որովհետև ինքը դպրոց չի գնում և ուրիշ անուն չգիտի:

Իսկ մեր մայրիկներն էլ, հենց լսում են «Արտակ» անունը, մեզ վրա են բարկանում, իսկ Սամվելիկը ծիծաղում է:

Դա շատ վատ է:

Իսկ երբ ես Մաթոս քեռու մոռացած դույլից ջուր եմ շաղ տալիս գետնին, Մաթոս քեռին բարկացած բղավում է.

— Արտա՛կ... Հիմա ականջնե՛րդ կկտրեմ:

Եվ բոլոր Արտակների մայրիկները պատշգամբ են դուրս գալիս: Իսկ ես, ականջներս բռնած, վազում եմ

Արտակների մոտ, և նրանք էլ են ականջները բռնում: Եվ մենք բոլորս էլ բռնում ենք մեր ականջները:

— Ո՞վ էր,— հարցնում է մայրիկներից մեկը:

— Արտակն էր,— ներքևից վերև բղավում է Մաթոս քեռին:

— Ո՞ր Արտակը,— հարցնում է մի ուրիշ մայրիկ:

— Ես ի՞նչ իմանամ,— ուսերը թոթվում է Մաթոս քեռին,— բոլորն էլ Արտակ են:

Որովհետև ինքը դպրոց չի գնում:

Դա շատ լավ է:

ԻՄ ՄԱՅՐԻԿԸ

Իմ մայրիկը աշխարհի ամենալավ մայրիկն է և ամենախելոք մայրիկն է: Նա ամեն ինչ գիտի: Դա շատ զարմանալի է: Վաղը չէ, երեկ, օրինակ, ես մի ասեղ գտա ու սկսեցի քույրիկիս նման ասեղնագործել: Մայրիկս տեսավ ու ասաց.


— Ասեղի հետ խաղալ չի կարելի, ձեռքդ կծակի:

Ասաց թե չէ, մեկ էլ, ո՛ւհ, ասեղը մտավ ձեռքս: Մատիցս արյուն եկավ: Ես լաց եղա: Մայրիկս կապեց ձեռքս ու բարկացավ.

— Ես քեզ չասացի՞, որ կծակի:

Ես լաց չեղա ու մտածում էի, թե որքան իմաստուն է իմ մայրիկը, որտեղի՞ց իմացավ, որ ասեղը մատս կծակի:

Ամեն ինչ գիտի իմ մայրիկը: Երբ ես աթոռի վրա օրորվում եմ, մայրիկս ասում է.



Մարիամ Մանուկյան, 10 տ.

— Մի՛ օրորվիր, կընկնես:

Եվ, ճիշտ որ, ես ընկնում եմ:

Ամեն ինչ գիտի իմ մայրիկը, բայց գիտեք ինչ, մի հասարակ բան չգիտի: Առավոտյան ինձ տարավ լողասենյակ և ուզեց լվանալ իմ ձեռքերն ու երեսը: Ցուրտ էր, շատ ցուրտ: Ես չէի ուզում լվացվել և մայրիկիս ասացի.

— Լավ էլի՛, մայրի՛կ ջան, չլվացվեմ:

— Ինչպե՞ս կարելի է,— ասաց մայրիկը,— ինչպե՞ս կարելի է կեղտոտ ձեռքերով և թշիկներով նախաճաշել:

— Ըհը՛,— ասացի ես,— հո ձեռքերով չե՞մ ուտելու, գդալով եմ ուտելու: Հո թշերով չե՞մ ուտելու, բերանով եմ ուտելու:

Բայց մայրիկս չհասկացավ և ստիպելով լվաց իմ ձեռքերն ու երեսը:

Ըհը՛: Մայրիկս ամեն ինչ գիտի, բայց այդ մի հասարակ բանը չգիտի:

ԻՄ ՀԱՅՐԻԿԸ

Մայրիկս այդ մի հասարակ բանը չգիտի, բայց ես իմ մայրիկին բոլորից շատ եմ սիրում: Բայց մայրիկս չի հավատում: Ամեն անգամ հարցնում է.

— Դու ինձ սիրո՞ւմ ես, Արտա՛կ:

— Հա՛,— ասում եմ ես,— սիրում եմ, մայրի՛կ ջան:

— Ինչքա՞ն ես սիրում,— հարցնում է մայրիկը:

Ես ձեռքերս պարզում եմ՝ մեծ–մեծ ու ասում եմ.

— Ա՛յ, այսքան:

Բայց ես ի՞նչ անեմ: Ձեռքերս փոքր են: Մտածում–մտածում եմ, գնում եմ Ալիկի մոտ և մի բան եմ հարցնում: Ալիկը իմ ականջին թաքուն մի բան է ասում, և ես գալիս եմ, ասում եմ մայրիկիս.

— Տիզեերքի չափ:

Եվ մայրիկս ուրախ ծիծաղում է:

Հայրիկս էլ է ծիծաղում և ասում է.


— Ո՛չ թե տիզերքի, այլ՝ տիեզերքի:

— Լավ էլի,— ասում է մայրիկս,— թող սխալ ասի, հա՞: Այնքա՜ն եմ սիրում, երբ երեխաները սխալ են խոսում: Կմեծանա՝ կուղղի:

— Ո՛չ,— ասում է հայրիկս,— սխալ խոսելը լավ չէ:

Զարմանալի հայրիկ է իմ հայրիկը: Բոլորի սխալներն ուղղում է: Գնում նայում է Ալիկի տետրերին, ձեռքերը մեջքին է դնում ու ասում.

— Ամոթ, խայտառակություն, այս ինչպե՞ս ես գրում: Հը՞: Ո՞րն է քո «կ»–ն: Սա «կ»–ը՞ է, թե՞ «ն»–ը: Այս ի՞նչ տառեր են՝ ծուռտիկ–մուռտիկ, այլանդակ–մայլանդակ: Եթե ես քո դասատուների տեղը լինեի, «երկու» կնշանակեի քեզ, և ոչ թե «հինգ»: Ոնց որ հավը թաթանաքոտ կտուցով քջուջ անի: Ոնց որ հարբած ճանճը գլուխկոնծի տա:



Ալիկը կարմրում է, իսկ ես այդ ճանճի նման գլուխկոնծի եմ տալիս գորգի վրա: Ախր շատ ծիծաղելի բաներ է ասում իմ հայրիկը: Ես զգում եմ: Հետո գնում եմ, նայում եմ Ալիկի տետրերին ու կարդում եմ: Ես ձեզ չե՞մ ասել, որ արդեն կարդում եմ: Իհարկե: «Այբբենարանից» եմ սովորել: Կարդում եմ, բայց չեմ հասկանում:

— Իմ լա՛վ մայրիկ, սիրո՛ւն մայրիկ:

Մինչև վերջը կարդում եմ, սկիզբը մոռանում եմ: Բայց տառերը կարդում եմ: Իսկ, ըհը, հայրիկիս գրածից ոչ մի տառ չեմ կարողանում կարդալ: Խզբզում է: Ամբողջ երեկո նստում ու խզբզում է: Ես կանգնում եմ հայրիկիս աթոռի մոտ ու հարցնում եմ:

— Սա հայերե՞ն է:

— Այո՛,— ասում է հայրիկս:

Ես ուզում եմ մի բան ասել, բայց չեմ ասում: Ես ուզում եմ ասել, որ Ալիկը հայրիկից լավ է գրում, բայց չեմ ասում:

— Դու ինչ–որ բա՞ն ես ուզում ասել,— հարցնում է հայրիկը:

— Երբ հայրիկը հարցնում է, պետք է պատասխանել: Ես գիտեմ:

— Ոնց որ հարբած ճանճը գլուխկոնծի տա,— ասում եմ ես՝ մատով ցույց տալով հայրիկի գրածը:


Հայրիկս ծիծաղում է ու ասում.

— Ա՛յ թե ինչ: Իսկ դու իմացիր, որ երբ ես Ալիկի տարիքին էի, այսպես չէի գրում: Ես գրում էի գեղեցիկ, մաքուր, ուղիղ: Հասկացա՞ր:

Ես գլխով եմ անում և ոչինչ չեմ պատասխանում: Բայց ես մտածում եմ: Էլ ինչո՞ւ է հայրիկը բարկանում Ալիկի վրա, ուզում է, որ նա գեղեցիկ գրի, երբ գիտի, որ հետո՝ ավելի ուշ, միևնույն է, իր նման ծուռտիկ–մուռտիկ, այլանդակ–մայլանդակ է գրելու:

Եվ մտածում եմ, թե դասատուն ի՞նչ գնահատական է նշանակում իմ հայրիկին:

ԻՄ ՏՈՒՆԸ



Ես շատ եմ տխրում, երբ մայրիկը տանը չէ: Երբ մայրիկը տանը չէ, ես մենակ եմ: Քայլում եմ սենյակից սենյակ և բղավում եմ.

— Ես մենա՛կ եմ, ես մենա՛կ եմ:

— Մի՛ բղավիր, մի՛ խանգարիր:

Այդ ասում է հայրիկս: Ինչպես միշտ, նա նստած է իր գրասեղանի մոտ և խզբզում է:

Ես ծլկում եմ նրա սենյակից, միջանցք եմ գնում և բղավում.

— Ես մենա՛կ եմ: Մայրիկս ո՛ւր է: Ես մենա՛կ եմ:

— Արտա՛կ,— կանչում է հայրիկս:

Ես վազում ու գլուխս հայրիկի սենյակն եմ մտցնում:

— Արտա՛կ,— ասում է հայրիկս,— դու գիտե՞ս որ մայրիկը ծնողական ժողովի է գնացել: Ինչո՞ւ ես զուր կանչում: Գնա Ալիսային ու Ալիկին ասա, որ քեզ զբաղեցնեն:

Ես էլ հենց դա եմ ուզում: Վազում եմ մյուս սենյակը ու բղավում.

— Ալիսա՛, Ալի՛կ, ինձ զբաղեցրեք:

Ալիսան գրում է, իսկ Ալիկը՝ կարդում:

— Օ՛ֆ,— տնքում է Ալիկը,— դաս եմ սովորում:

— Էհ,— քիթը ծռում է Ալիսան,— դաս եմ սովորում:

— Բա ես ի՞նչ անեմ,— թնկթնկում եմ ես,— բա ես ի՞նչ անեմ:

Նորից միջանցք եմ դուրս գալիս ու ինչքան ուժ ունեմ, կանչում եմ.

— Մայրի՛կ, որտե՞ղ ես: Ես մենակ եմ: Ես մենակ եմ: Մայրի՛կ…

— Ի՞նչ,— լսվում է իր սենյակից հայրիկիս ձայնը:

— Քեզ չեմ ուզում: Մայրիկիս եմ ուզում: Մայրի՛կ,— գոռում եմ ես:

— Մայրիկը ես եմ, ի՞նչ ես ասում,— բարկանում է հայրիկը:

— Դու մայրիկ չես: Դու հայրիկն ես,— ասում եմ ես:

— Չէ՛, ես մայրիկն եմ,— պնդում է հայրիկս:

Դա շատ ծիծաղելի է, երբ հայրիկս իր հաստ ձայնով ասում է. «Ես մայրիկն եմ»: Ես հիշում եմ «Ուլիկը» հեքիաթը, որ Ալիսան կարդացել է ինձ համար, և ասում եմ ուլիկի ձայնով:

— Չէ՛, իմ մայրը այդպես չի կանչում: Նա քաղցր ու բարակ ձայն ունի: Քո ձայնը կոշտ է ու կոպիտ:

— Ա՛յ քեզ անպիտան տղա,— ասում է հայրիկս,— ուրեմն ես գա՛յլն եմ:

— Չէ՛,— ծիծաղում եմ ես,— դու գայլը չես: Դու հայրիկն ես:

Ու մեկ էլ հայրիկս բարակ, ծվծվան ձայնով ասում է.

— Ո՛չ, ես մայլիկն եմ, մայլիկը:

Կարծես թե մայրիկը չի կարող ասել՝ «մայրիկ», այլ Գեղամիկի նման «մայլիկ» պիտի ասի: Ես ծիծաղում եմ:

— Ես մայլիկն եմ: Ի՞նչ ես ուզում, Արտա՛կ,— նորից հարցնում է հայրիկս:

Ես մտածում, մտածում եմ ու հանկարծ գտնում եմ: Ու ասում եմ.

— Դե որ մայրիկն ես, գնա՛ խոհանոց:

Վարագույրի միջից հայտնվում է հայրիկիս գլուխը.

— Ի՞նչ,— հարցնում է նա:

— Դե որ մայրիկն ես, գնա՛ խոհանոց,— ասում եմ ես,— մայրիկը միշտ խոհանոցում է լինում:

Հայրիկս կամացուկ ծիծաղում է, մատը բերանին է տանում ու ասում է.

— Սո՛ւս:

Եվ մեկ էլ բացվում է դուռը, ու ներս է մտնում իմ մայրիկը:

Ես վազում եմ, գրկում եմ մայրիկիս: Մայրիկիս վերարկուն սառն է, լավն է:

— Ես մենա՛կ չեմ, ես մենա՛կ չեմ,— բղավում եմ ես:

ԻՄ ՏԱՏԻԿԸ

Իմ տատիկը փոքրիկ է: Նրա ատամները դեռ դուրս չեն եկել և քայլել նույնպես շատ լավ չգիտի: Դրա համար էլ փայտ է բռնում ձեռքին: Բայց քիչ է քայլում:

Մի քիչ ման է գալիս ու ասում է.

— Օ՛ֆ, հոգնեցի:

Եվ պառկում է ու սկսում է կարդալ:

Շատ զարմանալի է, թե տատիկս ինչպես է սովորել լավ կարդալ: Ատամ չունի, քայլել չգիտի, բայց կար-



Համլիկ Քամալեան, 6 տ.

դում է: Կարդում է, բայց չի հասկանում: Ինձ նման: Ալիսային կանչում է ու հարցնում.

— Բոռի իսկական անունն ինչ է:

— Արշակ Երկրորդը ինչո՞ւ գնաց Տիզբոն:

Եվ Ալիսան ամեն ինչ բացատրում է իմ տատիկին: Եվ տատիկս հասկանում ու գլխով է անում: Ինձ նման:

Մի օր հանկարծ տեսա, որ տատիկս լաց է լինում: Հասկացա, որ կարդում է, չի հասկանում ու լաց է լինում:

— Ինչո՞ւ ես լաց լինում, տատի՛ ջան,— հարցրեցի ես,— գնա՛մ Ալիսային կանչեմ:

— Չէ՛,— ասաց տատիկս,— տխուր գիրք է, ես էլ լաց եմ լինում:

Ես վախեցա: Նայեցի չորս կողմս: Մայրիկը չկար:

— Սո՛ւս,— ասացի տատիկիս,— լաց մի լինի, լաց մի լինի, տատի՛կ, մայրիկը կբարկանա:

— Ինչո՞ւ,— հարցրեց տատիկս:

— Ես որ լաց եմ լինում, ինձ վրա բարկանում է,— ասացի ես:

Եվ տատիկս վախից ծիծաղեց:

ԱԼԻՍԱՆ

Ալիսան մեր օրինակն է:

Երբ Ալիկը մի սխալ բան է անում, ասենք, հյուրերի ներկայությամբ ձեռքը մեկնում է սեղանին դրված շոկոլադին, մայրիկը, հյուրերի գնալուց հետո, նախատում է Ալիկին ու ասում.

— Ինչպե՞ս չամաչեցիր: Ալիսան երբևէ այդպիսի բան կանի՞: Օրինակ վերցրու Ալիսայից:

Կամ թե՝ երբ ես բակից ցեխոտված եմ տուն գալիս, մայրիկս իսկույն օրորում է գլուխն ու ասում.

— Այդ ինչպե՞ս ես խաղում, այդ չոր բակում որտեղի՞ց ցեխ գտար: Մաքրասեր եղիր, զավա՛կս, օրինակ վերցրու Ալիսայից:

Նախ և առաջ, երբ ես փոքր էի, չգիտեի, թե ինչ է նշանակում օրինակ վերցնելը: Դրա համար էլ մի անգամ ասացի քույրիկիս.

— Ալիսա ջան, ի՞նչ կլինի ինձ օրինակ տաս:

— Ի՞նչ օրինակ,— զարմացավ քույրիկս:

— Այ, նրանից, որ դու ունես, իսկ ես ու Ալիկը չունենք:

— Ի՞նչ ես խոսում, է՛, չեմ հասկանում,— բարկացավ Ալիսան:

— Ես էլ մայրիկին կասեմ, որ չես տալիս,— ասացի ես:

— Ախր ի՞նչ ես ուզում, ա՛յ ախպերիկ:

— Օրինակ եմ ուզում,— ասացի ես,— մայրիկն ասաց՝ Ալիսայից օրինակ վերցրու:

Ու մեկ էլ Ալիսան ծիծաղեց, գրկեց ինձ ու սկսեց վեր–վեր թռցնել, սկսեց համբուրել ինձ ու գոռգոռալ.

— Ա՛յ քեզ օրինակ, ա՛յ քեզ օրինակ:

Եվ մայրիկս ասաց, թե օրինակ վերցնելը նշանակում է, որ ես ու Ալիկը պետք է Ալիսայի նման լինենք: Ախր դա շատ ծիծաղելի է, չէ՞: Մայրիկս չի հասկանում, որ եթե ես ու Ալիկը Ալիսայի նման լինենք, բա ինքը ո՞նց կիմանա՝ այդ ե՞ս եմ, Ալի՞կը, թե՞ Ալիսան: Կխառնի, չէ՞: Կուզենա ինձ մի բան ասել, Ալիսային կասի: Կուզենա Ալիկին պատժել, ինձ կպատժի, չէ՞: Ես այդ բոլորն ասացի մայրիկիս, ու մայրիկս ծիծաղեց:

Եվ հետո ես հասկացա, թե ինչ է նշանակում օրինակ վերցնելը: Դա նշանակում է, որ ինչ–որ Ալիսան անի, ես ու Ալիկն էլ պետք է Ալիսայի նման անենք:

Բայց այնքան զարմանալի են այդ մեծերը: Այսինքն՝ մայրիկս: Էլի դժգոհ է: Ես Ալիսայի նման թխկթխկացնում եմ դաշնամուրի վրա, իսկ մայրիկս բարկանում է: Ես Ալիսայի նման միացնում եմ մագնիտոֆոնը, մայրիկս բարկանում է: Ես Ալիսայի նման փող եմ վերցնում և ուզում եմ գնալ հացի, մայրիկս բարկանում է:

Բա ես ինչ անեմ Ալիսայի նման, է՜...

ԱԼԻԿԸ

Ես ձեզ արդեն ասել եմ: Ալիկը իմ եղբայրն է: Այնքան հետաքրքիր տղա է Ալիկը, որ պատմեմ՝ ծիծաղից կթուլանաք: Հայրիկս նրան ասում է «ձախլիկ Ալիկ»: Ինքը միշտ ուզում է մի լավ բան անել, բայց միշտ էլ վատ է ստացվում: Ըհը՛, տեսեք: Իրար կողքի նստած ենք՝ Ալիսան, Ալիկը, ես: Մեկ է, մայրիկն ասում է.

— Մի բաժակ ջուր տվեք, խնդրում եմ:

Դեռ խոսքը չվերջացրած, Ալիկը վեր է թռչում, որ բոլորից առաջ ինքը բերի: Բայց այնպիսի թափով է վեր թռչում, որ ինձ գցում է գետնին, ճանապարհին վազելով խփում է տատիկին, խոհանոցում, թըփ, դիպչում է սառնարանին և մեկ էլ, չըխկ՝ ծորակին խփելով ջարդում է բաժակը: Ջարդում է ու ասում է աչքերը լցրած.

— Էս ինչ բարակ են սարքում էս բաժակներն, է՛...

Հայրիկն ու մայրիկն արդեն գիտեն, որ եթե տանը մի բան է ջարդվել կամ թե փչացել է մի բան, օրինակ՝ հեռախոսը, մագնիտոֆոնը կամ հեռուստացույցը, ուրեմն Ալիկն է արել:

— Շաբաթը մի անգամ պարտադիր կարգով պետք է Ալիկին պատժել,— ասում է հայրիկը,— նա անպայման մի բան ջարդած կլինի, որի մասին իմանալու ենք հետո:

Եվ մեր Ալիկն էլ այնքան համոզված է, թե ամեն ինչը, ճիշտ որ, ինքն է անում, որ երբեք չէ չի ասում:

— Ալի՛կ, դո՞ւ ես մեխով խազել սեղանը,— հարցնում է մայրիկը:

— Չգիտեմ,— խեղճ–խեղճ ասում է Ալիկը:

— Այսինքն՝ ինչպե՞ս թե չգիտեմ: Դո՞ւ ես սեղանը խազել, թե՞ ոչ:

— Չե՛մ հիշում, մայրի՛կ ջան, կարող է՝ ես եմ խազել, կարող է՝ ես չեմ խազել:

Մայրիկս բարկությունից կարմրում է, մի սև շոր է փաթաթում ձեռքի վրա ու իմ ավտոյի ռետինե կարմիր շչակի նման մի բանով փչում, հա փչում ու ասում է.

— Ըհը, ճնշումս էլի բարձրացավ:

Ու նորից հարցնում է բարկացած.

— Ալի՛կ, սիրելիս, տե՛ս, չեմ բարկանում: Եվ խոստանում եմ քեզ չպատժել: Ի՞նչ անենք, գուցե պատահաբար է եղել: Մեզ հետ էլ է պատահում: Ես միայն ուզում եմ ճշմարտությունն իմանալ. ասա, դո՞ւ ես խազել, թե՞ ոչ:

Ալիկը լայն բացում է աչքերը, թոթվում է ուսերը, տարածում է ձեռքերն ու ասում կամացուկ.

— Ախր ես ի՞նչ գիտեմ, մայրի՛կ ջան, դե որ ասում ես՝ երևի ես եմ արել:

Մայրիկը հառաչում է ու լռում:

Երեկոյան աշխատանքից եկավ հայրիկը: Մայրիկը պատմեց նրան ամեն ինչ: Եվ մեկ էլ հայրիկս տխրած ասաց.

— Ինչ եք ասում: Դա ես եմ խազել պատահաբար: Պատի ժամացույցը, երբ տանում էի վերանորոգման, սեղանին դրեցի, իսկ երբ վերցրեցի, մեխը խազեց:

Ես նայում եմ Ալիկին, Ալիկը ժպտում է հաղթական:

— Տեսա՞ք,— ասում է նա:

— Ա՛յ Ալիկ ջան, ա՛յ բալիկ ջան,— համարյա լաց լինելով՝ ասում է մայրիկը,— բա որ դու չէիր արել, ինչո՞ւ չէիր ասում, ինչո՞ւ չէիր պնդում, ինչո՞ւ էիր լռում, երբ այդքան նախատում էի:

— Ախր, մայրի՛կ ջան, միևնույն է, չէիք հավատալու, ի՞նչ անեմ,— ասում է Ալիկը ու դուրս է փախչում սենյակից:

Այնքա՜ն լավ տղա է իմ եղբայրը:

ՄԱՐԻՆԵՆ

— Տեսե՛ք, ինչ եմ գրել,— գոչում է Վահանիկը:

Մենք նայում ենք ու տեսնում, որ նա կավիճով ուղ-ղակի խզբզել է պատին: Վահանիկը գրել չգիտի, ի՞նչ պետք է գրի: Բայց որովհետև Մարինեն էլ գրել չգիտի, դրա համար էլ ինձ հարցնում է.

— Արտա՛կ, տե՛ս՝ ի՞նչ է գրել Վահանիկը:

— Ոչինչ էլ չի գրել,— ասում եմ ես:

— Դու ոչինչ էլ չես գրել,— ասում է Մարինեն:

— Հա՛յ, հո՛ւյ,— ծիծաղում է Վահանիկը,— որ կարդալ իմանայիք, հիմա կգժվեիք:

— Փիս խոսք ես գրե՛լ,— հոնքերը կիտում է Մարինեն:

Վահանիկը հետ–հետ է գնում ու բղավում.

— Արտակի մասին եմ գրել, քո ի՞նչ գործն է:

— Հենց իմ գործն է,— ճչում է Մարինեն ու վազում Վահանիկի հետևից:

Ու մեկ էլ Վահանիկը, պո՛ւկ, փախչում է ու հետն էլ գոռում՝ «Վա՛յ, մայրիկ ջան»:

Ես ծիծաղում եմ, իսկ Մարինեն ասում է.

— Չէ՛, այդ Վահանիկին մի օր պիտի մի լավ դնքսեմ:

Ես ավելի եմ ծիծաղում, որովհետև ախր շատ ծիծաղելի է: Թողեք մի քիչ ծիծաղեմ ու նոր պատմեմ: Ըհը՛: Ուրեմն, ծիծաղելի է, որովհետև Մարինեի գլուխը հազիվ իմ ուսին է հասնում: Իսկ Վահանիկը մի մատ ինձանից բոյով է: Բայց հենց որ Մարինեն ոտքը խփում է գետնին, Վահանիկը թռչում, փախչում է իրենց պատշգամբը:

— Արտա՛կ,— ասում է Մարինեն,— դե հիմա արի ես ու դու խոսենք:

— Ի՞նչ խոսենք,— ասում եմ ես:

— Խոսենք, էլի,— ասում է Մարինեն,— ես իմ մանկապարտեզի մասին պատմեմ, դու էլ՝ քո մանկապարտեզի, հա՛...

Ու մենք խոսում ենք ու այնքան ծիծաղելի բաներ ենք հիշում:

Մարինեի հետ այնքան ուրախ է: Ու Մարինեն այնքան լավ է ծիծաղում: Երբ ծիծաղում է, աչքերը դառնում են բաց–բաց կապույտ, ոնց որ, ոնց որ... կապույտ ջրաներկ: Ու մազերն էլ, ինչ ասեմ, շեկ են, երկար ու շեկ, ոնց որ... ոնց որ... ռուսի մազեր: Բայց հայ է: Մեր բակում իսկական ռուսներ էլ կան: Վովկան, օրինակ, ռուս է, բայց Մարինեն հայ է:

Հետո ասեմ, որ երբ Մարինեն իմ կողքին է, ես ոչ մեկից չեմ վախենում: Վահանիկից էլ չեմ վախենում: Տիգրանիկից էլ չեմ վախենում: Երևի Ջեկոյից էլ չեմ վախենում: Ես ու Մարինեն քայլում ենք մեր բակում՝ իրար ձեռք բռնած, խոսում ու ծիծաղում ենք: Մեր մայրիկներն էլ են պատշգամբ դուրս գալիս, նայում են մեզ ու իրենք էլ են ծիծաղում:

— Էլի իրար գտան,— ասում է Մարինեի մայրիկը:

— Այսօր ո՞վ է ում հյուր գալու,— հարցնում է իմ մայրիկը:

— Երեկ ձեր տանն էին, ուրեմն այսօր մեր հերթն է,— ասում է Մարինեի մայրիկը:

— Վերջը բարին անի,— ծիծաղում է իմ մայրիկը: Եվ Մարինեի մայրիկն էլ է ծիծաղում:

Լա՛վ, այստեղ ի՞նչ ծիծաղելու բան կա: Ինչ որ խոսում ենք՝ ծիծաղում են: Բոլորն էլ մեզ նայում, ծիծաղում են: Մաթոս քեռին էլ է ծիծաղում:

— Արտա՛կ, դու Մարինեին սիրո՞ւմ ես,— հարցնում է նա:

— Հա՛,— ասում եմ ես:

— Վա՜յ, վա՜յ, վա՜յ, վա՜յ,— քրքջում է Մաթոս քեռին,— իսկ Մարինեն էլ քեզ սիրո՞ւմ է:

— Հա՛,— ասում եմ ես:

— Հա՞մ,— հարցնում է Մաթոս քեռին ու նորից քրքջում է:— Ուրեմն դուք իրար սիրո՞ւմ եք:

— Հա՛,— ասում եմ ես:

— Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ,— արցունքները սրբում է Մաթոս քեռին:— Էս հիմիկվա երեխաներից մարդ բան չի հասկանա:

Լա՛վ, այստեղ ի՞նչ չհասկանալու բան կա: Մարինեն ու ես ինչո՞ւ պետք է իրար չսիրենք: Չէ՞:

Տեսնես, որ մեծանանք, մենք է՞լ չենք հասկանա:



ԱԼԻԿ ԲԱԼԻԿԸ

ՓՈՔՐԻԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՐԿՈՒ ԴԵՊՔ

Շատ զարմանալի տղա է մեր Ալիկը: Ոչ մի ոտանավոր կամ հեքիաթ մինչև վերջ չգիտե: Բայց ամեն մեկից իմացած մի քանի տողն էլ անընդհատ կրկնում է տեղի–անտեղի:

Ա՛յ, թեկուզ երեկ: Նստել էր իր փոքրիկ սեղանի առջև ու նկարում էր: Մատիտը այնքան ամուր էր սեղմում թղթին, որ ի վերջո ծայրը կոտրեց:

Վազելով եկավ պապի մոտ, թե՝

— Պապի՛ ջան, վերցրու այս մատիտը, սրի՛ր, իսկ ես գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ...

Ա՛յ քեզ զարմանալի տղա...

Կամ՝ մի ուրիշ դեպք: Ալիկը խաղում էր սենյակում, իսկ մայրիկը խոհանոցում ճաշ էր պատրաստում, և հանկարծ սենյակից լսվեց մի ուժեղ շրխկոց: Մայրիկը անհանգստացած շտապ սենյակ մտավ: Եվ ինչ...

Ալիկը նստել էր հատակին, հախճապակե կոտրված բաժակի երկու կտորները աշխատում էր իրար կպցնել ու որովհետև չէր կարողանում, ու կտորները կրկին բաժանվում էին, լաց էր լինում:

— Լաց մի լինի,— ասաց մայրիկը:

— Դո՛ւ ես կոտրել բաժակը:

— Ես եմ կոտրել,— մրմնջաց Ալիկը,— հետո մի փոքր մտածեց ու, արցունքների միջից ժպտալով, ասաց.

— Ես եմ կոտրել, չեմ ուրանում... Կացին չունես ծառը կտրես...

— Դե ինքներդ ասեք, ի՞նչ կապ ուներ կոտրված հախճապակե բաժակը Հովհաննես Թումանյանի «Չարի վերջը» հեքիաթի երկու տողերի հետ:

Պարզապես զարմանալի տղա է Ալիկը:

ՀԱՅՀՈՅԵԼ ՉԻ՛ ԿԱՐԵԼԻ

Թեև փոքրիկ է Ալիկը, բայց բնավորության մի շատ լավ գիծ ունի: Երբեք, ոչ մի առիթով որևէ մեկին չի վիրավորում, ոչ մի կոպիտ խոսք չի ասում: Իսկ եթե նոր բառ է լսում, անմիջապես հարցնում է մայրիկին:

— Կարելի՞ է այս բառն օգտագործել:

Մի անգամ Ալիկը լսում էր իր քույրիկին, որը նրա համար Հովհաննես Թումանյանի «Բզեզի դպրոցն» էր կարդում:

Հետո Ալիկը սկսեց արտասանել: Կարծես ամեն ինչ լավ էր գնում: Նույնիսկ քույրիկը գոհ էր:

Ալիկը շարունակում էր արտասանել:

«Ա՛յ տղա, է՛յ, չեն հայհոյի, տզզա՛ն...»

Եվ հանկարծ Ալիկը այստեղ կանգ առավ, դարձավ մայրիկին ու հարցրեց.

— Մա՛մ, բա կարելի՞ է ասել «...հիմար, անասուն...»:

— Դա ոտանավորի մեջ է, և բզեզն է ասում մլակին, դրա համար էլ կարելի է,— ժպտալով ասաց մայրիկը:



Համլիկ Քալանթարյան, 6 տ.

ՄԵԿ ՕՐՈՒՄ ՄԵԾԱՑԱՎ

Առավոտյան Ալիկը հանկարծ գրկեց մայրիկին ու ասաց.


— Մայրի՛կ, որ ես մեծանամ, դու էլ փոքրանաս, քեզ համար կարմիր ու դեղին փուչիկներ կառնեմ:

Բոլորը ծիծաղեցին, և ամենաշատը՝ Ալիսան: Դե, իսկապես, ծիծաղելի է, չէ՞: Ալիկին թվում է, որ եթե ինքը մեծանա, մայրիկը փոքրանալու է:

Բայց երեկոյան պարզվեց, որ Ալիկը ամեն ինչ հասկանում է: Հյուրեր էին եկել: Մայրիկը նրանց պատմեց, թե Ալիկը որոշել է իր համար փուչիկներ գնել:

— Ալի՛կ ջան,— կրկին հարցրեց մայրիկը,— որ դու մեծանաս, ես էլ փոքրանամ, ինձ համար փուչիկներ կգնես չէ՞...

— Չէ՛, մայրի՛կ ջան,— պատասխանեց Ալիկը,— որ մեծանում են, էլ չեն փոքրանում:



— Վա՛յ, ուրեմն դու մեկ օրում մեծացել ես, հա՛, որ հասկանում ես արդեն,— ծիծաղեց մայրիկը, գրկեց ու համբուրեց Ալիկին:

Ալիկը նայեց Ալիսային: Քիչ էր մնում, որ ասեր, թե Ալիսան է իրեն բացատրել... բայց ոչինչ չասաց:

Ախր նա այնքան էր ուզում շուտ մեծանալ:

ԻՆՉՈ՞Ւ

Անցյալ տարի Ալիկը իր քույրիկ Ալիսայի հետ ամառանոց էր գնացել Սևանի շրջանի Լճաշեն գյուղը՝ մորաքրոջ մոտ: Նրան այնքան էր դուր գալիս Սևանը, որ միշտ խնդրում էր.

— Մորաքո՛ւյր ջան, թույլ տուր Ալիսայի հետ գնամ լճի մոտ, էլի...

Մորաքույրը չէր թողնում:

— Չի՛ կարելի,— ասում էր նա,— հանկարծ լիճը կընկնես:

— Իսկ որ ընկնեմ, ի՞նչ կլինի:

— Կխեղդվես,— ասում էր մորաքույրը:

— Իսկ որ խեղդվեմ, ի՞նչ կլինի,— հարցնում էր Ալիկը:

Մորաքույրը փորձում էր բացատրել, բայց Ալիկը համարյա ոչինչ չէր հասկանում: Նա իմացավ միայն մի բան, որ խեղդվելը շատ տխուր, շատ վատ բան է: Որ ավելի լավ է մարդ չխեղդվի, քան թե խեղդվի:

Մի քանի օր անց մորաքույրն ինքն Ալիկին ու Ալիսային տարավ լճի ափը: Կապույտ ու գեղեցիկ էր Սևանը: Ոնց որ հայելի: Ոչ մի ալիք չկար: Մի քանի մարդ ինչ–որ ցանց էին դուրս բերում ջրից:

— Այն ինչե՞ր են այնպես փայլփլում,— խայտող ձկները տեսնելով՝ հարցրեց Ալիկը:

— Ձկներ են,— պատասխանեց մորաքույրը:


— Բոլորն էլ ջրի՞ց հանեցին:

— Այո՛,— ասաց մորաքույրը:

— Խեղդվել է,— տխրեց Ալիկը՝ նայելով անշարժ ձկներից մեկին:

— Այո՛,— ասաց մորաքույրը:

— Մայրիկին չի լսել, ջրի մեջ է ընկել ու խեղդվել, չէ՞,— հարցրեց Ալիկը:



— Ո՛չ, ի՞նչ ես ասում,— ծիծաղեց մորաքույրը:— Ընդհակառակը, ձկնորսը նրան դուրս է բերել ջրից, դրա համար է խեղդվել:

Ալիկը լռեց ու երկար մտածում էր: Ինչ հետաքրքիր է, չէ՞: Եթե Ալիկը ջուրն ընկնի՝ կխեղդվի, եթե ձկնիկը ջրից դուրս գա, կխեղդվի: Այ քեզ զարմանալի բան:

ԽԱՂԸ

Բոլորն էլ գիտեն այն խաղը, որի մասին պատմելու եմ: Օրինակ՝ Կարինեն մոտենում է Լուսիկին ու ասում.

— Լուսի՛կ, ասա՝ լո՛ր:

— Լո՛ր,— ասում է Լուսիկը:

— Ուտես սալոր,— ուրախ–ուրախ պատասխանում է Կարինեն, և ընկերուհիները ծիծաղում են:

Կամ՝

— Կարինե՛, ասա՝ գա՛նձ:

— Գա՛նձ:

— Ուտես տանձ:

Հետաքրքիր խաղ է: Հաղթում է նա, ով ավելի շատ է կարողանում նման բառեր գտնել:

Այդպիսի բառեր շատ գիտի նաև Ալիկի քույրիկը՝ Ալիսան:

— Ալի՛կ,— դիմում է նա եղբորը,— ասա՝ գի՛րք:

— Գի՛րք,— ասում է Ալիկը:

— Ուտես միրգ,— ծիծաղում է Ալիսան:

Ալիկը հեգնում է.

— Այդ ի՞նչ խաղ է, որ,— ասում է նա,— ես ամպի չափ կարող եմ ասել...

— Դե՛ ասա:

— Ասա՝ միվա՛ն:

— Միվա՛ն:

— Ուտես դիվան:

Ալիսան բացատրում է, որ Ալիկը սխալ է խաղում: Որ դիվանը՝ նախ հայերեն բառ չէ, և հետո, որ առաջին բառը ևս պետք է իսկական բառ լինի, ոչ թե հենց այն-պես: Թե չէ ի՞նչ է նշանակում «միվան»:

— Հասկացա՞ր,— հարցնում է վերջում Ալիսան:

— Հասկացա,— պատասխանում է Ալիկը:— Դե ասա՝ բո՛ր :

— Բո՛ր:

— Ուտես լոր:

Ալիսան բարկանում է ու այլևս չի խաղում Ալիկի հետ: Ալիկը տխրում է ու մի անկյունում նստած մտածում, թե ինչպիսի բառեր ասի, որ ճիշտ լինեն, որ Ալիսան խաղա իր հետ:

Ու ասում են՝ մինչև այսօր էլ մտածում է: Չգիտեմ, ճի՞շտ է դա, թե՞ ոչ:

ԹՈՂ ԱՆԿՅՈՒՆ ԿԱՆԳՆԵՑՆԻ

Ալիսան գիրք է կարդում, և ինչպես միշտ, Ալիկը խնդրում է նրան բարձրաձայն ընթերցել:

Ալիսան տրտնջում է:

— Ախր սա ուրիշ գիրք է, դու ոչինչ չես հասկանա:

— Իսկ դու այնպես կարդա, որ հասկանամ,— պնդում է Ալիկը:

Եվ Ալիսան կարդում է Խնկո Ապոր «Հազարան բլբուլը»:

«Միջնեկ եղբայրը գնում է, գնում է, պատահում է մի հսկա արաբի: Արաբը հարցնում է, թե՝ այ տղա, դու այստեղ ի՞նչ ես անում:

Թագավորի տղան էլ պատասխանում է, թե՝ Հազարան բլբուլի տեղն եմ փնտրում:

— Լա՛վ,— ասում է արաբը,— հիմա ես քեզ Հազարան բլբուլի տեղը կասեմ: Ասում է, մոտենում է ու ձեռքի սև ճիպոտով որ չի խփում, թագավորի տղան իսկույն ևեթ քար է դառնում...»:

— Վա՛յ, ինչո՞ւ է խփում,— վշտանում է Ալիկը:

— Դե տեսնո՞ւմ ես, որ չես հասկանում, արաբը Հազարան բլբուլի պահապանն է, դրա համար էլ պատժում է տղային,— բարկանում է Ալիսան:

Ալիկը չի համոզվում:

— Եթե ուզում է պատժել, թող անկյուն կանգնեցնի, ինչո՞ւ է քար դարձնում,— կրկին տխուր հարցնում է Ալիկը:

ՆԱ ԹԹՈՒ Է ՍԻՐՈՒՄ

Ինչպես բոլոր մայրիկները, այնպես էլ Ալիկի մայրիկը, շատ է սիրում իր որդուն և ամեն անգամ, երբ դիմում է Ալիկին, ասում է.

— Ալի՛կ ջան, քաղցրի՛կ բալիկ, արտասանի՛ր:

Կամ՝

— Քաղցրի՛կ բալիկ, մի բաժակ ջուր բեր:

Մի անգամ Ալիկը հարցրեց:

— Մա՛մ, ինչո՞ւ ես ինձ միշտ քաղցրիկ ասում:

— Որովհետև ես քաղցր շատ եմ սիրում,— ասաց մայրիկը:

Ալիկը խաղում էր խորանարդիկներով ու ինչ–որ բան էր մտածում:

Մի քանի րոպե հետո նա ժպտալով վազեց մայրիկի մոտ.

— Մայրի՛կ, թթվի՛կ մայրիկ, թույլ կտա՞ս բակ իջնել:

— Այդ ինչ ես ասում, Ալիկ, միթե կարելի է մայրիկին թթվիկ անվանել,— զարմացավ մայրիկը:

Ալիկը շփոթվեց:

— Բա ինչ ասեմ, է՛: Ես քաղցր չեմ սիրում, ես թթու եմ սիրում:



Մարիամ Սանասրյան, 10 տ.

ԱՐԴՅՈՔ ՆՄԱՆ ԵՆ

Ալիկն ու Ալիսան դեմքով շատ նման են իրար: Եվ հաճախ է պատահում, որ նրանց տուն հյուր եկողները զարմացած ասում են.

— Օ՛, որքա՜ն նման են:

Իսկ մի անգամ հորեղբայր Հարությունը, որ հեռավոր գյուղից էր եկել և երկար ժամանակ իր զարմիկներին չէր տեսել, ծիծաղեց ու ասաց.

— Այսքան էլ նմանություն... Ոնց որ մի խնձորի երկու կես լինեն:

— Ալիկն ուզեց ինչ–որ բան ասել, բայց լռեց: Հետո՝ արդեն երեկոյան, նա ասաց մայրիկին.

— Հորեղբայր Հարությունը ճիշտ չէր ասում: Եթե ես ու Ալիսան նույն խնձորի երկու կեսն ենք, հապա ինչո՞ւ Ալիսան բոյով է ինձանից:

ՀԱՋԱՐԻՆ ԳՈՒՄԱՐԱԾ ՀԱՋԱՐ

Ալիսան սկսել է Ալիկին թվաբանություն սովորեցնել, և որովհետև Ալիկն անընդհատ շփոթում է, դրա համար էլ Ալիսան նրան սովորեցնում է ձեռքի մատների օգնությամբ: Ծալում է ձեռքի բոլոր մատները, ապա թողնում է մեկը:

— Քանի՞ մատ է, Ալի՛կ:

— Մե՛կ,— ասում է Ալիկը ու ինքն էլ բացում իր մատներից մեկը:

— Իսկ հիմա՞,— Ալիսան բացում է մյուս մատը:

— Երկո՛ւ,— ասում է Ալիկը:

— Ուրեմն մեկին գումարած մեկ ի՞նչ կանի:

— Երկո՛ւ,— ասում է Ալիկը ու լսելով Ալիսայի «ճիշտ է» բացականչությունը, հրճվում, ծիծաղում է, այնպես է ծիծաղում, այնպես է ծիծաղում, որ շառագունում են այտերը:

— Տեսա՞ր,— ավելացնում է նա հաղթական:

Հետո Ալիսան նրան սովորեցնում է նաև քիչ ավելի մեծ թվերի գումարումը, և Ալիկը վերջապես օգտագործում է իր բոլոր մատները:

Ու հանկարծ՝

— Իսկ հազարին գումարած հազար՝ ի՞նչ կանի:

Ալիկը գիտե, որ հազարը մեծ թիվ է, բայց թե որքան է, չի իմանում, նայում է մատներին, հաշվում է մինչև տասը: Տասից այն կողմ չի կարողանում անցնել: Տխրում է Ալիկը, կիտում է հոնքերը ու հանկարծ ասում է բարկացկոտ ձայնով:

— Դե ինձ հազար մատ բեր, որ հաշվեմ:

Ու Ալիսան ծիծաղում է: Դե, որտեղի՞ց բերի հազար մատ:

— Տեսա՞ր,— Ալիսային պարտված համարելով՝ կրկին հրճվում է Ալիկը:



ԴԱ ՀՈՂԻԿՆ ԷՐ

Ալիկը վերջերս ծուլացել էր:

— Լվացվի՛ր, որ նախաճաշես,— ասում էր մայրիկը:

— Լվացվել եմ,— ասում էր Ալիկը:

— Այդ ճի՞րբ ես լվացվել, որ ես չեմ տեսել:

— Դե, երեկ, էլի, քնելուց առաջ...

Բայց միայն լվացվելը չէր: Մայրիկը սպաս էր եփում, Ալիկը չէր ուտում:

— Ես սպաս չեմ սիրում,— ասում էր:

— Իսկ ի՞նչ կուզես:

— Սիսեռով ապուր:

Մայրիկը հաջորդ օրը սիսեռով ապուր էր եփում:

— Էս ի՞նչ է, էլի սիսե՞ռով,— տրտնջում էր Ալիկը,— ես մակարոնով ապուր եմ սիրում:

Երեկոյան մայրիկը լողացնում էր Ալիկին: Համարյա գոլ ջուր էր լցնում վրան, իսկ Ալիկը ճչում էր.

— Վա՛յ, այրվեցի, վա՛յ,— և ուզում էր դուրս նետվել լողասենյակից:

Ուղղակի անտանելի տղա էր դարձել Ալիկը:

Բայց մի օր կատարվեց իսկական հրաշք:

Ալիկը առավոտյան արթնացավ, անմիջապես պա-տշգամբ դուրս եկավ, ցատկոտեց պարանով երկու, ապա մեկ ոտքի վրա, հետո գնաց լողասենյակ: Լվաց-վեց, սանրվեց, մեծ հաճույքով կարագ ու հաց կերավ, որից նախորդ օրերին հրաժարվում էր, կերակրեց նաև թռչուններին ու ձկներին, հետո վերցրեց թուղթ և գու-նավոր մատիտներ ու սկսեց նկարել:

Մայրիկը զարմացել էր: Այս ի՞նչ է պատահել Ալիկին: Հրաշք է, ինչ է:

Իսկապես՝ հրաշքի էր նման: Նկարելուց հետո Ալիկը թղթերն ու մատիտները ոչ թե սեղանին ու հատակին թափված թողեց, այլ հավաքեց ու դասավորեց պահարանում, մայրիկից բակ գնալու թույլտվություն խնդրեց, խաղաց, ու որ երբեք չէր պատահում՝ հագուստը մաքուր տուն եկավ: Դա դեռ բոլորը չէ: Մայրիկը սպաս էր եփել, և Ալիկը կերավ մեծ բավականությամբ, առանց քրթմնջալու ու վերջում նույնիսկ ասաց.

— Ի՜նչ լավն էր, շնորհակալությո՛ւն, մայրի՛կ:

Իսկ մայրիկն ավելի ու ավելի էր զարմանում:

Իսկ երեկոյան Ալիկը հանգիստ նստել էր լողարանում և լողանում էր: Ո՛չ բղավում էր, ո՛չ էլ փորձում դուրս նետվել: Միայն աչքերը ամուր փակել էր, որ օճառի փրփուրը չմղկտացնի:

Դա արդեն այնքան անսովոր էր ու զարմանալի, որ մայրիկն այլևս չհամբերեց, ու երբ Ալիկը անկողնում պառկած էր, հարցրեց.

— Ալի՛կ ջան, այսօր դու այնքան լավն էիր, այնքան խելոք, այդ ինչի՞ց էր:

— Դա իմ գաղտնիքն է,— գովեստից շառագունած ծիծաղեց Ալիկը:

— Ի՜նչ գաղտնիք է, Ալի՛կ:

— Ես Ալիկը չեմ, ես Շողիկն եմ:

— Ինչպե՞ս թե Շողիկն ես:

Ու թեև սենյակում ոչ ոք չկար, և քույրիկը՝ Ալիսան էլ արդեն քնած էր, բայց Ալիկը բարձրացավ

տեղից ու մայրիկի ականջին կամացուկ շշնջաց իր գաղտնիքը:

Եվ գիտեք ինչ գաղտնիք էր դա:

Պարզվեց, որ նախորդ օրը Ալիսան նրա համար մի պատմվածք էր կարդացել խելոք Շողիկի մասին, որը միշտ լսում է մայրիկին, և Ալիկը որոշել էր այսուհետև ոչ թե Ալիկ լինել, այլ՝ Շողիկ:

ԱՐԵԳԱԿԸ


Ալիկը խաղում էր պատշգամբում: Խորանարդիկներով պալատ է կառուցում ու կամուրջներ: Հեշտ չէ կառուցելը: Շոգ է: Արևն այնպես է այրում, որ քրտինքը փոքրիկ առվակների նման թափվում է Ալիկի մազերի տակից, հոսում դեմքի վրայով: Շատ շոգ է:

Եվ Ալիկը բողոքում է մայրիկին:

— Էս ի՞նչ է, է՛, վատն է էս արևը, թարսիկ է:

— Ինչո՞ւ:

— Բա ինչո՞ւ ձմռանը չի լինում, երբ ցուրտ է: Ամռանն առանց այդ էլ շոգ է, էլի:



ԵՐԱԶԸ

Ալիսան արթնացավ, տրորեց աչքերն ու ժպտաց, հետո կանչեց.

— Մա՛մ, մա՛մ:

— Ի՞նչ է, արթնացե՞լ ես,— հարցրեց մայրիկը,— հագնվի՛ր:

— Չէ՛, չէ՛,— բացականչեց Ալիսան,— մա՛մ, այնպիսի երազ տեսա, այնպիսի մի սիրուն երազ տեսա:

— Ի՞նչ երազ,— ժպտաց մայրիկը:

Ալիկն էլ արթնացավ ու սկսեց լսել Ալիսային:

— Ուրեմն գնում էի, այնպիսի սիրուն ծաղիկներ կային՝ կարմիր, կանաչ, դեղին: Քաղում էի, փունջ էի կապում, հետո պահել էի գլխիցս վերև, հետո ուրեմն նայեցի, տեսա ծաղիկներ չեն, բոլորն էլ փուչիկներ են դարձել՝ կարմիր, կանաչ, դեղին: Այնքան ուրախացա, էլի ծաղիկներ քաղեցի, էլի փուչիկներ դարձան: Հետո ուրեմն տեսա, որ ամբողջ դաշտը փուչիկներ է. կարմիր, կանաչ, դեղին... այնքա՜ն սիրուն...

— Ա՛խ, Ալիսա՛ ջան,— հառաչեց Ալիկը,— երանի ես էլ քո երազում լինեի... որ ես էլ տեսնեի:

ԻՆՉՊԵՍ Է ՍՈՎՈՐԵԼ

Ամռանը հայրիկն ու մայրիկը Ալիկին ու Ալիսային տարան Մոսկվա: Մոսկվայում Ալիկին ամենից շատ դուր եկան Կրեմլի զանգերը և մետրոյի սահող սանդուղքները...

— Էլի՛ սղարան նստենք, հա՛մ,— ամեն առավոտ խնդրում էր Ալիկը: Որքան էլ նրան բացատրում էին, որ դա կոչվում է էսկալատոր կամ սահող սանդուղք, Ալիկը չէր ընդունում ու կրկին անվանում էր սղարան: Ու եթե տեսնեիք, թե ինչ հրճվանքով էր կանգնում սանդուղքին, թե ինչպես չէր ուզում նույնիսկ մի աստիճան վեր բարձրանար, ապա դուք էլ կհամոզվեիք, որ Ալիկը ամբողջ աշխարհում ամենից շատ մետրոյի «սղարանն» է սիրում:

Ահա հենց այդ «սղարաններից» մեկի վրա էլ Ալիկը ծանոթացավ իրենից փոքր մի ռուս տղայի հետ: Ալիկը կանգնած էր աստիճանին ու անշարժ, երջանիկ դեմքով բարձրանում էր, երբ փոքրիկ մի ռուս տղա, որ իր մայրիկի հետ ներքևի աստիճանին էր կանգնած, ձեռքը մեկնեց Ալիկին, բռնեց ու ասաց.

— Իսկ դու գիտե՞ս, որ իմ մայրիկն ինձ համար իսկական տրակտոր է գնել:

Ալիկը ետ դարձավ, տարակուսանքով նայեց տղային ու պարզ է, ոչինչ չհասկացավ: Ախր Ալիկը չգիտեր ռուսերեն:

— Չե՞ս հավատում,— ժպտաց տղան,—այ գնանք մեր տուն՝ ցույց կտամ, թխկթխկում է ու էսպես գնում: Ուզո՞ւմ ես վրան Նյուրկային նստեցրու, տանում է:

Ալիկը, իհարկե, կրկին չհասկացավ ու այն է՝ ուզում էր ինչ–որ բան հարցնել մայրիկին, երբ մայրիկն ասաց.

— Առջև՛դ նայիր, արդեն հասանք, դե, թռի՛ր:

Ալիկը թռավ ու երեխաները բաժանվեցին: Երբ քայլում էին հրապարակով, Ալիկը հանկարծ կանգ առավ ու հարցրեց.

— Մա՛մ, ի՞նչ էր ասում այն տղան:

Մայրիկը բացատրեց:

— Բա ինչո՞ւ ես չլսեցի,— զարմացավ Ալիկը:

— Լսեցի՛ր, բայց չհասկացար,— ժպտաց մայրիկը,— որովհետև նա ռուսերեն էր խոսում:

— Ռուսերե՞ն,— ավելի զարմացավ Ալիկը,— ինձանից փոքր էր, բա ո՞նց էր ռուսերեն սովորել...

ԱԼԻԿԸ ՍՈՎՈՐԵԼ Է ՌՈՒՍԵՐԵՆ

Փոքրիկ ռուս տղայի հետ ծանոթանալուց հետո Ալիկը շատ խնդրեց մայրիկին, որ իրեն էլ ռուսերեն սովորեցնի: Թե չէ կարող են թյուրիմացություններ պատահել: Այդ միտքը Ալիկն արտահայտեց հետևյալ կերպ.

— Մա՛մ, բա որ այն տղան ասեր՝ տրակտորս քեզ եմ նվիրում, ու ես էլ չհասկանայի՞... ինձ սովորեցրու, թե ոնց ասեմ տուր:

Բայց մայրիկը ավելի լավ գիտեր, թե ռուսերեն ամենից առաջ ինչ պետք է սովորեցնել Ալիկին:

Ի՞նչ: Լսեցեք հենց Ալիկին:

— Ես ռուսերեն գիտեմ,— ասում է Ալիկը բակի իր ընկերներին ու ընկերուհիներին:

— Իսկ ի՞նչ գիտես,— նախանձով հարցնում են ընկերները:

— Ամեն ինչ,— ասում է Ալիկը,— մայրիկս ինձ բոլորն ասել է, նելզյա՝ նշանակում է «չի կարելի», նե-

նադո՝ նշանակում է «պետք չէ», նետ՝ նշանակում է «ոչ»:

— Ուրի՞շ:

— Նե զնայու,— ասում է Ալիկը,— սա էլ նշանակում է, որ էլ ոչ մի բան չգիտեմ:



Աշոտ Մանասյան, 8 տ.

ՁԿՆԵՐԻ ԱՐՑՈՒՆՔԸ

Կապույտ–կապո՛ւյտ է երկինքը, կապույտ–կապո՛ւյտ է ծովը: Ու միևնույն է, որքան էլ ուշադիր նայես, որքան էլ կկոցես աչքերդ, չես կարող ասել, թե այնտեղ՝ հեռվում, որտե՞ղ է վերջանում ծովն ու սկսվում երկինքը:

Ալիկը երկար դիտում է, կնճռոտում է ճակատը, հետո հավանաբար վճռում է թողնել այդ դժվար խնդիրն ու ձգում է մայրիկի ձեռքից:

— Գնանք:

— Ո՞ւր:

— Ձկնորսների մոտ:

Ձկնորսները հեռու չեն: Նրանք իրար կողքի կանգնել են նավակամրջակի երկու կողմերում, նետել են կարթաթելերը ու համբերությամբ սպասում են, թե երբ ձուկը միամտորեն «կկտցի» խայծը: Սակայն, ձկներն, ինչպես երևում է, այսօր կուշտ են: Ոչ մի կարթաթել չի ձգվում: Բայց, չէ՛... ահա ձկնորսներից մեկը, չկարողանալով զսպել հրճվանքը, բացականչում է.

— Բռնել է:

Բոլորը նախանձով նրան են նայում և բոլորի հետ, իհարկե, Ալիկը: Իսկ ձկնորսը, դանդաղ, զգուշորեն ձգում է կարթաթելը, ձգում է ու հետն էլ տարակուսում:

— Էս ի՞նչ ծանր է, տղե՛րք:

— Մա՛մ, հիմա կհանի,— կամացուկ հառաչում է Ալիկն ու ավելի ամուր է սեղմում մայրիկի ձեռքը:

Իսկ ձկնորսը դեռ ձգում է ու ձգում... ինչ–որ շա՛տ ծանր ձուկ է:

— Օգնի՛ր, ի՞նչ ես նայում,— ասում է նա ընկերոջը:

Ընկերն էլ մի կողմից է բռնում կարթաթելն, ու նրանք երկուսով ձգում են: Ահա, քիչ մնաց, մի անգամ էլ... և հանկարծ ջրի միջից հայտնվում է ծառի մի ճյուղ: Ո՞վ գիտե, երբ էր խրվել ավազի մեջ: Ձկնորսը շփոթված ու կաս–կարմիր կտրած դեռ ակամա ձգում է կարթը: Նրա ընկերներն անձայն ծիծաղում են: Իսկ Ալիկը... Ալիկը քրքջում է, Ալիկը ուրախությունից թռչկոտում է տեղում, այնպես է հռհռում, որ աչքերից արցունքներ են հոսում:

Ձկնորսը թշնամանքով նայում է Ալիկին:

— Դե, դու էլ ի՞նչ ես բերանդ բացել,— գոռում է նա:

Ալիկը ձգում է մայրիկի ձեռքից, նրան մի կողմ է տանում ու շարունակում է քրքջալ անզուսպ, բարձր, անկեղծ:

— Դե լավ,— ասում է մայրիկը,— չէ՞ որ մեղք է ձկնորսը, ամբողջ օրը կանգնել էր:

Ալիկը հանկարծ լրջանում է:

— Մեղք չի,— ասում է նա:

— Ինչո՞ւ:

— Մեղք չի,— պնդում է Ալիկը,— ես գիտեմ:

— Ի՞նչ գիտես:

— Ձկները տխրում են, որ ձկնորսները բռնում են նրանց:

Մայրիկը լռում է մի պահ ու չգիտես ինչու հանկարծ անհրաժեշտ է գտնում շոյել Ալիկի գլուխը:

— Դե չէ,— ասում է նա,— ձկները ոչինչ էլ չեն հասկանում:

— Հասկանում են,— մրմնջում է Ալիկը,— հասկանում են, ձկները տխրում են: Լաց են լինում, ես գիտեմ:

Ալիկը լռում է ու նայում է ծովին, որը կապույտ–կապո՛ւյտ է ու չգիտես որտեղ է վերջանում:

Հետո հանկարծ նայում է մայրիկին ու շատ կամացուկ ասում է.

— Տե՛ս արցունքները...

— Ի՞նչ արցունքներ,— զարմանում է մայրիկը:

— Ձկների...— համարյա շշնջում է տղան,— ծովը հենց ձկների արցունքից է... ես գիտեմ...

Ու փախչում է: Փախչում է՝ ինքն էլ իր մտքերից զարմացած, փախչում է, որ չլսի, թե ինչ կասի մայրիկը:

ԿԱՐԱՊՆԵՐԸ

Մայրիկը Ալիկին զբոսանքի էր տարել հրապարակ: Այնտեղ ամեն ինչ դուր էր գալիս Ալիկին՝ կառավարական շենքը, հյուրանոցը, կուլտուրայի տունը: Իսկ ամենից շա՛տ: Այո՛, ճիշտ կռահեցիք. ջրավազանը՝ իր շատրվանով: Դե ո՞ւմ դուր չի գա: Ջուրը ուժգին, աղմուկով նետվում է վեր, կարծես մի պահ քարանում օդում, ապա շառաչելով գահավիժում՝ շուրջը տարածելով մանրագույն կաթիլներ, ջրափոշի ու զովություն: Փակում ես աչքերդ, ու թվում է, թե մի մեծ, մեծ ջրվեժի առջև ես կանգնած, ու նույնիսկ մի տեսակ պտտվում է գլուխդ: Ահա թե ինչու հրապարակի անկյունին հասնելուն պես, Ալիկը բաց թողեց մայրիկի ձեռքը ու սլացավ դեպի իր ամենասիրելի շատրվանը: Երկար նայում էր, փակում

աչքերը, ժպտում ինքն իրեն, հետո խառնվեց աղավնի-ներին, մի ինչ–որ լեզվով բավականին զրուցեց նրանց հետ, ապա մոտեցավ ջրավազանին:

— Մայրի՛կ,— կանչեց հեռվից,— սպիտակ, մեծ սա-գեր:

Մայրիկը ևս մոտեցավ ջրավազանի եզրին:

— Դրանք սագեր չեն,— ասաց նա,— կարապներ են:

— Ինչ լավ են լողանում,— հառաչեց Ալիկը:

— Այո՛, հրաշալի են լողում,— ուղղեց մայրիկը,— և ամբողջ օրը ջրի մե՛ջ են:

— Իհարկե:

Ալիկը լռեց: Հետո միանգամից արագ հարցրեց.

— Հիմա բոլորն էլ տառապում են հոդացավով, չէ՞:

— Ինչ հոդացավ,— զարմացավ մայրիկը:

— Ինչ մոռացկոտն ես, մայրի՛կ,— ասաց Ալիկը,— չէ՞ որ դու երեկ ինձ ասացիր, թե այդքան մի մնա առվա-կում, որովհետև հոդացավով կտառապես:

Մայրիկը սրտանց ծիծաղեց: Մինչև նրանից իր հարցի լրիվ պատասխանը ստանալը, Ալիկը զարմացած մտա-ծում էր, թե ինչ ծիծաղելու բան կար իր խոսքերի մեջ:

ԱՅԴՔԱՆ ԷԼ ՀԱՏԱԽՈՍ

Չգիտեմ դուք տեսել եք, թե ոչ, բայց ես Ալիկից ավելի շատախոս երեխայի կյանքումս չեմ հանդիպել: Հատկապես մի քանի ամիս առաջ, նա ամբողջ օրը խո-

սում էր, խոսում էր առանց շունչ քաշելու, անդադար, առանց որևէ ընդմիջման: Նրա շատախոսությունը առանձնապես անտանելի դարձավ այն բանից հետո, երբ մի քանի անգամ ռադիոռեպորտաժ լսեց ֆուտբոլի ստադիոնից:

Վերջ: Տանն այլևս ոչ ոք հանգիստ չուներ:

Պատշգամբից, ճաշասենյակից, ննջարանից, խոհանոցից, միջանցքից, լողասենյակից և նույնիսկ բակից անվերջ լսվում էր Ալիկի ձայնը:

— Մանթարլյանը փոխանցեց Սուփրիկյանին, Սուփրիկյանը՝ Հովիվյանին, Հովիվյանը՝ Անտոնյանին: Հարվածը: Պետք է հարվածել: Մեկ անգամ ևս: Դարպասապահ Յաշինը պատրաստվում է ազատ հարվածի:

Եվ այսպես անվերջ, անընդհատ, միայն այն տարբերությամբ, որ հաջորդ անգամ Սուփրիկյանն էր փոխանցում Մանթարլյանին, Հովիվյանը՝ Սուփրիկյանին, բայց հարվածը չէր կայանում, որովհետև ինչպես միշտ, Սուփրիկյանը խաղից դուրս էր:

Դե՛, ինքնե՛րդ ասեք, կարելի՞ էր այդպես շարունակել: Ո՞չ: Ճի՛շտ է: Դրա համար էլ մայրիկը մի քանի անգամ խստորեն զգուշացրեց Ալիկին:

— Այդքան չի կարելի խոսել:

— Ես էլ չեմ ուզում,— արցունքոտ աչքերով ասում էր Ալիկը,— ես էլ չեմ ուզում խոսել, բայց իրեն–իրեն խոսվում է:

Իսկ դու պարզապես լռիր:

— Չի լինում, մայրի՛կ ջան:

— Կլինի, աշխատիր չխոսել և վերջ,— բարկանում էր մայրիկը:

— Կաշխատեմ,— անկեղծորեն համաձայնում էր Ալիկը, բայց քիչ հետո բոլորը լսում էին, թե ինչպես մեծ զգեստապահարանի հետևում Ալիկը շարունակում էր այդ անիծյալ գնդակը փոխանցել Մանթարլյանին ու Սուփրիկյանին:

Վերջապես մայրիկի բազմաթիվ հորդորներից հետո, Ալիկը խոստացավ կամքի ամենաուժեղ լարումով չխոսել գոնե ճաշի ժամանակ:

Եվ չխոսեց: Բոլորը զարմացած ու հիացած էին:

Հետո մայրիկը պատահականորեն նայեց Ալիկի դեմքին, նայեց ու.

— Դա ի՞նչ նոր բան է, Ալի՛կ,— ասաց նա,— ինչո՞ւ կանոնավոր չես ուտում, ինչո՞ւ ես ծռմռում դեմքդ, այդ ի՞նչ տեսակ ես շրթունքներդ շարժում:

Ալիկը դադարեց մի պահ, բայց քիչ անց նորից սկսեց ծռմռել դեմքը, աչքերը փակել, խաղացնել այտերը, հոնքերը մեկ վեր բարձրացնել ու մեկ էլ մոտեցնել, կպցնել իրար, շրթունքները սեղմել, բացել, ծռել աջ ու ձախ:

Ալիսան փռթկաց, իսկ մայրիկն արդեն բարկացավ:

— Այդ ի՞նչ ես անում, Ալի՛կ:

Ալիկը ուսերը թոթվեց՝ իբր ինչ է անում որ, հետո մի տեսակ հուսահատ ասաց.

— Ի՞նչ անեմ, մայրի՛կ ջան, մտքումս եմ խոսում... էլ չեմ կարող, մայրի՛կ ջան:

Բոլորը ծիծաղեցին, չկարողացավ ծիծաղը զսպել նաև մայրիկը:

— Ինչ անեմ քեզ հետ,— ասաց նա,— ավելի լավ է խոսես, քան թե այդպես ծռմռես դեմքդ:

Ալիկը պայծառացավ միանգամից, արագ վեր թռավ աթոռից ու վազեց՝ միջանցքով բացականչելով.

— ...Հովիվյանին: Հովիվյանը հանձնեց Անտոնյանին, Անտոնյանը...

Դե՛ ասեք, աշխարհում Ալիկից ավելի շատախոսի հանդիպե՞լ եք:

ԳՐԱԿԱՆ ՆԱԽԱՆՁ

Երբ ես Ալիկին կարդացի իմ այս վերջին պատմվածքը՝ նրա մասին, նա անսպասելիորեն դարձավ դեպի ինձ ու հարցրեց մի տեսակ դժգոհ.

— Հայրի՛կ, ուրեմն ես ինչ որ ասեմ, դու պետք է գրե՞ս:

Ես շատ վշտացա: Կարծես թե ինձ համար եմ գրում: Ես էլ մտածում էի, թե Ալիկը գոհ կլինի ինձանից, կմեծանա, շատ կմեծանա, ինքն էլ հայրիկ կդառնա, մի օր կկարդա իմ այս «Պատմվածքներ փոքրիկ Ալիկի մասին» շարքը ու ծիծաղով կհիշի իր մանկությունը: Իսկ նա...

— Ալեքսա՛նդր,—ասացի,— բայց մի՞թե քո ասած ամեն ինչը ես գրում եմ: Չե՞ս նկատում, որ ընտրում եմ այնպիսիները, որոնք սրամիտ են և հետաքրքիր կլինեն ուրիշ երեխաների համար:

Ալիկը լուռ էր:

Ահա՛: Իսկ ես միշտ ուշադրությամբ հետևել եմ նրան, նրա ասած որևէ հետաքրքիր խոսքի, այսպես ասած, գեղարվեստական ձև եմ տվել, գեղեցկացրել եմ: Նույ-նիսկ Ալիսայի ասած խելոք կամ զավեշտական դատո-ղությունները Ալիկին եմ վերագրել: Իսկ նա...

Ալիկը լուռ էր: Հետո խորամանկորեն ժպտաց:

— Իսկ ես մի բան գիտեմ:

— Ի՞նչ գիտես,— հետաքրքրվեցի ես:

— Ես մի քանի լավ բաներ պահել եմ մտքումս, բայց քեզ չեմ ասի, որովհետև ասեմ թե չէ, կգրես:

— Իսկ դու ի՞նչ պիտի անես այդ պահածները,— հեգնեցի ես:

— Կգրեմ,— ասաց Ալիկը:

— Դո՛ւ,— թունոտ ծիծաղեցի ես:— Դո՛ւ, ինչպե՞ս կգրես, երբ գրել չգիտես:

— Կսովորեմ,— ասաց Ալիկը,— Ալիսան արդեն ինձ սովորեցնում է, տե՛ս, ու իմ աչքի առջև սեղանին մատի-տով գրեց՝ «Ալեքսանդր»:

Պատկերացնո՞ւմ եք: Դե եկ ու այդքանից հետո մի բարկանա: Ինքն է ուզում գրել: Կարծում է գրելը հեշտ բան է: Դե թող փորձի...

— Դու հո չե՞ս բարկանում, հայրի՛կ,— հանկարծ տխրեց Ալիկը,— ուզո՞ւմ ես մեկն ասեմ:

— Ո՛չ,— ասացի ես:

Ի վերջո ես գրող եմ և իմ ինքնասիրությունը ունեմ: Նա կարծում է, թե ես միայն մանկական պատմվածքներ կարող եմ գրել և այն էլ իր տված թեմաներով: Դա դեռ կտեսնենք:

— Ո՛չ,— ասացի,— ինքդ գրի:

Թող գրի, կարծում է գրելը հեշտ բան է...

Եվ որտեղի՞ց հայտնվեց նրա մեջ այդ գրական նախանձը:



Համլիկ Քալանթարյան, 6 տ.

ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Հայկը միանգամից արթնացավ, դեն նետեց վերմակն ու ելավ տեղից: Մարմինը փշաքաղվեց: Ցուրտ էր: Նա նայեց շուրջը՝ ճանապարհորդական մահճակալների վրա պառկած ընկերներին: Նկատեց, որ Ստեփանը բացվել է, կամացուկ մոտեցավ ու ծածկեց նրան: Հետո դուրս եկավ վրանից:

Արեգակը դեռ չէր հայտնվել, բայց նրա ճառագայթներն արդեն շեղակի ընկել էին Մրղուզ սարի վրա ու շիկացրել նրա լերկ, քարացած հեծյալ հիշեցնող գագաթը:

Հայկը քայլեց կանաչի միջով, հասավ դիմացի փոքրիկ բացատը, տարածեց ձեռքերը, լիակուրծք շնչեց վաղորդյան սառն ու թարմ օդը և սկսեց մարզանք անել: Թվաց, թե եղանակը տաքացավ:

— Արթնացել ես, հա՞,— հնչեց ինչ–որ տեղից: Անտառը բոլորովին մոտիկից խուլ արձագանք տվեց:

Հայկը շրջվեց ձայնի կողմը: Ներքևից՝ բաղեղներով պատված կեչիների կողմից, դեպի բացատ էր բարձրանում նրա ֆիզկուլտուրայի դասատուն՝ Սահակյանը: Նա բլուզով էր միայն, անդրավարտիքի փողքերը ծալել էր մինչև ծնկները, կոշիկները թրջվել էին ցողից: Նրա աջ ձեռքին ջրաման կար, իսկ ձախով բռնել էր բարակ ճյուղերի մի փունջ:

— Իսկ ես շատ սառը աղբյուր գտա,— վերելքից թեթև հևալով՝ շարունակեց Սահակյանը:

Նա մոտեցավ վրանին, ջրամանը տարավ ներս, իսկ ճյուղերը կոտրատելով՝ սկսեց խարույկ պատրաստել: Քիչ հետո ճյուղերը թշշացին, ծուխ արձակեցին, ապա բռնկվեցին կարմրավուն, պայծառ բոցով: Սահակյանը կաթսայի մեջ ջուր լցրեց, կախեց խարույկի վրա, ապա ձայնեց.

— Արթնացրո՛ւ տղաներին, Հայկ, ուշ է…

* * *

Ամբողջ խումբը օջախի շուրջը նստած ճաշում էր:

— Ա՛խ, տղե՛րք,— չդիմացավ Արմենը,— ախր ինչո՞ւ ուտելու մրցում էլ չկա, է՛, ազնիվ խոսք, բացարձակ չեմպիոն կդառնայի:

— Ուտելու մեջ չէ, բայց խոսելու մեջ հիմա էլ չեմպիոն ես,— ժպտաց Սահակյանը,— բայց ինձ թվում է՝ այսօրվա մրցությունից հետո խոսելու ախորժակդ էլ կփակվի:

Ծիծաղեցին: Ու ամեն մեկն սկսեց մտածել առաջիկա մրցության մասին: Դժվար է լինելու: Հայկը, իհարկե, ամեն ինչ կանի անցյալ տարվա չեմպիոնի իր կոչումը պահելու համար: Բայց ո՞վ գիտե, բոլորն էլ լավ մարզված են:

— Մրցության պայմանները նույնն են, ինչ–որ անցյալ տարվանը,— երբ նախաճաշն ավարտվեց, ասաց Սահակյանը,— միայն այն տարբերությամբ, որ այս անգամ

ստարտը տրվելու է անջատ եղանակով: Առաջին ճանապարհվողից երկու րոպե հետո դուրս կգա երկրորդը և այսպես մինչև վերջ: Հաղթող կհամարվի նա, ով ավելի կարճ ժամանակամիջոցում կհասնի նպատակակետին՝ Բլրաշատ գյուղը: Ես մոտոցիկլետով կգնամ այնտեղ ու ինքս կհաշվեմ ժամանակը: Հարցեր կա՞ն…

Տղաներն իրար նայեցին: Բոլորի փոխարեն պատասխանեց Ստեփանը.

— Ո՛չ:

Այնուհետև վիճակ հանեցին: Առաջինը պետք է գնար Արմենը, երկրորդը՝ Ստեփանը, երրորդը՝ Հայկը, չորրորդը՝ Վարդանը, իսկ վերջում՝ Ռոբերտը:

— Տղե՛րք, առաջնությունս զիջում եմ. ո՞վ է ուզում համարս: Ուրիշ բան չմտածեք, հա, պարզապես «մեկ» թվանշանը որ տեսնում եմ, օրագիրս աչքիս առաջ է գալիս,— նորից կատակեց Արմենը:

Բայց այս անգամ ոչ ոք չծիծաղեց: Հուզված էին: Եվ ինչպե՞ս չհուզվել, երբ այս մրցությունում միայն հայտնի կդառնա, թե ով իրավունք ունի մասնակցելու պատանիների միջշրջանային մրցումներին: Բայց միայն դա չէ. նրանք առաջին անգամ էին մասնակցելու 25 կիլոմետր տարածությամբ նման պաշտոնական մրցության:

Արեգակը տղաներին տեսավ արդեն մրցությանը պատրաստ ու շողշողացրեց հեծանիվների փայլուն խողովակները: Հայկը վերջին անգամ ձգեց պտուտակները, աչքի տակով նայեց ընկերներին, որոնք նույնպես զբաղված էին իրենց հեծանիվներով ու մտածեց. «Զարմանալի բան է սպորտը: Ա՛յ, բոլորս էլ մոտ ընկեր-

ներ ենք, սովորում ենք միմյանց հետ, ճանաչում իրար, թվում է, թե դրանից ավելի միմյանց հասկանալ հնարավոր էլ չէ: Բայց, խնդրեմ՝ երկու տարի առաջ բոլորն էլ կարծում էին, թե Արմենը, օրինակ, կատակելուց բացի, ուրիշ ոչնչի ընդունակ չէ. ամռանն անգամ դպրոց էր գալիս վիզը շարֆով ամուր փաթաթած ու անընդհատ փռշտում էր: Տղաները հոգնել էին «առողջություն» ասելուց, դրա համար էլ մի թղթի վրա մեծ–մեծ տառերով գրել էին «Առողջություն, վարժապետ» ու փակցրել նրա սեղանի վրա: Բայց երբ հեծանվորդների խմբակի պարապմունքներին սկսեց հաճախել, ձմռանն անգամ վերարկու չէր հագնում: Իսկ անցյալ տարի քիչ էր մնացել, որ հաղթեր մեզ...»:

Նրա հուզմունքն անցել էր, սիրտը մի տեսակ ջերմությամբ լցվել իր ընկերների նկատմամբ, իրենց դպրոցի, հունիսյան այդ խաղաղ ու կանաչ այգաբացի նկատմամբ: Նա անասելի պահանջ զգաց արտահայտելու իր ուրախությունը ու, հենց այնպես, բարձրաձայն կանչեց.

— Հը՛, ո՞նց եք, տղե՛րք...

— Վերջում կերևա:

— Կամ, թեկուզ, քե՞զ ինչ:

Այս ու այն կողմից աշխուժորեն արձագանքեցին նրա ընկերները:

— Ի՞նչ է, չլինի՞ թե վախենում ես,— գլուխը հեծանիվի վրայից բարձրացնելով՝ հեգնանքով հարցրեց Վարդանը:

— Ո՛չ, ինչո՞ւ...

— Աչքիս այդպես է երևում,— նույն ընդգծված հեգնանքով ասաց Վարդանը,— գույնդ ոնց որ տեղը չէ:

Տղաները ծիծաղեցին, այդ ծիծաղը վիրավորեց Հայկին: «Զարմանալի տղա է այս Վարդանը,— խոսեց նա մտքում,— մի բան չի լինի, որ ասի առանց հեգնանքի, ինչո՞ւ, չես հասկանում: Պարզապես չար սիրտ ունի, էլի»:

Ու նա հիշեց, թե ինչպես, երբ Վարդանը անցյալ տարի իրենց դպրոցն ընդունվեց ու առաջին քառորդում դժվարանում էր, իրեն՝ որպես հարվածայինի, ջոկախորհրդի որոշմամբ հանձնարարեցին օգնել նրան: Բայց երբ այդ մասին մի թեթև ակնարկեց Վարդանի մոտ, նա նայեց իրեն հենց այդ նույն անտանելի հեգնոտ հայացքով ու առանց այլևայլության ասաց.

— Սիրելի՛ ընկեր հարվածային, լավ կանես՝ մտածես քո գերազանցիկ դառնալու մասին: Ես առանց դայակի էլ յոլա կգնամ:

Ու, ճիշտ է, թեև մյուս քառորդում Վարդանն իրոք ուղղեց իր թվանշանները, բայց Հայկը չմոռացավ վիրավորանքը, ու նրանց հարաբերությունները այդպես էլ մնացին չոր ու սառը:

— Չէ՛, պարզապես չար սիրտ ունի,— կրկնեց Հայկը,— ո՛չ Ստեփանը, ո՛չ Արմենը, ո՛չ մեկն էլ նրա նման չեն: Մանավանդ Ստեփանը: Ա՛յ իսկական ընկեր, միշտ ժպտուն, միշտ ընկերասեր, մի խոսք չի ասի առանց «ջանի»:

Ու կարծես այդ միտքը հաստատելու համար Ստեփանը հանկարծ կանչեց.

— Հա՛յկ ջան, 14 բանալին գցիր այս կողմ, էլի՛: Իմը չեմ գտնում:

Հայկը ժպտաց ու բանալին նետեց Ստեփանին: Երկաթը անձայն ընկավ կանաչների մեջ, հենց Ստեփանի ոտքերի մոտ…

Անտառն աղմկեց: Ավտոմեքենան հոնդաց միանգամից և, վրանով ու դաշտային մահճակալներով ծանրաբեռնված, բռնեց Բլրաշատի ճամփան: Քիչ հետո երևաց նաև մարզիչը:

— Վերջացրե՛ք, տղանե՛ր, ու բոլորդ էլ խճուղի դուրս եկեք. հինգ րոպեից հետո տրվում է մեկնարկը:

Հեծանվորդները գործիքներն արագորեն դրեցին պայուսակների մեջ, մի վերջին անգամ ստուգեցին անվադողերի ամրությունը և, հեծանիվների նստատեղերից բռնած կամ պարզապես ուսած, դուրս եկան դեպի ասֆալտապատ խճուղին: Վերջից առույգ ու թեթև քայլում էր Հայկը: Նա հանկարծ զգաց, որ ինչ–որ բան պակաս է, մոռացել է ինչ–որ բան: Բայց ի՞նչ… Չկարողացավ հիշել, թափ տվեց ձեռքն ու առաջ անցավ…

— Ուշադրությո՛ւն: Մա՛րշ:

Արմենը, որ լարվածությունից կծկվել էր հեծանիվի վրա, հանկարծ մեկեն բարձրացավ ու պոկվեց տեղից: «Ժը՛ժժ, ժը՛ժժ»,— լսվեց անվադողերի՝ ասֆալտին շփվելուց առաջացած ծանոթ ձայնը, ու հեծանիվը առաջ սլացավ: Եվս մի քանի վայրկյան, և հեծանիվն ու հեծանվորդը ծածկվեցին աջակողմյան բլրի հետևում, ասես կուլ գնացին նրան:

— Լավ գնաց,— լռությունը խախտելով՝ հիացած արտասանեց Հայկը,— լավ էր, չէ՞, Ստեփա՛ն:

Ստեփանը, որ արդեն հեծանիվի վրա էր և ամրացնում էր ոտքերի կաշեկապերը, արհամարհանքով ժպտաց.

— Չհավատա՛ս, կբռնեմ…

— Ուշադրությո՛ւն, մա՛րշ:

Ստեփանի սև, փայլուն մայկան միայն մի ակնթարթ ձգվեց և հենց նույն վայրկյանից իսկ սկսեց փողփողալ քամուց:

«Գնաց…— շշնջաց Հայկը, և նրա մեջ նորից արթնացավ հպարտությունը ընկերների նկատմամբ,— լավ են պոկվում տեղից, անցյալ տարվա հետ չի կարելի համեմատել»: Նա դանդաղորեն մոտեցավ իր հեծանիվին, պտտեցրեց անիվները, սիրով ունկնդրեց նրանց ծանոթ բզզոցը, ապա կտրուկ շարժումով վերցրեց հեծանիվը, ուսեց ու մոտեցավ գծին:

— Թող բռնեմ՝ չընկնես,— մոտեցավ նրան Վարդանը:

Նրա ձայնի մեջ Հայկը նորից հեգնանք զգաց, բայց ոչինչ չպատասխանեց, թույլ տվեց, որ Վարդանը բռնի հեծանիվը, բարձրացավ, ամրացրեց ոտքերի կաշեկապերը ու սպասեց ազդանշանի:

Սահակյանը բարձրացրեց ձեռքը:

Հայկը սկսեց հաշվել վայրկյանները: Քունքերը հուզմունքից տրոփեցին: Նա զգաց, որ դողում է: Երևի այդ նկատելի էր, որովհետև Վարդանը չոր–չոր ասաց.

— Ի՞նչ ես քեզ կորցրել:

Հայկը վիրավորվեց նորից, դարձավ, ուզեց ինչ–որ բան ասել, բայց անմիջապես նկատելով մարզիչի ձեռքի շարժումը դեպի ցած՝ բարձրացավ ու թափով առաջ

նետվեց: «Արա՛գ, արա՛գ որքան հնարավոր է, ինչքան ուժ ունես»,— ոտքի ռիթմիկ շարժումների հետ կրկնում էր նա՝ մտածելով հենց սկզբից ժամանակ շահել: Հեծանիվն ասես հասկանում էր նրա մտադրությունը. շարժվում էր հանգիստ, անաղմուկ ու արագ: Ահա բլուրը: Հայկը կտրուկ թեքվեց աջ: Նրա դիմաց բացվեց երկար, ասես քանոնով գծված ասֆալտապատ խճուղին:

Աջ կողմում անտառն էր, հնադարյան անտառը՝ իր մեռնող ու նոր ծնվող ծառերով, անտառը՝ կորած բաղեղների ու մացառների մեջ, գեղեցիկ ու խորհրդավոր, իսկ ձախ կողմը ասես գորգ լիներ կամ ավելի ճիշտ՝ մի մեծ ու լայն կտավ, որի վրա նկարիչն աշխատել էր տալ բոլոր գույները, բոլոր նրբերանգները, մի փոքր ավելի գերադասելով կապույտը, որն սկսվում էր ճամփեզրի փոքրիկ ծաղիկներով ու գնում դաշտի միջով, հասնում մինչև սարերը և նրանց հետ ձուլվում երկնի լազուրին:

Բայց Հայկը չէր տեսնում այդ ամենը: Ուրիշ ժամանակ նա գուցե կանգներ ու ժամերով անշարժ հիանար բնության այդ հոյակապ գեղեցկությամբ: Բայց այսօր չէր կարող: Այսօր նա միայն տեսնում էր սպիտակ, անվերջանալի թվացող ասֆալտը և այն փոքրիկ, սև կետը, որն ասես մեկ մոտենում էր, մեծանում, մեկ՝ հեռանում ու կորչում աչքից:

«Ստեփանն է,— մտածեց Հայկը,— և ճանապարհն էլ դար ու փոս է»:

Նա ավելի արագացրեց ընթացքը, ու գնում էր՝ առանց հետ նայելու, մեջքը աղեղնաձև ուռցրած, շնչելով միայն քթով: Հանդիպակաց քամին ծեծում էր նրան,

խփում դեմքին, դժժում ականջների մեջ, խանգարում ընթացքը: Բայց Հայկը դա էլ չէր զգում:

«Ինչ էլ լինի, պետք է հասնել Ստեփանին, դրանով ես շահած կլինեմ ուղիղ երկու րոպե»,— ահա միակ բա-նը, որ առկայծում էր նրա մտքում: Նա այնքան էր կլան-ված իր խոհերով, որ նույնիսկ չէր էլ լսում հետևից եկող աղմուկը և սթափվեց միայն այն ժամանակ, երբ իր մո-տով մեծ արագությամբ սլացող մոտոցիկլետի միջից Սահակյանը ձայնեց.

— Ապրե՛ս, Հա՛յկ, շա՛տ լավ է:

Մոտոցիկլետը հռնդաց ու անցավ:

«Գնաց դիմավորելու չեմպիոնին,— ժպտաց Հայ-կը,— բայց ո՞վ կլինի արդյոք այդ չեմպիոնը»: Նա ավելի արագացրեց ընթացքը: Թվում էր, թե հեծանիվը ոչ թե գնում, այլ պարզապես թռչում էր: Բայց որքան էլ Հայկը արագացնում էր ընթացքը, նրան թվում էր, թե դա էլի քիչ է, թե իր հնարավորություններից շատ դանդաղ է ընթանում: Եվ ավելի ուժեղ էր սեղմում ոտնակները:

Ճանապարհը դարձավ ոլորապտույտ: Ոլորաննե-րից մեկում Հայկին թվաց, թե բոլորովին մոտիկ, իր առջևում տեսավ Ստեփանի սև, փայլուն մայկան: Դա ոգևորեց և կարծես մի նոր, թարմ ուժ տվեց նրան: Նո-րից մի ոլորան, մեկը ևս և... Եվ Հայկը մոտ 20 մետր հեռավորության վրա տեսավ Ստեփանին: Նա ընթա-նում էր բավական մեծ արագությամբ և նրա փոքր–ինչ ներս ընկած մեջքից միայն Հայկը կռահեց, որ Ստեփա-նը հոգնել է: Հաջորդ րոպեին Հայկն արդեն հասել էր Ստեփանին:

— Հոգնել ես, հա՛, Ստեփա՛ն,— ձայնեց նա,— մի քիչ էլ արագացրու:

Ստեփանը դարձավ դեպի նա: Հայկը նրա աչքերում զարմանք, ապա վիշտ նկատեց:

— Դե՛, արագացրո՛ւ,— կրկնեց Հայկը ու թափով մի փոքր առաջ անցավ:

— Չե՛մ կարող,— հևալով պատասխանեց Ստեփանը,— թող մի քիչ «անիվիդ նստեմ»:

Դա նշանակում էր, որ Հայկը պետք է դանդաղեցներ ընթացքը, հնարավորություն տար Ստեփանին՝ անմիջապես ընթանալու իր հետևից և պաշտպաներ նրան հանդիպակաց քամուց: Սակայն դա արգելված էր հեծանվային անջատ մրցություններում:

— Բայց դա խախտում է,— առարկեց Հայկը,— ինչպե՞ս կարելի է:

— Խնդրում եմ, Հա՛յկ ջան, դատավորներ հո չկան: Ընկերներ ենք, չէ՞... Բա ես մնա՞մ...

Նրա ձայնի մեջ այնքան աղերսանք կար, որ Հայկը այլևս չկարողացավ մերժել: «Ինչ լինելու է, թող լինի»,— չգիտես իր, թե Ստեփանի վրա բարկանալով՝ մրմնջաց նա ու դանդաղեցրեց ընթացքը: Ստեփանը հասավ նրան:

— Ես սա երբեք չեմ մոռանա,— Հայկի հեծանիվի հետևում պատսպարված՝ շշնջում էր նա,— Հա՛յկ ջան, ախպե՛ր ջան:

— Դե լա՛վ, լա՛վ,— մեղմացավ Հայկը,— միայն մի քիչ արագացնում եմ, թե չէ՝ այդպես երկուսս էլ հետ կմնանք:

Որոշ ժամանակ գնում էին լուռ, ինքնամփոփ: Հայկն զգաց, որ ընկերն արդեն կանոնավոր, հանգիստ է շնչում և առաջարկեց առաջ անցնել: Բայց Ստեփանը նորից խնդրեց.

— Չէ՛, դեռ լավ չեմ զգում, խնդրում եմ, Հա՛յկ ջան:

Հանկարծ, երբ ֆինիշին մնացել էր ընդամենը 3–4 կիլոմետր, հեծանիվների մեղմ, միալար բզզոցի միջից Հայկն ինչ–որ անսովոր, կոպիտ ձայն լսեց: Ձայնը կրկնվեց: «Մի՞թե...— Հայկը սարսափեց պատասխանել իր հարցին:— Գուցե պատահականություն է»: Բայց հենց նույն վայրկյանին էլ, երբ թեքվում էր դեպի ձախ, զգաց, որ հեծանիվի անիվը թուլացել է և չի ենթարկվում իրեն: Մազ մնաց, որ վայր ընկներ: Նա աջ ձեռքը բաց թողեց ղեկից ու հետ տանելով բացեց պայուսակը: Առանձնապես դժվար բան չէ. պետք է հանել № 14 բանալին ու դրանով ձգել անիվը: Բայց ո՛ւր է: Նա փորփրեց ամբողջ պայուսակը, մեկ–մեկ մատներով շոշափեց բանալիները: № 14–ը չկար: Եվ հանկարծ հիշեց: Դե, իհարկե, № 14 բանալին ինքը Ստեփանին տվեց: Ահա թե ինչն էր մոռացել...

— Ստեփա՛ն,— կանչեց նա,— տո՛ւր № 14 բանալին,— ու այլևս անկարող շարունակել ճանապարհը, լրիվ դանդաղեցրեց ընթացքը:

— Ի՞նչ բանալի,— առանց կանգ առնելու հարցրեց Ստեփանը:

— № 14–ը, որ քեզ տվեցի:

Հեռվում երևում էին գյուղն ու նրա եզրին խռնված բազմությունը:

— Վա՛յ, Հա՛յկ ջան, մնաց խոտերի մեջ,— առանց հետ նայելու ձայնեց Ստեփանը՝ աչքը հառած բազմությանը:

— Ի՞նչ... Ստեփա՛ն, Ստեփա՛ն...

Բայց Ստեփանը այլևս չէր լսում: Նա գնում էր ամբողջ թափով:

Երկար ժամանակ հանգստանալով Հայկի թիկունքում՝ նա այժմ շռայլորեն ծախսում էր իր կուտակած ամբողջ եռանդը, միայն թե շուտ հասներ գյուղ, ֆինիշին, չեմպիոնի կոչմանը:

— Ստեփա՛ն...

Հեծանիվը մի վերջին ճռինչ արձակեց ու կանգ առավ: Հայկը վայր ցատկեց և զայրույթից ու հիասթափությունից ընկավ ճամփեզրի խոտերի վրա: Արցունքը բարձրացել էր կոկորդն ու խեղդում էր նրան: Հետո հանկարծ վեր թռավ տեղից, ուսեց հեծանիվն ու սկսեց հոգնած քայլերով վազել ասֆալտապատ խճուղով:

— Այդ ի՞նչ է եղել, Հա՛յկ,— հնչեց մի ձայն:

Հայկը շրջվեց: Վարդանն էր: «Հիմա կհեգնի նորից»,— անցավ Հայկի մտքով ու համարյա գոռաց.

— Իսկ քե՛զ ինչ, գնա՛ քո ճամփով:

— Ա՛յ քեզ հիմար տղա,— առանց չարության արտասանեց Վարդանը, իջավ, Հայկի ձեռքից համարյա խլեց հեծանիվը, նկատեց թերությունը, վազեց, բերեց իր հեծանիվի № 14 բանալին, անմիջապես ամրացրեց պտուտակը:

— Դե գնա՛, շո՛ւտ:

— Վարդա՛ն,— հուզմունքից դողացող ձայնով մրմնջաց Հայկը,— Վարդա՛ն:

— Ի՛նչ Վարդա՛ն, Վարդա՛ն, շո՛ւտ արա, անունս նո՛ր սովորեցիր,— բարկացավ Վարդանը:

Հայկն ուզեց ինչ–որ բան ասել, բայց չկարողացավ, թռավ հեծանիվի վրա ու սլացավ առաջ:

Գնում էր նա՝ մերթ ուղիղ ու հարթ, մերթ ոլոր ու թեք, արևոտ ճանապարհով, գնում էր նա՝ իր կողքին զգալով ընկերոջ ջերմ շունչը:



Սոնա Գասպարյան, 4 տ.

ԵՐԿՈՒ ՀԱՂԹԱՆԱԿ

Դուռը լրիվ բացվեց, և երևաց մարզիչի հուզված, կարմրատակած դեմքը:

— Պատրաստվի՛ր, Գնունի՛,— դիմեց նա Կամոյին,— գործերն այնքան էլ լավ չեն,— ու նորից ծածկեց դուռը:

Կամոն սկսեց հագնվել: Անծանոթը նրա հանգիստ, բայց փոքր–ինչ գունատ դեմքից դժվար թե գուշակեր՝ հուզվա՞ծ է, թե ոչ: Բայց Լևոնը հասկանում էր նրան: Նա մոտեցավ, սկսեց բինտով կապել ընկերոջ ձեռքերն ու կամացուկ, որպեսզի ուրիշները չլսեն, շշնջաց.

— Դու անպայման կհաղթես, հասկանո՞ւմ ես, ես հո քեզ գիտեմ, դու ձախով խփիր, Կամո՛, ձախով,— ապա քիչ լռելուց հետո ավելացրեց,— հուզվո՞ւմ ես:

— Չէ՛ մի, — Կամոն հեգնանքով ժպտաց, — հիմա տես ի՛նչ եմ դարձնելու այդ չեմպիոնին… կոտլե՛տ: Երկու ռաունդ, և նա ներքնակը կլիզի:

— Դե լա՛վ, լա՛վ,— Լևոնը անբավականությամբ կնճռոտեց դեմքը,— ախր ինչո՞ւ ես այդքան մեծամիտ, է՛…

Նա շատ բան էր ուզում ասել, բայց մտածեց, լավ բան չէ մարտից առաջ ընկերոջը նախատելը: Լռեց:

— Դե դու էլ ի՞նչ ես «մեծամիտ հա մեծամիտ»: Հիմա կտեսնես…

Կամոն էլի ինչ–որ բան էր ուզում ասել, բայց այդ րոպեին աղմուկն ընդհատվեց, ու հնչեց բարձրախոսի

ձայնը. «Ռինգ են հրավիրվում № 1 սպորտդպրոցի սան Կամո Գնունին և № 2 սպորտդպրոցի չեմպիոն Գուրգեն Բալյանը»:

Հաջորդ րոպեին Կամոն բացեց հանդերձասենյակի դուռը, էլեկտրական լապտերների ուժեղ լույսից կկոցեց աչքերը, մոտեցավ ռինգին, վեր ելավ աստիճաններով, պարանը բարձրացնելով՝ մտավ շրջանակի մեջ: Դահլիճում հատուկենտ ծափեր լսվեցին: Շատերը չէին ճանաչում նրան: Բայց ահա թեթև ոստյունով ռինգ բարձրացավ Գուրգենը: Դահլիճը թնդաց ծափերից:

Հետո լսվեց ինչ–որ մեկի զիլ ձայնը.

— Գուրգե՛ն, քեզ տեսնեմ:

Կամոն նայեց իր հակառակորդին: Եվս մի երկու րոպե, և նրանք մարտի կբռնվեն, ու իրենցից յուրաքանչյուրը կանի ամեն ինչ դիմացինին հաղթելու համար: Այդպես է սպորտի օրենքը: Գուրգենը նստել էր հանգիստ, ոսկեգույն մազերի կարճ խոպոպիկները տարուբերվում էին լայն ճակատի վրա, պարզ, երկնագույն աչքերը փոքր–ինչ հեգնորեն ուղղված էին Կամոյին:

Հակառակորդները շարժվեցին իրար ընդառաջ: Հնչեց գոնգը: Նրանք սեղմեցին միմյանց ձեռք ու կանգնեցին դեմ հանդիման՝ կռվի պատրաստ: Եվ հանկարծ Գուրգենը միանգամից թեքվեց առաջ, հետո հետ քաշվեց, նորից առաջ նետվեց ու ձախ ձեռքով հարվածեց Կամոյի դեմքին, իսկ աջով՝ կրծքին ու նորից թեթևաքայլ ճոճվելով՝ նահանջեց: Այնքան գեղեցիկ էին նրա հարվածները, այնքան ճարպիկ ու հանկարծակի, որ հանդիսականները միայն մի քանի վայրկյան հետո

ըմբռնեցին կատարվածն ու ծափերով վարձատրեցին Բալյանին:

Կամոն շուտ ուշքի եկավ: Ձախ ձեռքը տարավ դեմքի վրայով՝ ասես հարվածի հետքը ջնջելու համար, շրթունքները ամուր իրար սեղմեց ու առաջացավ դանդաղ, բայց հաստատուն քայլերով: Գուրգենը ցույց տվեց, թե նահանջում է, բայց նորից հարվածեց… Հնչեց գոնգը:

Կամոն իր անկյունում, ոտքերը մեկնած, նստել էր աթոռին, ագահորեն շնչում էր օդը: Նրա կուրծքը դարբնոցի փուքսի նման ելնում ու իջնում էր: Լևոնը սրբիչով հով էր անում նրան և միաժամանակ շշնջում.

— Դո՛ւ պիտի հաղթես: Ընկեր Պետրոսյանն էլ էր ասում: Մերոնք բոլորն այստեղ են, քեզ են նայում: Հոգնեցրու նրան, հետո՝ դու ձախով խփիր, Կամո՛…

Կարեկցանքի հետ խառնված այնպիսի մի հավատ կար Լևոնի արևառ դեմքին ու աչքերում, որ, չնայած ամբողջ հոգնածությանն ու ցավին, Կամոն ժպտաց:

Ամբողջ երկրորդ ռաունդում հարձակվում էր միայն Գուրգենը, իսկ Կամոն պաշտպանվում էր, ճարպկորեն խուսափում հակառակորդի հարվածից, որի ուժն արդեն զգացել էր: Նա ստիպում էր Գուրգենին վազվզել, անօգուտ ու թույլ հարվածներ տեղալ: Կամոն այնքան լավ էր պաշտպանվում, որ դահլիճի տրամադրությունը փոխեց: Նրան խրախուսում, ծափահարում էին, երբ անխուսափելի հարվածի տակ նա մի ակնթարթում փոխում էր դիրքը, ոտքի մի թեթև շարժումով թեքում իրանը և ստիպում, որ Գուրգենն ընկնի պարանների վրա:

— Կամո՛, Կամո՛, Կամո՛,— գոչում էին նրա ընկերները:

— Հերիք է, հիմա դո՛ւ խփիր, — բացականչեց մեկը, և մարտի շիկացած մթնոլորտում, աղմուկի մեջ Գնունին ճանաչեց այդ ձայնը: Լևոնն էր՝ իր ընկերը: Նրան թվաց, թե նույնիսկ տեսավ Լևոնի արևառ դեմքը՝ մշտական կրակը աչքերում: Կամոն նոր թափ առավ: «Ինչ էլ լինի, պետք է հաղթեմ»,— վճռեց նա: Հաջորդ վայրկյանին, երբ Գուրգենն ամբողջ իրանով առաջ ընկավ՝ աջով հարվածելու համար, միայն մի ակնթարթ բացվեց նրա կուրծքը, և Կամոն հարվածեց մի փոքր ցած: Դահլիճը խոր շունչ քաշեց: Գուրգենն ընկավ մի ծնկի վրա: Կամոն ուզեց հարձակվել, բայց դատավորը կանգնեցրեց նրան, նայեց մյուս դատավորներին ու, իմանալով նրանց կարծիքը, բարձրացրեց Կամոյի աջ ձեռքը, հատ–հատ ասաց.

— Բացարձակ գերազանցության համար մրցությունը դադարեցվում է: Երևան քաղաքի բռնցքամարտի գծով պատանի չեմպիոնի կոչումը նվաճեց Կամո Գնունին:

Կամոն միանգամից մոռացավ հոգնածությունը: Նա թեթև քայլերով մոտեցավ նախկին չեմպիոնին, հաղթողի վեհանձնությամբ ամուր սեղմեց նրա ձեռքը: Ընկերների ծափերի ու գոռում–գոչյունի տակ իջավ աստիճաններից, մտավ հանդերձասենյակ և մոտեցավ ընկերոջը՝ Լևոնին, որի դեմքը հրճվանքից այնպես էր փայլում, ասես ինքն էր տարել հաղթանակը:

— Հաղթեցի՛... Տեսա՞ր...

Եկավ մարզիչը: Գոհունակությամբ թփթփացրեց Կամոյի ուսին ու բարձրաձայն ասաց.

— Ապրե՛ս,— և դառնալով դեպի մյուսները՝ ավելացրեց,— ա՛յ թե ինչպես պիտի հաղթել:

Ընկերները փողոց դուրս եկան: Բոլորը շնորհավորում էին Կամոյին: Արևի շողերի տակ ձյունը փայլփլում էր ապակու մանր կտորների պես, աչք ծակում: Գնունունն թվում էր, թե բոլորն էլ իրեն են ժպտում, շնորհավորում, արևն էլ ասես այսօր մի ուրիշ տեսակ է, ավելի ջերմ: Նա քայլում էր՝ գլուխը բարձր, թեթևակի օրորվելով և ժպտում էր: Բայց երբ Լևոնը ձյունը գունդ արեց ու ծիծաղելով խփեց նրա մեջքին, Կամոն հանկարծ շրջվեց, խոժոռվեց ու անբավական ասաց.

— Ինչո՞ւ ես խփում: Մեզ են նայում:

— Է՛, ինչ անենք, որ նայում են, թե՛ չեմպիոն ես դարձել, արդեն ամաչում ես,— կատակեց Լևոնը:

— Թեկուզ դրա համար,— սառը պատասխանեց Կամոն: Հետո, նկատելով ընկերոջ դեմքի զարմանքը, ժպտաց.

— Դե լավ, կատակ արեցի, գնա՛նք:

* * *

Բայց դա կատակ չէր: Լևոնը վաղուց զգում էր, որ Կամոն մեծամիտ է, որ ուզում է ցուցադրել իրեն, նսեմացնել ուրիշների արժանիքները: Լևոնը նույնիսկ մի քանի անգամ ասել էր նրան այդ մասին, բայց Կամոն միշտ վիրավորվել էր, հայտարարել, թե իրեն մեծամիտ են համարում միայն նրա համար, որ ինքնավստահ է, որ գիտե իր արժանիքները:

— Եղե՞լ է մի բան, որ ասեմ ու չկարողանամ անել,— հարցրել էր Կամոն:

Եվ Լևոնը խոստովանել էր, որ այդպես է:

— Դե ուրեմն էլ ինչո՞ւ եմ մեծամիտ: Մեծամիտը նա է, ով սուտ–սուտ խոսում է, պարծենում, ձեռքից ոչինչ չի գալիս, բայց մեծ–մեծ խոսում է:

Լևոնը լռել էր: Եվ իսկապես, կարծես թե ճիշտ էր ասում Կամոն: Բայց՝ չէ՛: Հետո՞ ինչ: Եթե բոլորից ուժեղն է, ուրեմն պետք է հայտարարի՞ ամեն տեղ: Մի՞թե դա մեծամտություն չէ:

Չեմպիոն դառնալուց մի քանի րոպե հետո տեղի ունեցած ձնագնդիկի անմեղ պատմությունը Լևոնին համոզեց, որ ինքը և մյուս ընկերները չէին սխալվում, երբ մեղադրում էին Կամոյին մեծամտության մեջ:

Կամոն ավելի էր մեծամտացել: Եվ արդեն չէր էլ թաքցնում:

Որտեղ էլ լիներ՝ դպրոցում, թե տանը, պարապմունքի ժամանակ, թե հավաքույթում, երբ տեսնում էր, որ այլևս իր մասին չեն խոսում, Կամոն ինքն էր խոսք բացանում, ոգևորված պատմում իր ճարպկության, ուժի և խորամանկության մասին, մեկին երեք ավելացնում: Լևոնին դուր չէր գալիս այդ բոլորը: Ու թեև մոռանալով վիրավորանքը, սովորականի պես մտերմություն էր անում նրա հետ, բայց տեսնում էր, որ Կամոն այլևս այն չէ: Եվ երբ աշխատում էր նրան հասկացնել, որ ճիշտ բան չի անում, Կամոն միշտ կտրում էր նրան.

— Դու դեռ շատ հաց ու պանիր պիտի ուտես, որ ինձ խրատ տաս:

Հետո բանն այնտեղ հասավ, որ Գնունին իրեն գովելու ժամանակ շրջվում էր դեպի Լևոնն ու հարցնում.

— Հիշո՞ւմ ես, Լևո՛ն, այդպես չէ՞ր:

Իսկ սա խոսք չէր գտնում ասելու, լռում էր: Դե, հեշտ չէ կանգնել ու բոլորի առաջ ասել, թե ճիշտ չէ. սուտ ես ասում:

Բայց մի անգամ Լևոնը չդիմացավ, ու երբ նրանք մենակ մնացին, ասաց.

— Բա ամոթ չի՞, Կամո՛, ինչո՞ւ ես ստում: Լա՛վ, բոլորն էլ գիտեն, որ չեմպիոն ես, էլ ինչո՞ւ ես պարծենում:

Կամոն հանկարծակիի եկավ, կարմրեց ու չարությամբ ասաց.

— Ինձ համար նորություն չի: Բոլորդ էլ նախանձում եք ինձ:

— Ես է՛լ:

— Հենց դո՛ւ էլ: Սրան տես, որ քեզ հետ ընկերություն եմ անում, երևակայում ես:

Լևոնը թողեց ու տխուր հեռացավ: Նա ամեն օր սպասում էր, որ Գնունին կզղջա, կմոտենա իրեն, և նրանք կշարունակեն իրենց ընկերությունը: Բայց Կամոն ասես չէր էլ նկատում նրան: Նա սկսել էր վատ սովորել, բացակայում էր դասերից կամ երբ ուշացած ներս էր մտնում, և ուսուցիչը հարցնում էր, թե ինչու է ուշացել, նեղացած տոնով պատասխանում էր.

— Բոքսի պարապմունք էր:

Լևոնը լավ գիտեր, որ նա շարունակում է ստել: Չէ՞ որ նրանք միասին էին պարապում: Ասենք, համարյա ոչ ոք արդեն չէր հավատում նրան: Եվ զարմանալի չէր,

որ Կամոն այլևս մտերիմ ընկեր չուներ ո՛չ դպրոցում, ո՛չ էլ սպորտսմենների մեջ: Նա օրվա մեծ մասն անց էր կացնում կինո «Մոսկվայի» մոտ, ֆիզկուլտուրայի կենտրոնական տան մուտքի առաջ: Կանգնում էր ժամերով, առանց վերարկուի, որ անցնող–դարձողները տեսնեին բաճկոնի վրա փայլող չեմպիոնի կրծքանշանը…

Մի օր էլ պարապմունքի ժամանակ մարզիչը հայտնեց, որ Պրագայի պիոներների պալատի պատանի բռնցքամարտիկների խմբակի անդամներից նամակ է եկել իրենց սպորտդպրոցի հասցեով:

«Սիրելի՛ բարեկամներ,— գրված էր նամակում,— մենք թերթերից իմացանք, որ ձեր խմբակն առաջին տեղն է գրավել Երևան քաղաքի մրցումներում: Շատ ուրախ ենք: Եկեք մրցենք իրար հետ հեռակա կարգով: Համաձա՞յն եք: Հաղթող կհամարվի այն խմբակը, որի անդամներն ավելի շատ միավորներ կհավաքեն գարնանային մրցումների ժամանակ: Ընդունեք, խնդրում ենք, մեր համեստ նվերը՝ մեկ զույգ բռնցքամարտի ձեռնոց: Թող այն ձեզ հաջողություն բերի…»:

— Իսկ ձեռնոցներն ո՞ւր են,— աշխուժացան տղաները:

— Ահա,— և մարզիչը գեղեցիկ ժապավենով կապված տուփից դուրս բերեց մի զույգ ձեռնոց: Իսկապես որ հիանալի նվեր էր՝ կարված բարձրորակ, շագանակագույն կաշվից և նուրբ, ոսկեգույն թելերով երիզված: Տղաների աչքերը փայլեցին:

— Եվ մենք որոշեցինք,— շարունակեց մարզիչը,— այս ձեռնոցները տալ…— Կամո Գնունին հպարտությամբ վեր կացավ և ուզում էր քայլ անել,— Լևոն Դավթյա-

նին,— վերջացրեց իր խոսքը մարզիչը,— որպես կարգապահ և խոստումնալից բռնցքամարտիկի:

Բոլորը տեսան, թե ինչպես Կամոն վայրկենապես գունատվեց, երերաց տեղում, ապա կարմրեց ու, չկարողանալով իրեն զսպել, համարյա բղավեց.

— Իսկ ինչո՞ւ... Ո՞վ է չեմպիոնը:

— Սպասի՛ր, Կամո՛, ախր Լևոնը քո ընկերն է,— այս ու այն կողմից վրա տվեցին տղաները:

— Ոչ մի «սպասիր», էլ հերիք է,— Կամոն արդեն բղավում էր,— ինձ ամեն տեղ էլ խնդրում են...

— Եթե խնդրում են, կարող ես գնալ,— ուղիղ նրա աչքերին նայելով՝ հանգիստ ասաց մարզիչը:

— Եվ կգնամ,— Կամո Գնունին քայլերն ուղղեց դեպի դուռը, սկզբում՝ արագ, հետո՝ դանդաղեցնելով: Նա սպասում էր, թե ուր որ է հետ կկանչեն իրեն: Բայց բոլորը լուռ էին: Արդեն դռան մոտ նա ուզեց հետ դառնալ, նույնիսկ կանգնեց, հետո վճռական մի շարժումով բացեց դուռն ու հետևից շրխկացնելով դուրս եկավ դահլիճից:

Փողոցում ձյունն սկսել էր հալվել:

* * *

Հարվածը կարճ էր, ուժեղ, և Լևոնը ընկավ ծնկների վրա: Նրա աչքերի առջև գույնզգույն շրջաններ երևացին, որոնք տարածվելով սկսեցին լայնանալ, վերածվել ավելի ու ավելի մեծ շրջանների: Թվաց, թե տախտակա-

մածը դեպի իրեն է գալիս: Նրան ուշքի բերեց դատավորի ձայնը.

— Մե՛կ, երկո՛ւ, երե՛ք, չո՛րս…

Նա դանդաղորեն բարձրացրեց մի ծունկն ու այդպես էլ մնաց մյուսի վրա՝ գլուխը կախ, ձեռքերը գետնին հենած: «Հանգստանամ մինչև իններորդ հաշիվը».— կարողացավ մտածել նա: Եվ իսկապես, երբ դատավորը բարձրաձայն արտասանեց՝ ինը, Լևոնն օրորվելով ոտքի ելավ:

— Չընկնե՛ս, Լևո՛ն,— լսվեցին այս ու այն կողմից,— պահի՛ր քեզ, եղբա՛յր:

Զարմանալիորեն պարզ Լևոնը լսեց այդ խոսքերը, ու սիրտը մի տեսակ ջերմությամբ լցվեց: Ինչ լավ է, որ շուրջդ ամենուրեք քո ընկերներն են, ծանոթները: Դահլիճում չէ՞ որ մեծ մասամբ իրենց սպորտդպրոցի, մյուս դպրոցների բռնցքամարտիկներն են. «Չընկնե՛ս»…

Նա ինքն էլ չէր ուզում ընկնել: Աշխարհում դեռ չի եղել մի բռնցքամարտիկ, որ ինքնակամ մեկնվի հատակին:

Բայց հնչեց գոնգը: Լևոնն օրորվելով հասավ իր անկյունն ու մեկնվեց աթոռին՝ կոպերը փակ, ծանր շնչելով սրբիչների մղած թարմ օդը: Նրան շրջապատել էին ընկերները: Շփում էին դեմքը, խրախուսիչ խոսքեր շշնջում ականջին:

— Լևո՛ն ջան, մի՛ վախեցիր: Լա՛վ կլինի:

— Միայն թե մի՛ թող, որ նա քեզ հեռվից հարվածի: Մո՛տ գնա: Նրա ձեռքերը երկար են:

— Խփի՛ր քո չեխական ձեռնոցներով,— կատակում էր մյուսը,— ցո՛ւյց տուր այդ չեմպիոնին:

Լևոնը զգաց, որ ուժերը վերականգնվում են: Բացեց աչքերը. նրա դիմացի անկյունում նստած էր Կամոն ու հեգնանքով նայում էր: Նա էլ էր ծանր շնչում: Լևոնը նկատեց այդ:

Ու երբ նորից հնչեց գոնգը, Կամոն համարյա երկու ցատկով հասավ նրա մոտ: Լևոնը ետ ընկրկեց, խուսափեց հարվածից ու ինքը հարվածեց ներքևից, աջով: Հարվածն այնքան անսպասելի էր և ուժեղ, որ Կամոն օրորվեց տեղում: Դահլիճը թնդաց:

— Ջա՛ն, Լևո՛ն:

— Էլի՛ խփիր նրան:

Կամոն կարմրատակեց, հարձակվեց ամբողջ ուժով՝ զայրացած, առանց պաշտպանվելու: Դրանից անմիջապես օգտվեց Լևոնը և կայծակի արագությամբ ձախով ու աջով երկու անգամ ևս հարվածեց:

— Էլի՛, էլի՛, էլի՛,— խլացնելով աղմուկը՝ գոչում էին Լևոնի ընկերները:

— Խփի՛ր այդ մեծամիտին:

Ընդմիջմանը Կամո Գնունու աչքերում այլևս հեգնանք չկար: Ավելի շուտ Լևոնը նրանցում մենակ մնացած մարդու թախիծ նկատեց:

Երրորդ ռաունդը համեմատաբար սառն անցավ: Կամոն մի տեսակ ընկճված էր, խուսափում էր լուրջ հանդիպումից: Լևոնի հարվածները դիպչում էին նրան առանց արդյունքի: Լավ էր պաշտպանվում: Միայն երկու անգամ նա դուրս եկավ պաշտպանվողի դերից ու հարձակման անցավ: Եվ երկու անգամն էլ նրա շարժումները ճիշտ էին, կշռադատված, հարվածները ուժեղ

և ակնթարթային: Հիմա էլ շփոթվելու հերթը Լևոնինն էր: Եվ հենց այդ պահին.

— Լևո՛ն ջան, խփի՛ր:

— Իրար հետևի՞ց,— լսվեցին նոր բացականչություններ: Եվ Լևոն Դավթյանը նորից աշխուժացավ: Նա կեղծ նահանջ ցույց տվեց: Կամոն առաջ նետեց վտանգավոր ձախ ձեռքը: Լևոնն իսկույն աջ թեքվեց, ուսով հետ մղեց հարվածը և ինքը աջից հարվածեց ծնոտին:

Հենց նույն րոպեին էլ հնչեց գոնգը: Կամոն հազիվ, մի վերջին ճիգով պահեց իրեն: Մարտն ավարտված էր: Դատավորներն սկսեցին խորհրդակցել: Դժվար էր վճռելը: Երկուսն էլ արժանի էին հաղթողի կոչմանը: Իսկ հանդիսականները գոչում էին.

— Լևոնինն է:

— Ինչ էլ լինի, կեցցե՛ս, Դավթյա՛ն:

— Չէ՛, ինչո՞ւ,— լսվում էր մեկի անվճռական ձայնը,— նա էլ էր լավ կռվում:

Դատավորը հաղթանակը շնորհեց Կամո Գնունուն՝ հաշվի առնելով առաջին ռաունդում նրա ավելի բարձր միավորները և Լևոնի երկու անգամ «նոկդաունում» գտնվելը:

Կամոն բարձրացրեց գլուխը՝ սպասելով ծափերի: Բայց դահլիճն արդեն աղմուկով ցրվում էր: Նա կանգնած մնաց մենակ, գլուխը կախ: Եվ գլուխը չբարձրացրեց նույնիսկ այն ժամանակ, երբ Լևոնը մոտեցավ նրան, սեղմեց ձեռքն ու շնորհավորեց հաղթանակի համար:

Կամո Գնունին դուրս եկավ շենքից: Հանդիսականները հեռանում էին՝ իրենց մեջ առած Լևոն Դավթյանին: Խոսում էին, ծիծաղում, կատակում.

— Չէ՛, լավ էր, Լևո՛ն ջան:

— Ա՛յ, կտեսնես, մյուս տարի չեմպիոնը դու ես:

Կամո Գնունու ականջին հասան հեռացողների խոսքերը: Նրա հետ ոչ ոք չկար: Մենակ էր: Նա սկսեց լուռ ու մտածկոտ քայլել ծառուղով՝ չնկատելով ճանապարհի ջրափոսերը:



Աշոտ Մանսուրյան, 7 տ.

Ա՛Յ ԹԵ ԻՆՉՊԵՍ ԲՈՒԺՎԵՑ

Նստել է Սիմոնը ծառի տակ, գիրքը՝ ծնկներին: Իսկ ծառի վրա տանձեր են, ի՛նչ տանձեր... Սիմոնը լավ գիտե այդ տանձերի համը. որ կծում ես, ոնց որ շաքար լինեն, հալվում են բերանիդ մեջ:

Անցյալ տարի...

Սիմոնը նստած նայում է չորս կողմ՝ թփերի մեջ տանձի պոչ նկատելու համար, բայց որտեղի՞ց. ամեն առավոտ մայրիկը հավաքում է գետնին թափված տանձերը: Սիմոնը չարությամբ նայում է վեր: Անիծածները այնքան էլ ամո՛ւր են կպել ճյուղերից: Հակառակ է, էլի՛, մի քամի էլ չի անում, որ թափի: Սիմոնը նայում է գրքին, տառերը մեծանում, մեծանում, կլորանում են, հետո մի կողմից սրվում, ու նա տեսնում է տանձի պոչը: Սիմոնը բարկանում է. «Հետո էլ ասում են, թե բնությունն իմաստուն է: Ո՞վ է ասում: Սուտ է, պոչավոր սուտ (պոչ բառի վրա նա նորից վերև է նայում): Բնությունից հիմար բան չկա: Բա ինչո՞ւ է այնպես արել, որ տանձերը այդքան բարձր են լինում, հը՞: Ի՞նչ կլիներ, օրինակ, որ պոմիդորի նման գետնին թափված լինեին: Չէ՛, այդ դեպքում էլ անպայման պետք է կռանալ: Օրինակ՝ մոշի պես լինեին, որ ուղիղ գնայիր, բացեիր բերանդ, ու ընկնեին մեջը: Ասենք մոշն էլ ծակում է: Բա ինչի՞ պես լիներ. չէ՛, ոչ մի հարմար բան չկա: Բնություն...

Իսկ առաջ ուրիշ էր: Կարդացել ենք, գիտենք, էլի՛: Մի ձուկ կբռնեիր, ցույց կտայիր, թե ուզում ես մորթել: Նա էլ կբացեր բերանը ու մարդկային լեզվով կաղաչեր. «Մի՛ սպանիր, ընկե՛ր Սիմոն, թող որ գնամ ազատ ծովը: Փոխարենը ինչ ուզես՝ կտամ»: Մի քիչ չեմուչում կանեի ու բաց կթողնեի: Հետո ծափ կտայի, ու քառասուն հսկաներ կկանգնեին առջևս: «Ի՞նչ եք կամենում, ընկե՛ր Սիմոն»: Կասեի՝ ուզում եմ, որ թվաբի գրքում եղած բոլոր խնդիրները լուծված մտնեն գլխիս մեջ, որ դասս լավ պատասխանեմ: Ասենք՝ ինչո՞ւ ես պատասխանեմ: Ես կկանգնեմ, իսկ քառասուն հսկաները թող իմ փոխարեն պատասխանեն ու գրեն գրատախտակին: Բայց, իհարկե, որ չկանգնեմ, ավելի լավ… Ա՛խ, ի՛նչ կյանք կլիներ, է՛: Գերազանցիկ կդառնայի»:

— Սիմո՛ն,— լսվեց մի ձայն:

Սիմոնը սթափվեց մտքերից ու ականջ դրեց: «Մայրիկն է,— ինքնիրեն խոսեց նա,— ձայն հանեմ, թե չէ: Ո՞նց իմանամ՝ գործի է ուզում դնե՞լ, թե՞ կանչում է, որ ճաշ ուտեմ, հը՞»:

Ծառի ճյուղերը մի կողմ գնացին: Սիմոնը իսկույն թեքվեց, գետնին ընկած գիրքը նորից ծնկներին դրեց ու երկու ձեռքով ամուր բռնեց գլուխը, իբր շատ է խորասուզված:

— Ուրեմն այսպես, բրածո սողուններ: Մղես, լորտու, օձ:

— Սիմո՛ն ջան, արի տուն,— կամացուկ ասաց մայրը:

— Մղեսը սառնարյուն կենդանի է…— շարունակեց Սիմոնը:

— Մի քիչ փայտ ջարդիր:

— Դե լավ, էլի, հետո էլ ասում ես՝ գերազանցիկ դարձիր: Արի փայտ ջարդիր, արի հաց կեր, արի ջուր խմիր: Իսկ Սաթիկն ի՞նչ է անում, թող ջարդի, էլի՛:

— Ախր ո՞ւմ ես այդպես քաշել, այ ծույլ,— տրտնջաց մայրն ու հեռացավ:

— Ծո՛ւյլ,— վիրավորվեց Սիմոնը,— բոլորն էլ մի գլուխ ասում են, թե ծույլ եմ: Բայց որ լավ մտածում եմ, տեսնում եմ, որ իրենք են ծույլ: Ծույլ չե՞ն, բա ինչո՞ւ փայտը իրենք չեն ջարդում, ինչո՞ւ առավոտյան կոշիկներս չեն մաքրում, ինչո՞ւ Վարդանն ու Կարոն իրենց տետրերը չեն տալիս, որ ես արտագրեմ կամ իմ տեղը չեն գրում: Ու դեռ ընկերնե՞ր են: Շա՛տ ենք տեսել ձեզ նման ընկերներ: Այն օրը ես ֆիզկուլտուրայի դասից փախա, որ զուր տեղը չչարչարեն, խնդրեցի, որ իմ տեղը «ներկա» ասեն, բայց ալարեցին... Բա ես ո՞նց ներկա ասացի Սերժիկի փոխարեն: Ճիշտ է՝ չէի տեսել, որ նա նորից դասարան է մտել, ու երկուսս էլ իրար հետ ասացինք «ներկա». ճիշտ է՝ դասատուն ինձ դիտողություն արեց, բայց հո չզլացա՞մ, հո կանչեցի՛: Է՛, լա՛վ...

Սիմոնն ուզում է «է՛, լա՛վի» հետ, ոնց որ կարգն է թափ տալ ձեռքը, բայց ալարում է: Ինչո՞ւ թափ տա, հո մարդ չկա, որ տեսնի:

Նա նորից վերցնում է գետնին ընկած գիրքը, բացում դասն ու կարդում.

— Իժը թունավոր...

Նրա մարմնով սարսուռ է անցնում: Գրքի վրա նկարված է մի օձ, ի՞նչ օձ, օղակ–օղակ գալարել է մարմինը,

բարձրացրել է գլուխը, երկսայր լեզուն դուրս է հանել և իր պսպղուն աչքերը հառել ուղիղ Սիմոնի աչքերին: Օ՛ձը… Սիմոնը աշխարհում ոչ մի բանից այնպես չի վախենում, ինչպես օձից: Ո՛չ շունը, ո՛չ գայլը, ո՛չ առյուծն ու վագրը, ո՛չ էլ կոկորդիլոսը, որը երեխայի նման լաց է լինում ու մարդկանց կուլ տալիս, ո՛չ նույնիսկ մուկը նրա համար սարսափելի չեն, բայց օ՛ձը… Ախր չի երևում, է՛: Մեկ էլ տեսար՝ սուս ու փուս եկավ, կանգնեց, գալարվեց, ա՛ռ հա, թռավ ու փաթաթվեց վզովդ: Սիմոնն այդ գիտե, Սիմոնը կինոյում տեսել է:

Ու հանկարծ նրան թվաց, թե ինչ–որ բան խշշաց խոտերի մեջ: Սիմոնն ուզեց նայել այն կողմ, բայց սիրտ չարեց: Մի տեսակ գլուխը չէր թեքվում: Շրշոցն ուժեղացավ: Սիմոնը պարզ լսեց, որ խոտերը մեկին ճանապարհ էին տալիս՝ «շը՛շշ, շը՛շշ»: Նա ուզեց բղավել, բայց նորից սիրտ չարեց, ու մեկ էլ… թը՛մփ, մի բան հարևանի ցանկապատից ընկավ ներքև:

— Փրկեցե՛ք, օ՛ձը,— բղավեց Սիմոնը,— վեր թռավ տեղից ու ընկավ որտեղից որտեղ հայտնված իր ընկեր Կարոյի գիրկը:

— Ի՞նչ օձ, Սիմո՛ն:

— Այն, որ թմփաց:

— Ի՞նչը թմփաց:

— Օ՛ձը:

— Ա՛յ խայտառակ,— ծիծաղեց Կարոն,— ես էի:

— Դու էի՞ր,— Սիմոնը կասկածեց,— բա ինչո՞ւ թմփացիր:

— Իսկ դու որ ցանկապատից թռչեիր, չէի՞ր թմփա:

— Ը՛մ…

— Դե՛, տեսնո՞ւմ ես:

Սիմոնը համոզվեց:

— Լա՛վ, հավատում եմ, բայց հիմա դու ինձ ասա. մեր կողմերում օձ շա՞տ կա:

— Է լա՛վ, դու չգիտե՞ս, որ…— Կարոն ուզում էր ասել՝ չկա, բայց հանկարծ ինչ–որ բան մտածելով՝ միտքը փոխեց ու շարունակեց,— որ կա: Շատն ինչի՞դ է պետք, քեզ մեկն էլ հերի՞ք է, որ կծի:

— Իսկ ի՞նչ պետք է անել, որ չկծի:

— Պետք է փախչել,— հաստատ ու լուրջ պատասխանեց Կարոն:

Հետո նրանք խոսեցին դեսից–դենից, ու Կարոն ի միջի այլոց ասաց, որ վաղը դպրոցի թեթևատլետնե-րի մրցումն է, ու բոլորը պետք է վազեն երկու հարյուր մետր:

— 200 մե՛տր,— սարսափեց Սիմոնը,— ու դու էլ պետք է վազե՞ս:

— Իսկ դու չե՞ս վազելու:

— Ե՞ս, ձե՞ռ ես առնում: Ոտքս ցավում է:

— Դե երդվի՛ր:

— Թող տեղիցս վեր չկենամ, եթե սուտ եմ ասում:

— Ա՛յ լոդր,— Կարոն ծիծաղեց,— այդ հո քո սիրած երդումն է: Ամբողջ դարդդ էլ հենց այն է, որ մեկը քեզ տեղիցդ չշարժի:

* * *

Գրեթե ամբողջ դպրոցը հավաքվել էր անտառի մոտ, որտեղից տրվելու էր մրցումների ստարտը: Ֆինիշը նշանակված էր երկու տեղ, մեկը՝ երկու հարյուր մետրի վրա՝ մեծ խնձորենու տակ, մյուսը՝ 500 մետրի վրա՝ դպրոցի պարիսպի մոտ:

Ամեն ինչ խառնվել էր իրար: Թևերին կարմիր ժապավեն կապած դատավորները արագ–արագ այս ու այն կողմ էին գնում, հրահանգներ տալիս, կավիճով նշումներ անում: Մրցումների մասնակիցները հուզված դեմքերով օգնում էին իրար, մեջքներին համարներ էին փակցնում: Բոլորը սպորտային թեթև հագուստով էին: Միայն Սիմոնն էր քաշվել մի կողմ, նստել քարին ու աշխատում էր աչքի չընկնել. ո՞վ գիտի, մեկ էլ տեսար՝ մոռացան ու չկանչեցին: Բայց, չէ՛, նկատեցին: Մոտեցավ ֆիզկուլտուրայի դասատու ընկեր Պապյանը:

— Ինչո՞ւ չես հանվում, Սիմո՛ն:

— Ը՛ը, ոտքս ցավում է:

— Դե շո՛ւտ, շո՛ւտ: Գիտեմ քո ցավը: Մինչև տասը հաշվեմ, պատրաստ լինես:

Սիմոնը տնքալով սկսեց արձակել կոճակները: Հանվում էր ու մտածում, որ փոքր ժամանակ շատ լավ էր, որ երանի էլի փոքր լիներ. մայրիկը գրկում էր, ինքն էր հանում շորերը, հետո համբուրում էր, դնում անկողնի մեջ ու ասում. «Դե՛, Սիմոնչի՛կ, ասա՝ բարի գիշեր»,— ու ինքը պատասխանում էր. «Բալի գիշեր»:

— Լույս բարի,— քրքջաց Կարոն, ու Սիմոնն զգաց, որ վերջին բառերը բարձրաձայն է արտասանել:— Ինչ է, արդեն քնո՞ւմ ես... Թե՛ երևի փոխել ես միտքդ, վազե-լու ես:

— Բա ո՞նց, ինչքան ուժերս ներեն,— պատասխանեց Սիմոնն ու մտքում շարունակեց. «Ծիծաղիր, տասը քայլ կգնամ ու ոտքս բռնած կքաշվեմ պատի տակ: Տեսնեմ ինչ պետք է անեն»: Բայց այդ տասը քայլն էլ նրան մահ էր թվում:

Առաջին խմբերն արդեն սկսել էին վազել, ու երկար ժամանակ լսվում էին նրանց խրախուսողների բացա-կանչություններն ու սուլոցները: Ծղրիդի նման ճռճռում էին վայրկենաչափերը: Ժամանակ առ ժամանակ ֆիզ-կուլտուրայի դասատուն բարձրաձայն հայտարարում էր հաղթողների անունները, նրանց արդյունքները:

Ստարտ են հրավիրվում Կարո Բադալյանը, Սիմոն Գևորգյանը...

Սիմոնը չլսեց մյուսների անունները: Նրա ծնկները վախից թուլացան: Նա միանգամից բռնեց ոտքը, հետո հիշեց, որ տասը քայլից հետո պետք է այդպես աներ ու դանդաղ մոտեցավ ստարտին: Արդեն մի ծունկը գետ-նին՝ սպասում էր Կարոն: Սիմոնը խեթ–խեթ նայեց նրան ու ինքն էլ ծնկեց:

Եվ այն է՝ ֆիզկուլտուրայի դասատուն ազդանշա-նի համար իջեցնում էր ձեռքը, երբ Սիմոնն զգաց, որ մի սառը, ողորկ բան կպավ իր մերկ ոտքին: Նա ցած նայեց, լայն բացեց աչքերը, հետո հանկարծ վեր թռավ տեղից, գոռաց՝ օձը ու սկսեց փախչել:

— Օ՛ձը,— բղավեց նաև Կարոն ու վազեց նրա հետ:

Սիմոնը վազում էր, ո՛նց էր վազում՝ ձեռքերը արագ–արագ շարժելով, ոտքերը գցելով լայն–լայն՝ իսկական ատլետի պես: Վազում էր ու թվում էր նրան, թե օձը կրնկակոխ հետևում է իրեն: Սիմոնը նույնիսկ տեսնում էր նրան՝ այդ սառը, լպրծուն սողունին, նրա պսպղուն աչքերը: Ու վազում էր. ի՛նչ վազել, թռչում էր: Նա միայն մի վայրկյան հետ նայեց, տեսավ, որ իր հետևից Կարոն է հևալով վազում, նկատեց, որ Կարոն ուզում է կանչել՝ օ՛ձը, բայց չի կարողանում, ու նորից գլուխը շուռ տվեց:

Վազում էր նա, իսկ փողոցի երկայնքով կանգնած երեխաները անամոթաբար ծափ էին տալիս: «Ծաղրում են, ուզում են, որ ինձ կծի»,— կայծակեց Սիմոնի ուղեղում, և նա ավելի արագացրեց ընթացքը: Հետո ճանապարհին ավելի շուտ զգաց, քան տեսավ, որ ինչ–որ կարմիր բան կպավ իր կրծքին ու չի պոկվում: Դա ավելի վախեցրեց նրան: «Սա էլ երկրորդ օձը, ավելի բարակը, կամ նույնն է, ցատկել է գլխիս վրայից, ու ես չեմ նկատել»: Սիմոնը թափ տվեց իրեն, զգաց, որ ազատվեց կարմիր օձից, ու ավելի ուժգին սուրաց:

Նա այլևս հետ չէր նայում: Միայն թե շուտ հասներ դարպասին, մտներ ներս ու փակեր դուռը: Օձը դարպասի վրայից չի կարող թռչել:

Դարպասի մոտ նա մեծ բազմություն տեսավ: Այդ սիրտ տվեց նրան, ու մի վերջին թափով նետվեց առաջ: Վազում էր ու դառնությամբ մտածում, որ ահա, իր այդ ընկեր կոչվածները շատ լավ տեսնում են իրեն հասած դժբախտությունը, բայց փոխանակ օգնության հասնե-

լու, բացել են բերանները, ծիծաղում են ու ծափ տալիս: Ուղիղ դարպասի մոտ՝ իրենից երկու քայլի վրա, Սիմոնը ինչ–որ կարմիր բան էլ տեսավ: Սարսափեց, ուզեց թեքել ճանապարհը, բայց թափին չդիմացավ, առաջ անցավ ու դարպասից ներս ընկավ: Ներս ընկավ դարպասից, ուզեց մտնել դպրոց ու դուռը փակել, բայց ուշ էր…

Նրան բռնեցին իր ընկերները, դասատուները, սկսեցին համբուրել ու վեր–վեր թռցնել, իսկ դպրոցի պահակ Թաթոս դային գոռաց.

— Ա՛յ ծույլ, էդ դո՞ւ էիր եղնիկի նման թռչում:

Սիմոնը չգիտեր, թե ինչ է կատարվում իր հետ: Նա ահով չորս կողմն էր նայում: Մոտեցավ նաև դպրոցի դիրեկտորը, բռնեց Սիմոնի ձեռքը, բարձրացրեց ու, մի անգամ էլ նայելով վայրկենացույցին, բարձրաձայն հայտարարեց.

— Առաջին տեղը և դպրոցի ռեկորդը 200 և 500 մետր տարածության վազքում շահեց Սիմոն Գևորգյանը:

Սիմոնը քիչ մնաց ուշաթափվեր: Նա նորից նայեց չորս կողմը, ու տեսնելով իր հետևում հևացող, ժպտուն աչքերով Կարոյին, շշնջաց.

— Լսի՛ր, օձն ի՞նչ եղավ:

— Ռեզինից էր, Վարդանը գցեց,— կամացուկ ծիծաղեց Կարոն ու ավելացրեց,— համա վազում էիր, հա՛… չեմպիո՛ն…

Դուք ուզում եք իմանալ, թե հետո ի՞նչ եղավ ծույլ Սիմոնը: Վե՛րջ: Ծուլության հետքն էլ չմնաց:

Եվ, պատկերացնո՞ւմ եք, հիմա վատ էլ չի սովորում:

Ահա թե ինչպես պատահեց, որ օձը բուժեց Սիմոնին:

ՎԱՐԴԳԵՍՆ ԻՄ ԸՆԿԵՐՆ Է

Ի՞նչ, ընկերությո՞ւն… Չէ՛, լավ ընկերը միայն վտանգի ժամանակ է երևում: Իհարկե: Այսինքն՝ երևի միտքս պարզ չեմ ասում: Գիտե՞ք ինչ, ընդհանրապես դժվար է իմանալ, թե իսկապես ով է քո լավ ընկերը: Իսկ երբ դժվարության մեջ ես լինում, երբ չորս կողմդ ես նայում… Դուք ինձ սխալ չհասկանաք, ես հուշելու մասին չեմ խոսում: Եթե կուզեք իմանալ, դա բոլորովին էլ ընկերասիրություն չէ: Խոսքս իսկական ընկերության մասին է, այնպես որ, դու ձայն էլ չհանես, բայց քո ընկերը զգա, որ դժվարության մեջ ես ու օգնության հասնի՝ լուռ ու մունջ, առանց խոսելու այդ մասին, օգնի ո՛չ թե իր, այլ քեզ համար, մոռանա իրեն…

Հուզվա՞ծ եմ: Այո՛, չեմ թաքցնի, հուզված եմ: Ինձ հետ, այսինքն՝ ոչ թե ինձ, այլ մեր տղաներից մեկի հետ վերջերս մի դեպք պատահեց: Ուզում եմ պատմել…

Գիտե՞ք մեր դպրոցը որտեղ է գտնվում: Ո՛չ, նույն տեղում չէ: Հիմա հին դպրոցը պահեստ են դարձրել, իսկ մեզ համար նոր շենք են կառուցել գյուղի ծայրին: Երեք հարկանի է: Ա՛յ, հենց այնտեղ էլ սովորում եմ ես: Վարդգեսն ու Սամվելը մեր դասարանից են: Դուք նրանց չեք ճանաչում: Պարծենալ չլինի, բայց իմացեք, որ ես, այսինքն՝ ոչ թե ես, այլ Վարդգեսն ու Սամվելը մեր դասարանի ամենալավ սովորողներն են: Բայց շատ էլ նա-

խանձ են, գիտեք, հատկապես Վարդգեսը: Ասենք՝ Սամվելը մի «5» ստացավ, չէ՞: Էլ վերջ: Վարդգեսը այնքան ձեռք կբարձրացնի, այնքան համառ կնայի դասատուի աչքերին, մինչև որ իրեն էլ գրատախտակի մոտ կանչեն ու ինքն էլ «5» ստանա: Այսինքն, որ ճիշտն ասենք, Սամվելն էլ պակաս չէ:

Ա՛յ, մի դեպք պատմեմ: Վարդգեսը ֆիզիկայի խմբակի անդամ գրվեց: Մի քանի օր լուռ էր, մեկ էլ կանգնեց, թե՝

— Ամեն մարդ չի կարող ֆիզիկայի խմբակի անդամ դառնալ, այստեղ ուղեղ է հարկավոր,— ու մատով երեք անգամ խփեց գլխին:

Կհավատաք, ուղիղ հինգ օր հետո Սամվելը դարձավ ֆիզիկայի խմբակի անդամ: Եվ կարծում եք՝ հաշտվեցի՞ն, բոլորովին: Մյուս օրը Վարդգեսը բակում բոլորի ներկայությամբ Սամվելին ասաց.

— Դու դրանով ապացուցեցիր, որ առանց ուղեղի էլ կարելի է ֆիզիկայի խմբակի անդամ դառնալ:

Դե մեր տղաներն էլ, գիտեք, էլի՛, բացեցին բերաններն ու սկսեցին հռհռալ: Վերջ չկա: Վիրավորական է, չէ՞: Սամվելը կարմրեց, արագ–արագ գնաց դեպի պտտաձողը և երեք անգամ «արև» ցույց տվեց: Բայց հենց տեղնուտեղը նույնը կրկնեց նաև Վարդգեսը:

Իսկ տղաները հռհռում են: Դե ասեք, Սամվելն ի՞նչ աներ: Վրա հասավ, երկու փթանոց երկաթը, որի վրա մեր դպրոցի պահակ Խաչո բիձան նստում էր արևոտ օրերին, ուզեց մի ձեռքով բարձրացնել… բայց զանգը տվեց:

Էլ ի՞նչ, զանգը փչացրեց գործը: Մի՛ ծիծաղեք, լուրջ եմ ասում, եթե զանգը չլիներ, Սամվելը հիմա չեմպիոն էր դարձել: Ախր շատ էր բարկացել, է՛…

Զանգը… Դե ես հո չեմ ասում, թե զանգը վատ բան է: Դասի վերջում, օրինակ, որ հնչում է, ոնց որ մի անուշ, ուրախ երգ լինի, ուզում ես, որ չդադարի երբեք: Իսկ դասամիջոցից հետո էլի նույն զանգն է, չէ՞, բայց ինչ-քա՜ն չոր, ինչքա՜ն սառը, ինչքա՜ն խիստ: Այսինքն՝ ուզում եմ ասել՝ զանգ էլ կա, զանգ էլ: Մի անգամ, օրինակ…

Բայց, սպասեք, ես ինչ–որ բան էի պատմում: Բայց ի՞նչ: Ա՛յ իմ բնավորությունն էլ այսպես է. մի բանի մասին որ խոսեմ՝ ոնց որ ճեպընթաց, գնում եմ հա՛ գնում: Այն էլ ասեմ, որ այս պատկերավոր արտահայտությունը իմը չէ, այլ մեր աշխարհագրության դասատուինը: Նա, գիտե՞ք, մի քիչ…

Է՛, դարձյալ շեղվում եմ: Հա, հիշեցի՝ Վարդգեսն ու Սամվելը: Հիմա պարզ է, չէ՞, թե ինչ տղաներ են: Ամեն ինչ կանեն, միայն թե իրարից հետ չմնան: Ուրեմն երեկ, սատանան դրդեց թե ինչ, Սամվելը հայտարարեց.

— Դասերից հետո գնում ենք գետում լողանալու:

— Գետում տատս էլ կլողանա,— իսկույն պատասխանեց Վարդգեսը,— տղա եք՝ ջրանցքում լողացեք:— Հետո թե,— ասենք ջրանցքում լողանալը դժվար է:

— Դե, իհարկե, քեզ համար հեշտը միայն բաղնիքում լողանալն է,— ծաղրեց Սամվելը,— այն էլ անպայման հոտավետ օճառով:— Ու ավելացրեց,— մամայի՛ բալա:

Վարդգեսը շատ չարացավ:

— Դե գնանք տեսնենք՝ ոնց ես լողանում,— ասաց նա:

— Գնանք,— հետ չկանգնեց Սամվելը: Նա որ մի բան ասաց, էլ հետ կկանգնի՛...

Մեր ջրանցքը գյուղից շատ հեռու չէ, բայց խորն է: Խորությունը դեռ ոչինչ, ցեմենտով է պատված: Այնպես որ, եթե ուզենաս դուրս գալ, բռնելու տեղ չկա: Շատ վարժ լողորդները սահում են ափի մոտով, մինչև մի ճեղք են գտնում ու դրա օգնությամբ դուրս գալիս: Պատկերացրեք, ոնց որ տաշտակ լինի:

Գնում ենք: Ճիշտն ասած՝ սիրտս մի քիչ խփում է, և քանի մոտենում ենք՝ այնքան արագ: Ի՞նչ, ի՛մ սիրտը, իմ սիրտն ինչո՞ւ պետք է խփի, ո՛չ, ո՛չ, ես Սամվելի մասին եմ ասում: Դեմքից երևում էր, էլի՛: Հա՛, Վարդգեսը շարունակում էր ծաղրել:

— Կյանքդ ապահովագրե՛լ ես,— ասում է նա: Հետո էլ թե,— մի՛ ամաչիր, եթե վախենում ես, հետ դառնանք:

Է, Սամվելը հետ կդառնա՞ր, ձեզ եմ հարցնում:

Հասանք ջրանցքի ափը: Նստեցինք ու ոնց որ պետքն է հանգստացանք: Խոսում ենք, կատակներ անում, բայց բոլորիս աչքերն էլ դեպի ջրանցքն են ուղղված: Ախր շատ խորն է անիծվածը, ու ափերն էլ, գիտե՞ք, ցեմենտով են պատված: Հա, այդ մասին ասացի: Դե երկար հանգստանալ չէր լինի, սկսեցինք հանվել՝ դանդաղ, ծուլորեն: Հանվեցինք, բայց ոչ մեկս սիրտ չենք անում առաջինը ջուրը նետվել: Վախենալու է, գիտե՞ք: Վարդգեսն ու Սամվելն էլ են հանվել ու իրար են նայում: Վարդգեսը՝ հեգնանքով, Սամվելը՝ չարությամբ:

Տղաները սկսեցին ծիծաղել՝ սկզբում քթների տակ, ապա բարձրաձայն:

— Ա՛յ մի անձրև գար…

— Որ կարկուտ գար, այսօր մի մարդ շատ կուրախանար…

Պարզ է, չէ՞, թե ով էր «մի մարդը»:

Սամվելն էլ չդիմացավ:

— Դե, ես գնացի,— ասաց անփույթ, հանգիստ ձայնով ու իրեն ջուրը նետեց:

Բոլորը բարձրացան տեղերից ու երկյուղով սկսեցին նայել: Սամվելը սուզվեց, ապա դուրս եկավ, գլխի մի շարժումով մազերը հետ նետեց ու ձայնեց.

— Ջա՛ն, ջուրն այնքա՛ն տաք է:

Հետո շրջվեց ու սկսեց լողալ հոսանքին հակառակ: Դե նա լավ լողորդ է: Գնաց, գնաց, ապա նորից շրջվեց ու սկսեց հետ դառնալ՝ հոսանքի ուղղությամբ: Զգացվում էր, որ հոգնել է: Ախր դժվար է հոսանքին հակառակ գնալը: Իջնում է հոսանքի հետ, դեպի աջ է թեքվում, ճեղք է որոնում՝ դուրս գալու համար: Վերջապես նկատեց, կիսով չափ իրեն դուրս նետեց ջրից ու ձեռքը դեպի ճեղքը տարավ: Բռնեց: Բայց հենց նույն վայրկյանին էլ նրա թաց մատները սահեցին լպրծուն քարի վրայով, ու նա սուզվեց ջրի մեջ՝ քերծելով ուսը: Սարսափելի էր…

Աչքերս մթնեցին, շունչս կտրվեց: Ուսիս ցավն իհարկե դեռ չէի զգում, հոգնել էի, այլևս ուժ չունեի: Ուզում էի օգնություն կանչել, բայց ամաչում էի: Աչքերիս առջև կարմիր, կանաչ, սև շրջանակներ երևացին, որ մեծանում, մեծանում, անհետանում էին, ապա նորից հայտնվելով՝ սկսում մեծանալ: Չզգացի էլ, թե ինչպես ջուր կուլ տվեցի: Տաք էր: Ես…

Ի՞նչ, ո՛վ, ե՛ս, ո՛վ ասաց՝ ես, ես… ե՛ս չասացի: Ո՛չ, ի՛նչ եք ասում, ես ափին էի: Հա, Սամվելը նորից սուզվեց:

— Տղե՛րք, խեղդվում է,— ճչաց մեկը:

Բոլորն սկսեցին վազել ափի երկայնքով: Վազում են, բայց ոչ մեկը չի համարձակվում իրեն գետը նետել, ազատել Սամվելին: Վտանգավոր է, գիտե՛ք, հաճախ խեղդվողը առանց մտածելու գրկում է իրեն փրկել ցանկացողին ու նրան էլ է խեղդում: Շատ դժվար է: Կյանքի հարց է: Բայց դե էլ ի՞նչ մտածես: Մտածելու ժամանակ չկար: Վազում ենք ու ճչում, իսկ գետը հոսում է ծանր, անտարբեր, ասես չի էլ զգում, որ խեղդում է ինչ–որ մեկի, և այն էլ ոչ թե ինչ–որ մեկի, այլ Սամվելին:

Ու մեկ էլ այն տեսանք, որ Վարդգեսն իրեն գետը նետեց՝ ուղիղ Սամվելի սուզված տեղը, նետվեց… Եվ նա էլ չկա… Պատկերացնո՞ւմ եք, չկա: Հետո հանկարծ երևաց, մի ձեռքով Սամվելի մազերից է բռնել, մյուսով լողում է ու հետն էլ գոռում.

— Չփաթաթվես ինձ, կսատկեցնեմ:

«Ո՞ւմ կսատկեցնես»,— ուզում եմ գոռալ ես, բայց չեմ կարողանում: Ուժ չկա: Ը՛ը, այսինքն՝ այդպես էր ասում Սամվելը: Նա հետո երևի զգաց, որ փրկվել է, որովհետև աշխուժացավ ու սկսեց ինքն էլ լողալ՝ թույլ–թույլ: Մոտեցան ափին: Տղաները սրտապնդվեցին ու երկուսին էլ գրկած դուրս բերեցին ջրից: Սամվելը պառկել էր բերանքսիվայր, բերանից ջուրը հոսում էր, ինչպես մեր գյուղի աղբյուրից: Ազնիվ խոսք, չեմ չափազանցնում: Իսկ Վարդգեսը հևում էր ծանր–ծանր, թքում էր ու հետն էլ փնթփնթում.

— Այդ էլ քո հոտավետ օճառը, սատանա՛:

Իսկ երբ Սամվելն ուշքի եկավ, նոր միայն զգաց, թե ինչ կարող էր պատահել իր հետ: Նայեց ամեն ինչին անտարբեր ջրին, նայեց իր ընկերոջը՝ Վարդգեսին… Բայց, գիտեք, մի տեսակ ուրիշ ձևի նայեց, դե ոնց ասեմ… Ու հանկարծ առանց ամաչելու լաց եղավ: Դե ինքը հո չէր ուզում, երևի արցունքներն իրենք իրենց էին գլորվում: Ասենք, գուցե դրանք բոլորովին էլ արցունքներ չէին, այլ մազերից հոսող ջուրն էր…

Ա՛յ թե ինչ բան է ընկերությունը: Հիմա պա՛րզ է: Դժվարության մեջ է ճանաչվում իսկական ընկերը:

…Ի՞նչ, Սամվելը ե՞ս եմ: Ո՞վ ասաց: Դե լա՛վ, թող այդպես լինի: Հենց ես եմ: Վարդգեսն էլ իմ ամենամոտ ընկերն է: Պրծա՞նք: Բայց հիմա ասեք, ո՞նց իմացաք: Որովհետև հուզվա՞ծ էի: Հիմա է՞լ: Ներողություն, հիմա ես հուզված չեմ:

Որ պատմեցի, հանգստացա…



ԿՏՐԻՉԸ

Արհեստանոցում կանգնել, քարացել է մեքենաների աղմուկը: Անծանոթին կթվա, թե մեկը միացրել է պատեֆոնը, նվագելուց հետո մոռացել է անջատել այն, ու ասեղը վերջին ակոսի վրա պտտվում, պտտվում է՝ խռպոտ ու միալար…

Բայց Զավենն այդ կարծիքին չէ: Նա ամեն ինչի հետ կարող է հաշտվել, բացի այն մտքից, թե իբր իր հաստոցի ձայնը նման է, ասենք, Սեդրակի հաստոցի ձայնին: Չէ՛, իր մեքենայի ձայնը բոլորովին ուրիշ է, եթե կուզեք իմանալ՝ ավելի նուրբ, որովհետև ինքը միշտ ժամանակին է յուղում նրա մասերը: Ճիշտ է, մյուսներն էլ վատ չեն խնամում իրենց մեքենաները, բայց ինչ ուզում եք ասեք, իր մեքենայի ձայնն ուրիշ է…

Զավենը խոսում է ինքն իր հետ ու, փոքրիկ անիվները պտտեցնելով, ուշադրությամբ հետևում մշակվող դետալին: Պետք է զգույշ լինել, շատ զգույշ, փոքր են դետալները, նուրբ. մի սխալ, և կոպեկի արժեք անգամ չեն ունենա:

Զավենը նայեց արկղին, որը լիքն էր շողշողուն դետալներով, և մտածեց, որ այսօր էլ «գերազանց» կստանա: Վարպետ Մուշեղը, ինչպես միշտ, աշխատանքից սևացած ու կոշտ ձեռքը կդնի իր ուսին, մյուս ձեռքով կտնտղի դետալները, ապա կասի բարձրաձայն, հայացքը ոչ թե Զավենին, այլ մյուսներին հառած.

— Զավե՛ն, ստանում ես «գերազանց»:

Երբ առաջին անգամ վարպետը Զավենին ուղղեց այդ խոսքերը, նա չհավատաց իր ականջներին: Նրան թվաց, թե բոլորն իրեն են նայում, թե ինքն էլ գրքերի հերոսների նման հերոս է:

Բայց գուցե երբեք Զավենն այնքան չի ցանկացել «գերազանց» ստանալ, որքան այսօր: Ահա թե ինչու է հուզված: Ստուգողական աշխատանք է: Ուսումնարանի դիրեկտորն է գալու արհեստանոց, որպեսզի ծանոթանա տղաների աշխատանքին: Եվ գուցե հենց այսօր էլ որոշվի, թե ով է գնալու Խարկով՝ պատանի խառատների Համամիութենական ցուցահանդես: «Դե, իհարկե, ինձ կտանեն,— մտածեց Զավենը,— ուրիշ էլ ո՞ւմ: Բայց հարկավոր է շտապել, դետալներն հանկարծ պակաս չլինե՛ն»:

Նա շարունակեց պտտել փոքրիկ անիվը: Կտրիչը մոտեցավ դետալին: Միայն թե արագ լինի: Բայց հանկարծ մետաղը սուր ծղրտաց, ասես ճչաց ցավից ու շիկացավ: Զավենը իսկույն հետ դարձրեց բռնակը: Բայց արդեն ուշ էր. լսվեց չոր մի ճայթյուն. կտրիչի ծայրը ջարդվեց:

Նա մի պահ կանգնած մնաց՝ չհավատալով աչքերին, հետո կռացավ, նայեց, հանեց կտրիչն ու մրմնջաց.

— Ա՛յ քեզ խայտառակություն…

Մի վայրկյան ուզեց գնալ վարպետ Մուշեղի մոտ՝ նոր կտրիչ խնդրելու, բայց հիշեց, որ երեկ է վերցրել, վարպետն անպայման կբարկանա: Իսկ եթե բարկանա, գուցե «գերազանց» չդնի և… ստուգողականը…

Զավենը շվարած շուրջը նայեց: Ինչ անել:

Նրանից քիչ հեռու անաղմուկ կանգնած էր Կարոյի հաստոցը: Կարոն չկար:

Ինչ–որ բան, ասես, հրեց Զավենին: Նա նայեց վարպետ Մուշեղի կողմը: Կարոն նրան ինչ–որ բան էր ասում: Վարպետը փոքր–ինչ թեքված, ձեռքն ականջին էր դրել ու լսում էր:

Ինչ անել…

Հաջորդ վայրկյանին Զավենը նետվեց դեպի Կարոյի հաստոցը, դողացող մատներով արագորեն հանեց կտրիչը, փոխարենը իր ջարդվածը ամրացրեց ու հետ դարձավ:

Նա մի պահ կանգնած մնաց՝ գլուխը կախ, սիրտը ուժգին տրոփում էր: Զավենը լսում էր նրա զարկերը ու վախենում էր գլուխը բարձրացնել:

Նայեց կոպերի արանքից: Ոչ ոք չէր նկատել: Տղաները հեռվում աշխատում էին: Կարոն լռել էր, ու հիմա էլ վարպետ Մուշեղն էր խոսում՝ սովորականի պես ձեռքը Կարոյի ուսին:

— Չտեսան,— հանգստացավ Զավենը, սրտի բաբախյունը փոքր–ինչ մեղմացավ:— Չտեսան,— արդեն բարձրաձայն ասաց նա:

Բայց, զարմանալի բան, դրանից ամենևին էլ թեթևություն չզգաց. ասես ավելի լավ կլիներ, եթե մեկը կանչեր.

— Տեսա՞ք, Զավենը գողացավ Կարոյի կտրիչը:

Իսկապես. ոչ ոք ոչինչ չէր նկատել: Ամեն մեկն իր աշխատանքով էր տարված:

Զավենը միացրեց հոսանքը, գործի դրեց մեքենան ու կտրիչը մոտեցրեց ժանգոտ մետաղին: Մետաղը ցածրաձայն աղմկեց, ասես ոչինչ էլ չէր եղել ու շարունակեց մերկանալ, շողշողալ՝ օղակ–օղակ դեն նետելով դարչնագույն մակերեսը:

Շոգ չէր, բայց քրտինքը դանդաղ գլորվում էր Զավենի մազերի տակից: Նրան մտքերը հանգիստ չէին տալիս: Չէր վերցնի, եթե չջարդվեր իր կտրիչը, չէր վերցնի, եթե ստուգողական աշխատանք չլիներ, եթե չլիներ Խարկով գնալու հույսը: Իսկ Կարոյի՞ն ինչ: Նա առանց այդ էլ գերազանցիկ չէ: Նրան Խարկով չեն տանի…

Խարկով… Զավենը գիտեր այդ քաղաքի մասին, երբ դեռ շա՛տ փոքր էր: Հայրիկը մի ամսով գնացել էր տրակտորի գործարան: Ինքը նստում էր նրա ծնկներին, ոլորում էր բաճկոնի կոճակները, որից միշտ բենզինի սուր հոտ էր փչում, ու խնդրում էր կամացուկ.

— Պա՛պ, էլի պատմիր տրակտորի մասին:

…Իսկ կտրիչը ջարդվեց: Այ, եթե այսօր էլ կատարի իր առաջադրանքն ու «գերազանց» ստանա, կուղարկեն Խարկով:

Աշխատում էր Զավենը: Նա մի պահ մոռացել էր ամեն, ամեն ինչ, մեքենան, կտրիչը, իրեն ու աշխատում էր ինքնամոռաց, տենդորեն, գլխում ամեն ինչ խառնվել էր իրար: Նա ոչինչ չէր զգում, ոչինչ չէր տեսնում, բացի հեղույսներից, որոնցով արդեն լցվում էր արկղը: Նա հանկարծ զգաց, որ իր կողքին աղմկեց Կարոյի մեքենան: Միանգամից սթափվեց Զավենը. կտրիչը… Ի՞նչ կմտածի հիմա Կարոն, ասե՞լ նրան պատահածի մասին…

Ինչ անել…

Զավենն աշխատում էր չնայել Կարոյի կողմը, բայց չկարողացավ: Նայեց զգուշորեն, գողեգող, տեսավ նրա այլայլված դեմքը: Կարոն մոռացել էր անջատել մեքենան ու շվարած, ընկճված հայացքով նայում էր կտրիչին: Հրաշք էր, ինչ է: Ճրբ ջարդվեց: Ինչ վատ եղավ, դե արի ու նորից խնդրիր վարպետից…

Նա ոչ մի անգամ չնայեց ընկերների կողմը, նրա հայացքը տարակուսանքից բացի ոչինչ չէր արտահայտում, նրա մտքովն էլ չէր անցնի, որ իրենց խմբում կարող է գողություն կատարվել:

— Ա՛յ քեզ բան,— մրմնջաց նա՝ երերուն քայլերն ուղղելով դեպի վարպետը:

— Ինչ կա,— հեռվից հարցրեց վարպետը,— ուզում ես հիմա՞ գնալ: Եթե առաջադրանքդ կատարել ես, կարող ես:

— Ո՛չ, ո՛չ, վարպե՛տ: Կտրիչս…

— Ջարդվել է, հա՞,— վարպետ Մուշեղը լուռ բացեց գործիքների պահարանը և մի նոր կտրիչ մեկնեց Կարոյին,— վերցրո՛ւ, միայն թե զգույշ եղիր, տղա՛ս:

Նրա գնալուց հետո վարպետը մտածմունքի մեջ ընկավ: Քիչ առաջ Կարոն նրանից տուն գնալու թույլտվություն էր խնդրում, որովհետև քույրը եկել էր գյուղից: Վարպետը չառարկեց և խոստացավ ստուգողական աշխատանքից հետո թույլատրել: Իսկ հիմա այդ կտրիչը… Գուցե նրան հարկավոր էր ավելի շտապ գնալ և, չուզենալով կրկին խնդրել, դիտմամբ կոտրել է, որպեսզի վարպետը բարկանա ու զրկի ստուգողականից… Բայց գուցե և պատահականություն էր…

Կարոն նորից սկսեց աշխատել, բայց այլևս ոչ առաջվա եռանդով: Տրամադրությունն ընկել էր: Հիմա վարպետը տեսնես ի՞նչ է մտածում: Կտրիչը… Ախր ինչ-պե՞ս ջարդվեց…

Սաթիկը եկել էր գյուղից: Ինքը նրա հետ քաղաք դուրս կգա, պաղպաղակ կգնի: Սաթիկը պաղպաղակ շատ է սիրում: Հետո կհանի իր երեք ամսվա աշխատավարձը, որը թղթի մեջ փաթաթած պահում է ներքնակի տակ, ու Սաթիկի համար կգնի այն կապույտ ծաղկավոր շորը, որը խանութի ցուցափեղկում կախված է: Կարոն Սաթիկին պատկերացրեց կապույտ ծաղկավոր շրջազգեստով ու ժպտաց: Ինչպե՞ս կսազի… Գուցե Զավենին էլ ասի, որ միասին գնան… Ախր կտրիչը… Չէ՛, ինքը լավ հիշում է, ոչ մի ճայթյուն չի լսվել, ուրեմն…

Ինչպես մի մոռացված երգ, որ երբ հանկարծ միտքդ է ընկնում, անընդհատ հնչում է ականջիդ ու չես կարողանում հեռացնել այն, կոտրված կտրիչը չէր հեռանում Կարոյի մտքից: Մտածում է բոլորովին տարբեր բաների մասին, բայց անընդհատ ու անվերջ տանջում էր այն միտքը, որ վատ, շատ վատ ստացվեց, որ հավանաբար վարպետ Մուշեղը չհավատաց իրեն…

Իսկ կողքի հաստոցի մոտ գլխիկոր աշխատում էր Կարոյի ընկերը՝ Զավենը: Նրա հոգում այդ պահին երկու ձայն էին խոսում: Մեկն ասում էր. «Ինչպե՞ս չամաչեցիր, չէ՞ որ քո պատճառով տուժեց ընկերդ, հենց հիմա գնա, խոստովանիր ու ներողություն խնդրիր»: Իսկ մյուսը թե՝ «Դե լավ, ի՞նչ մեծ բան է: Չէ՞ որ նրա համար միևնույնն է, նա գերազանցիկ չէ: Հետո, տեսա՞ր, վար-

պետը իսկույն նրան նոր կտրիչ տվեց, իսկ քեզ գուցե չտար էլ»:

Թվաց, թե հանգստացավ, բայց երբ թաքուն, աչքի պոչով նայեց ընկերոջը, տեսավ, թե որքա՜ն տխուր է նրա դեմքը, շարժումները որքա՜ն դանդաղ, ամոթից մի այնպիսի ցավ զգաց սրտում, որ պատրաստ էր ճչալ, հայտնել բոլորին, որ ինքը՝ Զավենը, գող է…

Զանգը հնչեց: Միանգամից լռեցին հաստոցները: Թվաց, թե արհեստանոցը դատարկվեց: Բայց և իսկույն այս ու այն կողմից դուրս վազեցին կապույտ արտահագուստներ հագած պատանի խառատները: Նրանք մոտենում էին իրար, ստուգում միմյանց արկղերի պարունակությունը և ուրախ բացականչում:

Բայց որոշողը, իհարկե, քանակը չէր…

Քիչ անց նրանք ըստ դասամատյանի, հերթականությամբ մոտենում էին լայն գրասեղանին, որի հետևում վարպետ Մուշեղն ու արհեստագործական ուսումնարանի դիրեկտորն էին նստած, հանձնում էին պատրաստի հեղույսները ու սրտատրոփ սպասում գնահատականի:

Հերթը Կարոյին հասավ: Նա համոզված էր, որ վատ են ստացվել իր հեղույսները, մոտենում էր գլխահակ ու տխուր:

— Դժգոհ եմ քեզնից, Կարո՛,— կամացուկ ասաց ալեզարդ վարպետը:— Չգիտեմ՝ քեզ հետ այսօր ի՛նչ է պատահել: Կտրիչը ջարդեցիր, արտադրանքիդ կեսն էլ խոտան է: Գնա՛, «միջակ» եմ նշանակում: «Մի՞թե իրոք դիտմամբ է կոտրել,— մտածեց նա ու ավելացրեց բարձրաձայն,— չէի սպասում, տղա՛ս…»:

Կարոն չպատասխանեց: Ինչպես մոտեցել էր գլխահակ, այնպես էլ հեռացավ՝ անընդհատ մտածելով ջարդված կտրիչի մասին:

— Սիմոնյան Զավե՛ն:

— Սիմոնյան Զավե՛ն,— կրկնեց վարպետը:

Զավենը սթափվեց ու մոտեցավ: Դեմքը գունատ էր, աչքերը հառել էր ցած:

— Ի՞նչ է եղել, տղա՛ս,— անհանգստացավ վարպետ Մուշեղը,— հիվա՞նդ ես,— ու ձեռքը դրեց նրա ուսին,— տուր այստեղ հեղույսները… Օհո՛, նայեցե՛ք, ընկե՛ր Պետրոսյան, ինչպես երևում է, Զավենն է Խարկով գնալու:

— Չե՛մ ուզում,— հանկարծ բղավեց Զավենը,— չե՛մ ուզում:

— Ի՞նչը,— շփոթվեց վարպետը:

— Ես գող եմ, վարպե՛տ,— հեծկլտաց տղան,— ես էի փոխել Կարոյի կտրիչը…

Գիշեր է: Քնել են արհեստագործական ուսումնարանի սաները: Միայն մի սենյակում ինչ–որ շշուկներ են լսվում: Կարոն ու Զավենն են: Մահճակալները մոտեցրել են իրար ու խոսում են:

— Դե լավ,— կամացուկ ասում է Կարոն,— դե լավ, Զավե՛ն, ուրիշ բանի մասին խոսենք…

Ու դեռ երկար ժամանակ լսվում է նրանց շշուկը: Խոսում են այն մասին, որ այդ մեկ օրում իրար ավելի լավ ճանաչեցին, որ սրանից հետո ավելի լավ ընկերներ կլինեն, որ քննություններին էլ միասին կպատրաստվեն, իսկ երբ ավարտեն ուսումնարանը…

— Դու որտե՞ղ ես աշխատելու, Զավե՛ն:

— Եղբորս մոտ՝ կոլտնտեսությունում: Իսկ դո՞ւ:

— Թե համաձայնվես, կգամ քեզ հետ:

— Իհարկե, դե քնենք:

Զավենն անշշուկ լաց եղավ: Լաց էր լինում նրա համար, որ լավ բան չէր իր արածը, նրա համար, որ իր ընկերներն այնքա՜ն բարի են, որ վարպետ Մուշեղը ներեց:

Ու քնեց՝ խաղաղ ժպտալով, արցունքի ցողերն այտերին:



Սոնա Գասպարյան, 4 տ.

ՎԱՉԵՆ

Վաչեն աղմուկով փակեց դասարանի դուռը, անցավ երկար միջանցքով, բազրիքի վրայով սահելով իջավ աստիճաններից ու նիհար պայուսակը գոտուց կախ՝ մոտեցավ դարպասին:

— Էդ ո՞ւր, Վաչի՛կ,— հետաքրքրվեց դպրոցի ծեր դռնապանը, որ ավլում էր բակի աշնան տերևները,— հիվանդ հո չե՞ս:

— Չէ՛, քեռի՛, ընկեր Գասպարյանը հրավիրեց դուրս գնալ ու հիանալ բնությամբ: Դե ես կարո՞ղ էի հակառակել ուսուցչիս:

— Է՛, Վաչի՛կ, Վաչի՛կ,— կորացած մեջքը ուղղելով՝ սկսեց քեռի Թորոսը,— մեր ժամանակ, այսինքն՝ հազար ութ հարյուր ու իննսուն…

Բայց Վաչեն արդեն դուրս էր եկել դարպասից ու քայլում էր սալահատակ մայթով: Տաք ու արևոտ օր էր: Աշնան բազմերանգ գույներով ներկված ծառերի տերևները թափվել էին մայթերին ու հաճելի խշխշում էին անցորդների ոտքի տակ: Ահա մի տերև էլ պոկվեց ճյուղից ու օրորվելով չափեց ծառի բարձրությունը:

Քայլում էր փողոցով Վաչեն ու մտածում: Մտածելու շատ բան կար: Սովորականի պես չէր պատրաստել դասերը, չէր կատարել հանրահաշվի տնային աշխատանքը ու սպասում էր, թե ուր որ է, ընկեր Գասպարյանը

գրատախտակի մոտ կկանչի… երբ մի միտք հղացավ: Ավելի լավ չի՞ լինի, որ ինքը խանգարի դասը: Ուսուցիչը ստիպված իրեն դուրս կհրավիրի դասարանից և… ինքը «2»-ից կփրկվի…

Այդպես էլ եղավ:

— Մի ցավից պրծա, մյուսի մեջ ընկա,— մտածում էր Վաչեն,— ծնող կանչի՝ հեշտ է, էլի… մաման լաց կլինի, կխոսի իր անբախտության մասին, իսկ պապան կբարկանա, և մի շաբաթ՝ մնաս բարով, կինո «Նաիրի»:

Նա որոշեց առայժմ ոչինչ չասել տանը: Ո՞վ գիտե, գուցե ընկեր Գասպարյանը մոռացած լինի: Հետո վարանեց, չէ, մեկ էլ տեսար ուսուցիչը եկավ իրենց տուն ու…

Նա անցավ «Նաիրի» կինոթատրոնի մոտով, նայեց աֆիշային:

«Հետախույզի սխրագործությունը»: Կարելի էր նորից նայել, բայց… Վաչեն հենց այնպես քրքրեց գրպանները: Գրքերը շուռ ու մուռ տվեց և հուսահատ շարունակեց ճանապարհը:

— Արա՛, Վաչի՛կ, պրիվե՛տ,— հենց այդ րոպեին լսվեց մի ձայն, ու Վաչեն նկատեց Ալբերտին, որ իրեն էր մոտենում:

Նա չալպտուրիկ մի բլուզ էր հագել, որի ներքևի ծայրերը կախված էին ձագարաձև փողքեր ունեցող շալվարի վրա: Գլխին անկանոն դասավորված խոտի դեզի նման աճել էին մազերը: Կոշիկների քթերը վերև էին ցցված: Ուրիշ անգամ Վաչեն չլսելուն կտար ու կանցներ Ալբերտի մոտով: Բայց այսօր նա մի տեսակ չէր ուզում մենակ մնար, ուզում էր խոսել մեկի հետ, սիրտը բացեր…

— Ո՞նց ես, տո՛,— շարունակեց Ալբերտը,— հիշո՞ւմ ես, որ լագերում իրար հետ խնձորի գողության էինք գնում, հիշո՞ւմ ես…

Վաչեն ուզում էր ասել, որ շատ լավ է հիշում, թե ոնց նրան հեռացրին ճամբարից, բայց սիրտ չարեց: Մեկ էլ տեսար՝ նեղացավ: Հետո նրանք խոսեցին դեսից–դենից, ու Վաչեն պատմեց գլխով անցածը…

— Պա՛հ, ես էլ ասում եմ ինչի ես քիթդ կախել,— Ալբերտը քահ-քահ ծիծաղեց: — Դու էլ թո՛ղ, մենք որ դպրոց չենք գնում, պակաս տղա ե՞նք:

— Այսինքն՝ էդ ո՞վ եք դուք…

— Ես ու իմ ընկերները:

Վաչեն նայեց Ալբերտի ցույց տված կողմը: Կինո-թատրոնի շենքի պատի տակ մի քանի տղաներ էին կանգնած՝ ծխախոտներ բերաններին ու, որքան հնարավոր է, խայտաբղետ հագնված: Երկուսը Վաչեի տարիքը կունենային, երրորդը մեծ էր, բարձրահասակ ու նիհար: Նրա ճակատին սպի կար, իսկ աչքերը Վաչեին էին նայում ուշադիր հետաքրքրությամբ: Այդպես գազանանոցում նոր բերված կենդանիներին են նայում: Վաչեն վատ զգաց իրեն: Նա ուզեց թողնել հեռանալ ու դրա համար ձեռքը Ալբերտին երկարացրեց:

— Ո՞ւր, տո՛,— զարմացավ Ալբերտը:— Բա ես կթողնե՞մ, որ դու դիլխոր գնաս: Մտնենք կինո, հը՞…պատիվ եմ անում…

Վաչեն ուզեց հրաժարվել, բայց նորից սիրտ չարեց: Հետո իրեն արդարացնելու համար մտածեց, թե ի՞նչ կա,

մեկ է, ծնողները ուշ են աշխատանքից գալիս, իսկի չեն էլ իմանա:

Նրանք մոտեցան շենքին: Ալբերտն իր ընկերներին ինչ–որ բան ասաց: Նրանք ավելի ուշադիր ու ասես հեգնանքով նայեցին Վաչեին, իսկ բարձրահասակն ասաց.

— Լավ տղա է երևում, կարելի է…

Վաչեին շատ զարմացրեց Ալբերտի առատաձեռնությունը: Նա տոմսավաճառից չվերցրեց դրամի մանրը, իսկ երբ Վաչեն ակնարկեց այդ մասին, քմծիծաղ տվեց.

— Պատվի՛ց խոսա:

Երբ կինոն վերջացավ, ու նրանք փողոց դուրս ելան, արդեն երեկոյանում էր: Աղմուկով ու զնգոցով անցնում էին տրամվայներն ու ավտոբուսները: Քամին աշնան վերջին տերևներն էր պոկում, տանում–խփում մարդկանց դեմքերին, ու հետո, ասես ուժասպառ հանդարտվում, որպեսզի մի վայրկյան անց նորից սուլա:

— Ես գնամ, արդեն ուշ է,— ասաց Վաչեն:

— Սա՛ է ուշ,— Ալբերտը հեգնանքով սուլեց,— հլա կյանքը նոր է սկսվում:

— Ախր քաղցած եմ:

— Դե շուտ ասա էլի, ես էլ եմ սովից մեռնում, գնանք իրար հետ ուտենք: Գնա՛նք, ժոռ,— դիմեց Ալբերտը բարձրահասակին:

— Ո՞ւր ենք գնալու,— հարցրեց Վաչեն:

— Հե՛չ, ըստեղ մի տեղ կա:

Վաչեն նորից փորձեց առարկել, ասաց, որ ուշ է, որ ծնողները կսպասեն, բայց նորից տեղի տվեց: Նրանք կտրեցին հրապարակը ու օպերետայի շենքի կողքի նեղ

փողոցով շարունակեցին ճանապարհը: Կանգ առան երկհարկանի մի տան մոտ: Ներքնահարկից օղու և գարեջրի հոտ էր գալիս: Վաչեն կնճռոտեց քիթը ու ետ ընկրկեց:

— Մի՛ վախի, քեզ չե՛ն ուտի,— ծիծաղեց Ալբերտը,— իջի՛ր ներքև:

Նախաճաշարանում օդը ծանր էր: Ինչ-որ մեկը երգում էր կոկորդի ամբողջ ուժով: Սեղանին թափված էին լավաշի կտորտանքներ ու ոսկորներ: Երբ տեղավորվեցին քարե մի սեղանի շուրջ, բարձրահասակը գոռաց.

— Մի-մի քյաբաբ բերեք, մի շիշ էլ օղի…

Ալբերտը լցրեց բաժակները: Վաչեն իր բաժակը ետ հրեց ու ասաց, որ ինքը օղի չի սիրում: Ալբերտի հասակակից մյուս տղան հռհռաց.

— Վախենո՛ւմ է…

— Ո՞վ է վախենում,— բարկացավ Վաչեն: Նրա գլուխը ծանր օդից պտտվում էր:

— Հենց դու,— շարունակեց հռհռալ Սերոբը:

— Ես,— Վաչեն մոռացավ ամեն ինչ. նա ուզում էր անպայման հենց հիմա ապացուցել, որ ինքը վախկոտ չէ, որ եթե բռնցքամարտի ձեռնոցներ լինեին այստեղ, ցույց կտար այդ երկարամազին,— ե՛ս,— կրկնեց նա և մի ումպով դատարկեց բաժակը:

Օղին հալված կապարի նման այրեց Վաչեի կոկորդը: Հազը խեղդեց նրան: Աչքերը լցվեցին արցունքներով, և խորտկարանը լողաց մշուշի մեջ:

Քիչ անց նա արդեն գրկել էր Ալբերտին ու ծիծաղում էր հարբածի ներվային, թույլ–թույլ ծիծաղով:

— Հասկանո՞ւմ ես, ես ոչ ոքից չեմ վախենում…ընկեր Գասպարյանը…

— Տո դու դրա մասին մի մտածի: Մեր նման ընկերներ ունես…Էգուց Ժոռը կգնա ձեր Գասպարյանի մոտ, ամեն ինչ կդզի: Մենակ թե դու տանը բան չասես, հա՛… ասա՝ ընկերոջս ծնունդն էր:

Ժորան, իսկապես, եղավ դպրոցում: Նա հավատացրեց ուսուցչին, որ Վաչեի հայրը գործուղման մեջ է, իսկ մայրը՝ հիվանդ: Եվ, որ ինքը Վաչեի «քեռու տղան» է: Նա նույնիսկ ընկեր Գասպարյանի ներկայությամբ նախատեց Վաչեին, որը երեկվա պատմությունից հետո գունատ ու շփոթված տեսք ուներ, և խոստացավ, որ այլևս նման դեպքեր չեն կրկնվի…

Դպրոցի անկյունում նա Վաչեին ասաց.

— Իսկ դու լաց էիր լինում: Տեսա՞ր, ինչ հեշտ պրծար:

Վաչեն չգիտեր ինչ ասել: Ժորան այլևս այն չէր կարծես, որ կանգնել էր ընկեր Գասպարյանի առջև՝ խոնարհ ու լուրջ: Հիմա սև հոնքերի տակից Վաչեին էին նայում երկու խորամանկ, լկտի աչքեր, ստելու և անմեղ ձևանալու ընդունակ աչքեր: Ու Վաչեն սարսուռ զգաց:

— Էսօր էլի կգաս էնտեղ,— բաժանվելուց առաջ ասաց Ժորան:

Նա արդեն հրամայում էր, Վաչեն լավ զգաց այդ: Մի ինչ-որ ներքին, թաքնված ձայն նրան ասում էր, որ պետք չի գնալ, պետք չի կապվել այդ տղաների հետ, բայց այդ ձայնը թույլ էր: Իսկ մի ուրիշ ձայն համառորեն հրում էր նրան, ստիպում, թե ինչո՞ւ չգնա, ի՞նչ պակաս

տղաներ են, էլի նեղ ժամանակ նրանք օգնության հասան, թե չէ մայրիկը, հայրիկը, որ իմանային… տեսա՞ր, նրանք իրեն կինո տարան… շատ փող ունեն…

— Իսկ որտեղի՞ց է նրանց այդքան փող,— խուլ բողոքում էր առաջին ձայնը:

— Ինչպե՞ս թե որտեղից, բա Ալբերտը չասա՞ց, թե իր հայրը բարձր պաշտոնյա է…—բարկանում էր երկրորդը:

Ու Վաչեն գնաց…

Ու հետո նրանք ավելի ու ավելի հաճախ էին հանդիպում: Միասին շրջում էին փողոցներում, գնում կինո, մտնում նախաճաշարան: Վաչեի համար հետզհետե դրանք սովորական բաներ դարձան: Նա նույնիսկ չզարմացավ, երբ Ալբերտը մի անգամ փողոցում վիրավորեց մի աղջկա, այլ նույնիսկ ծիծաղեց: Բայց որովհետև ցերեկները նա շարունակում էր դպրոց հաճախել, այդպես էլ չէր իմանում, թե ինչով են զբաղվում իր նոր ընկերները: Մի անգամ, երբ հարցրեց այդ մասին, Ժորան՝ կես լուրջ, կես կատակ ասաց. «Աշխատում ենք»: Մի բան էր միայն դեռ մտատանջում Վաչեին: Նա տեսնում էր, որ օրեր շարունակ, երբ տղաները փող չեն ունենում, վիճում են իրար հետ, կռվում: Օր է լինում, որ աջ ու ձախ փող են շռայլում: Ու միշտ նման դեպքերում Վաչեի հոգու մեջ մի ձայն բողոքում էր՝ «Դե ասա, որտեղի՞ց է նրանց մոտ այդ փողը»:

Եվ մի օր Վաչեն իմացավ այդ մասին: Իմացավ այն ժամանակ, երբ տղաները ստիպեցին դրամ «վաստակել» իրենց ճանապարհով: Այո՛, ստիպեցին: Ժորան չար–չար նայելով սև հոնքերի տակից, ասաց.

— Հերիք է ինչքան մեր հաշվին ապրեցիր: Հիմա դու էլ փող ճարի:

— Որտեղի՞ց,— կարկամեց Վաչեն:

— Կլինես մեզ հետ, կիմանաս:

...Ձյուն էր գալիս: Տրամվայը զնգզնգոցով անցնում էր Հոկտեմբերյան պողոտայով: Երկրորդ վագոնի հետևի հարթակում կանգնել էին Ժորան ու Վաչեն: Ալբերտը երկու ձեռքով բռնել էր դռան բռնակները ու դեպի դուրս էր նայում: Շուկայի մոտ գտնվող կանգառում մի քանի հոգի բարձրացան: Ժորայի ազդանշանով Ալբերտը փակեց նրանցից մեկի՝մի ալեհեր մարդու ճանապարհը և սկսեց հրել նրան՝ իբր ինքը ուզում է ներքև իջնել: Նրան հաջողվեց արձակել ծերունու վերարկուի կոճակները. մոտ գալով՝ Ժորան ևս կանգնեց ծերունու դիմաց ու հրելով սկսեց զգուշությամբ խուզարկել նրա գրպանները: Փոքր անց Վաչեն, որը չէր կարողանում տեսնել ուղևորի դեմքը, զգաց, թե ինչպես գրպանը ծանրացավ: Նա ձեռքը աննկատելիորեն գրպանը խոթեց ու շոշափեց կաշվե դրամապանակը: Ով պետք է կասկածեր փոքրահասակ, հեռու կանգնած Վաչեի վրա: Բայց հենց նույն վայրկյանին.

— Դրամապանա՜կս,— հուզված բացականչեց ծերունին ու բռնեց Ժորայի թևքից: Աղմուկի վրա հավաքվեցին:

— Փախի՛ր,— արմունկով հրելով՝ հասկացրեց Ժորան:

Բայց Վաչեն սփրթնած քարացել էր տեղում. կողպտված ծերունին իրենց հանրահաշվի ուսուցիչն էր՝ ընկեր Գասպարյանը:

— Ես տեսա՝ սրանք էլ էին,— բացականչեց քաղաքացիներից մեկը՝ մատնացույց անելով Ալբերտին ու Վաչեին:

Դեպքի վայրը հասած միլիցիոները ձերբակալեց նրանց: Դրամապանակը դուրս եկավ Վաչեի գրպանից:

— Ա՛յ, տեսնո՞ւմ եք, ե՛ս չեմ, էդ տղան է գողացել,— միլիցիոներներին և ուղեկցող մարդկանց համոզում էր Ժորան:

Ուսուցիչը նոր միայն նայեց Վաչեին, նայեց ու ճանաչեց:

— Ի՞նչ եք ասում,— նրա ձեռքերը դողում էին,— թյուրիմացություն է: Նա իմ աշակերտն է... խոսի՛ր, Վաչե՛:

Վաչեն լուռ էր:

Ձյունը շարունակում էր տեղալ ծանր ու մեծ փաթիլներով, ճերմակով էր ծածկվել ամեն ինչ: Միլիցիայի բաժանմունքը տանող ճանապարհով քայլում էին օրենքի պաշտպանն ու վշտահար ուսուցիչը, նրանց առջևից՝ Ժորան, Ալբերտը ու Վաչեն... Արցունքի խոշոր կաթիլները դանդաղորեն գլորվում էին նրա գունատ այտերի վրայով՝ խառնվելով հալված փաթիլների շիթերին:

Վաչեն լալիս էր...

ԴՈՒ ԿՏԵՍՆԵՍ ԳՈՒՆԱՎՈՐ ԵՐԱԶՆԵՐ

— Քանի՞ օրից հետո ես գնալու դպրոց:

Ամեն օր, երբ հանդիպում եմ Հրաչիկին, ես այս հարցն եմ տալիս: Որովհետև գիտեմ՝ նա կանգնում է իմ դռան առջև ու սպասում այնքան ժամանակ, մինչև ես դուրս գամ ու տամ այդ հարցը:

— Որ 503 անգամ քնեմ, հետո,— երջանկությունից փայլող դեմքով պատասխանում է Հրաչիկը:

Հետո հարցնում է միշտ.

— Այդ շա՞տ է, թե քիչ, քեռի՛ Սարո:

Քեռի Սարոն ես եմ:

— Քիչ է, քիչ, Հրաչի՛կ,— ասում եմ ես:

Մենք նստում ենք թթենու տակ: Ես լրագիր եմ կարդում, իսկ Հրաչիկը տեղավորվում է ինձնից քիչ հեռու ու երկաթի մի կտորով փորում է հողը:

Հրաչիկը մեր հարևանի տղան է՝ 6 տարեկան: Նա կապույտ աչքեր ունի ու սև մազեր, այնպես սև, ոնց որ ձյութը: Ու շատ է սիրում հողի հետ խաղալ:

Վերցնում է երկաթի մի կտոր ու սկսում է փորել հողը: Հետո հողը տրորում է, ինչ–որ բլուր սարքում, մի փայտի կտոր էլ դնում է վրան ու ասում.

— Սա մանկական երկաթուղին է:

— Չէ՛ մի, երկաթուղի, սրա երկաթուղի՛ն նայեք,— լսվում է մի ծաղրական ձայն:

Դա Գուրգենն է, մեր մյուս հարևանի տղան: Նա վերադարձել է դպրոցից, ճաշել ու դուրս է եկել խաղալու: Բայց պայուսակն էլ հետն է բերել: Ու մեջն ինչ ասես կա: Միայն թե ծանր լինի պայուսակը, միայն թե բոլորը տեսնեն, որ ինքը պայուսակ ունի և դպրոց է գնում:

— Ա՛յ թե երկաթուղի է, հա՛,— ծաղրում է նա,— այս փայտի կտորն էլ երևի գնա՞ցքն է:

— Գնացքն է,— լրջորեն պատասխանում է Հրաչիկը:

— Բա ինչո՞ւ չի գնում, հը՞,— ծիծաղում է Գուրգենը:

— Կգնա,— ասում է Հրաչիկը,— ճամփան դեռ չեմ սարքել:

Ու մատով փայտի տակից հեռացնում է հողը, փայտը սահում է ցած:

— Տեսա՞ր,— ժպտում է Հրաչիկը ու հետն էլ փնչում է շոգեքարշի պես,— փուհ–փուհ, փուհ–փուհ…

— Իսկ երեխաները ուր են,— բարկանում է Գուրգենը,— դե ասա, է՛:

— Գնացքի մեջ են,— «փուհ–փուհ»–ի արանքից նետում է Հրաչիկը: Հետո հանկարծ սուլում է,— հեռու, դուրս եկեք գծերից, գնացքը գալիս է…

— «Գնացքի մե՛ջ են»,— Գուրգենը չարությունից պայուսակը նետում է հողին ու տրորում է բլուրը, մի կողմ է նետում փայտի կտորը,— ահա, այս էլ քո գնացքը, այս էլ քո երեխաները:

— Ինչո՞ւ,— Հրաչիկը հրում է Գուրգենին,— ինչի՞ ես տրորում, հը՞,— նա վշտանում է սաստիկ,— ինչի՞ քանդեցիր երկաթուղիս…

— Մի՛ խանգարիր, Գուրգե՛ն,— սաստում եմ ես,— թող խաղա իր համար:

— Ախր փչում է, է՛, քեռի՛ Սարո,— բավարարված, որ քանդել է Հրաչիկի կառուցածը՝ ասում է Գուրգենը,— դուք էլ էիք տեսնում: Բա էնտեղ երկաթուղի կա՛ր:

— Գուցե ես ու դու չենք տեսնում, բայց ինքը տեսնում է,— ասում եմ ես:

— Դե, իհարկե, տեսնում եմ,— մրմնջում է Հրաչիկը և հանկարծ ժպտում է արցունքների միջից,— դե ոչինչ, հիմա ես տնակ կսարքեմ ու այսպես ծառեր կտնկեմ շուրջը:

Չգիտես որտեղից եղևնու մի ճյուղ է գտնում, գալիս նստում է հողաթմբին, հողից մի քառակուսի հարթակ է պատրաստում ու եղևնու ասեղները հերթով տնկում է քառակուսու շուրջը:

— Սա խնձորի այգին է,— ասում է նա ու դեմքը փայլում է հրճվանքից,— երեխաները դուրս են գալիս տնակից ու մտնում են այգի:— Նա ինչ–որ երկու չոփ տնակի մոտից բերում է ու կանգնեցնում կանաչ ասեղների մոտ:

«Գալյա՛, խնձոր եմ ուզում»:

«Դե, լավ, Վալյա՛, ես հիմա աստիճանը կբերեմ, կբարձրանամ ու քեզ համար խնձոր կքաղեմ»:

«Երեխանե՛ր, ծառ բարձրանալ չի կարելի, դուք դեռ փոքր եք»:

«Մայրի՛կ, Վալյան խնձոր է ուզում»:

«Եկեք տուն, ես կտամ»:

Ու չոփերը արագ շարժվում են դեպի քառակուսին:

Պարզ է, չէ՞ որ Վալյայի, Գալյայի և մայրիկի փոխա-րեն միայն Հրաչիկն է խոսում, բայց նա այնպիսի տարբեր ձայներով է խոսում, որ ես հազիվ եմ ծիծաղս զսպում:

Իսկ Գուրգենը կրկին բարկանում է:

— Դե, տես ո՛նց է փչում, այս չոփի կտո՛րն է Վալյան:

— Չէ՛, դա Գալյան է,— ասում է Հրաչիկը:

— Դա էլ ես տեսնում, չէ՞,— ավելի է չարանում Գուր-գենը:

Տեսնում եմ,— կամացուկ ասում է Հրաչիկը ու ձեռ-քերով պաշտպանում իր տնակը: Վախենում է, որ Գուր-գենը կրկին կքանդի:

Հետո հանկարծ բարձրացնում է գլուխը, ինչ–որ շատ հաճելի մի բան է հիշում ու ժպտում կապույտ աչքերով. այնպես կապույտ, ասես ներկված լինեն:

— Իսկ ես այս գիշեր այնքան լավ երազ եմ տեսել… հիշեցի:

— Դո՛ւ,— Գուրգենը չի հավատում ու քմծիծաղ է տալիս,— երա՜զ…

— Տեսել եմ,— երազկոտ հայացքով ասում է Հրաչի-կը,— այնքա՜ն սիրուն էր…

— Փչում ես,— ընդհատում է նրան Գուրգենը,— ես դպրոց եմ գնում, երազ չեմ տեսնում, իսկ դու տեսնո՞ւմ ես:

— Տեսնում եմ,— երդվում է Հրաչիկը…

— Դե՛ ասա, ի՞նչ ես տեսել,— Գուրգենը դա ասում է այնպիսի ձայնով, որ նշանակում է՝ «միևնույն է, չեմ հա-վատում, բայց որ շատ ես ուզում՝ պատմիր»:

Ու Հրաչիկը պատմում է՝ տնակն էլ, երկաթուղին էլ, Գուրգենին էլ մոռացած, այնպես է պատմում, որ կար-

ծես հիմա էլ տեսնում է, ու աչքերն էլ կիսախուփ են: Իսկ դեմքը հուզված է ու պայծառ:

— …Հայրիկիս հետ գնացել էինք Մանկական այգի: Շատ երեխաներ կային: Հայրիկս ինձ տարավ անիվի մոտ: Ախր հայրիկս գիտի, որ ես ամենից շատ անիվ եմ սիրում: Անիվի տնակների մոտ այնքա՜ն երեխաներ կային: Տեղ չկար: Ու բոլորը երգում էին…

— Ի՞նչ էին երգում,— արագ հարցնում է Գուրգենը:

Հրաչիկը շփոթվում է:

— Ի՞նչ, սպասի՛ր… չեմ հիշում,— տխուր մրմնջում է նա:

— Տեսա՞ր,— չարախնդում է Գուրգենը,— տեսա՞ր, որ փչում ես: Դու ոչ մի երազ էլ չես տեսել:

— Տեսել եմ,— Հրաչիկը քիչ է մնում լաց լինի,— տեսել եմ: Ես էլ երգում էի բոլորի հետ:

— Դե լավ, էլի սկսեցիր, տզզա՜ն,— մեղմանում է Գուրգենը,— լավ, փչի՛ր:

Ու միանգամից պայծառանում է Հրաչիկը, աչքերը նորից կիսախուփ են, երազկոտ:

— …Հետո մենք մոտեցանք դրամարկղին: Ու մեկ էլ ի՞նչ տեսնեմ. տոմսավաճառ մորաքրոջ փոխարեն նստել է մի գեներալ:

— Գեներա՞լ,— Գուրգենը փռթկում է:

— Գեներալ,— կրկնում է Հրաչիկը,— նայում է ինձ, ծիծաղում է ու հարցնում. «Ուզո՞ւմ ես թռչել»: Ես էլ եմ ծիծաղում ու գլխով եմ անում: Հետո հայրիկս ինձ նստեցնում է անիվի մի տնակի մեջ ու փակում է դուռը: Ու մեկ էլ տեսնեմ՝ հայրիկս փոքրիկ–փոքրիկ է, ու մեկ էլ տեսնեմ՝ ինձ կապել են տնակին: Չեմ կարողանում

շարժվել: Նայում եմ ներքև: Ու բոլորը փոքրիկ, փոքրիկ են, տները ոնց որ խորանարդիկներ... Ա՛յ, այսքան: Հետո տեսա, որ իսկի էլ անիվի մեջ չեմ, այլ ինքնաթիռի: Բայց չվախեցա: Ես էի քշում: Այնքա՜ն հեշտ էր: Այնքա՜ն սիրուն էր: Հո մենակ ես չէի. ուրիշներն էլ ինքնաթիռներ էին քշում: Գույնզգույն, կարմիր, կանաչ, կապույտ ինքնաթիռներ...

— Ահա բռնվեցիր, սուտ ես ասում,— բացականչեց Գուրգենը,— մեր դասատուն ասել է, որ գունավոր երազներ չեն լինում:

Հրաչիկը կրկին շփոթվեց:

— Ախր ես տեսել եմ,— անվճռական ասաց նա,— կարմիր, դեղին...

— Սուտ ես ասում,— չարացած բղավեց Գուրգենը,— հիմա մեր դասատո՞ւն գիտի, թե՞ դու: Բոլորն էլ սուտ ես ասում, դու երազ չես տեսել, դու ինքնաթիռ չես նստել...

— Տեսել եմ,— Հրաչիկը ուռցրեց շրթունքները: Հիմա ուր որ է լաց կլինի,— տեսել եմ... գույնզգույն ինքնաթիռներ...

— Իսկ սա տեսե՞լ ես:— Գուրգենը պայուսակը խփեց Հրաչիկի մեջքին ու վազեց դեպի իրենց տուն: Կանգ առավ շեմքին, նայեց հետ ու գոռաց նախանձով,— դու երազ չես տեսել, փչա՛ն...

Հրաչիկը հառաչեց, ոչինչ չասաց, վերցրեց երկաթի կտորը ու նորից սկսեց փորել հողը: Կարծեցի լաց է լինում, նայեցի, ուզեցի խոսել հետը: Բայց՝ չէ՛, մոռացել էր արդեն, կամացուկ խոսում էր ինքնիրեն, հետո ինչ–որ տեղից գտավ պահածոյի մի թիթեղյա տուփ, ծո-

րակից ջուր լցրեց, բերեց ու թափեց հողի վրա: Ջուրը նրա փորած փոքրիկ անցքից ներս լցվեց ու դուրս եկավ մեծ բացվածքով: Հրաչիկը հրճվանքով ծիծաղեց, նայեց շուրջը ու հանկարծ դարձավ ինձ.

— Տեսա՞ր:

— Ի՞նչը,— հարցրի ես:

— Գէսը,— ծիծաղեց Հրաչիկը:

— Դե, իհարկե, տեսա: Հիանալի է, հրաշալի է, Հրաչի՛կ:

Հրաչիկը նայեց ինձ: Մտածեց, թե ծաղրում եմ: Երկար նայեց: Ես չէի ծաղրում, չէի կատակում: Ինքը զգաց այդ, հավատաց: Ու ժպտաց անկեղծ, ուրախ, ու աչքերը դարձան երկնագույն:

— Որ մեծանամ, իսկական գէս կսարքեմ ու կտամ քեզ,— ասաց նա:

— Շա՛տ լավ, Հրաչի՛կ,— ասացի ես,— մեծացի՛ր:

Լռեց: Սկսեց մտածել: Հետո մոտեցավ ինձ, նայեց շուրջը ու շշուկով հարցրեց.

— Քեռի՛ Սարո, բա գույնզգույն երազներ չե՞ն լինում:

Նա նայում էր ինձ սպասող, հավատող աչքերով:

— Դե, իհարկե, լինում են,— ասացի ես,— ինչո՞ւ չպետք է լինեն:

— Բա Գուրգենը…

— Գուրգենը ճիշտ չի ասում,— պնդեցի ես:

Նա խոր շունչ քաշեց: Լռեց: Ցուցամատը բերանը տարավ ու նորից կկոցեց աչքերը: Հետո արագ հարցրեց հազիվ լսելի ձայնով:

— Իսկ ես կտեսնե՞մ…

— Ինչը:

— Գույնզգույն երազներ,— նրա ձայնը դողաց:

— Դե, իհարկե, կտեսնես,— ասացի ես,— դու ամեն ինչ կտեսնես, Հրաչիկ: Անհնար է, որ չտեսնես: Դու կտեսնես գունավոր երազներ...



Սոնա Գասպարյան, 4 տ.

Ա՜Խ, ՏԱՏԻ՛Կ, ՏԱՏԻ՛Կ...

Իմ տատիկին չե՞ք ճանաչում: Ո՞չ: Չի կարող պատահել: Տատիկիս բոլորն են ճանաչում, թեև բոլորն էլ նույն ձևով չեն կանչում նրան: Մեկն ասում է «Հայկանո՛ւշ մորաքույր», մյուսը՝ «Հայկանո՛ւշ հորաքույր», ուրիշները՝ «Հայկանո՛ւշ քեռեկին», «Հայկանո՛ւշ մայրիկ», իսկ մեր հարևան բժիշկ Գևորգյանը, երբ տեսնում է տատիկիս, հանում է լայնեզր գլխարկն ու ասում.

— Ողջո՛ւյն, տիկի՛ն Հայկանուշ, առողջությունդ ինչպե՞ս է:

Ու միայն ես եմ, որ իմ տատիկին պարզապես «տատի» եմ ասում:

Շատ բարի ու հետաքրքիր տատի է իմ տատիկը: Ասում եք՝ բոլոր տատիկներն էլ այդպիսի՞ն են: Չգիտեմ, բայց իմ տատին շատ հետաքրքիր տատի է: Օրինակ, ասենք թե հայրիկս շատ խնձոր է բերել ու դրել մառան, չէ՞: Դե, ասենք, եթե ուզենամ, չե՞մ կարող ասել.

— Մայրի՛կ ջան, ինձ խնձոր տուր: Կամ՝ տատի՛ ջան, խնձոր եմ ուզում:

Կարող եմ, չէ՞: Իհարկե, կտան:

Բայց տատի՛կս... Նա, մեկ էլ ինձ աչքով–ունքով մի կողմ է կանչում, համբուրում է թշերս ու ասում.

— Հիմա տես տատիկդ քեզ ի՛նչ է տալու, ի՛նչ է տալու:

— Ի՞նչ ես տալու, տատի՛ ջան,— անհամբերությամբ

հարցնում եմ ես, թեև գիտեմ, որ անպայման մի խնձոր է տալու:

— Ա՛յ թե ինչ եմ տալու,— ասում է նա,— ու ինչ–որ թաքուն գրպանից (այդպիսի գրպաններ նա շատ ունի և, ճիշտն ասած, մինչև հիմա էլ չգիտեմ դրանց տեղը) հանում է մի փոքրիկ, վառ կարմիր խնձոր ու մեկնում է ինձ:

— Կե՛ր,— ասում է,— Ասլա՛ն ջան:

Ասլանը ես եմ: Ճիշտ է, տանը բոլորն ինձ Ասո են կանչում, բայց տատիկս՝ չէ՛: Նույնիսկ բարկանում է.

— Դու Ասլան ես,— ասում է,— ողորմածիկ քո պապի անունն էլ էր Ասլան:— Հետո միշտ ավելացնում է,— քո պապն էլ էր քեզ նման լավ սովորում: «Հայր մերը» ջուր էր արել:

Առաջ ես չգիտեի, թե ինչ է նշանակում «ջուր էր արել»: Կարծում էի, թե շատ խորհրդավոր ու դժվար բան է: Հետո իմացա, որ դա բերանացի, անգիր սովորելն է: Ինչ հետաքրքիր է, չէ՞, իմ տատին:

Բայց… բայց հիմա մի բան կասեմ, որ կզարմանաք: Եթե ես պիոներ չլինեի, հիմա տատիկիս հետ խռոված պիտի լինեի: Զարմացաք, չէ՞:

Մի դեպք… Դե ո՞նց բացատրեմ, ասենք թե ես ջրամանը ջարդեցի: Ո՞վ է մեղավոր: Ես, չէ՞: Դե հիմա լավ լսեք, մի դեպք պատահեց, որ ես կարծում էի, թե միայն տատիկս է մեղավոր, բայց տատիկս չէր ընդունում, ասում էր՝ տերտերն է մեղավոր: Իսկ հայրիկս ու մայրիկս ո՛չ ինձ էին մեղադրում, ո՛չ տատիկիս, ո՛չ էլ տերտերին:

— Մենք էինք մեղավոր,— ասում էին նրանք:

Դե արի ու բան հասկացիր: Դուք էլ չհասկացաք, չէ՞:

Ուրեմն ես հիմա կպատմեմ այդ դեպքը, դուք էլ ուշադիր լսեք: Ո՞վ գիտե, գուցե ձեզ հետ էլ նման մի բան պատահի:

Դուք կիմանաք երևի, թե ինչքան դժվար է չորրորդ դասարանում սովորելը:

Քննություննե՛ր... Խոսքով ասելը հեշտ է:

Իսկ այդ քննություններն արդեն մոտենում էին: Մեր դասատուները միշտ ասում էին մեզ՝ «Երեխանե՛ր, քննություններից չպետք է վախենալ: Ճիշտ է, առաջին անգամ է, որ հանձնելու եք, բայց վախենալու ոչինչ չկա: Սովորական դաս է»:

Եվ, գիտե՞ք ինչ, ինչքան դասատուները մեզ սրտապնդում էին, այնքան մենք ավելի էինք վախենում:

Ես սկսեցի պարապել, կրկնել անցածը, ինչպես ինձ սովորեցրել էին: Մեր դասարանի տղաներն ու աղջիկները խումբ–խումբ էին պարապում, իսկ ես՝ մենակ: Չեմ սիրում, որ հավաքվում են ու սկսում խոսել դեսից–դենից: Միայնակ սովորելը լավ է: Իսկ երբ դժվարանում էի, գնում էի Վաղարշակենց տուն, նա բացատրում էր:

Դրա համար էլ հայոց լեզվի գրավորից «5» ստացա:

Ուրախ–ուրախ տուն եկա, ուզում էի պատմել բոլորին, թե ոնց եղավ, բայց հայրիկս ու մայրիկս դեռ աշխատանքից չէին վերադարձել: Գրկեցի տատիկիս:

— Տատի՛,— ասացի,— «գերազանց» եմ ստացել:

— Բա ինչի՞ «5» չդրեցին,— հարցրեց տատիկս:

Ա՛յ քեզ զարմանալի տատի:

— «5»–ը «գերազանցն» է, էլի, ա՛յ տատի,— ծիծաղեցի ես:

— Դե, լավ, լավ, թող քո ասածը լինի,— ասաց տատիկս, բայց ես զգացի, որ չհամոզվեց: Մնաց, մնաց ու

թե՝ բա ինչո՞ւ ուրիշները «5» են ստանում, իսկ դու՝ «գերազանց»:

— Նույնն է, նույնն է, տատի՛ ջան,— կրկնեցի ես,— իմ «գերազանցը» հենց քո ասած «5»–ն է:

— Բա խա՞չն ուր է:

— Ի՞նչ խաչ:

— «5»–ի կողքի խաչը:

— Խաչ չկա, խաչը վաղուց է վերացել,— ասացի ես:

— Իհարկե՛,— սաստիկ վիրավորվեց տատիկս,— հորիցդ, մորիցդ մի լավ բան չէիր սովորի: Խաչն էլ է վերացել…— տխուր ծոր տվեց նա,— տես էս երեխին ինչ են սովորեցրել: Մեղա՛, մեղա քեզ, Տե՛ր Աստված…

Ու հետս էլ չխոսեց: Ափսեները խոհանոցում չխկչխկացին: Տատիկս արդեն մոռացել էր ինձ: Հանեցի թվաբանության գիրքս ու սկսեցի սկզբից նորից կարդալ: Երկու օր հետո թվաբանության քննություն էր: Մի քանի տող էի կարդացել, մեկ էլ տատիկս ձայն տվեց.

— Ասլա՛ն:

Ես գնացի խոհանոց:

— Մի տես՝ քեզ ի՞նչ եմ տալու,— ժպտաց տատիկս,— ի՞նչ եմ տալու:

Ու գաղտնի գրպաններից մեկից հանեց «Խեցգետնի վզիկներ» տեսակի մի կոնֆետ, որ ես էի տվել իրեն անցած օրը, ու մեկնեց ինձ:

— Կե՛ր, Ասլա՛ն ջան, դու այնքա՛ն նման ես քո ողորմածիկ պապին, նա էլ էր քեզ նման իր ասածի տերը,— ասաց նա:

Ա՛յ թե ինչպիսին է իմ տատիկը: Իսկ ես կարծում էի, թե «5»–ի խաչը մոռացել է…

Մյուս օրը նորից թվաբանություն էի պարապում: Շատ դժվար էր: Դե, ինչ ասեմ, թվաբանությունը միշտ էլ ինձ համար դժվար է եղել: Ես թվաբանություն չեմ սիրում: Գիրքը առջևս եմ դրել, գրում եմ խնդիրները ու մտածում, թե տեսնես ո՞վ է եղել այն մարդը, որ նստել և ուրիշներին տանջելու համար այսպիսի խնդիրներ է գրել: Ու կարծես դիտմամբ քանի գնացել, այնքան բարդացրել է:

— Էդ ի՞նչ ես քեզ ու քեզ խոսում, Ասլան ջան,— հարցրեց տատիկս, որ աթոռին նստած ինձ համար գուլպա էր գործում:

— Է՛, ի՞նչ ասեմ քեզ, տատի՛կ,— տնքացի ես,— դժվար է: Վաղը թվաբանության քննություն եմ տալու, վախենում եմ:

— Ուզո՞ւմ ես վախդ բռնեմ,— իսկույն անհանգստացավ տատիկս:

— Ինչ անե՞ս:

— Վախդ վերցնեմ,— ասաց տատիկս,— էնպես անեմ, որ չվախենաս:

— Ի՞նչ պիտի անես որ…

— Վա՛յ, բա ինչո՞ւ ինձ շուտ չէիր ասում,— տատս տեղից վեր կացավ, գրպանից մի կարկանդակ հանեց, ասեղով սկսեց ծակոտել ու հետն էլ ինչ–որ խոսքեր ասել: Միայն երկու բառ էի հասկանում, որ տատս միշտ կրկնում էր. «Չարքե՛ր, կորե՛ք»:

Այդպես մի քանի անգամ ծակելուց ու խոսելուց հետո տատիկս կարկանդակը տվեց ինձ ու պահանջեց, որ անմիջապես ուտեմ:

Ճիշտն ասած՝ կերա: Սովորական կարկանդակ էր:

— Դե՛, հիմա գնա ու խաղա,— կարգադրեց տատիկս:

— Իսկ խնդիրնե՞րը,— առարկեցի ես, թեև ուրախ էի, որ խաղալու էր ուղարկում:

— Ք֊ո գործը չէ,— ասաց տատիկս,— դու խաղա՛, իսկ ես գնամ տերտերի մոտ, քեզ համար գիր բերեմ:

— Բոլորը լուծած ունի՞,— ուրախացա ես:

— Է՛,— բարկացավ տատիկս,— քո գործը չէ: Ես այն֊պիսի գիր գրել տամ, որ հինգ ու խաչ ստանաս:

Չգիտեմ ինչքան ժամանակ էր անցել (ես ֆուտբոլ էի խաղում), երբ տատիկս եկավ: Ուրախ էր: Շորի փոք֊րիկ կտորի մեջ փաթաթած մի ճռճռան բան տվեց ու ասաց.

— Սուրբ գիր է, գրպանդ դիր ու ոչ մի դեպքում չբացես:

— Ընկեր Վարդանյանին է՞լ ցույց չտամ,— զարմա֊ցած հարցրի ես:

— Վա՛յ, ի՞նչ ես ասում,— բարկացավ տատիկս,— ոչ մեկին, հորդ ու մորդ էլ ցույց չտաս: Թե մեկը էդ թուղթը տեսավ, վատ կլինի:

— Հիմա էլ չպարապե՞մ,— ուրախացած հարցրի ես:

— Գնա՛ խաղա,— ժպտաց տատիկս,— քո գործը չէ, ժամում էլ երկու մոմ եմ վառել, հինգ ու խաչ,— իսկ երբ դուրս էի գալիս, հառաչեց,— իսկը քո ողորմածիկ պապն ես, Ասլա՛ն ջան:

Ծիծաղում եք, չէ՞: Ի՞նչ ծիծաղելու բան է որ… Թե իմ տեղը կլինեի՞ք:

Մյուս օրը քննության ժամանակ գրատախտակից արտագրեցի ընկեր Վարդանյանի գրած խնդիրը ու քիչ

մնաց լաց լինեի: Ոչ մի բան չէի հասկանում: Մտածում էի, բան դուրս չէր գալիս: Իմ ընկերներն արդեն սկսել էին լուծել. սենյակը լցվել էր գրիչների ճռճռոցով: Իսկ ես… «Բա ինչո՞ւ սուրբ գիրը չի օգնում,— ասում էի ինքս ինձ, ձեռքս գրպանս էի տանում ու շոշափում շորի կտորի մեջ փաթաթած թուղթը,— ինչո՞ւ չի օգնում, հը՞, ախր հիմա զանգը կտա»:

— Ինչո՞ւ չես գրում, Ասլա՛ն,— զարմացավ ընկեր Վարդանյանը,— ի՞նչ կա գրպանումդ, որ անհանգստացնում է քեզ:

Բոլորը շրջվեցին ու սկսեցին ինձ նայել: Ճռճռոցը մի պահ դադարեց:

— Ես… ես… ոչինչ, հիմա կգրեմ,— կմկմացի:

— Դե, շտապի՛ր:

Հեշտ է ասելը՝ շտապիր: Ո՞նց շտապեմ, երբ «սուրբ գիրը» չի օգնում: «Բայց ինչպե՞ս պետք է օգնի,— մտածեցի ես,— գուցե ձևը չգիտեմ: Գուցե խնդրի լուծումը մեջը գրա՞ծ է: Բայց տատիկն ասաց, որ չպետք է բացեմ: Է՛, լավ, եթե չբացեմ, ո՞նց կօգնի»:

Չդիմացա, կամացուկ, աննկատ քանդեցի կծիկը: Այնպես էլ ամո՛ւր էր կապած: Միջից հանեցի ճռճռան թուղթը, նայեցի ու քիչ մնաց բարձրաձայն ծիծաղեի: Մի տիկնիկ էր նկարած: Այնպիսի տիկնիկ, որ ես նկարել եմ երեք տարեկան ժամանակս, մայրիկս դեռ պահում է. մի կլոր, մեծ գլուխ, մի երկար փոր և ցախավելի նման ոտքեր ու ձեռքեր: Տիկնիկի շուրջը խծբծանքներ կային, իսկ վրան գրված էր՝ «սադանա»: Ոչ թե «սատանա», այլ՝ «սադանա»:

Ծիծաղս հազիվ եմ զսպում: Ինչ ծիծաղելու ժամանակ էր: Թուղթը գրպանս դրեցի ու նորից կարդացի խնդիրը: Ա՛յ քեզ բան, ոնց որ դժվար չէ: Սևագրության թղթի վրա շտապ–շտապ գրեցի, լուծեցի... պատասխանը չստացվեց: Ստուգեցի ու նկատեցի, որ սկզբում մի տեղ սխալվել եմ:

Նորից գրեցի և... և պատասխանը ստացա: Այնքա՜ն ուրախացա:

Արագ վերցրի թուղթը և այն է, ուզում էի արտագրել, զանգը հնչեց:

— Աշխատանքները հանձնեք,— ասաց ընկեր Վարդանյանը ու նկատելով, որ ես չեմ ավարտել, բարկացած ասաց,— տո՛ւր թերթիկդ, Ասլա՛ն: Ոչինչ, ես կհասկանամ: Գնա ու շարունակիր գրպանովդ զբաղվել:

Դե ասե՛ք, ի՞նչ անեի: Սպասեցինք, որպեսզի իմանանք, թե ինչ գնահատական ենք ստացել: Եվ բոլորի մոտ ընկեր Վարդանյանը ասաց, որ ես ստացել եմ «երեք»:

...Երբ տուն մտա, բոլորն էլ սենյակում էին՝ հայրիկս էլ, մայրիկս էլ, տատիկս էլ...

— Ինչ ստացար, Ասլա՛ն ջան,— ժպտալով՝ տեղից վեր կացավ տատիկս,— հինգ ու խա՞չ:

— «Երեք»՝ առանց խաչի՛,— գոռացի ես ու էլ չկարողացա պահել ինձ, լաց եղա,— առանց խաչի՛,— ճչացի նորից, գրպանիցս հանեցի ճռճռան թղթի կտորը, գցեցի հատակին ու սկսեցի տրորել,— ա՛ռ, վերցրո՛ւ քո խաչը, ինձ պետք չէ: Տար քո տերտերին տուր, որ իմանա, թե ոնց են գրում «սատանա» բառը, վերցրու... Գնա քո տերտերի համար մոմ վառիր...

Բոլորը շփոթվեցին: Տատիկս քիչ էր մնում կարի մեքենայի վրա նստեր: Մայրիկս զարմանքից ծափ տվեց, իսկ հայրիկս ասաց.

— Լռի՛ր, այդ ինչպե՞ս ես խոսում տատիկիդ հետ:

Հետո հայրիկս գետնից վերցրեց թղթի կտորը, նայեց ու ամեն ինչ հասկացավ:

— Ախր ես տերտերին ասացի, որ ուժեղ գիր գրի, երևի թույլ է գրել,— մրմնջաց տատիկս ու սկսեց անիծել տերտերին:

Իսկ հայրիկս ասաց.

— Լա՛վ, այդ մասին հետո կխոսենք: Մեղավորը դու չես, այլ մենք ենք, որ չենք հետևել Ասլանին,— նա ցույց տվեց իրեն ու մայրիկին: Հետո մոտեցավ ինձ, ձեռքը դրեց գլխիս: Ես նորից սկսեցի կամացուկ լաց լինել:

— Լաց մի՛ լինի, Ասո՛, և սրանից հետո քե՛զ հավատա, գրքերին հավատա: Ինքդ տեսար, տերտերը նույնիսկ իր անունը գրել չգիտե: Ինչո՞վ է օգնելու քեզ: Իսկ հիմա գնա ու քնիր: Եվ այդ մասին անպատճառ կպատմես ձեր ջոկատում: Լսո՞ւմ ես…

Ես գնացի, պառկեցի ու լաց եղա: Իսկ ճաշասենյակում, որտեղ հայրիկս, մայրիկս ու տատիկս էին, երկար ժամանակ լույսը վառվում էր:

Էլի ծիծաղում եք, չէ՞: Դե, ոչինչ: Հիմա ես էլ եմ ծիծաղում: Մեր ջոկատում բոլորն էլ ծիծաղում էին, երբ պատմեցի: Դե, լա՛վ, լա՛վ, չեք զարմացնի, ես հիմա ամեն ինչ էլ գիտեմ: Գիտեմ, որ «սուրբ գիրն» էլ է սուտ, որ տերտերի ասածներն էլ են սուտ, որ Աստված չկա… Իսկ գիտե՞ք հայրիկս ինչ ասաց: Ասաց՝ այնտեղ, որտեղ

տերտերների ասելով Աստված պիտի լիներ, մեր արբանյակներն են շրջում: Իհարկե:

Տատիկս... Չէ, տատիկս տերտերի մասին էլ չի խոսում: Էլի ինձ խնձոր ու կոնֆետ է տալիս իր գաղտնի գրպաններից, բայց մոմի ու տերտերի մասին՝ ոչ մի խոսք...

Ա՛խ, տատիկ, տատի՛կ...

1958 թ.



Սոնա Գասպարյան, 4 տ.

ԷԼ ԻՆՉՈ՞Ւ ՄԱՅՐՍ ԿԱՐՈՒՄ ԷՐ ՈՂՋ ԳԻՀԵՐ

— Մայրի՛կ, դասը դեռ չէր վերջացել, երբ պարոն վարիչը ներս մտավ ու ասաց. «Երեխանե՛ր, վաղը մեր ուսումնարանն է այցելելու գավառային տեսուչը: Մենք պետք է դիմավորենք նրան, իսկ ձեզանից մեկը (նա, ով ուսումնարանի բացարձակ գերազանցիկն է) ծաղկեփունջ պետք է նվիրի պարոն տեսչին ու պատասխանի նրա հարցերին»: Երբ այդ ասաց, մեր ամբողջ դասարանը շրջվեց ու սկսեց ինձ նայել, պարոն վարիչը նկատեց այդ ու, մոտենալով ինձ, ասաց. «Բենի՛կ Այվազյան, պարոն տեսչին դու ես ողջունելու: Ուսումնարան կգաս գեղեցիկ ու մաքուր հագնված: Հայտնիր ծնողներիդ: Աշխատիր դուր գալ նրան: Նա քո մասին գիտե»: Լսո՞ւմ ես, մայրի՛կ, հենց այդպես էլ ասաց. «Նա քո մասին գիտե»: Իսկ ամբողջ դասարանը ինձ էր նայում: Մա՛,— արագ–արագ շարունակում էի ես,— իսկ ի՞նչ պիտի հագնեմ, մա՛:

Մայրս նայում էր ինձ պայծառ, բայց տխուր աչքերով: Ու քանի ես խոսում էի, այնքան ավելի ամուր էր գրկում ինձ: Հետո բաց թողեց, նայեց ու նորից գրկեց: Մի ուրիշ տեսակ էր նայում: Նա ուրախ էր. ես զգում էի այդ, չէր ժպտում, բայց ուրախ էր:

Դուռը թակեցին: Մայրս գնաց բացելու, կիսաբաց դռնից լսեցի, թե ինչպես նա շշուկով հայտնում էր հորս ինձ հետ կատարվածի մասին: Հետո նրանք մի քանի անգամ արտասանեցին «կոշիկներ», «պարտք», «մի տեղից գտնել» բառերը:

Ես նայեցի իմ կոշիկներին: Նրանք արդեն մաշվել էին: Մտածեցի, որ մայրս ճիշտ էր նախատում ինձ, երբ դրանցով գնդակ էի խաղում: Պետք չէր: Ա՛յ, տեսնո՞ւմ ես, հիմա հարկավոր է, որ լավ երևան, իսկ ինչի՞ են նման... Ասես Աբու Հասանի մաշիկները լինեն:

Իսկ նրանք շարունակում էին շշուկով խոսել: Հետո մայրս սենյակ մտավ:

— Հայրիկն ո՞ւր գնաց,— հարցրի ես:

— Հիմա կգա,— պատասխանեց մայրս ու բաց արեց պահարանը: Նա այնտեղից հանեց հորս համարյա նոր վերնաշապիկը՝ վառ կանաչ գույնի, ու սկսեց քանդել այն:

— Ինչո՞ւ...

— Հորդ հարկավոր չէ,— ասաց մայրս,— փոքրացնում եմ, որ վաղը հագնես:

Իրիկնադեմին տուն դարձավ հայրս՝ հոգնած, բայց գոհ: Նա ինձ համար բերել էր մի զույգ թաղիքե, երկար թելերով կոշիկներ, հեքիաթայի՛ն կոշիկներ:

— Վերցրո՛ւ,— ասաց նա՝ չկարողանալով թաքցնել ուրախությունը,— վաղը կհագնես: Ճիշտ է, շոգ կլինի, սրանք ձմեռվա համար են, բայց շատ դիմացկուն են:

Ես, հրճվանքից կաս–կարմիր կտրած, փարվեցի հորս, բայց համոզված էի, որ հիմա հետ կհրի: Նա չէր

սիրում, երբ մենք՝ երեխաներս, մոտենում էինք իրեն: Բայց այս անգամ հետ չհրեց ու կոշտ, ճաքճքված մատներով շոյեց գլուխս, այնպես, որ ես հազիվ արցունքներս զսպեցի:

Հետո ես պառկեցի քնելու, իսկ ծնողներս երկար ժամանակ խոսում էին:

— Ո՞վ գիտե, թե դուր գա, գուցե թողնեն, որ իրենց հաշվին շարունակի ուսումը,— ասում էր հայրս:

— Տա Աստված,— հառաչում էր մայրս:

Հետո թախտը ճռռաց: Հայրս էր. պառկեց քնելու: Իսկ իմ քունը բոլորովին չէր տանում: Աչքերիս առջև անընդհատ մեր ուսումնարանն էր, իսկ ականջիս արդեն քանի՛–քանիերորդ անգամ հնչում էին վարիչի խոսքերը: «Ի՞նչ հարցեր կտա պարոն տեսուչը,— մտածում էի ես,— կկարողանա՞մ լավ պատասխանել: Տեսնես ինչպիսի՞ մարդ է. երևի երկարահասակ, նիհար, փոքրիկ աչքերով ու մեծ, մինչև ականջները ոլորած բեղերով, ինչպես այն նկարի մարդը, որ կախված է մեր դասասենյակի պատից»:

Հայրս քնեց: Իսկ մայրս լամպի լույսի տակ շարունակում էր անշշուկ քանդել հորս բլուզը: Հետո ես տեսա, որ նա դուրս եկավ տանից ու քիչ հետո վերադարձավ՝ իր հետ բերելով մեր հարևանի կարի մեքենան:

— Թը՛խկ–թը՛խկ, թը՛խկ–թը՛խկ,— կարում էր մայրս:

Ես պատկերացրի վաղվա հանդեսը: Ահա բոլոր աշակերտները՝ իրենց առնական հագուստներով, և ես՝ իմ հրաշալի կոշիկներով ու կանաչ բլուզով: Նվագախումբը ինչ–որ ուրախ երգ է հնչեցնում: Հետո հանկարծ

բոլորը քարանում են, ու ներս է մտնում պարոն տեսուչը, ժպտում է, բարձրացնում ձեռքն ու հարցնում. «Որտե՞ղ է գերազանցիկ Բենիկ Այվազյանը, ես գիտեմ նրան»: Ես առաջ եմ գալիս. գլուխ եմ տալիս ու…

— Թը՛խկ–թը՛խկ, թը՛խկ–թը՛խկ:

Այս ի՞նչ է: Հա՛, կարի մեքենա է: Մայրս իմ բլուզն է կարում: Բայց ինչու այդքան ցածր է թխկթխկացնում մեքենան: Երևի նվագախումբը շատ բարձր է նվագում… Ի՞նչ նվագախումբ: Հա, դե իհարկե…

Ու ես քնեցի:

Իսկ մայրս կարում էր ողջ գիշեր:

* * *

Այդ օրը մենք առաջին ժամ չունեցանք: Տեսուչը շուտ էր գալու, և մեր ուսումնարանը նախապատրաստվում էր: Վարժապետներն ու վարժուհիները հուզված դեմքերով այս ու այն կողմ էին գնում: Պարոն վարիչը կարգադրություններ էր անում: Իսկ մենք խումբ–խումբ հավաքվել էինք դասասենյակում ու սրտատրոփ սպասում էինք շարվելու ազդանշանին:

Ես հագել էի իմ կանաչ բլուզը և նոր կոշիկները, որոնց երկար թելերը փաթաթել էի ճտքերի շուրջը: Իհարկե, այդ ամենը հեռու էին դասընկերներիս հագուստների ճոխությունից, բայց և այնպես, իմ կարծիքով, բոլորովին էլ վատ չէին: Թեև, անկեղծորեն ասած, տանը նրանք հարյուր անգամ ավելի գեղեցիկ էին թվում:

Շեփորը ուժգին հնչեց: Մենք արագորեն դուրս թռանք սենյակներից ու հավաքվեցինք միջանցքում:

— Շարվի՛ր, մեկ, երկու,— կարգադրեց պարոն վարիչը, ու մենք իսկույն գրավեցինք մեր տեղերը: Ես, իհարկե, ծաղկեփունջը ձեռքիս, ինչպես ինձ ասել էին, կանգնեցի բոլորի առջևում: Սիրտս ուռչում էր հպարտությունից ու հուզմունքից: Բոլորն ինձ էին նայում: Հիմա ներս կմտնի պարոն տեսուչը, կտեսնի ինձ... Ափսոս, որ հայրս ու մայրս այստեղ չեն. ինչ լավ կլիներ: Մայրիկս անպայման կժպտար... Պարոն վարիչը դանդաղաքայլ անցավ մեր շարքերի առջևով և կարծես թե գոհ մնաց: Հետո հանկարծ նկատեց ինձ ու նայեց մի տեսակ սառը, ծակող հայացքով, այնպես, որ ես ինձ վատ զգացի: Նայեց իմ ձմեռային ճտքավոր կոշիկներին, շալվարիս, բլուզիս... Հետո մոտ կանչեց վարժուհիներից մեկին ու ցածրաձայն ինչ–որ բան ասաց:

Վարժուհին, արագորեն մոտենալով ինձ, ձեռքիցս վերցրեց ծաղկեփունջը, երկրորդ շարքում կանգնած մեկին բերեց կանգնեցրեց իմ տեղը, իսկ ինձ հրելով տարավ նրա տեղը: Հետո հետ–հետ գնաց, կկոցեց մի աչքը, ինչպես մարդիկ նկարների ցուցահանդեսում են անում, ապա մոտենալով, այս անգամ չորրորդ շարքից մեկին բերեց, կանգնեցրեց իմ տեղը, իսկ ինձ, առաջվա նման հրելով, հետ տարավ:

Ես մեքենայորեն ենթարկվում էի նրան՝ առանց հասկանալու, թե ինչ է կատարվում ինձ հետ: Մտածում էի, որ դա թյուրիմացություն է, որ հիմա, ուր որ է, պարոն վարիչը կուղղի սխալը: Երևի չճանաչեց: Չէ՞ որ բա-

ցարձակ գերազանցիկը ես եմ: Այդ հո բոլորը գիտեն: Դե, իհարկե, չճանաչեց: Ես ախր նոր բլուզ ու կոշիկներ եմ հագել: Բայց չէ. վարժուհին մոտեցավ պարոն վարիչին, ու նրանք երկուսով սկսեցին կկոցած աչքերով նայել մեզ:

— Այվազյանը աչք է ծակում,— բարձրաձայն անբավականությամբ քրթմնջաց պարոն վարիչը,— մի՞թե չէին կարող մի կարգին շոր հագցնել: Բոլորը սպիտակ են հագել, իսկ սա կոպիտ, կանաչ: Եվ այդ ի՞նչ կոշիկներ են... Թաղիքե... այս շոգին:

— Կուզե՞ք վերջին շարքը տանեմ,— պատրաստակամություն հայտնեց վարժուհին:

— Ո՛չ, ո՛չ, վերջում էլ կերևա,— ընդհատեց նրան պարոն վարիչը,— ուղղակի մի տեղ խցկեք, մեջտեղում:

Նա այդպես էլ ասաց՝ «խցկեք»:

Հետո նույն վարժուհին նորից մոտեցավ ու ինձ տարավ նախավերջին շարքը:

— Պարոն տեսուչը գալիս է,— հնչեց մեկի ձայնը: Նվագախումբը ինչ–որ քայլերգ սկսեց:

Ես դուրս փախա շարքից, մտա ամենամոտ դասասենյակն ու ընկա նստարանին: Ինձ ոչ ոք չնկատեց: Ուզում էի լաց լինել վիրավորանքից ու զայրույթից, բայց չէի կարողանում:

Միջանցքում ինչ–որ մեկն արդեն խոսում էր, նրան ծափահարեցին, նա շարունակեց խոսել: Հետո բոլորը «ուռա» կանչեցին, և նվագախումբը նորից սկսեց նվագել:

«Պարոն տեսուչն է»,— մտածեցի ես: Ու, չգիտեմ ինչու, միանգամից անասելի ատելություն զգացի այդ

մարդու նկատմամբ, որին երբեք չէի տեսել: Եվ ոչ միայն նրա նկատմամբ: Ես ատում էի նրան էլ, պարոն վարիչին էլ, վարժուհուն էլ, բոլորին, բոլորին, ովքեր կանգնել էին այնտեղ, միջանցքում՝ սպիտակ բլուզներով ու ամառային թեթև կոշիկներով, բոլորին, ում դուր չեկավ իմ հայրիկի… իմ կանաչ բլուզը: Ես ուզում էի դուրս վազել այդ դատարկ սենյակից, ոտքերով դոփել հատակին, ճչալ, խանգարել նրանց… որ չծիծաղեն, որ չերգեն, որ չխոսեն նրանք:

Ինչո՞ւ ինձ հանեցին շարքից:

Ես նայում էի իմ թաղիքե կոշիկներին, որոնք միանգամից կորցրել էին իրենց գեղեցկությունը, շալվարիս, որ վաղուց գունաթափված էր: Իմ նոր, իմ կանաչ բլուզին, որ ամբողջ գիշեր լամպի լույսի տակ կարում էր մայրս:

— Թը՛խկ–թը՛խկ, թը՛խկ–թը՛խկ, թը՛խկ–թը՛խկ…

Էլ ինչո՞ւ մայրս կարում էր ողջ գիշեր:

ԴՐԱ ԿԱՐՈՂԸ ՍԱՂ Ա՞

(հորս պատմածը)

Հաճախ վաղուց անցած, մոռացված դեպքերը անսպասելիորեն, մի բառով, մի նշանով, կամ նույնիսկ ծանոթ մի դիմագծով, ասես միանգամից կյանք են առնում, թափ են տալիս իրենց վրայի փոշին ու գալիս կանգնում են փոքր–ինչ շաղված աչքերիդ առաջ:

Երեկ փողոցում մի տղա ձեռքը մեկնեց դեպի ընկերոջ սովորականից լայն անդրավարտիքն ու հարցրեց.

— Լսի՛ր, դրա կարողը սաղ ա՞...

Երկուսն էլ քրքջացին ու անցան: Իսկ ես քեզ հիշեցի, Սահա՛կ, մանկությա՛ն իմ ընկեր...

Վտիտ մարմնով, ձողի պես բարակ ոտներով, եղեգնի նման դյուրաբեկ և ուռենու նման տխուր մի տղա էր Սահակը: Միշտ խոնարհ ու լուռ էր նա : Մենք՝ նրա հասակակիցներս, դասամիջոցներին աղմուկ–աղաղակ էինք բարձրացնում, խաղեր հնարում, երգում, միայն Սահակն էր, որ չէր մասնակցում մեր խաղերին: Գալիս, կանգնում էր հեռու, իր խոշոր ու թախծոտ աչքերը հառում էր մեզ, որոնցում նման պահերին կենդանի, չարաճճի ինչ–որ կայծ էր խաղում, բայց երբ մերոնցից մեկը, համենայնդեպս, կանչում էր.

— Սահա՛կ, արի՛ դու էլ խաղա...

— Չէ՛, չէ՛, չեմ ուզում,— շտապ մրմնջում էր նա ու աննկատելի թաքնվում մեր աչքից:

Բայց ամենից ուշագրավը Սահակի բլուզն էր: Դա թեև միշտ մաքուր, բայց բազմաթիվ, բազմաձև ու բազմագույն կարկատաններով ծածկված քաթանե մի բլուզ էր, որի իսկական կտորը որոշելու համար ահագին ժամանակ և կարողություն էր հարկավոր: Անգույն ու հին մի բլուզ էր դա, որը ժամանակին հագել էր նաև Սահակի հայրը: Ես ինչքան հիշում եմ Սահակին, այդ բլուզով եմ հիշում՝ գույնզգույն, տատիս կարած վերմակի պես: Էդ բլուզի համար շատ էր տանջվում Սահակը: Էդ բլուզի համար մեր տղաները, հատկապես դուքանչիների երես առած որդիները, շատ էին ձեռք առնում նրան, ամեն դատարկ առիթով հարցնում էին.

— Սահա՛կ, հորդ ողորմի, դո՛ւզն ասա, դրա կարողը սաղ ա՞, բալի մինն էլ մեզ համար ա կարում:

— Հա՛, հա՛, հա՛,— հռհռում էին մյուսները,— դո՛ւզ, դրա կարողը սաղ ա՞:

Սահակը ոչինչ չէր պատասխանում: Նա վիրավորողներին էր նայում թախծոտ ու խոնարհ իր աչքերով, ինչպես իր հայրն էր մի ժամանակ նայում նրանց ծնողներին, ու լռում էր: Հետո ես տեսնում էի, թե ինչպես դպրոցի մի անկյունում կծկված լաց էր լինում Սահակը, լաց էր լինում վիրավորանքից ու զայրույթից: Խե՛ղճ, փոքրի՛կ Սահակ...

Երբ մի օր հարցրի, թե ինչո՞ւ է միշտ տխուր, ինչո՞ւ ինքն էլ մեզ հետ չի խաղում.

— Չէ, չի՛ ըլնի, ապերո՛ջան,— ասաց Սահակը ու փորձեց ժպտալ,— ես հո երեխա չեմ:

— Ինչի՞, ուրեմն մենք երեխա ե՞նք,— վիրավորվեցի ես,— արի՛, արի՛ խաղանք:

— Չէ, ապերո՛ջան, չի՛ ըլնի,— խնդրելով, բայց վճռական արտասանեց նա:

Սահակենք հորեղբորենցս բակում էին ապրում: Եվ ամեն անգամ, հորեղբորս երկհարկանի տան պատշգամբից ես տեսնում էի, թե ինչպես էր Սահակը՝ մինչև գոտկատեղը մերկ (նա բլուզը պահում էր միայն դասերի համար), իր գորշագույն, նիհար ձեռքերով փայտ ջարդում օջախի համար, ջուր բերում, բոբիկ ոտքերը բահին՝ մշակում մի քանի ոտնաչափ բանջարանոցը, աղբյուրի չեչոտ քարին լվանում իր փոքրիկ եղբայրների ու քույրերի ոտքերը:

Երբեմն–երբեմն տեսնում էի Սահակի մորը՝ միշտ գունատ, մոմագույն դեմքով, նա դանդաղորեն դուրս էր գալիս հողեղեն իր ներքնահարկից ու նստում դռան շեմքի քարին, երբ արև էր: Ես տեսնում էի անգամ, որ նա շատ էր հազում, հազում էր անձայն, շալի ծայրը բերանին, և հազից ցնցվում էին նրա նիհար մարմինն ու ուսերը: Հետո, երբ արևը թեքվում էր, ու շենքի ստվերը շեղակի ընկնում էր նրա վրա, հայտնվում էր Սահակը, գրկում էր մորը, և նրանք իջնում էին ներքնահարկ:

Իսկ հաջորդ առավոտյան նորից դասի էր գալիս Սահակը՝ գրքերը շորե մի տոպրակի մեջ. բոբիկ, մինչև ծնկները հասնող մի շալվարով, իսկ հագին այն բլուզը, միշտ մաքուր ու անգույն այն բլուզը, որի վրա յուրա-

քանչյուր ամիս իր գույնի կարկատանն էր դնում: Եվ նո-րից տղաներից ոմանք, առանց հոգնելու քրքջում էին ու հարցնում.

— Սահակ, հորդ ողորմի, դրա կարողը սաղ ա՞...

Արդեն ցրտերն ընկել էին, ու աշնան վերջին տերև-ները առավոտները եղյամով էին ծածկվում: Մի քանի օր էր, ինչ Սահակը դպրոց չէր գալիս: Ես էլ չէի լինում հո-րեղբորս տանը, որ իմանայի, թե ինչ է պատահել նրան: Մտածում էի, երևի ցուրտն է պատճառը: Չէ՞ որ Սահակը կոշիկներ չունի: Իմ հին կոշիկները, շորի մեջ փաթա-թած, ամեն օր որոշում էի տանել Սահակին, բայց չէի համարձակվում՝ հպարտ էր Սահակը: Իսկ ես չէի ուզում վիրավորել նրա վիրավոր հոգին: Դպրոցում շատերն արդեն մոռացել էին նրան, իսկ ովքեր չէ, հաշտվել էին այն մտքի հետ, որ Սահակը այլևս դպրոց չի գա:

Բայց եկավ նա: Երկար դասամիջոցին էր. խաղում էինք բակում, վազվզում, թռչում միմյանց վրայից, գո-ռում-գոչում էինք ուրախ, երբ եկավ Սահակը: Էլի բոբիկ էր նա, մինչև ծնկները հասնող շալվարով, ու հագին էլի նույն բլուզն էր: Խաղը մի վայրկյան դադարեց:

— Արա՛, Սահա՛կը,— ձայնեցին մի քանիսը:

— Ինչի՞ չէիր գալիս,— մոտեցա նաև ես:

Իսկ դուքանչու որդին քաշեց նրա բլուզի մի կարկա-տանը:

— Սահա՛կ, դո՛ւզն ասա,— քրքջաց նա,— դրա կա-րողը սաղ ա՞:

Կարերը խուլ ճրթճրթացին, ու լաթի մի կտոր կախ-վեց ցած՝ մերկացնելով նրա ոսկրոտ, թուխ մարմինը:

Նա կանգնած էր գունատ, խորն ընկած աչքերով, որոնց շուրջը մեկն ասես կապույտ շրջանակներ էր գծել: Նա կանգնած էր հոգնած ու գլխիկոր՝ ձեռքերով գրքերի տոպրակը սեղմած: Հետո նա բարձրացրեց գլուխը, ու ես արցունք տեսա նրա երկնագույն աչքերում:

— Դրա կարողը մերս էր,— ճերմակած շուրթերով մրմնջաց նա,— երեկ թաղեցինք... Սաղ չի...

Եվ մի ակնթարթում օրերով ու ամիսներով կուտակված վիշտն ու վիրավորանքը դուրս պոռթկաց ուժով: Եվ հեկեկում էր Սահակը, անձայն ու ծանր, մեծ մարդու պես, ու ցնցվում էին նրա ոսկրոտ թիակները՝ միշտ մաքուր, կարկատած այն բլուզի տակ:

Լուռ էինք մենք ու ցնցված: Լռել էր նույնիսկ դուքանչու լկտի որդին: Շրջապատել էինք Սահակին, բայց սփոփանքի խոսքեր չկային: Իսկ նա հեկեկում էր ավելի ու ավելի ուժգին, գալարվում վշտից ու շշնջում էր ճերմակած շուրթերով.

— Չէ՛, ապերո՛ջան, սրա կարողն էլ սաղ չի...

ԱԼԵՔՍԻՆ

Մեր պատշգամբը ճանապարհին է նայում: Սովորություն է դարձել՝ տարվա համարյա բոլոր եղանակներին, առավելապես ամռանը, երբ երեկոն երկար է ու զով, ամբողջ ընտանիքով հավաքվում ենք պատշգամբում. թեյում ենք, կարդում, զրուցում կամ էլ պարզապես նայում ենք ճանապարհին, անցորդներին:

Հաճախ նրանց մեջ ծանոթներ են լինում, կանգնում են կամ էլ շարունակելով քայլել՝ հեռվից բարևում են՝ սովորաբար աջ ձեռքով: Բայց նրանց մեջ կա մեկը, որ մյուսների նման աջ ձեռքով չի ողջունում, այլ միայն ձախով, իսկ աջը միշտ պահում է գրպանում:

Ես վաղուց ճանաչում եմ նրան. քեռի Ալեքսեյն է, աջ թևքը գրպանում է պահում, որովհետև ձեռք չունի. տարիներ առաջ դազգահի տակ է մնացել: Այդ հիմա գիտեմ, բայց այն ժամանակ չէի հասկանում: Երբ նա մեր տուն էր գալիս, ու մերոնք խառնվում էին իրար՝ քեռի Ալեքսեյին ինչ–որ լավ բանով հյուրասիրելու համար, ես անընդհատ պտտվում էի նրա շուրջն ու սպասում, որ աջ ձեռքը հանի: Բայց նա չէր հանում: Դա ինձ շատ խորհրդավոր էր թվում:

Մի անգամ չդիմացա, բռնեցի թևքն ու հարցրի, թե ինչու ձեռքը չի հանում, բայց մինչ նա մի խոսք կասեր՝ մատներս խրվեցին դատարկ թևքի մեջ: Ես զարմացա, վախեցա ու հարցական հայացքով նայեցի հորս:

Քեռի Ալեքսեյը բարձրաձայն ծիծաղեց ու ինչ–որ բան ասաց: Ծիծաղեց նաև հայրս:

— Ալեքսին աջ ձեռք չունի,— ասաց նա:

— Ինչո՞ւ:

— Ծնողներին չի լսել, չարություն է արել, կտրել են…

Ու նորից բարձրաձայն ծիծաղեցին նրանք:

Այդ, իհարկե, շատ առաջ էր: Բայց հետո էլ, երբ քեռի Ալեքսեյի արդեն թեքված մարմինը հայտնվում էր ճանապարհին, մեր տնեցիները խառնվում էին իրար:

— Քեռի Ալեքսե՛յը,— կանչում էինք մենք:

— Արմենա՛կ, Ալեքսին,— հայտնում էր մայրս:

— Ալեքսի՞ն,— հայրս իսկույն թողնում էր ամեն ինչ, թեքվում է պատշգամբից ու, աշխատելով խլացնել փողոցի աղմուկը, կանչում էր,— Ալեքսի՛, հե՛յ, Ալեքսի՛:

Քեռի Ալեքսեյը կանգ էր առնում, բարևում էր՝ սովորականի պես բարձրացնելով ձախ ձեռքը, ժպտում էր:

— Վերև բարձրացի՛ր,— կանչում էր հայրս,— արի՛, արի՛:

Ու մինչ քեռի Ալեքսեյը կբարձրանար մեր երկհարկանի տան աստիճաններով, հայրս դառնում էր մորս.

— Շո՛ւտ արա:

Թեև բոլորովին էլ զգուշացման հարկ չկար, որովհետև մայրս վաղուց գիտեր, որ եթե հյուրը Ալեքսեյն է, ուրեմն պետք է քրքրել տնտեսության ամենանվիրական անկյունները, բացել բոլոր «հոգեպահուստները»:

— Բարև՛, եղբա՛յր,— բարձրաձայն ողջունում էր քեռի Ալեքսեյը:

— Բարև՛, Ալեքսի՛ ջան, բարով ես եկել,— հուզվում էր հայրս,— բարև՛, ախպե՛ր ջան, նստի՛ր…

Ու նստում էին նրանք թեյի սեղանի շուրջը, զրուցում էին երկար՝ գործարանից, ընկերներից, հիշում էին… Հիշելու շատ բան կար:

Բայց ամենից հետաքրքիրն այն էր, որ այդ բարեկամության երկար տարիների ընթացքում քեռի Ալեքսեյը ռուսերեն էր խոսում, իսկ հայրս՝ հայերեն: Եվ հասկանում էին իրար: Հասկանում էին առանց դժվարության, ինչ–որ ներքին ըմբռնումով: Խոսում էին երկար, իսկ երբ քեռի Ալեքսեյը հրաժեշտ էր տալիս, ամբողջ ընտանիքով ճանապարհ էինք դնում նրան: Հետո մենք հետ էինք դառնում, իսկ հայրս շարունակում էր ուղեկցել մինչև փողոցի անկյունը:

Եվ սպասում էինք. գիտեինք, որ երբ հայրս հետ դառնա, կանչելու է բոլորիս, հատկապես այն ժամանակ, երբ ուրիշ հյուրեր էլ ունենք, և արդեն քանի՛–քանիերորդ անգամ պատմելու է այն օրվա մասին, երբ ինքը ճանաչեց քեռի Ալեքսեյին: Եվ իր պատմությունը անպայման սկսելու է նույն խոսքերով:

— Է՛, Ալեքսի՛, Ալեքսի՛, լա՛վ մարդ…

…Վատ տարիներ էին, դժվար էր կյանքը: Ճիշտ է, սովետական իշխանություն էր հաստատվել, բայց որտե՞ղ էր հաստատվել՝ ավերակների վրա:

Մարդիկ, որ իրենց մոռացած կռվում էին, հաղթել, տուն էին եկել, ու նոր միայն տեսնում էին, որ ոչինչ չկա՝ ո՛չ հաց, ո՛չ շոր, ո՛չ կոշիկ, ոչի՛նչ:

Պետք էր ամեն ինչ նորից սկսել: Հեշտ էր ասելը՝ սկսել: Հաց չկար, որ մարդիկ ուտեին ու գնային աշխատանքի: Իսկ այնքա՛ն գործ կար: Պետք էր շենքեր սար-

քել, գործարաններ ու ֆաբրիկաներ կառուցել, որ մարդիկ հաց ունենային ու կոշիկ: Բայց գործարանն ու ֆաբրիկան առանց էլեկտրականի ինչի՞ են պետք: Դրա համար էլ մեզ գործարաններից ուղարկեցին Զանգվի ձորը՝ գէսի վրա աշխատելու:

Աշխատում էինք առավոտից իրիկուն՝ առանց հանգստանալու: Ծանր էր գործը: Ամեն ինչ ձեռքով էինք անում՝ մեքենա–բան չկար: Իսկ երբ սյունից կախված ռելսի կտորը զնգում էր՝ իբր թե աշխատանքի ընդմիջում է, հոգնած ու ուժահատ հենց տեղնուտեղը պառկում էինք գետնին ու քնում: Ուտելու ոչ մի բան չէինք ունենում, որովհետև մեր օրապահիկը՝ 400 գրամ սև հացը, առավոտյան, աշխատանքի ժամանակ արդեն կերած էինք լինում:

Բայց չէինք ընկճվում, հույս էինք տալիս իրար:

— Ժամանակավոր է,— ասում էինք:

— Շուտով լավ կլինի:

Աշխատանքի վայրում այդ դժվարություններն այնքան չէինք զգում, որովհետև բոլորս էլ մի օրի էինք, և իրար հետ: Իսկ երբ ավարտվում էր աշխատանքը, բաժանվում էինք իրարից ու հոգնած ոտքերով քայլում դեպի տուն՝ ամեն ինչ մի տեսակ դժվար էր թվում և… և չէի էլ ուզում տուն գնալ:

Երբ մտածում էի, որ դուռը բացելու եմ, և երեխաներն աչքերն ինձ են հառելու, տեսնելու, թե ինչ եմ բերել… Երբ փայլում էին նրանց աչքերը, երբ գրպանիցս թաշկինակ էի հանում ճակատիս քրտինքը սրբելու համար, անտանելի էր… Չէի ուզում, չէի ուզում տուն գնալ:

Շրջում էի քաղաքում հենց այնպես, աննպատակ, մինչև մութն ընկնելը ու տուն էի գնում միայն այն ժամանակ, երբ համոզված էի լինում, որ երեխաները քնած կլինեն:

Դե, ինչ պատասխանես նրանց, երբ անմեղ աչքերով, հավատով նայում են քեզ ու սև հաց են ուզում: Ինչ պատասխանես. ասես՝ ժամանակավոր է, շուտով լավ կլինի: Չէ, չէի կարող և, վերջապես, նրանց ինչ ինն էին պետք իմ խոսքերը…

Դժվար էր, շատ դժվար…

Մի օր էլ ամեն օրվա պես շրջեցի քաղաքում, սպասեցի, մինչև լրիվ մութն ընկավ ու կամաց–կամաց դեպի տուն ուղղվեցի: Մտածում էի, թե ինչ կա տանը, որ կիրակի օրը սև շուկա տանեմ, վաճառեմ ու մի քիչ գարի կամ ցորեն առնեմ: Բայց ոչինչ չկար: Մեր տան միակ ոսկեղենը՝ կնոջս մատանին, որ նրան նվեր էի առել մեր հարսանիքի օրը, երկու ամիս առաջ փոխել էի մի փութ գարիով: Ու երկար ժամանակ կինս այս ու այն կողմ էր նայում՝ ինչ–որ բան կորցրածի նման:

Ուրիշ ոչինչ չունեինք տանը, որ գոնե մի բան արժենար: Եվ որտեղից պետք է լիներ:

Այն ժամանակ տպարանի դիմաց մի շենք կար՝ «ցեմենտի շենք» էին ասում, այնտեղ էինք ապրում, չորրորդ հարկում: Բարձրացա վերև, գաղտագողի բացեցի դուռը, որ թաքուն քնեմ, բայց անիծված ծխնին յուղած չէր, դուռը ճռռաց:

Թախտին պառկած երեխաներից մեկը (հա՛, դո՛ւ, Բաբկե՛ն ջան) միանգամից վեր կացավ, աչքերը հառեց ինձ ու մրմնջաց.

— Հաց:— Ես քարացա տեղումս:— Պապան կգա, շատ հաց կբերի,— արդեն շատ կամաց, հազիվ շշնջաց նա:

Ու նորից, ինչպես բարձրացել էր, այնպես էլ ընկավ անկողնին ու քնեց: Քնած էին բոլորը: Կինս էլ, ինձ սպասելով, հենց շորերով պառկել քնել էր ամենափոքրի մոտ՝ ամուր գրկած նրա գլուխը:

Ինձ մի քայլ էր պետք սենյակ մտնելու համար, բայց ես չկարողացա անել այդ քայլը: Նորից փակեցի դուռը ու դուրս եկա գողի քայլերով, կամացուկ ու երկչոտ:

«Պապան կգա, շատ հաց կբերի»,— ասես ականջիս նորից շշնջաց տղաս: Ես իջա աստիճաններով, դարպասից դուրս եկա ու սկսեցի քայլել փողոցով: Ո՞ւր էի գնում՝ չգիտեմ, բայց քայլում էի շնչակտուր լինելու չափ արագ՝ շատ կարևոր գործ ունեցող մարդու պես, իջա Աստաֆյանով, բոլորովին չնկատելով անցորդներին, անցա բուլվարի մոտով, հետո ծուռումուռ ինչ–որ փողոցներ մտա: Քայլում էի, լավ չգիտակցելով, թե ինչ եմ անում՝ մռնչում էի ցավից: «Շա՛ն որդիներ,— ասում էի՝ բռունցքներս սեղմելով, մեկ է, չենք մեռնի, հենց ձեր ինադու չենք մեռնի, կտեսնեք, շա՛ն որդիներ, առանց հացի էլ կապրենք, բայց կկառուցենք գէսը, կկառուցենք գործարանը: Մեր երեխաները ձեզանից լավ կապրեն, իժի՛ ծնունդներ…»:

Ո՞ւմ էի ասում, այն ժամանակ կարգին չէի էլ պատկերացնում հարուստներին, գերմանացիներին, դաշնակներին: Ժողովներում լսել էի, որ շատերը մեր դժվարությունները բացատրելիս ասում էին, թե ներքին ու արտաքին թշնամիներն են մեղավոր: Ես էլ նրանց էի ասում:

Ուշքի եկա միայն այն ժամանակ, երբ տեսա, որ նո-րից մեր շենքի մոտ եմ հասել, քրտնած ու հոգնած: Բայց էլի վերև բարձրանալ չէի ուզում, վախենում էի երեխա-ներն արթնանան: Նստեցի հենց դարպասի առաջ, մի քարի ու գլուխս ձեռքերիս մեջ առա:

Չեմ հիշում՝ ինչքան ժամանակ էի այդպես նստել, մեկ էլ զգացի, որ մի մարդ ուսս թափ է տալիս:

— Բարի՛ իրիկուն, եղբա՛յր,— ասում է:

Գլուխս բարձրացրի, տեսնեմ՝ մեր հարևան ռուս Ալեքսին է, հա՛, այս մեր Ալեքսին: Ես նրան դեռ գործա-րանից էի ճանաչում, թեև հետը խոսած չկայի: Մի երկու ամիս առաջ լսել էի, որ դազգահի փոկը տեղը գցելու ժամանակ ձեռքը անիվի տակ է մնացել ու հիվանդանո-ցում կտրել են:

— Ցավում է,— ասում է Ալեքսին ու ցույց տալիս ուսը,— չեմ կարողանում քնել,— հետո թե՝ իսկ դո՞ւ ին-չու չես քնում, եղբա՛յր:

«Իր ցավը քիչ է, հիմա էլ ի՞մը պատմեմ»,— մտա-ծում եմ:

— Քունս չի տանում, Ալեքսի՛,— ասում եմ կամացուկ:

— Էդ լավ չի, պիտի քնես, որ վաղը աշխատել կա-րողանաս,— ձեռքով ցույց է տալիս սյուների վրայով ձգված լարերը,— դա շատ է պետք հիմա, եղբա՛յր:

Էլ չդիմացա, սիրտս լիքն էր, ասացի՝ չեմ ուզում տուն գնալ, որովհետև... Պատմում եմ ու մտածում, որ զուր տեղը տանջում եմ մարդուն: Նայում է ինձ, իսկ աչ-քերն այնքա՜ն տխուր են:

— Վե՛ր կաց,— հանկարծ ասում է Ալեքսին:

— Ինչո՞ւ:

Բայց վեր եմ կենում, ու նա ձեռքիցս բռնած տանում է ինձ: Տարավ հասցրեց իրենց տուն, իսկ հետո դռան մոտ հետ դարձավ, թե՝

— Սպասի՛ր, հիմա գալիս եմ:

Քիչ հետո դուրս եկավ տնից ու մթան մեջ մի մեծ բան մեկնում է ինձ:

— Վերցրո՛ւ,— ասում է:

Նայեցի ու տեսնեմ, որ մի ամբողջ կես բոքոն է, սև հաց: Հա՜ց:

— Էդ ի՞նչ ես անում,— ասացի ու սիրտս ճմլվեց:— Այդպես ո՞նց կլինի, Ալեքսի՛: Բա դո՞ւք:

— Դա նորմայից դուրս է, եղբա՛յր, այսօր տղերքը բերեցին, ասում են՝ տեղկոմն է որոշել, որպես վիրավորի, ինչ–որ ֆոնդից... Դե, իմ ինչի՞ն է պետք, ես ու կինս աշխատողի բաժին ենք ստանում: Տա՛ր, եղբա՛յր,— ու կամացուկ ձախ ձեռքով հրում է ինձ:

Ուզում եմ ինչ–որ բան ասել, բայց չեմ կարողանում, իսկ նա այնպես, կամացուկ հրում է ինձ...

Չեմ հիշում, թե ոնց տուն մտա: Դուռը ուժգին ճռռաց, բայց ոչ ոք չարթնացավ: Էլ չդիմացա:

— Վե՛ր կացեք, երեխե՛ք, հաց եմ բերել,— բղավեցի:

Բոլորը միանգամից վեր թռան տեղներից, տեսան թարմ, սև հացի բոքոնը ու աղմուկով, հենց այնպես, անլվա, քնաթաթախ սկսեցին ուտել:

Ես միջանցք դուրս եկա: Չգիտեմ, երեխա ժամանակս լավ չեմ հիշում, բայց հիմա լաց եղա, ասես կյանքումս առաջին անգամ, ես՝ բանվոր Արմենակս, որ

կյանքում շատ բան եմ տեսել, լաց եղա ուրախությունից ու սրտի ցավից: Իսկ երբ սենյակ մտա, երեխաներն արդեն քնած էին՝ կուշտ, երջանիկ դեմքերով:

Հետո, մի երկու տարի հետո միայն, երբ կյանքը լավացել էր, իմացա, որ Ալեքսին խաբել էր ինձ. նա ինձ էր տվել իրենց հաջորդ օրվա հացը:



Համմիկ Քալանթարյան, 7 տ.

ԷԼԻ՝ ՁԻԱՎՈՐԸ ԴՈՒ ԵՍ...

(հին զրույց)

Աղքատ մարդ էր գյուղացի Հայրապետը: Նրա ունեցած–չունեցածը մի փոքրիկ հողակտոր էր, գյուղից հեռու՝ ամայի, քարքարոտ մի դաշտում: Ամեն առավոտ լուսաստղի հետ արթնանում էր նա, ծաղկավոր չթե թաշկինակի մեջ կապած հացն ու ջրի կուլան դնում խուրջինի մեջ, գցում ուսն ու գնում հանդ: Աշխատում էր օրնիբուն գյուղացի Հայրապետը, իսկ երբ երկարում էին ստվերներն, ու արևը Ծաղկասարի հետևն էր անցնում, հոգնած ու վաստակած դառնում էր տուն, որտեղ նրան էին սպասում կինը, երեխաները և իրիկնահացի համեստ սեղանը:

Գոհ էր կյանքից գյուղացի Հայրապետը: Նա միայն մի մուրազ ուներ՝ երազում էր ձի առնել, որ հանդի ճանապարհին ժամանակ չկորցներ ու աշխատանքի ընկեր ունենար: Եվ շատ աշխատեց գյուղացի Հայրապետը, քրտինքով թրջեց իր հողի ամեն թիզը, վերջապես, հասավ իր նպատակին՝ մի ուժեղ ու գեղեցիկ ձի առավ: Ուրախությամբ լցվեց գյուղացի Հայրապետի հարկը: Բայց, դե ո՞վ էր աղքատին ուրախություն տվել: Մի գիշեր, ամպամած ու մռայլ մի գիշեր, երբ Հայրապետը ձիով դաշտից տուն էր վերադառնում, ճանապարհի եզրի մասրենիները անսովոր խշխշացին: Ձին ծառս եղավ, բարձրացրեց գլուխը ու տագնապով սկսեց վրնջալ:

«Գայլ կլինի»,— մտածեց Հայրապետը, բայց հաջորդ վայրկյանին տեսավ դեպի իրեն ուղղված հրացանի փող-ը, ու մեկը ահեղասաստ գոչեց.

— Կանգնի՛ր…կյա՛նքդ կամ ձի՛դ:

Ցավից սեղմվեց գյուղացի Հայրապետի սիրտը, բայց ի՞նչ կարող էր անել՝ կյանքը թանկ էր: Իջավ Հայրապետը ձիուց, համբուրեց՝ ասես ամեն ինչ հասկացած նրա արցունքոտ աչքերը ու առանց հետ նայելու, գնաց տխուր ու տրտում: Գնաց տուն:

— Մի՛ տխրիր, մա՛րդ,— հույս տվեց կինը,— ողջ լի-նես դու, էլի կաշխատես, ես էլ կաշխատեմ քեզ հետ, մի ձի էլ կառնենք, թող նա տխրի, ով չի կարող աշ-խատել:

Եվ աշխատեցին մարդ ու կին: Գյուղացի Հայրապե-տը իր հողակտորում գործն ավարտելուց հետո, գիշեր-ներն էլ վարձով հարուստների այգիներն էր ջրում, իսկ կինը լվացք էր անում ուրիշների համար: Այնպես, որ մի տարի չանցած՝ նրանք մի ձի էլ առան, ավելի ուժեղը, ավելի գեղեցիկը: Բայց նոր ուրախությունն էլ երկար չտևեց, մի քանի ամիս անց՝ ավազակները խլեցին գյու-ղացի Հայրապետի նաև երկրորդ ձին: Աշխատեց Հայ-րապետը, առավ երրորդ ձին, էլի խլեցին, չորրորդը՝ նորից խլեցին: Ու այսպես՝ 10 տարում ավազակները խլեցին նրա քրտինքով ու արյունով ձեռք բերած յոթը ձիերը: Բայց չհուսահատվեց աղքատ աշխատավորը, կնոջ, երեխաների հետ միասին համառորեն աշխատեց, աշխատեց գիշեր-ցերեկ ու վերջը էլի մի ձի առավ՝ նախ-կին բոլոր ձիերից ավելի ուժեղը, ավելի դիմացկունը,

ավելի գեղեցիկը: Եվ նորից ձիով հանդ էր գնում գյուղացի Հայրապետը ու ձիով էր հանդից գալիս տուն: Բայց մի գիշեր դաշտից տուն դառնալիս գյուղացի Հայրապետը սարսափով տեսավ, որ ոտքից գլուխ զինված մի ավազակ կանգնեց ճանապարհի մեջտեղում: Կանգնեց ավազակը ու գոչեց.

— Վա՛ր իջիր ձիուցդ ու գնա, թե կյանքդ թանկ է:

Սրտի ցավից լաց եղավ գյուղացի Հայրապետը, բայց ելք չկար: «Գնաս բարով»,—մրմնջաց նա իր դառն աշխատանքի ընկերոջը, վար իջավ ձիուց, սանձը վզին ձգեց, ու գնաց տրտում՝ գլուխը կախ, աղի արցունք թափելով: Գնում էր գյուղացի Հայրապետը, բայց ականջի մեջ կնոջ մեղմ, հուսադրիչ խոսքերն էին հնչում. «Մի՛ տխրիր, մա՛րդ, կաշխատենք, մեկն էլ կառնենք»: Եվ սրբեց արցունքը գյուղացի Հայրապետը, բարձրացրեց գլուխն ու գնաց, երբ մեկ էլ.

— Կանգնի՛ր, ա՛յ մարդ,— կանչեց ավազակը:

Գյուղացի Հայրապետը կանգ առավ:

— Քեզանից քանի՞ ձի են գողացել,— հարցրեց ավազակը:

— Այս էլ ութերորդն է,— արցունքների միջից պատասխանեց աղքատ աշխատավորը:

Ավազակը մի պահ լռեց, ասես մտքերի մեջ ընկավ:

— Էդ բոլոր ձիերն էլ քեզանից ես եմ խլել,— մոտենալով Հայրապետին՝ ասաց նա,— և ուրիշ շատ–շատ ձիեր եմ գողացել ես, բայց, ա՛յ, էլի ինչքան հանդիպել ենք, դու ձիավոր ես եղել, ես՝ հետիոտն: Գնա՛, վերցրու ձիդ ու գնա, հալա՛լ լինի քեզ, աշխատո՛ղ մարդ...

ԼՐՏԵՍԸ

Արևի քառակուսի մի շող պատուհանից ընկավ ներս, կանգնեց դիմացի պատին ու դողդողաց:

«Քերոբն է,— մտածեց Սերոբը,— բայց ինչո՞ւ է կանչում այսքան վաղ»:

Շողը հանկարծ կլոր մի շրջան գծեց ու սկսեց պտտվել համառ, հրամայական:

«Օհո՛, ուրեմն շտապ գործ կա»,— ընկերոջ անդրադարձնող հայելու նոր ազդանշանը հասկանալով՝ ավելացրեց Սերոբը և տեսնելով, որ շողը սկսեց հարցական գրել՝ արագորեն հագավ շորերն ու դուրս եկավ:

Նա կտրեց–անցավ փողոցը, մտավ դիմացի տան շքամուտքն ու բարձրացավ վեր: Հետո հրշեջի սանդուղքով մագլցելով՝ մոտեցավ դեպի ձեղնահարկ տանող դռանը և ուզում էր մտնել ներս, բայց դուռը հանկարծ այնպես ուժեղ փակվեց ուղիղ նրա քթին, որ քիչ մնաց գլխիվայր ցած գլորվեր ու չափեր շենքի բարձրությունը:

— Բա՛ց արա դուռը, Քերո՛բ,— խնդրեց Սերոբը:

— Նշանաբանը,— հնչեց Քերոբի խրոխտ, սառը ձայնը:

— «Նիզակ»,— ասաց Սերոբը:

Դռան հետևում ոչ մի ձայն:

— «Նիզակ»,— տխուր կրկնեց Սերոբն ու ավելացրեց,— Քերո՛բ ջան. դուռը բաց, մարդ դուրս կգա, կտեսնի:

— Նշանաբանը,— առարկություն չվերցնող ձայնով պնդեց Քերոբը:

— Ասում եմ՝ «Նիզակ», էլի՛:

— Դա չէ, փոխվել է:

— Ճրբ է փոխվել:

— Առավոտյան 7^{00} ժամին:

— Ո՞վ է փոխել:

— Ես:

— Է, լավ, դու փոխել ես, ճս որտեղից իմանամ:

— Իմ գործը չէ:

— Ախր մտածիր, Քերո՛ւբ ջան,— աղաչեց Սերոբը՝ վիզը ձգելով ու խեղճ–խեղճ ժպտալով, մոռանալով, որ Քերոբն իր ժպիտը չի տեսնում,— ախր մտածիր, Քերո՛ւբ ջան, ես հո Արքիմեդը չեմ:

Արքիմեդի անունը տալը փրկեց Սերոբին: Բանն այն էր, որ Քերոբը շատ էր հարգում ու մի քիչ էլ վախենում էր Արքիմեդից, որովհետև նրա օրենքը մինչև վերջ չկա-րողացավ սովորել: Այդ էր պատճառը, որ դուռը բացեց ու ներս թողեց ընկերոջը: Սերոբը սպասում էր հարվա-ծի, բայց չստացավ և ուզում էր այդ կապակցությամբ մի քանի խոսք ասել, երբ Քերոբը քաշեց նրա թևից:

— Սո՛ւս, այստեղ պատերն էլ ականջ ունեն:

Հետո Քերոբը Սերոբին տարավ դեպի դիտակետը, որ մի ջարդված լուսամուտ էր, ու մատը մեկնելով դեպի իրենց դիմացի շենքը, շշուկով ասաց.

— Նայիր 2–ին:

— Ի՞նչը, ինչի՞ն,— զարմացավ Սերոբը:

— Երկրորդ լուսամուտին:

— Դե մարդավարի խոսիր, էլի՛,— քրթմնջաց Սերոբը, ապա գրպանից հանեց հեռադիտակը, որը միշտ մոտն էր պահում: Դրեց աչքին: Շենքը մի կողմով մոտեցավ: Հեռադիտակի միայն մի անցքում խոշորացույց կար:

Երկրորդ պատուհանում էլեկտրական լապտերը դեռ չէին մարել: Երևում էր. մի մարդ ինչ–որ անորոշ շարժումներ է անում: Սերոբը աչքից հեռացրեց դիտակը ու արդեն սովորական աչքով պարզ տեսավ, որ մարդը հայելու մոտ կանգնած մորուքի նման ինչ–որ բան է կպցնում կզակին:

— Պա՜հ,— զարմացավ Սերոբը:

— Բա՛,— հաղթական երկարացրեց Քերոբը,— հասկանո՞ւմ ես, թե ով է, ո՛չ, չես էլ պատկերացնում, ախ դու դմբո՛, լրտես է, լրտես,— ավելացրեց նա շշուկով:

— Ես դրան ճանաչում եմ,— ասաց Սերոբը՝ մի քիչ էլ վախենալով, որ իրեն կարող են մեղադրել լրտեսի հետ ծանոթ լինելու համար,— նոր է եկել մեր շենքը: Ես դարպասի մոտ կանգնած էի, որ եկավ: Նա կանգնեց, մի մատով կանչեց ու հարցրեց. «Սիրունի՛կս, այստե՞ղ ես ապրում»: «Այո»,— ասացի ես: Իսկ նա, թե՝ «Չգիտե՞ս, վարձու սենյակ չկա՞»: «Ինչպե՞ս չէ,— ասացի,— քեռի Հակոբը սենյակը վարձով է տալիս»: «Իսկ ինչպիսի՞ մարդ է,— հարցրեց,— խելո՞ք է, այսինքն՝ չի՞ խմում, կռիվ չի՞ անում»:

— Այդպե՛ս, այդպե՛ս, շատ հետաքրքիր է,— ընդմիջեց Քերոբն ու գրպանից մի տետր հանելով՝ վրան ինչ–որ բան գրեց,— հետո՞...

Սերոբը երկտակվեց ու Քերոբի տետրի վրա կարդաց. «Հանգիստ տեղ է որոնել, շատ կասկածելի է»:

— Ծը՛,— լեզուն ծլթացրեց Քերոբը,— դժվար է, տեսնես՝ եթե Թոմ Սոյերը իմ տեղը լիներ, ի՞նչ կաներ:

— Դե Թոմ Սոյերի ժամանակ ի՞նչ էր, է՛,— ավելացրեց Սերոբը,— ո՛չ տրամվայ կար, ո՛չ ավտո: Եղած–չեղածը մի քանդված մատուռ էր: Իսկ հիմա այս մեծ քաղաքում արի ու լրտես բռնիր:

— Տե՛ս, տե՛ս, տե՛ս…

Ընկերները նորից նայեցին պատուհանին: Մարդը հիմա էլ շեկ մազեր էր դնում գլխին ու հետն էլ ինչ–որ մեկի վրա մատ էր թափ տալիս: Հետո նա պոկեց մորուքն ու մազերը, դրեց մի ճամպրուկի մեջ ու դուրս գնաց:

— Հետևենք,— առաջարկեց Սերոբը:

— Ո՛չ,— առարկեց Քերոբը,— ցերեկով չի կարելի, կկասկածի ու կփախչի: Չէ՛, միամիտ չլինես, կհետևենք երեկոյան…

* * *

Ամբողջ օրը նրանք ման էին գալիս միասին, ճակատները կնճռոտած՝ մի շատ կարևոր գաղտնիք ունեցող մարդու պես: Սերոբի լեզուն, ինչպես ասում են, քոր էր գալիս: Քերոբի ահը չլիներ, նա լրտեսի մասին արդեն հայտնած կլիներ իր բոլոր ծանոթներին և անծանոթների կեսին: Բայց Քերոբը նրանից մի քայլ անգամ չէր հե-

ռանում: Ասենք, նույնը կաներ նաև Քերոբը, եթե Սերոբը նրա հետ չլիներ: Այդ էր պատճառը, որ ընկերներն այդ օրը բոլորովին չէին կռվում իրար հետ, փոխադարձաբար սիրալիր էին: Նույնիսկ բանն այնտեղ հասավ, որ Սերոբը Քերոբին նվիրեց իր միականի հեռադիտակն ու փոխարենը նվեր ստացավ նրա ջարդված մատիտասրիչը:

— Մեզ կնկարեն պատի թերթում ու կգրեն. «Ահա թե ինչպիսին պետք է լինեն պիոներները» կամ՝ «Լրտեսին սանձահարողները»,— ասում էր Քերոբը:

— Իսկ պատկերացնո՞ւմ ես,— իսկույն ընդհատում էր Սերոբը,— մեր դասարանի տղաներն ու աղջիկները նախանձից կպայթեն:

— Բոլորը մեզ կշնորհավորեն... Դասատուները դաս չեն հարցնի...

Երեկոյան նրանք սրտի թպրտոցով մոտեցան կասկածելի մարդու բնակարանին: Կանգնեցին դռան հետևում ու ականջ դրեցին: Սկզբում ոչ մի ձայն չէր լսվում: Հետո հանկարծ ինչ–որ մեկը ուժեղ քրքջաց. «Հա՛, հա՛, հա՛»: Սերոբի ու Քերոբի մազերը բիզ–բիզ կանգնեցին: «Հա՛, հա՛, հա՛»,— նորից ծիծաղեց մեկը, բայց այս անգամ բարակ, ջղային ձայնով:

— Փախչենք, խելագա՛ր է,— կմկմաց Սերոբը, բայց չկարողացավ տեղից շարժվել: Երկար ոտքերը չէին ենթարկվում, կարծես իրենը չէին:

Մարդը շարունակում էր ծիծաղել, հետո հանկարծ լռեց ու բացականչեց.

«Ա՛, պարո՛ն սպա, հարգանքներս...»: «Լռի՛ր, հիմա՛ր, ես քեզ համար այստեղ պարոն չեմ, այլ՝ ընկեր»,— բար-

կացած պատասխանեց մի ուրիշ ձայն:— «Բայց այստեղ ոչ ոք չկա»: «Միևնույն է»:

— Լը…լը…սո՛ւմ ես,— կակազեց Քերոբը,— ներ…սում մեկն էլ կա: Ե…երևի գաղտնի դռնով է մտել:

— Մը…մտել է,— չիմանալով ինչ ասել, կրկնեց Սերոբը:

Իսկ ներսում զրույցը շարունակվում էր: «Հասկա-նո՛ւմ ես,— ասում էր բարակ ձայնը,— ես, սիրելի՛ս, այս-տեղ հատուկ նպատակով եմ եկել, հատո՛ւկ»:

— Հա… հատուկ,— ակամա կրկնեցին Սերոբն ու Քերոբը:

Ներսում լռություն տիրեց: Հետո ինչ–որ թխկթխկոց լսվեց, նորից լռություն տիրեց: «Վա՛գր, վա՛գր,— հան-կարծ կանչեց ջղային ձայնը,— դու ինձ լսո՛ւմ ես, Վա՛գր: Հաղորդում է Ա–4–ը, հաղորդում է Ա–4–ը: Ընդունի՛ր»:

— Տե՛ս է, ապարատ էլ ունի,— վշտացած մրմնջաց Քերոբը,— թշնամուն նյութեր է հաղորդում:

— «Վա՛գր, Վա՛գր,— շարունակում էր ջղային, ճչա-ցող ձայնը,— տասներկու աստիճան, գետ, աստղ, վեց, լսո՛ւմ ես… կրկնի՛ր»:

— Արի՝ մի՛ ուշացրու,— աղաչեց Սերոբը,— գնա՛ միլիցիոներ կանչիր, գուցե վատ բան դուրս գա:

Քերոբը ծոծրակը քորեց:

— Ախր որ դուռը ծեծեն, դրանք գաղտնի ճանապար-հով կփախչեն, է՛,— ասաց նա,— նախ և առաջ պետք է այդ անիծյալ ճանապարհին իմանանք:

Հաղորդումը դադարեց: Ինչ–որ բան չխկաց ներ-սում, ճռռաց: Մեկը թեթև քայլերով մոտեցավ միջանց-քի դռանը:

Սերոբն ու Քերոբը կայծակի արագությամբ հետ փախան ու, իրար դիպչելով, աստիճաններից իջան ցած: Վերևում ոտնաձայներ լսվեցին: Քիչ հետո երևաց լրտեսը: Նա հագին ուներ ամառային մոխրագույն վերարկու և լայնեզր գլխարկ, որը ծածկում էր աչքերը: Ձեռքին փոքրիկ ճամպրուկ կար:

Բա որ ասում էի՝ գաղտնի ճանապարհ կա՛,— շշնջաց Քերոբը,— էն մեկը չկա, էն մեկը փախավ…

— Սո՛ւսս…

Լրտեսը նկատեց տղաներին, մոտեցավ, ապա հանեց գլխարկն ու կեղծ ժպտաց.

Հարգանքներս, պատանի՛ բարեկամներ, բարև՛, Սերո՛բ, ինչպե՞ս ես: Չե՞ք գալիս զբոսնելու:

Մազ էր մնացել, որ Սերոբն ասեր՝ «Գնա՛, լրտե՛ս, քեզ էլ ճանաչեցինք»,— բայց ժամանակին լեզուն կծեց և այնքա՛ն ուժեղ, որ աչքերն արցունքոտվեցին:

— Շնորհակալությո՛ւն,— կմկմաց նա վիրավոր լեզվով և, իմանալով ինչ ասել, ավելացրեց,— սաստիկ զբաղված ենք:

— Այդ դեպքում գուցե ես ձեզ շոկոլադ հյուրասիրեմ,— այս խոսքերի հետ լրտեսը ձեռքը դեպի գրպանը տարավ, հանեց երկու կոնֆետ ու մեկնեց տղաներին,— վերցրե՛ք, վերցրե՛ք, մի՛ ամաչեք:

Ընկերներն անվճռական իրար նայեցին: Քերոբը դեմքը ծռմռելով՝ Սերոբին հասկացրեց, որ եթե չվերցնեն, լրտեսը կարող է կասկածել, և գործը կձախողվի:

Երբ լրտեսը հեռացավ, Սերոբն արագ–արագ բացեց փաթեթը և ուզում էր շոկոլադը արդեն բացած բե-

րանը տանել, երբ Քերոբը հարվածեց նրա ձեռքին: Կոնֆետն ընկավ ցած:

— Գժվե՞լ ես, ի՛նչ է,— գոչեց Քերոբը,— էստեղ են ասել՝ «Բոյը՝ երկար, խելքը՝ կարճ», լրտեսի տված կոնֆե՞տն ես ուտում, իսկ եթե թունավորվա՞ծ լինի:

Սերոբի դեմքը պատի գույն ստացավ: Նա ուզեց ինչ–որ բան ասել, բայց լեզուն չպտտվեց: Եվ հենց այդ վայրկյանին հարևանի շունը պոչը թափահարելով մոտեցավ, տեսավ ընկած կոնֆետն ու բերանն առավ:

— Քըխ է, Բողա՛ր, գցի՛ր, քըխ է,— հուսահատ գոչեց Քերոբն ու վազեց դեպի շունը:

Բայց հիմար Բողարը բերանից թունավորված կոնֆետը գցելու փոխարեն թռավ դեպի Քերոբը ու նրա ձեռքի կոնֆետը խլելով՝ թղթով կուլ տվեց:

— Փախի՛ր,— գոռաց Քերոբը,— փախի՛ր, Սերո՛բ, հիմա կկատաղի ու կկծի:

Ընկերները գլուխները կորցրած փախան այնպիսի արագությամբ, որ եթե մրցումներ լինեին, առաջին և երկրորդ տեղերը իրենցը կլինեին: Եվ հանկարծ հենց իրենց դիմաց տեսան լրտեսին, որ լայնեզր գլխարկով աչքերը ծածկած՝ քայլում էր: Սերոբն ու Քերոբը կանգ առան հևասպառ, հետ նայեցին: Շունը չէր երևում:

— Ի՞նչ անենք,— հարցրեց Սերոբը:

— Վե՛րջ: Հետևենք, տեսնենք ուր է գնում: Եթե մի տուն մտավ կամ մի այլ տեղ, իսկույն զանգահարենք միլիցիա:

Գնացին: Լրտեսը քայլում էր հանգիստ ու զգույշ: Ցույց էր տալիս, թե զբոսնում է, բայց աչքի տակով դի-

տում էր շուրջը: Հետո հանդիպեց մեկին, կանգ առավ: Սկսեցին խոսել: Սերոբը պարզ լսեց, որ լրտեսը իր խոսակցին ասաց. «Այո՛, իհարկե, հենց այս երեկո»:

— Լսեցի՞ր,— շշնջաց Սերոբը:

— Լսեցի,— շշնջաց Քերոբը:

Ու նրանք ավելի վճռականորեն հետապնդեցին:

Լրտեսը արագացրեց քայլերը, նայեց խաչմերուկի ժամացույցին ու ավելի շտապեց: Տղաները հազիվ էին հասնում նրա հետևից: Համարյա վազում էին: Քրտինքի կաթիլները առատորեն թափվում էին նրանց մազերի արանքից, բայց նրանք ոչինչ չէին զգում: Ահա լրտեսը մոտեցավ թատրոնի մեծ շենքին, որի առջև շատ մարդիկ կային հավաքված:

— Երևի տեսել է, որ հետևում ենք, ուզում է խառնվել մարդկանց, որ հետքը կորցնի,— հևալով բացատրեց Քերոբը:

Նրանք նկատեցին, թե ինչպես լրտեսը, մարդկանց բազմությունը ճեղքելով, մոտեցավ դռանը, թեքվելով ինչ–որ բան ասաց տոմսակներն ստուգողին, ու ներս մտավ:

Քերոբը ձեռքը խփեց ճակատին:

— Ա՛խ, անիծյա՛լ, ո՛նց էլ գիտեր, որ փող չունենք, է՛,— բացականչեց նա հուսահատ:

— Ո՛չ, հենց այդտեղ էլ սխալվել է, ունենք,— ասաց Սերոբը, ձեռքը գրպանը տարավ, դուրս բերեց մի մրոտ գուլպա, հանեց որսորդական հրացան գնելու նպատակով այնտեղ կուտակած 1 ռուբլի 27 կոպեկն ու մեկնեց Քերոբին,— վերցրո՛ւ:

Քերոբի սիրտը շարժվեց: Որպես շնորհակալության նշան, նա ամուր սեղմեց Սերոբի ձեռքը, գնաց, հիսուն կոպեկանոց երկու տոմս վերցրեց, վազելով մոտեցավ Սերոբին ու, «մոռանալով» մանրը վերադարձնել, ասաց.

— Գնա՛նք:

Ընկերները մոտեցան տոմսեր ստուգողին, ուզեցին ներս մտնել, բայց ստուգողը ուշադիր նայեց Սերոբի երկար հասակին, հետո պստիկ Քերոբին խստությամբ ասաց, որ 16 տարեկանից ցածր երեխաներին արգելվում է երեկոյան ներկայացումներ դիտելը:

Քերոբը բողոքեց:

— Մորաքո՛ւյր,— ասաց նա,— մենք շատ, շատ կարևոր, այսպես ասած, պետական…

— Լրտես…— ավելացրեց Սերոբը, ու նրանք շփոթված մորաքրոջը հրելով՝ ներս ընկան դահլիճ:

Եվ հանկարծ… մարեցին դահլիճի լույսերը: Ա՛յ քեզ բան, դե արի ու այս մթանը լրտես բռնիր:

— Դու կանգնիր դռան մոտ, որ հանկարծ չփախչի,— կարգադրեց Քերոբը,— իսկ ես թաքուն դահլիճից կնայեմ:


Նվագախումբը սկսեց նվագել: Բեմի լույսերը վառվեցին հազար գույներով: Դահլիճը փոքր–ինչ լուսավորվեց: Քերոբը մի անկյունից, Սերոբը դռան մոտից աչքերն ուղղեցին դեպի դահլիճ ու սկսեցին շարք–շարք ստուգել աթոռները: Նրանք նույնիսկ չնկատեցին, թե ինչպես բացվեց վարագույրը:

Եվ հանկարծ…

— Հա՛, հա՛, հա՛,— լսվեց ծանոթ, սարսուռ ազդող քրքիջը:

Քերոբն ու Սերոբը ցնցված դեպի բեմը դարձան: Եվ ինչ տեսնեն... իրենց հարևանը, այո՛, այո՛, այն լրտեսը, շեկ մորուքով ու շեկ մազերով, կանգնել է բեմի մեջտեղում, քրքջում է ու թավ ձայնով ասում.

«...Ա՛, պարո՛ն սպա, հարգանքներս...»:



Հայկ Քալանթարյան, 6 տ.

ՄԵԿ ՕՐ ԵՐԿՐԻ ՀՈՒՐՋԸ

ԴԵՊԻ ԱՐԵՎԵԼՔ

…Նրանք հևալով կանգնեցին փողոցի անկյունում: Շունչ առան: Հետո Քերոբը հարցրեց.

— Գնո՞ւմ ենք:

— Գնում ենք,— առույգ պատասխանեց Սերոբը:

— Հրա՞նտն ուր է:

— Չեկավ,— խեղճացած մրմնջաց Սերոբը:

— Իսկ կողմնացո՞ւյցը:

— Կողմնացույցը չտվեց: Նույնիսկ ծաղրեց էլ: Ասաց՝ դուք դեռ չգիտեք, թե ինչ կա մեր ճամբարի շուրջը, ուզում եք երկրի…

— Սո՛ւս,— սաստեց Քերոբը,— չե՞ս տեսնում, մարդ է անցնում,— նա աչքերով հետևեց աշխատանքի շտապող քաղաքացուն, ապա բռնեց Սերոբի բլուզի օձիքը,— ի՞նչ, կողմնացույցը չտվե՞ց: Այնպես էլ հանգի՞ստ ես ասում: Հիմի ի՞նչ ենք անելու, հը՞: Առանց կողմնացույցի ո՞նց ենք գնալու, հը՞…

Ամեն մի «հը»–ի հետ Քերոբն ամուր ձգում էր Սերոբի օձիքից և առանց մեծ ջանքերի նրա բլուզի չորս կոճակից երկուսը պոկեց:

— Դե՛, վերջ տուր, է՛,— բողոքեց Սերոբը՝ գետնից խնամքով հավաքելով կոճակները,— ի՞նչ ես դու էլ՝ հը՛

հա հը՛: Մենք որոշել ենք գնալ դեպի արևելք, չէ՞: «Հա» ու ջան: Իսկ ես առանց կողմնացույցի էլ գիտեմ: Որպեսզի իմանաս, թե որտեղ է արևելքը, պետք է դեմքով կանգնես դեպի հյուսիս և ձեռքերդ աջ ու ձախ պարզես: Աջ ձեռքդ ցույց կտա արևելքը:

— Բա՛ն ասացիր,— զայրացավ Քերոբը,— դեմքով դեպի հյուսիս կանգնելու համար նախ պետք է հյուսիսի տեղն իմանաս…

— Ճիշտ որ,— անկեղծորեն վշտացավ Սերոբը,— տե՛ս, է՛, չէի մտածել: Բայց, սպասիր, հիշեցի: Հրանտը մի օր ասաց, որ «Հաղթանակ» պարկը տանող ճանապարհը դեպի հյուսիս է նայում: Ազնիվ խոսք:

— Դրան տես, նորություն է ասում,— հեգնեց Քերոբը,— այդ ես էլ գիտեի: Տղա էր, թող գար հետներս: Մամայի՛ բալա: Քաղաքային ճամբարից էն կողմ չի անցնում:

— Նույնն էլ ես ասացի,— սրտապնդվեց Սերոբը՝ զգալով, որ Քերոբի տրամադրությունը բարձրացել է:

— Եթե սուտ չես ասում, ապրե՛ս,— ոտքերի ծայրերին բարձրանալով՝ ընկերոջ ուսին բարեկամաբար թփթփացրեց Քերոբը,— իսկ հիմա հանիր էն, ո՞նց են ասում, էն բյուջետը, տեսնենք ինչքա՞ն ունես:

— Ի՞նչը:

— Բյուջետը, էլի, փողերդ:

— Քիչ մնա, կասես՝ բանկդ,— փնթփնթաց Սերոբը, հետո գրպանից դուրս բերեց մի փոքրիկ կապոց, քանդեց հանեց բազմաթիվ փաթաթաններ, մինչև որ մի քանի կոպեկանոցներ երևացին: Սերոբը դրամները պատշաճ

հեռավորությունից ցույց տվեց Քերոբին ու կերկերուն ձայնով շարունակեց,— բայց հիշիր, Քերո՛բ ջան, եթե հարստանանք, էս իմ մեկ ռուբլի 30 կոպեկը ինձ ես տալու, հա՞, դու էլ գիտես, որ հեծանիվ եմ ուզում գնել:

Քերոբը բարեհոգաբար ծիծաղեց.

— Ամոթ է, ամոթ, ի՞նչ հեծանիվ: Դու դեռ «Վոլգա» կունենաս: Ճիշտ եմ ասում, հավատա՛: Կբերեն ու կարմիր ժապավենով կապած կնվիրեմ քեզ: Ժապավենի վրա գրված կլինի. «Սերոբին՝ շուրջերկրյա ճանապարհորդության պատանի չեմպիոնին»: Գո՞հ ես:

— Գո՛հ եմ,— երջանիկ ժպտաց Սերոբը,— այ թե կնախանձեն մեր բակի տղաները և հատկապես Հրանտը:

— Իհարկե,— պատասխանեց Քերոբն ու ավելացրեց,— դե լավ, գնանք, արդեն ուշ է:

Նա հենց այդպես, պայուսակը մեջքին, զգաստ ձգվեց, դեմքը դարձրեց դեպի «Հաղթանակ» պարկը և, աջ ձեռքը Նորքի անտառների կողմն ուղղելով, ասաց.


— Սերո՛բ, սիրելի՛ս, մենք գնում ենք դեպի արևելք: Միայն թե մինչև քաղաքից դուրս գալը քայլիր ինձնից տասը մետր հեռավորության վրա:

…Արևը դեռ չէր ծագել, բայց եթե վաղ առավոտյան աշխատանքի շտապողներն ուշադիր լինեին, ապա անմիջապես կնկատեին, որ ճանապարհորդների նման հագնված երկու պատանիներ, որոնցից մեկը կարճահասակ էր, իսկ մյուսը՝ բարձրահասակ, իրար հետևից գնում էին ու կասկածով չորս կողմ նայում:

Իսկ եթե Սերոբն ու Քերոբն էլ ավելի ուշադիր լինեին, ապա գուցե տեսնեին, թե ինչպես մի քանի քայլ այն

կողմ, պատի հետևում կանգնած Հրանտը (նա, որ չէր ուզեցել միանալ Սերոբին ու Քերոբին) դուրս եկավ իր թաքստոցից ու վազելով միացավ մի խումբ տղաների ու աղջիկների, որոնք անմիջապես բռնեցին Նորքի այգիների ճանապարհը:

Նրանք գնում էին Սերոբի ու Քերոբի առջևից:



«ՆԱՎԸ ԸՆԿՂՄՎՈՒՄ Է, ՑՏԵՍՈՒԹՅՈ՛ՒՆ»

Քերոբն անցավ Գետառի կամուրջը, կանգ առավ ու սպասեց Սերոբին, որը մոտենում էր լայն–լայն քայլերով: Դրանից նրա մեջքին կապած պայուսակը ծիծաղելիորեն ցնցվում էր:

— Կանգնենք մի քիչ,— առաջարկեց Քերոբը, իսկ երբ Սերոբը մոտեցավ, հանդիսավորությամբ ավելացրեց,— այս վայրկյանը հիշիր, Սերո՛բ, սա արդեն նոր շուրջերկրյա ճանապարհորդության դուրս գալու վայրկյանն է:

Հետո նա մի քայլ արեց դեպի Գետառը:

— Այս քայլը մեզ կես մետրով մոտեցրեց մեր ճանապարհի ցանկալի վերջնակետին: Այո՛:

Սերոբը, որ բոլորովին էլ ընկերոջ նման ոգեշնչված տրամադրության մեջ չէր, լուռ, բայց արժանապատվությամբ գլխով արեց: Նա անասելի քաղց էր զգում, բայց ամաչում էր այդ մասին ձայն հանել: Ճիշտ է, մեջքի պայուսակում ամեն ինչ էլ կար, որ խնամքով հավաքել էր պահարանից ու մառանից, երբ տանը բոլորն էլ քնած էին, բայց և այնպես ամաչում էր: Ախր, երեկ ինքն էր Հրանտին ասում, թե շուրջերկրյա ճանապարհորդության դուրս եկողը պետք է դիմացկուն լինի, պետք է լավ իմանա, որ անցնելու է անապատով ու լեռներով, ծովով ու անդնդախոր ձորերով, որ կարող է գերի մնալ մի անմարդաբնակ կղզում, ինչպես, օրինակ՝ Ռոբինզոն Կրուզոն: Դե, այսքանից հետո դժվար է ասել, թե քաղցած եմ, արի հաց ուտենք: Իսկ Քերոբը գուցե առավոտյան կուշտ կերել է, նրա՞ն ինչ կա:

Ընկերները ճանապարհ ընկան, Քերոբն՝ առջևից, Սերոբը՝ նրա հետևից: Գնում էին դանդաղ, ծանր քայլերով և ուշադիր զննում շրջապատը, ինչպես վայել է իսկական ճանապարհորդներին: Բայց Սերոբի մտքից քաղցածությունը չէր անցնում, ընդհակառակը, գնալով

ուժեղանում, հնչում էր անգամ կոշիկների դոփյունի մեջ և, որ ամենաածանրն է՝ Սերոբին, իրենից անկախ, տեղափոխում էր դեպի տուն, խոհանոց, սիրելի մայրիկի մոտ: Իսկ խոհանոցում այնպե՛ս տաք է, այնպե՛ս հաճելի է ճաշերի հոտը:

«Տեսնես ի՞նչ են անում հիմա,— կարոտով մտածեց Սերոբը,— մայրիկն, իհարկե, արթնացել է ու նկատել, որ ես չկամ, և հիմա լաց է լինում: Թող լաց լինի, բա ինչո՞ւ երեկ ինձ կինոյի փող չտվեց: Բայց, չէ, մեղք է: Հիմա նայում է ամեն տեղ ու կանչում. «Սերոբի՛կ, Սերոբի՛կ, Սերոբի՛կ», ու մտածում, թե գուցե խեղդվել եմ գետում...»:

Սերոբն անասելի խղճահարություն զգաց իր նկատմամբ ու կամացուկ, աննկատելի լաց եղավ: Հետո բարկացավ. «Չգիտեմ, թե ինչքանով է լավ աշխարհի շուրջը կատարած ճանապարհորդությունը, որի մասին այնքան գրել են տարբեր մարդիկ, իսկ Քերոբը բանավոր զահլես տարել է: Մեր տունը բոլորից էլ լավն է»:

Նույն մտքերով էր տարված նաև Քերոբը: Նա էլ առավոտվանից ոչինչ չէր կերել: Բայց քանի որ ինքն էր շուրջերկրյա ճանապարհորդության հեղինակը, դրա համար էլ քայլում էր ատամները սեղմած, հաստատ վճիռով, որ էլ հետ չի դառնալու: Կամ Կոլումբոսի նման ճանապարհին կկորչի կամ թե ուղիղ գծով հետ կգա Երևան: Ինչ ուզում է լինի...

Որոշ ժամանակ քայլելուց հետո Քերոբը, որ շարունակում էր առաջնորդել Սերոբին, անսպասելիորեն կանգ առավ ու աչքերը հառեց մի կետի: Արահետի

հենց մեջտեղում ընկած էր մի շիշ, սովորական, կես-լիտրանոց մի շիշ: Նա զգուշորեն վերցրեց շիշն ու մատով մոտ կանչեց Սերոբին: Երկուսն էլ ուրախացած, որ հանգստանալու առիթ եղավ, իսկույն ցած նետեցին պայուսակներն ու, իբր հետաքրքրությունից, շիշն սկսեցին ձեռքից ձեռք խլել: Եվ իրոք, սովորական շիշ էր դա: Վրան, ճիշտ է, խցան կար, բայց ներսում բացի փաթաթած մի թղթից, ուրիշ ոչինչ չկար: Շշի վրա մամուռի հետքեր չէին նկատվում:

— Բացենք,— առաջարկեց Քերոբը:

Սերոբը գունատվեց.

— Իսկ եթե միջից, ինչպես «Բաղդադի գող» կինոյում, դուրս գա մի հսկա՞, ինչ պատասխան կտանք,— մրմնջաց նա:

— Վա՛յ,— ծիծաղեց Քերոբը,— ուրեմն, չգիտե՞ս, թե սա ինչ է: Սա, ախպե՛ր ջան, հսկա չի: Հիմա ես գիտեմ, թե՛ դու: Երբ նավը խորտակվում է, խեղդվողները գրում են իրենց անունները, դնում մի այսպիսի շշի մեջ ու գցում ծովը, որպեսզի մարդիկ կարդան ու իմանան, թե ինչ է եղել:

Սերոբը փռթկաց.

— Այստեղ իսկի աղբյուր էլ չկա, որ ջուր խմենք, էդ ո՞վ է խեղդվել:

— Ու այդ խելքով էլ ուզում ես պտտվել աշխարհի շուրջը,— ծաղրեց Քերոբը,— ուրեմն մինչև հիմա չգիտե՞ս, որ առաջ բոլոր ցամաքները ջրի տակ են եղել և հենց, օրինակ, այս ճանապարհով հավանաբար հարյուրավոր առագաստանավեր են անցել:

Այս խոսքերի հետ Քերոբը հանեց շշի խցանը: Սերոբը հետ նետվեց ու բերանքսիվայր ընկավ խոտերի վրա: Բայց ձայն չլսվեց: Քերոբը երկար չափով շշի միջից հանեց թուղթը, բացեց ու կարդաց. «Ես՝ անգլիացի ճանապարհորդ Հարրի Պետերսոնս, որ գնում էի շրջագայելու և տեսնելու, թե ինչ կա աշխարհում, նավաբեկության ենթարկվեցի: Նավը ընկղմվում է, ցտեսությո՛ւն»:

— Անգլիական սառնասրտություն,— զգացված արտասանեց Քերոբը,— ա՛յ քեզ մարդ, խեղդվում է, բայց լաց լինելու փոխարեն ասում է՝ ցտեսություն:

Սերոբը ևս երկար ժամանակ ուշքի չէր գալիս, բայց և դրա հետ միասին անգլիացի դժբախտ ճանապարհորդի գրածի մեջ ինչ–որ բան նրան խիստ տարօրինակ ու ծանոթ էր թվում: Մտածեց, մտածեց, թե ինչ էր դա, բայց այդպես էլ չկարողացավ որոշել:

— Քերո՛բ, մի տո՛ւր այդ թուղթը:

— Ինչո՞ւ:

— Տո՛ւր, մի անգամ էլ եմ ուզում նայել:

Սերոբը վերցրեց նամակը, բացեց, կարդաց, նորից կարդաց, շուռումուռ տվեց, բայց, այդպես էլ ոչինչ կասկածելի բան չգտնելով, նամակը վերադարձրեց ընկերոջը:

Այն, ինչ չէր կարողացել նկատել Քերոբը, չկարողացավ նկատել նաև Սերոբը…

Անգլիացի ճանապարհորդը գրել էր հայերեն, աշակերտական վանդակավոր տետրի թղթի վրա…

Սոնա Գասպարյան, 4 տ.



ԵՎՍ ՄԻ ԱՊԱՑՈՒՅՑ, ՈՐ ԱՅՍՏԵՂ ՇՈՎ Է ԵՂԵԼ

Տասը քայլ էլ չէին հեռացել առաջին արկածի վայրից, երբ Քերոբը, որ դարձյալ առջևից էր գնում, կանգ առավ, շրջվեց դեպի Սերոբը, հրճվանքից քայլող դեմքով նայելով նրան՝ մատն ուղղեց դեպի գետին ու հողի մեջ ընկած ինչ–որ բան ցույց տալով՝ բացականչեց.

— Նայի՛ր, ևս մի ապացույց, որ առաջ այստեղ ծով է եղել:

Այս հանդիսավոր խոսքերից հետո Քերոբը կռացավ ու գետնից վերցրեց նոր «ապացույցը»: Սերոբը նրա գլխի վրայից տեսավ այն. ձկան կմախք էր:

Քերոբն զգուշությամբ չորս կողմից ուսումնասիրեց կմախքը, հիմնական ուշադրությունը դարձնելով ողնաշարի վրա, ապա տխրությամբ ասաց.

— Ափսո՜ս, որ դարերը մեզ չեն հասցրել այս ձկան գլուխը, Սերո՛բ, դա մեզ շատ բան կտար,— ապա քիչ լռելուց հետո ավելացրեց,— այնուամենայնիվ, եթե մենք ստույգ չենք կարող որոշել այս ձկան տարիքը, մի բան պարզ է, որ սա ձուկ է, դա՝ մեկ, երկրորդ՝ այս ձուկն ասում է, որ այստեղ ծով է եղել:

— Ով է ասո՞ւմ,— ծիծաղեց Սերոբը,— էդ անգլուխ ձուկը՞նց խոսեց հետդ:

— Ձուկը չխոսեց,— բարկացավ Քերոբը,— այդ այնպես, խոսքի համար են ասում:— Նա քնքշությամբ հոտ քաշեց կմախքից ու շարունակեց.— բախտի ինչպիսի՛ խաղ, հասկանո՞ւմ ես, Սերո՛բ, սա ձուկ է եղել, իսկական ձուկ, ապրել է մեզանից դարեր առաջ, լողացել է ու մտքով բոլորովին չի անցել, որ մի օր որպես անցյալ օրերի լուռ վկա, կգտնվի իմ ձեռքում... Այո՛, այո՛, Սերո՛բ, պատկերացնո՞ւմ ես, դարեր են անցել, բայց այս բրածո ձկան հոտը դեռ մնում է, տե՛ս...

Նա Սերոբին մեկնեց ձկան ողնաշարը: Սերոբը երկու մատով վերցրեց այն, մոտեցրեց դեմքին ու հոտ քաշեց: Գլուխը պտտվեց հաճույքից: Եփած ձկան հոտը

նրան նորից քաղաք տարավ, իրենց տունը, խոհանոցը, ուր հիմա գուցե զանազան անուշահամ կերակուրներ…

— Ահա մի ապացույց ևս…

— Դե՛, ջհանդամը գնան քո էդ «ապացույցները»,— կատաղությունից սրտապնդված գոռաց Սերոբը.— «ապացույցներ» են, թող իսկական ձկներ լինեն, թող մսերը վրան լինեն: Սրա՞ն տես, կրծած ոսկորներ է գտնում և ուրախանում է՝ ոնց որ, ոնց որ…

— Ուզում ես ասել՝ շուն, հա՞,— սպառնալի արտասանեց Քերոբը՝ պատրաստվելով ձեռքի «ապացույցները» նետել դեպի Սերոբը:

Բայց Սերոբը քնած չէր: Ընկերոջից հետ չմնալու համար նա ևս բարձրացրեց իր ձեռքը, որի ափում առաջին «ապացույց» կմախքն էր սեղմված, և հանկարծ, ինչ–որ բան նկատելով, քարացավ: Նրա բարձրացրած ձեռքը կես ճանապարհին անշարժացավ, ապա թուլացած վայր կախվեց: Աչքերը, որ Քերոբի գլխի վրայով ուղղված էին ինչ–որ տեղ, վախ էին արտահայտում, իսկ կիսաբաց բերանից դուրս էին գալիս անորոշ հնչյուններ:

Քերոբը կարողացավ որսալ միայն «ը ը ը…դիկնեը»: Նա գլուխը շրջեց Սերոբի հայացքի ուղղությամբ, թարթեց աչքերը, նորից թարթեց ու զգաց, որ ծնկները ծալվում են:

— Հնդիկնե՛րը…— մրմնջաց նա ու գրկեց Սերոբին:

«ՕՀԱՅՈ, ԿԻՈ, ԿԻՈ»

Ճանապարհից դուրս մի բարձր քարի վրա կանգնած էր նա, ով այդպես սաստիկ վախ էր պատճառել շուրջերկրյա ճանապարհորդության մասնակիցներին: Դարչնագույն դեմք ունեցող մի կարճահասակ մարդ էր դա: Աջ ձեռքին նիզակ ուներ: Մազերը սև էին՝ խառնիխուռն կախված գլխի աջ ու ձախ կողմերից, գլխին փետուրներ էին ցցված: Հնդիկի դեմքը ներկված էր ու սաստիկ դաժանություն էր արտահայտում:

— Նկատե՞լ է մեզ, թե՞ ոչ,— ատամները չխկչխկացնելով՝ հարցրեց Սերոբը՝ սիրտ չանելով հնդիկի կողմը նայել:

— Կարծես թե չի նկատել,— պատասխանեց Քերոբը, որն արդեն ուշքի էր եկել ու, գլուխը փոքր–ինչ գետնից բարձրացրած՝ դիտում էր շրջապատը,— փախչենք:

— Իսկ եթե տեսնե՞ն,— ատամները չխկչխկացրեց Սերոբը,— չե՞ն ուտի:

— Կուտեն,— վախեցած համաձայնվեց Քերոբը,— գոնե մարդ իմանար, թե դրանք հնդիկների ո՞ր ցեղին են պատկանում, գուցե չուտողներից են… բայց այս ի՞նչ է…

Անտառի կողմից թմբուկի ձայն լսվեց: Նվագը, որ սկզբում կամացուկ էր, հետզհետե ուժեղանալով՝ սկսեց թնդացնել շրջապատը, խուլ արձագանքել անտառում: Հետո երևաց թմբկահարը: Նա առաջին վայրենուց համարյա ոչնչով չէր տարբերվում, եթե հաշվենք այն, որ նիզակ չուներ և փոխարենը զինված էր դանակով: Դանակը կախված էր գոտուց ու սպառնալիորեն օրորվում էր:

Վայրենին ձեռքերի ափերով հարվածում էր «թմբուկին», կոկորդային ինչ–որ ձայներ հանում, որ նման էին գորտերի կռկռոցի, ու թմբուկի ռիթմով պարում էր անճոռնի, կոպիտ շարժումներով՝ մի կողմից թեքվելով մյուսը:

— Չէ՛, սրանք ուտողներից են,— մռայլ շշնջաց Քերոբը: Եվ հենց նույն վայրկյանին լսվեց մի սարսափելի ճիչ:


— Օհա՛յո, կիո՛, կիո՛…

Պարը միանգամից դադարեց:

— Օհա՛յո, կիո՛, կիո՛,— բղավեցին պարող վայրենիները և ձեռքերը դեպի իրենց զենքերը տարան:

— Կորանք,— վախեցած գոռաց Սերոբը,— Քերո՛բ ջան, ազի՛զ ջան, դու գրքեր շատ ես կարդացել, իրենց լեզվով ասա՝ ձերոնցից ենք:

Բայց Քերոբն այլևս չկար: Նա նետել էր պայուսակը, միանգամից պոկվել տեղից ու հիմա, անբնական թռիչքներ գործելով, սլանում էր եկած ճանապարհով:



...ԲԱՅՑ ՔՂԵՐՆ ԵՆ ՀԵՏ ԳԱԼԻՍ

Սերոբն ընկերոջը հանդիպեց Գետառի կամրջի մոտ: Քերոբը, այլևս անկարող շարունակելու ճանապարհը, հենվել էր կամրջի բազրիքին ու ծանր–ծանր շնչում էր: Ոտնաձայն լսելով՝ նա բարձրացրեց գլուխն ու վախեցած աչքերով ճանապարհին նայեց, բայց սպասվող վայրենիների փոխարեն Սերոբին տեսնելով, ուրախության ճիչ արձակեց ու նետվեց ընկերոջ գիրկը...

Սերոբը, որ դեռ շարունակում էր հետ–հետ նայել, սրտապնդվեց, մտածելով, որ վերջապես եկել է վրեժխնդիր լինելու պահը, հեգնանքով արտասանեց՝ հիշեցնելով այն րոպեն, երբ իրենք հենց նույն կամրջից սկսեցին շուրջերկրյա ճանապարհորդությունը.

«Սերո՛բ, սիրելի՛ս, մենք գնում ենք դեպի արևելք, հիշի՛ր այս սրբազան, անմոռանալի վայրկյանը...»:

Կյանքում առաջին անգամ Քերոբը չպատասխանեց Սերոբի ծաղրական խոսքերին, ու նրանք շարունակեցին քայլել հետ, դեպի արևմուտք, դեպի տուն:

Ամբողջ ճանապարհին նրանք մտածում էին անգլիացի ճանապարհորդի, ձկան կմախքների ու հնդիկների մասին, բայց բարձրաձայն և ոչ մի խոսք չէին արտասանում, որովհետև խուճապահար փախուստը երկուսն էլ չէին ուզում հիշել: Միայն մի տեղ Քերոբը չդիմացավ ու կեղծ հանգստությամբ ասաց.

— Միայն ափսոս, որ այնտեղ մոռացա պայուսակս: Շատ կարևոր էր:

— Դու ինչի՞ ես մտածում, հայրիկդ գործուղման մեջ է, իսկ ես վստահ եմ, որ ինձ կհասցնեն՝ ամբողջ օրը կորչելուս համար:

— Ես էլ նույնն եմ մտածում,— պատասխանեց Քերոբը,— որովհետև հայրիկիս բացակայության ժամանակ մայրիկս լիովին փոխարինում է նրան:

Ուրիշ ժամանակ գուցե նրանք ծիծաղեն, բայց հիմա չէին էլ փորձում: Նրանց անասելի հաճույք էր պատճառում այն միտքը, որ շուտով տանն են լինելու, անկախ այն բանից, թե ինչպես կընդունեն ծնողները:

Այդպես էլ լուռ կբաժանվեին, առանց հիշելու շուրջերկրյա ճանապարհորդությունը, բայց Սերոբենց տան մուտքի մոտ, երբ հրաժեշտ էին տալիս, Քերոբն այլևս չդիմացավ:

— Էհ, ի՛նչ անուն կունենայինք, եթե չլինեին այդ անիծյալ հնդիկները,— ափսոսանքով հառաչեց նա,— թե մի հրացան լինե՛ր, ես դրանց ցույց կտայի «կիո, կիոն»:

Իսկ Սերոբը, որ Քերոբի նման ուզում էր այդպիսի տխուր մի պահին գեղեցիկ բան ասել, մտածեց, մտածեց, թե ինչ ասի, բայց ոչ մի բան չգտավ և գերադասեց կրկնել այն խոսքերը, որ բերանացի էր արել կազմ ու վերնագիր չունեցող մի գրքից:

— Այնտեղ շատերն են գնում, բայց քչերն են հետ գալիս,— ու, չնկատելով Քերոբի զարմացած, վախեցած դեմքը, կրկնեց,— բայց քչերն են հետ գալիս…

* * *

Հաջորդ օրը, երբ Սերոբն ու Քերոբը բակ իջան ու մտան ճամբար, մի պահ կարծեցին, թե երազի մեջ են:

Քաղաքային ճամբարի կենտրոնում սյունից կախված էին նրանց ճանապարհորդական պայուսակները, այն պայուսակները, որ ավար էին մնացել հնդիկներին, իսկ մի տախտակի վրա խոշոր տառերով գրված էր. «Չլսված ռեկորդ: Սերոբն ու Քերոբը վեց ժամում պտտվել են երկրի շուրջը»:

Տախտակի մոտ, սեղանին դրված էին աքաղաղի մի քանի փետուր, խորովածի սովորական շամփուրներ, ձկան ոսկորներ, կեսլիտրանոց մի շիշ և անգլիացի ճանապարհորդի նամակը՝ Հրանտի ձեռագրով: Այդ բոլորի վերևում գրված էր. «Ցուցահանդես՝ նվիրված Սերոբի և Քերոբի շուրջերկրյա ճանապարհորդությանը»:

Սերոբն ու Քերոբը մի վայրկյան ապշած իրար նայեցին: Ու հանկարծ ճամբարով մեկ տարածվեց «վայրենիների» մարտական ճիչը:

— Օհա՛յո, կիհ՛, կիհ՛…

Մեր ճանապարհորդները վեր թռան սարսափահար և այն է, ուզում էին գլխապատառ փախչել, երբ ճամբարականների միահամուռ քրքիջն ուշքի բերեց նրանց: Բոլորից բարձր հնչում էր Հրանտի ձայնը:

Եվ այստեղ, ի պատիվ «շուրջերկրյա ճանապարհորդության» հերոսների, պետք է ասել՝ նրանք իսկույն կռահեցին, որ շշի, ձկան կմախքների, «վայրենի հնդիկ-

ների» ողջ պատմությունը ստեղծել էին իրենց ճամբարի պիոներները՝ այդ անիծյալ Հրանտի խորհրդով:

Սերոբն ու Քերոբը դառնացած իրար նայեցին ու կախեցին գլուխները:



Համլիկ Քալանթարյան, 7 տ.

ՍԵՐՈԲԻ ԵՎ ՔԵՐՈԲԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

(կատակերգություն երկու մասից)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Պատկեր առաջին

(Պատկերվում է բեմը, որտեղ փորձեր են կատարվում Նոր տարվա հանդես կազմակերպելու համար: Իհարկե, տոնածառ կա, գույնզգույն թղթերի սերպանտիններ, գույնզգույն ներկված լապտերներ, բամբակի քուլաներ, զանազան կենդանիների դիմանկարներ:

Բեմի աննկյուններից և մեջտեղից գորգածածկ կամրջակներ են ցած իջնում և բեմը կապում դահլիճի հետ:

Բեմի մի անկյունում սովորական սեղան կա, կողքին՝ աթոռ: Ներս է մտնում ավագ ջոկատավարուհին՝ Անահիտ Լալայանը):

ԼԱԼԱՅԱՆ – (Ձայնում է:) Հրա՛նտ…

(Մեջտեղի կամրջակով վեր է բարձրանում Հրանտը):

ՀՐԱՆՏ – Լսո՛ւմ եմ, ընկե՛ր Լալայան:

ԼԱԼԱՅԱՆ – Կարո՞ղ ենք սկսել փորձը:

ՀՐԱՆՏ – Կտոր–կտոր:

ԼԱԼԱՅԱՆ – Իսկ ինչո՞ւ կտոր–կտոր:

ՀՐԱՆՏ – Դե, Ձմեռ պապին չկա, Ձյունանուշիկն էլ հարբուխ է ընկել, անընդհատ փռշտում է:

(Կուլիսից փռշտոց է լսվում):

Տեսա՞ք, այսինքն՝ լսեցի՞ք:

ԼԱԼԱՅԱՆ – Իսկ ձերո՞նք որտեղ են: Չեմ տեսնում:

ՀՐԱՆՏ – Նունեն երգի խմբակի հետ է: Ցոլակը ճեմասրահում պարի փորձն է ղեկավարում: Լուսինեն ու Կարինեն դիմակահանդեսի զգեստներն են կարում: Աշոտը, Վարդանը, Գագիկը իշոտնուկներ են սարքում ու ներկում: Գեղամը մագնիտոֆոնի վրա նոր ձայնագրություններ է անում: Բոլորն էլ աշխատում են, ընկե՛ր Լալայան:

ԼԱԼԱՅԱՆ – Ուշացնում եք, ուշացնում… շատ քիչ ժամանակ է մնացել… Իսկ դահլիճն ապահովվա՞ծ է:

ՀՐԱՆՏ – (Նայում է դեպի դահլիճը:) Այո՛, բոլոր տեղերն զբաղված են:

ԼԱԼԱՅԱՆ – Ուրեմն զգուշացրու և սկսենք:

(Ինքը նստում է սեղանի մոտ, նայում է դեպի դահլիճ):

ՀՐԱՆՏ – Ուշադրությո՛ւն: Սիրելի՛ բարեկամներ, սիրելի՛ երեխաներ և ծնողներ, թույլ տվեք սկսել Նոր տարվա ուրախ տոնածառին նվիրված հանդեսի փորձը: Պատրա՞ստ եք, կարո՞ղ ենք սկսել:

ՁԱՅՆԵՐ – (Դահլիճից:) Այո՛, այո՛, սկսեք…

ՀՐԱՆՏ – Ովքեր համաձայն են, թող ձեռք բարձրացնեն… դեմ չկա՞մ: Իսկ ձեռնպա՞հ…

ԼԱԼԱՅԱՆ – Ի՞նչ կարիք կա քվեարկելու, հո ժողով չէ, Հրա՛նտ:

ՀՐԱՆՏ – Ներեցե՛ք, այդպես ենք սովոր, ընկե՛ր Լալայան… Լա՛վ: (Դեպի դահլիճ: Բացականչում է:) Ցոլա՛կ…

(Դահլիճի դուռը դեպի երկրորդ հարկի ճեմասրահ բացվում է և իրար ձեռք բռնած, զուռնայի նվագի տակ ներս են մտնում ազգային տարազով տղաներ ու աղջիկներ, պարելով իջնում են մեջտեղի աստիճաններով, բարձրանում դեպի բեմ և սկսում կատարել «Քոչարի»: Նրանց առաջնորդում է Ցոլակը՝ թաշկինակը ձեռքին: Պարն ավարտված է, ծափեր, բացականչություններ):

ԼԱԼԱՅԱՆ – Վատ չէ, ապրե՛ք: Իսկ ուրիշ ի՞նչ եք պատրաստել, Ցոլա՛կ ջան:

ՑՈԼԱԿ – Քանի որ այս տարի մեծ հանդիսավորությամբ տոնվեց Սովետական Միության կազմավորման 60–ամյակը, մենք այդ առթիվ սովորեցինք եղբայրական ժողովուրդների մի քանի պարեր:

ԼԱԼԱՅԱՆ – Հիանալի՛ է: Ուրեմն սկսեք:

ՑՈԼԱԿ – (Ամաչելով:) Այս զգեստներով չի լինի, ընկե՛ր Լալայան: Պետք է փոխվենք:

ԼԱԼԱՅԱՆ – Այո՛, իհարկե, իհարկե: Սակայն մինչև փոխեք ձեր զգեստները, մենք ինչո՞վ զբաղեցնենք հանդիսատեսին:

(Մոտենում է Սերոբը):

ՍԵՐՈԲ – Ես զբաղեցնե՞մ, ընկե՛ր Լալայան:

ԼԱԼԱՅԱՆ – Դո՞ւ, Սերո՛բ… Իսկ ի՞նչ կարող ես անել:

ՍԵՐՈԲ – Լավ շվշվացնում եմ:

ԼԱԼԱՅԱՆ – Վե՛րջ տուր, Սերո՛բ, սա քեզ համար դասարան չէ… Ահ, ներեցե՛ք, սա ի՞նչ սուլելու տեղ է:

ՍԵՐՈԲ – Ուզո՞ւմ եք բանաստեղծություն կարդամ:

ԼԱԼԱՅԱՆ – Ք՞ո գրածն է:

ՍԵՐՈԲ – Իհարկե՛, ամբողջ գիշեր չեմ քնել:

ՀՐԱՆՏ – Ինչպե՞ս թե չես քնել, քիչ առաջ ինձ այս գիշեր տեսած երազներդ էիր պատմում:

ՍԵՐՈԲ – Դե, Հրա՛նտ ջան, հո անընդհատ չէի գրում, ընդմիջումներին մեկ–մեկ քնում էի:

ԼԱԼԱՅԱՆ – Դե լավ, կարդա տեսնենք՝ ի՞նչ ես գրել, Սերո՛բ…

ՍԵՐՈԲ – Շատ չարչարվեցի, ընկե՛ր Լալայան, բայց կարծես թե լավ է ստացվել:

ԼԱԼԱՅԱՆ – Կարդա՛, կարդա՛, լավն ու վատը մենք կորոշենք:

ՍԵՐՈԲ – Ուրեմն կարդում եմ… (Մի թուղթ է հանում:)

Մի ամլիկ գառ, իրեն համար
Ջուր էր խմում առվակից,
Մեկ էլ դեմի ձորակից
Գայլն է կտրում վերևը՝
Խոսքին տալով էս ձևը…
(Ծիծաղ):

ԼԱԼԱՅԱՆ – Սպասի՛ր, սպասի՛ր, այդ դո՞ւ ես գրել:

ՍԵՐՈԲ – Իհարկե: Բա ո՞վ: Էնքան եմ տանջվել, ընկե՛ր Լալայան… Հիմա տեսեք, թե հետո ինչ է լինելու: Ուրեմն…

ԼԱԼԱՅԱՆ – Եթե կատակում ես, Սերո՛բ, ընդունում ենք, ոչինչ, սրամիտ է:

ՍԵՐՈԲ – Ի՞նչ կատակ, ընկե՛ր Լալայան, տեսեք, թե ինչքան տխուր եմ վերջացրել… Որ գրում էի, հետն էլ լաց էի լինում…

Ուրեմն՝ «Ա՛յ դու…»:

ԼԱԼԱՅԱՆ – Սպասի՛ր… (Դահլիճին:) Երեխաներ, ո՞վ գիտե այս առակի շարունակությունը…

ՍԵՐՈԲ – Ինձնից բացի ո՞վ կիմանա… Ամբողջ գիշեր…

(Ձայներ դահլիճից՝ «Ե՜ս, ե՜ս»…):

ԼԱԼԱՅԱՆ – (Մեկին:) Ասա՛, բալի՛կ ջան:

ԱՂՋԻԿԸ – «Ա՛յ դու փսլնքոտ, ոչխարի՛ լակոտ,

Դու ինչի՞ տեր ես, որ գաս դնչովդ,

Քթով–պնչովդ ջուրս պղտորես.

Բռնեմ դունչդ, կտրի շունչդ»…

ԼԱԼԱՅԱՆ – Ապրե՜ս, աչի՛կ ջան: Ահա քո պատասխանը, Սերո՛բ, զուր տեղն այստեղ ջուր մի՛ պղտորի… Երեխանե՛ր, ո՞վ կարող է ասել՝ ո՞վ է գրել այս առակը:

ՁԱՅՆԵՐ – Խնկո Ապերը, Խնկո Ապերը:

ՍԵՐՈԲ – Վա՛յ, բա ես ի՞նչ եմ արել ամբողջ գիշեր…

ՀՐԱՆՏ – Ամբողջ գիշեր դու արտագրել ես, Սերո՛բ… Կարծելով թե Խնկո Ապոր ժողովածուն միայն դու ունես: Քեզ նմաններ էլի կան, թռցնում են այստեղից, այնտեղից, հետո ուղարկում խմբագրությունները՝ իբրև իրենց ստեղծագործությունը: Ամո՛թ է, ամո՛թ… գնա՛…

ՍԵՐՈԲ – Լա՛վ, կգնա՛մ, ախր վերջը չլսեցիր, Հրա՛նտ, հենց քո մասին էր: Ի՞նչ անեմ՝ «Ուժեղի մոտ միշտ էլ թույլն է մեղավոր»: Ես թույլ եմ, կգնամ…

ԼԱԼԱՅԱՆ – Իհարկե, թույլ ես, թույլ սովորող ես, Սերո՛բ: Եվ քո դժբախտությունը դա է: Եթե լավ սովորեիր, նման ծիծաղելի պատմության մեջ չէիր ընկնի:

ՀՐԱՆՏ – Եվ քանի որ փչելու հետ մեծ սեր ունես, այնտեղ փուչիկներ կան, գնա՛ փչի ու կախի պատից: Գնա՛, գնա՛, փչա՛ն…

(Ներս է մտնում Ցոլակը):

ՑՈԼԱԿ – Մենք պատրաստ ենք, ընկե՛ր Լալայան:

ԼԱԼԱՅԱՆ – Այո՛, ուրեմն սկսեք:

(Ցոլակը բարձրացնում է ձեռքը, հնչում է նվագը: Դահլիճի երեք միջանցքներից ներս են մտնում երեխաները ու կատարում ռուսական կամ մոլդովական ուրախ, կրակոտ մի պար):

ՀՐԱՆՏ – Ինչպե՜ս էր…

ԼԱԼԱՅԱՆ – (Հրանտին:) Կեցցե՛ն: Լավ են պարում, տեսնում ես դահլիճն ինչ ջերմ է ընդունում: Հա, Հրա՛նտ, Քերո՛բն ուր է: Ես նրան չեմ տեսնում:

ՀՐԱՆՏ – Ես էլ չեմ տեսնում: Եվ շատ ուրախ եմ, որ չեմ տեսնում: Հենց որ տեսնում եմ, ինչպես տատս է ասում՝ «Ճնշումս բարձրանում է»:

ԼԱԼԱՅԱՆ – Ինչ է, հանձնարարությունը չի՞ կատարել: (Բացականչում է:) Քերո՛բ… (Կուլիսների կողմը:) Գտե՛ք Քերոբին, խնդրում եմ:

ՀՐԱՆՏ – Ահա, դահլիճում նստած է:

ԼԱԼԱՅԱՆ – Չի կարող պատահել: Որտե՞ղ է: Քերո՛բ…

ՀՐԱՆՏ – Դեպի աջ, դեպի աջ նայե՛ք: Քերո՛բ… Քերո՛բ, Քերո՛բ, ա՛յ տղա, քեզ հետ եմ:

ԼԱԼԱՅԱՆ – Ո՞ւր է, ո՛ւր է… Քերո՛բ…

ՔԵՐՈԲ – (Նստած տեղից:) Ներկա… (Ձեռք է բարձրացնում:)

ԼԱԼԱՅԱՆ – Հետաքրքիր տղա ես, Քերո՛բ, այսքան ձայն էինք տալիս, չէի՞ր լսում:

ՔԵՐՈԲ – Լսո՛ւմ եմ, ընկե՛ր Լալայան, բայց ո՛ւմ մտքով կանցներ, որ հենց ինձ էիք փնտրում: Այս հսկայական դահլիճում Քերոբը մենակ ե՞ս եմ: Գոնե կանչեիք Քերոբ Բաբայան: Կհասկանայի:

ՀՐԱՆՏ – Չէ՛ մի… Պիտի Քերոբ Մարկոսիչ կանչե-ինք: Չի էլ ամաչում, դե՛ երդվիր, որ չէիր հասկանում, թե քեզ են կանչում:

ՔԵՐՈԲ – Խնդրեմ: Թե սուտ եմ ասում, տեղիցս վեր չկենամ:

ՀՐԱՆՏ – Հա՛… այ դա իսկական քո երդումն է: Ամեն ինչ կանես, միայն թե քեզ չշարժեն տեղից, ծո՛ւյլ…

ԼԱԼԱՅԱՆ – Լա՛վ, Հրա՛նտ: Կգա՞ս այստեղ, Քերո՛բ…

ՔԵՐՈԲ – Ե՛րբ:

ԼԱԼԱՅԱՆ – Հիմա…

ՔԵՐՈԲ – Կաշխատեմ, մի բան կանենք… (Ծույլ–ծույլ ելնում է տեղից, բարձրանում բեմ:) Եկա՛:

ԼԱԼԱՅԱՆ – Քեզ ի՞նչ էր հանձնարարված, Քերո՛բ:

ՔԵՐՈԲ – Ի՞նձ: Ինձ հանձնարարված էր ներկել թղթե դրոշակները և նապաստակների նկարները:

ԼԱԼԱՅԱՆ – Ներկեցի՞ր:

ՔԵՐՈԲ – Ո՛չ:

ԼԱԼԱՅԱՆ – Ինչո՞ւ:

ՔԵՐՈԲ – Հրանտը չթողեց, ասաց, որ ես բալտոնիկ եմ:

(Հրանտը փռթկացնում է):

ԼԱԼԱՅԱՆ – Ի՞նչ ես, ի՞նչ ես…

ՔԵՐՈԲ – Բալտոնիկ…

ԼԱԼԱՅԱՆ – Երևի դալտոնիկ, Քերո՛բ:

ՔԵՐՈԲ – Երևի դալտոնիկ:

ԼԱԼԱՅԱՆ – Այսինքն՝ գույները չես տարբերում, հա՞: Դու իսկապե՞ս գույները չես տարբերում:

ՔԵՐՈԲ – Ինչու չեմ տարբերում… տարբերում եմ, ընկե՛ր Լալայան, բայց երևի Հրանտն է իր այդ ասածը՝ բալտոնիկ…

ԼԱԼԱՅԱՆ – Դալտոնիկ:

ՔԵՐՈԲ – Դալտոնիկ… Ես կանաչ եմ ներկում, ինքն ասում է՝ կապույտ է: Ես դեղին եմ ներկում, ինքն ասում է՝ կարմիր է: Կամ թե ի՞նչ տարբերություն:

ՀՐԱՆՏ – Ինչպե՞ս թե ինչ տարբերություն, ա՛յ Քերոբ, կարմիր գույնի նապաստա՞կ կլինի:

ՔԵՐՈԲ – Ինչո՞ւ չի լինի: Իսկ դեղին գույնի բեգեմոտ կլինի՞:

ՀՐԱՆՏ – Չի լինի:

ՔԵՐՈԲ – Իսկ ես տեսել եմ:

ԼԱԼԱՅԱՆ – Որտե՞ղ, Քերո՛բ:

ՔԵՐՈԲ – Մուլտի մեջ:

ՀՐԱՆՏ – (Ծիծաղում է:) Ա՛յ տղա, մուլտիպլիկացիոն կինոնկարում գետաձին վախից է դեղնում, երբ ուզում են սրսկել:

ՔԵՐՈԲ – Հետո՞ ինչ: Իմ նապաստակն էլ երևի ամաչկոտ է և ամոթից է կարմրել:

ՀՐԱՆՏ – Նապաստակի փոխարեն դո՛ւ պիտի կարմրեիր, դո՛ւ…

ԼԱԼԱՅԱՆ – Լա՛վ, լա՛վ, Քերո՛բ, գնա՛ Սերոբին օգնիր, փուչիկները փչեք, հուսով եմ, որ դա քո ուժերից վեր չէ:

ՔԵՐՈԲ – Փչե՞լը: Խնդրեմ, կփչեմ… (Մեկուսի:) Դա գոնե տղամարդու գործ է… Թե չէ՝ նապաստակ ներկի…

(Գնում է Սերոբի մոտ):

ԼԱԼԱՅԱՆ – Հաջորդ համարը պատրա՞ստ է, Հրա՛նտ:

ՀՐԱՆՏ – Պատրա՛ստ է:

ԼԱԼԱՅԱՆ – Թող ներս գան:

ՀՐԱՆՏ – (Ձայն է տալիս:) Նունե՛…

(Վազելով ներս են գալիս երեխաները և սկսում են երգել: Հնարավոր է, որ նրանց հետ միասին երգեն և դահլիճում նստած երեխաները):

ԼԱԼԱՅԱՆ – Ապրե՛ք, երեխանե՛ր, ապրե՛ք, Նունե՛, այսօրվա համար փորձը բավական է: Հրա՛նտ, հետաքրքրվի՛ր, տես Ձյունանուշիկի առողջությունն ինչպե՞ս է: Հարբուխը չի՞ անցնում:

(Կուլիսներից ուժգին փռշտոց է լսվում):

Ամեն ինչ հասկանալի է… Անջատե՛ք լույսերը:

ՀՐԱՆՏ – Դա հարբուխ չէ, ընկե՛ր Լալայան, դա իսկական հրաբուխ է: (Բեմում մարում են լույսերը: Հետո լուսարձակներից մեկը որսում է Քերոբին ու Սերոբին, որոնք Սուլդու և Բուլդու նման, այսինքն՝ մեկը բարձրահասակ ու նիհար, իսկ մյուսը՝ կարճահասակ ու գեր, բեմառաջով դուրս են գալիս: Սակայն անկյունում Քերոբը չի դիմանում և շուրջը նայելով դիմում է Սերոբին):

ՔԵՐՈԲ – Տեսար չէ՞, Սերո՛բ ջան, իրենք ամեն ինչում լավն են, իսկ ես ու դու թույլ ենք, ծույլ ենք, խուլ ենք…

ՍԵՐՈԲ – Գրագո՛ղ ենք… Ես ամբողջ գիշեր նստեմ, տանջվեմ…

ՔԵՐՈԲ – Հա, գույները չե՞նք տարբերում: Այնինչ շատ լավ էլ տարբերում եմ, բայց ներկերը դիտմամբ խառնում էի, որ ինձնից ձեռք քաշեն: Բա ի՞նչ, ես նրանց համար ներկարա՞ր եմ:

ՍԵՐՈԲ – Բա, բա… Բա ինձ ստիպում են փուչիկ փչել, Քերո՛բ ջան: Փչող լինեի, կլարնետի խմբակ կընդունվեի կամ էլ՝ դուդուկի… Ճիշտ չէ՞:

ՔԵՐՈԲ – Բա ինչ… Ես ուզում եմ հերոսական գործեր կատարել, որևէ խիզախ արարք, տիեզերք թռչել, սահնակով Հյուսիսային բևեռ հասնել…

ՍԵՐՈԲ – Ինձ էլ կտանե՞ս քեզ հետ, Քերո՛ւբ ջան… Ես էլ եմ ուզում հերոսական գործեր կատարել…

ՔԵՐՈԲ – Իհարկե… Բա ո՞ւմ պետք է լծեմ սահնակին…

ՍԵՐՈԲ – (Վախեցած։) Ճի՞շտ…

ՔԵՐՈԲ – Չէ՛, կատակ եմ անում, կատա՛կ։ Դու սահնակ քաշո՞ղ ես։ Իսկի նստել չես կարող։ Հա, ես ուզում եմ այնպիսի մի… այնպիսի մի սխրանք կատարել, որ ամբողջ աշխարհը խոսի իմ մասին, իսկ նրանք թե՝ նապաստակ ներկի, լավ սովորի…

ՍԵՐՈԲ – Ախ հա՛, հա՛, դասից մի՛ բացակայի, մաքուր գրի… Փուչիկ փչի… Մենք ինչքա՞ն պետք է փչենք, որ աշխարհը խոսի մեր մասին։ Ճիշտ չէ՞…

ՔԵՐՈԲ – Իհարկե։

ՍԵՐՈԲ – Բա ի՞նչ անենք, որ հերոս դառնանք, հը՞, Քերո՛ւբ ջան։

ՔԵՐՈԲ – (Միանգամից։) Պետք է գոնե մի լրտես բռնենք։ Ուրիշ ճար չկա։

ՍԵՐՈԲ – Լրտե՞ս։ Որտեղի՞ց բռնենք։

ՔԵՐՈԲ – Ճիշտն ասած՝ մեկը կարծես թե կա… Աչքիս մի տեսակ ալաբուլա է երևում։ Դու գաղտնիք պահել գիտե՞ս, Սերո՛ւբ։

ՍԵՐՈԲ – Ե՞ս։ Ինձնից լավ գաղտնիք պահող աշխարհում չկա, Քերո՛ւբ ջան, որովհետև ինչ որ լսում եմ, տեղնուտեղը մոռանում եմ։ Որ դասատուն դաս է պատմում

ու անմիջապես հարցնում է ինձ, իմ պատասխանից չի՞ երևում, ինչ է… Ես որևէ բան հիշո՞ւմ եմ…

ՔԵՐՈԲ – Այո՛, այո՛, երևում է, լա՛վ համոզեցիր… Ուրեմն այսպես, վաղվանից անցնում ենք հետախուզական աշխատանքի:

ՍԵՐՈԲ – Վա՜խ, ցավդ տանեմ, Քերո՛բ ջան, ո՛նց եմ սիրում դետեկտիվ:

ՔԵՐՈԲ – Ուրեմն այսպես… Առավոտյան ճիշտ ժամը 10^{00}–ին գալիս ես մեր տուն: Ես քեզ ցույց կտամ լրտեսին:

ՍԵՐՈԲ – Ի՞նչ ես ասում, լրտեսը ձեր տա՞նն է:

ՔԵՐՈԲ – Արդեն ավելորդ հարցեր ես տալիս, Սերո՛բ: Հասկացիր, ոչ մի ձայն, այստեղ պատերն էլ ականջ ունեն: Ոչ մի խոսք: Ուրեմն՝ ճիշտ 10^{00}–ին: Նշանաբանը կլինի «Վրեժ»:

ՍԵՐՈԲ – Հակոբյա՞ն:

ՔԵՐՈԲ – Ի՞նչ Հակոբյան, ա՛յ տղա:

ՍԵՐՈԲ – Մեր դասարանի:

ՔԵՐՈԲ – Ո՛չ, ո՛չ, վրեժ, վրիժառություն, վրեժխնդրություն, հասկացա՞ր, վրեժ: Մենք վրեժ կհանենք մեր դասարանցիներից և հատկապես այդ գոռոզ Հրանտից: Երբ որ լրտեսին բռնենք ու մերկացնենք, նրանք կիմանան, թե ով ենք մենք: Այդ Հրա՛նտը, Հրա՛նտը…

ՍԵՐՈԲ – (Երազկոտ:) Պատի թերթում կգրեն մեր մասին… Բայց, Քերո՛բ ջան, որ բռնենք լրտեսին, արի չմերկացնենք, ձմեռ է, ցուրտ, մեկ էլ տեսար՝ մրսեց… Փորձանքի մեջ ընկանք:

ՔԵՐՈԲ – Փոխաբերական իմաստով եմ ասում, ա՛յ տղա… Այդ օրը, որ երբ մենք սովորում էինք փո-

խաբերական և ուղղակի իմաստներ, դու դասից փախել էիր…

ՍԵՐՈԲ – Ա՛խ, հա՛…

ՔԵՐՈԲ – Ուրեմն ո՞րն է մեր նշանաբանը:

ՍԵՐՈԲ – Հրա՛նտ…

ՔԵՐՈԲ – (Բարկացած:) Վրեժ, վրեժ, վրեժ…

(Մթություն):

Պատկեր երկրորդ

(Բեմի ձախ և աջ կողմերում շենքերի նկարներ են: Այնպես է արած, որ ձախ կողմում Քերոբենց տան մի սենյակն է, իսկ աջում հետո միայն լուսավորվելու է մի պատուհան, որի հետևում ստվերի նման երևալու է դերասանը:

Հայտնվում է բարձրահասակ Սերոբը, նայում է այս ու այն կողմ: Երևում է, որ տունը շփոթել է: Նկատում է անցնող մի տղայի):

ՍԵՐՈԲ – (Տղային:) Ճուտո՛, Ճուտո՛, այստե՛ղ արի:

ՏՂԱՆ – Հա…

ՍԵՐՈԲ – Ճուտո՛ ջան, չգիտե՞ս որտեղ է ապրում լրտեսը:

ՏՂԱՆ – (Ապշած:) Ով, ո՞վ…

ՍԵՐՈԲ – Թյո՛ւ, լրտես եմ ասում, Քերոբը, Քերոբը… (Ձեռքով ցույց է տալիս կարճ հասակը:)

ՏՂԱՆ – Ո՞նց թե… Քերոբը լրտե՞ս է…

ՍԵՐՈԲ – (Վախեցած չորս կողմն է նայում։) Չէ, չէ, ինչ ես ասում… Ինչ լրտես… Ընդհակառակը…

ՏՂԱՆ – (Շարունակելով զարմացած նայել նրան։) Քերոբենց դուռը հենց դա է…

ՍԵՐՈԲ – Սա՞… հա, էլի… ապրե՛ս, ապրե՛ս… դե դու գնա։ Լավ սովորի, հա՞, դասերից չփախչես…

(Տղան, հետ–հետ նայելով, հեռանում է։ Սերոբը մոտենում է դռանը, սեղմում է զանգը)։

ՔԵՐՈԲ – (Դռան հետևից։) Ո՞վ է։

ՍԵՐՈԲ – Ես եմ, Քերո՛բ ջան, Սերո՛բն եմ։

ՔԵՐՈԲ – Նշանաբա՞նը։

ՍԵՐՈԲ – Ինչ։ Բա՛ց արա դուռը։

ՔԵՐՈԲ – Նշանաբա՞նը։

ՍԵՐՈԲ – (Մեկուսի։) Էն ինչ էր անտերը։ Գառնի՛կ… (Դռան հետևում ոչ մի ձայն։) Հրա՛նտ, Հրա՛նտ… Քերո՛բ ջան, բա՛ց արա դուռը, ամոթ է, մեկնումեկը կտեսնի…

ՔԵՐՈԲ – (Խիստ։) Նշանաբա՞նը։

ՍԵՐՈԲ – (Մեկուսի։) Ա՛յ մարդ, էն ինչ էր, է՛, որ հա՛մ անուն էր, հա՛մ անուն չէր… Ատոմ, չէ՛, Ռազմիկ, չէ՛… (Ուրախացած։) Վրեժ, վրեժ, վրեժ…

(Քերոբը բացում է դուռը)։

ՔԵՐՈԲ – Անցի՛ր…

ՍԵՐՈԲ – Բա ո՛ւր է լրտեսը։

ՔԵՐՈԲ – (Շշուկով։) Կամաց, այստեղ պատերն էլ ականջ ունեն…

ՍԵՐՈԲ – Ո՞նց թե… Բա դպրոցում էիր ասում, թե այստեղ պատերն ականջ ունեն։ Ուրեմն այստեղ՝ ձեր տա՞ննն էլ պատերն ականջ ունեն։

ՔԵՐՈԲ – Փոխաբերական իմաստով եմ ասում, ա՛յ տղա: Այսինքն թե՝ զգույշ, որ մեզ չլսեն…

ՍԵՐՈԲ – Ա՛խ, հա՛…

ՔԵՐՈԲ – (Մոտենում է լուսամուտին, քիչ հետ է տանում վարագույրը, նախ ինքն է նայում, հետո մոտ է կանչում Սերոբին ու նրան մեկնում հեռադիտակը:) Նայիր համար երկու կետին:

ՍԵՐՈԲ – Ինչի՞ն, ինչի՞ն…

ՔԵՐՈԲ – Երկրորդ լուսամուտին…

ՍԵՐՈԲ – Դե մարդավարի խոսիր, էլի… (Նայում է:) Շատ հեռու է, Քերո՛բ ջան, բան չի երևում:

ՔԵՐՈԲ – Հակառակ կողմով բռնիր, բթամի՛տ արաբած…

ՍԵՐՈԲ – (Նայում է:) Պա՛հ…

(Դիմացի տան լուսավորված պատուհանի հետևում երևում է տարեց մի մարդ: Նա ինչ–որ անորոշ շարժումներ է անում ու մեկ էլ կարծես թե մորուք է կպցնում կզակին):

ՔԵՐՈԲ – Տեսա՞ր:

ՍԵՐՈԲ – Պա՛հ…

ՔԵՐՈԲ – Բա՞… Հիմա, քո կարծիքով, նա ո՞վ է:

ՍԵՐՈԲ – Ձեր հարևանն է…

ՔԵՐՈԲ – (Ծաղրում է:) Հարևա՞նն է… Լրտե՛ս է, լրտես, դմբո՛…

ՍԵՐՈԲ – Իսկակա՞ն:

ՔԵՐՈԲ – Ա՛յ տղա, լրտեսը հո պոզով–պոչով չի լինում: Տե՛ս, տե՛ս, տե՛ս, բա որ քեզ ասում էի՝ աչքիս մի տեսակ է երևում…

ՍԵՐՈԲ – Բա… Բա դու ո՞նց իմացար:

ՔԵՐՈԲ – (Պարծենալով:) Հենց որ տեսա, անմիջապես զգացի, որ լրտես է: Նոր է եկել այդ շենքը: Ես դարպասի մոտ կանգնած էի, որ եկավ: Կանգնեց, մի մատով կանչեց ինձ ու հարցնում է.

— Տղա՛ս, այստե՞ղ ես ապրում:

— Այո՛,— ասացի ես:

— Չգիտե՞ս՝ այստեղ վարձու սենյակ կա՞:

— Կա՛,— ասացի ես,— քեռի Հակոբը սենյակը վարձով է տալիս:

— Իսկ ինչպիսի՞ մարդ է,— հարցնում է,— խելո՞ք է, այսինքն՝ չի՞ խմում, կռիվ չի՞ անում, տանը հյուրեր շա՞տ է ունենում:

ՍԵՐՈԲ – Պա՜հ…

ՔԵՐՈԲ – Այստեղ, ա՛յ, ես մատս կծեցի…

ՍԵՐՈԲ – Ինչո՞ւ, բա չցավե՞ց…

ՔԵՐՈԲ – Փոխաբերական իմաստով եմ ասում, ա՛յ տղա…

ՍԵՐՈԲ – Ախ, հա՜…

ՔԵՐՈԲ – Ասացի՝ քեռի Հակոբը վարձով է տալիս, իսկ ինքը կողքի մուտքում՝ տղայի տանն է ապրում: Հո չուրախացա՛վ… «Իսկը իմ ուզածն է»,— ասաց: Իսկ ես իսկույն ծոցատետրս հանեցի ու տես՝ ինչ եմ գրել, տե՛ս…

ՍԵՐՈԲ – (Կարդում է:) «Այսօր բուսաբանությունից «երկու» ստացա… ընկեր Բադալյանը ականջս քաշեց»…

ՔԵՐՈԲ – Տեսա՞ր… Ա՛յ տղա, էդ ի՞նչ ես կարդում, մյուս էջը բացիր…

ՍԵՐՈԲ – «Կասկածելի տիպ է: Հանգիստ տեղ է փնտրում»:

ՔԵՐՈԲ – Բա՛մ, ա՛յ թե ինչ է նշանակում զգոնություն: Տե՛ս, տե՛ս, տե՛ս…

(Մարդը հիմա էլ շեկ կեղծամ է դնում ճաղատ գլխին, շրջվում է, մատ է թափ տալիս ինչ–որ մեկի վրա՝ բերա-նը բացուխուփ անելով):

ՍԵՐՈԲ – Վա՛յ, վա՛յ, վա՛յ, ուրեմն տանն էլի մարդ կա:

ՔԵՐՈԲ – Հը՛, տեսնես, եթե Թոմ Սոյերն իմ տեղը լիներ, հիմա ի՞նչ կաներ:

ՍԵՐՈԲ – Դե Թոմ Սոյերի ժամանակ ի՞նչ էր, է՛: Ո՛չ հսկա շենքեր կային, ո՛չ տրամվայ կար, ո՛չ մետրո… Եղած–չեղածը մի քանդված մատուռ էր, ու բոլոր հան-ցագործներն էլ էդտեղ էին հավաքվում: Գնա ու, հո՛պ, բռնիր: Իսկ հիմա էս մեծ քաղաքում արի ու լրտես բռնիր… Ճիշտ չէ՞…

ՔԵՐՈԲ – Մենք պետք է լսենք, թե ինչ են խոսում նրանք:

ՍԵՐՈԲ – Ո՞նց լսենք… Գոնե կարողանայինք միկ-րոֆոն դնել նրա սեղանի տակ: Կինոներում այդպես են անում. ես տեսել եմ…

ՔԵՐՈԲ – Կլսենք դռան հետևից… Դռան հետևից: Արի՛…

ՍԵՐՈԲ – Ի՞նչ ես ասում, Քերո՛բ, ընկեր Լալայանն ասում է դռան հետևից ականջ դնել չի կարելի… Ամո՛թ է…

ՔԵՐՈԲ – Ամոթն այն է, Սերո՛բ, որ դու ընկեր Լա-լայանին ես լսում, և ոչ թե ինձ: Հետախուզական աշ-խատանքից ի՞նչ է հասկանում: Նա կյանքում մի լրտես

բռնած կամ: Հետախուզական աշխատանքում բոլոր մի-ջոցները հարգելի են: Ընկեր Լալայանը մենակ դասից փախչողներ ու մեկ էլ թիթեռներ ու բզեզներ է բռնում: Արի՛, արի՛…

ՍԵՐՈԲ – Բա այդ լրագիրն ինչո՞ւ ես վերցրել, Քերո՛բ:

ՔԵՐՈԲ – Իսկ դու տեսե՞լ ես մի հետախույզ, որ ձեռ-քին թերթ չունենա: Ընդունված է:

(Նրանք իջնում, խորհրդավոր երաժշտության տակ գաղտագողի մոտենում են լրտեսի դռանը: Ականջ են դնում):

ՁԱՅՆ – (Դռան հետևից:) Հա՛, հա՛, հա՛, հա՛… (Քրքջում է:)

ՍԵՐՈԲ – Վա՛յ, մամա՛ ջան…

ՁԱՅՆ – (Ավելի ուժգին:) Հա՛, հա՛, հա՛, հա՛…

ՍԵՐՈԲ – Փախչենք, Քերո՛բ ջան, խելագար է…

1–ԻՆ ՁԱՅՆ – Ա՛՛, պարո՛ն սպա, հարգանքներս…

2–ՐԴ ՁԱՅՆ – Լսի՛ր, հիմա՛ր, ես քեզ համար այստեղ պարոն չեմ, այլ՝ ընկեր…

1–ԻՆ ՁԱՅՆ – Ներեցե՛ք, բայց այստեղ ոչ ոք չկա: Մի՞թե մենք միայնակ չենք:

2–ՐԴ ՁԱՅՆ – Միևնույն է: Այստեղ պատերն էլ ականջ ունեն:

ՍԵՐՈԲ – Վ… վա՛յ, դրանց պատերն էլ ականջ ունեն… Ա՛խ, հա՛…

ՔԵՐՈԲ – Լ…լսո՛ւմ ես… (Կակազելով:) Դ…դու ճիշտ էիր… Ներսում մեկն էլ կա: Ե…երևի գ…գաղտնի դռնից է ներս մտել…

ՍԵՐՈԲ – Մ…մտե՛լ է…

2–ՐԴ ՁԱՅՆ – Հասկանո՞ւմ ես, սիրելի՛ բարեկամ, ես այստեղ հատուկ հանձնարարությամբ եմ եկել, հատուկ…

ՍԵՐՈԲ – Տեսա՞ր, ա… ասաց՝ հ…հատուկ…

2–ՐԴ ՁԱՅՆ – Այնպես որ անմիջապես կապվիր կա-յանի հետ, շտա՛պ…

1–ԻՆ ՁԱՅՆ – Լա՛վ, լա՛վ… «Վա՛գր, վա՛գր, դու ինձ լսո՞ւմ ես, վա՛գր: Ա–4–ն է, հաղորդում է Ա–4–ը»:

ՔԵՐՈԲ – Տե՛ս, է՛, ապարատ էլ ունի… Հիմա մենք ինչ գաղտնիք ունենք, կհաղորդի թշնամուն…

ՍԵՐՈԲ – Վա՛խ, վա՛խ, քարտեզի մասի՞ն էլ…

ՔԵՐՈԲ – Ի՞նչ քարտեզ, ա՛յ տղա:

ՍԵՐՈԲ – Աշխարհագրական… որ ես ու դու պատռե-ցինք… Այսինքն՝ թշնամուն ոչինչ, մենակ թե ընկեր Բա-դալյանին չհայտնի…

ՔԵՐՈԲ – (Չի կարողանում զսպել ծիծաղը:) Վա՛յ, Սերո՛բ, ոնց որ տատդ է ասում՝ բոյդ թաղեմ, Սերո՛բ… Ես պետական գաղտնիքների համար եմ անհանգստանում, իսկ դու…

ՍԵՐՈԲ – Չէ՛, տատս ասում է՝ բոյիդ մեռնեմ…

ՔԵՐՈԲ – Դե հա, էլի, մեռնել, թաղել, նույն բանը չի՞… Հիմա ի՞նչ անենք…

1–ԻՆ ՁԱՅՆ – «Վա՛գր, վա՛գր, ընդունիր, տասներկու աստիճան, գնա՛, աստղ, կարիճ, մատիտ, վահան: Կրկ-նիր, կրկնիր նշանաբանը…»:

ՍԵՐՈԲ – (Ուրախացած:) Վրե՛ժ… տեսա՞ր ոնց հիշե-ցի… Լսի՛ր, Քերոբ, կարող է պատահել, որ նրանց նշա-նաբանն էլ «Վրեժ» լինի: Դուռը ծեծենք, ասենք «Վրեժ» ու ներս մտնենք:

ՔԵՐՈԲ – Նրանք էլ կասեն՝ «Ստացիր» ու վզակոթիդ տալով՝ դուրս կանեն: Բա՛ն ասացիր…

ՍԵՐՈԲ – Քերո՛ւբ, Քերո՛ւբ… Ես չեմ վախենում, ուզո՞ւմ ես հենց հիմա… Ես, մենակ գնամ ու միլիցիոներ կանչեմ…

(Քերոբը ուզում է ինչ–որ բան ասել, բայց հենց նույն րոպեին բացվող փականքի ձայն է լսվում: Նրանք հետ են նետվում դռնից):

ՔԵՐՈԲ – Շո՛ւտ, շո՛ւտ, ի՛նչ անենք, դուրս են գալիս, ի՛նչ անենք, որ չմտածեն, թե իրենց ենք հետևում:

ՍԵՐՈԲ – Արի՛ հավալլա խաղանք:

ՔԵՐՈԲ – Ա՛յ տղա, քո վրայով թռչե՞լ կլինի… Որ այդքան թռչեի, հիմա չեմպիոն էի դարձել:

ՍԵՐՈԲ – Դու կռացիր, ես թռչեմ…

(Քերոբը կռանում է, Սերոբը սկսում է թռչել, չի կարողանում, ընկնում է: Դուրս են գալիս երկու հոգի: Մեկը մեզ ծանոթ դերասանն է՝ կաշվե վերարկուով և կաշվե կեպիով, մյուսը կաշվե բաճկոնակով: Երկուսի ձեռքին էլ փոքրիկ ճամպրուկներ կան):

ԴԵՐԱՍԱՆԸ – (Շարունակելով ինչ–որ խոսակցություն:) Ես գո՛հ եմ, այնուամենայնիվ, ես գոհ եմ:

ՄՅՈՒՍԸ – Միայն թե չձախողվի: Անցյալ անգամ չե՞ս հիշում՝ քիչ էր մնում տապալվեինք… Եթե ես չթրխկացնեի…

ԴԵՐԱՍԱՆ – Դե, գիտե՞ս ինչ, ես պարտավոր չեմ ամեն ինչի մասին մտածել: Ղեկավարություն կա: Ես ի՛նչ մեղավոր եմ, որ վերջին վայրկյանին ատրճանակը չկրակեց… դանակո՞վ կրակեի, ի՛նչ է…

ՄՅՈՒՍԸ – Հա՛, հա՛, զենքի հարցում շատ ենք խեղճանում…

ՔԵՐՈԲ – (Դեռ կռացած:) Լ…լսո՛ւմ ես…

ՍԵՐՈԲ – Ու…ուզում եմ փախչել, բայց ոտքերս չեն փախչում…

(Դերասանը նկատում է Քերոբին):

ԴԵՐԱՍԱՆ – Օ՛, ողջո՛ւյն, իմ պատանի՛ բարեկամ: Ինչպե՞ս ես… (Ծանոթացնում է իր ուղեկցին:) Սա իմ հարևան Քերոբն է, նրա օգնությամբ ես այս հիանալի տունը վարձեցի:

ՄՅՈՒՍԸ – Ահա թե ինչ, ապրե՛ս, տղա՛ս… Այդ ի՞նչ է, հավալլա՞ եք խաղում…

ՔԵՐՈԲ – (Ուղղվում է:) Հա՛…

ԴԵՐԱՍԱՆ – Նա էլ քո ընկե՞րն է, Քերո՛բ: Անունդ ի՞նչ է, երիտասա՛րդ…

ՍԵՐՈԲ – Ս…Ս…Ս…երոբ, պարո՛ն… Ս…Ս…

ՄՅՈՒՍԸ – (Ծիծաղում է:) Պարո՞ն…

ԴԵՐԱՍԱՆ – (Զարմացած:) Ինչո՞ւ հանկարծ պարոն… (Քերոբին:) Հայրենադա՞րձ է…

ՔԵՐՈԲ – (Ուրախացած:) Այո՛, քեռի՛, հենց նոր է եկել Հալեպից…

ՄՅՈՒՍԸ – Սիրելի՛ Սերոբ, այստեղ պարոններ չկան… Պարոնները մնացին Հալեպում: Այստեղ մենք բոլորս էլ ընկերներ ենք, հասկացա՞ր… Ընկերներ…

ՔԵՐՈԲ – Ասա՝ հասկացա՛…

ՍԵՐՈԲ – (Շշնջալով Քերոբին:) Իսկ Հալեպում ասո՞ւմ են՝ հասկացա…

ՔԵՐՈԲ – (Շշունջով:) Ճիշտն ասած՝ չգիտեմ: Ոչի՛նչ, դու ասա «աղեկ»:

ՍԵՐՈԲ – Աղե՛կ… Պա… Ընկերներ…

ԴԵՐԱՍԱՆ – Ապրե՜ս… մի՛ հուսահատվիր, Սերո՛բ, շատ արագ կսովորես… Դե գնացինք, Մանվե՛լ: Ավտոմեքենան սպասում է: Լսո՞ւմ ես ազդանշանը:

ՍԵՐՈԲ – Վրե՛ժ…

ՄՅՈՒՍԸ – Ի՞նչ…

ՔԵՐՈԲ – Ոչի՛նչ, ոչի՛նչ, քեռի՛, Սերոբն ուղղակի նոր–նոր բառեր է սովորում, ուրախանում է:

ՄՅՈՒՍԸ – Հա՛: Դե, ցտեսությո՛ւն, տղանե՛ր…

ԴԵՐԱՍԱՆ – Ուրեմն երեկոյան ժամը յոթին՝ Ողջաբերդում…

ՄՅՈՒՍԸ – Ա՛խ, միայն թե հաջող անցներ…

ԴԵՐԱՍԱՆ – Դու կտեսնես, կտեսնես, թե ինչպես կպայթի դահլիճը…

ՄՅՈՒՍԸ – Տա՛ Աստված…

(Լսվում է հեռացող ավտոմեքենայի հռնդոց):

ՍԵՐՈԲ – Չվազե՛մ հետևներից… (Պոկվում է տեղից:) Դրանց հերն եմ անիծել… Ես դրանց ցույց կտամ…

ՔԵՐՈԲ – Որ բռնես, հա՛… Ինձ մոտ վազի:

ՍԵՐՈԲ – Ինչի՞, Քերո՛ւբ ջան:

ՔԵՐՈԲ – Ինձ մոտ վազի, ասո՛ւմ եմ…

ՍԵՐՈԲ – (Վազելով մոտենում է:) Ի՞նչ ես ասում, Քերո՛ւբ ջան…

ՔԵՐՈԲ – (Բարձրանում է ոտքերի ծայրերին ու ձեռքի լրագրով խփում է նրա գլխին:) Ասում եմ, որ դու անհուսալի դմբո ես, որ դու աշխարհի ամենաբթամիտ արարածն ես: Ասում եմ, որ դու հավի ուղեղ ունես, ասում եմ, որ դու փորձանք ես իմ գլխին…

ՍԵՐՈԲ – Դո՛ւ ես… դո՛ւ ես… դո՛ւ ես… դո՛ւ ես… Ինչ որ ասես, դո՛ւ ես…

ՔԵՐՈԲ – Սուտ բան է, արդեն վեց տարի է, գիտեմ քեզ, Սերո՛բ, և դու, ա՛յ, այսքան չես աճել…

ՍԵՐՈԲ – Ես չեմ աճել, հլա մի քեզ նայիր…

ՔԵՐՈԲ – Ինչո՛ւ ասացիր պարոն, հիմարի՛ մեկը:

ՍԵՐՈԲ – Լեզվիցս թռավ…

ՔԵՐՈԲ – Վրեժն էլ լեզվիցդ թռավ…

ՍԵՐՈԲ – Ո՞ր Վրեժը… Ա՛խ, հա՛… Բա ի՞նչ անեի, ինքն ասաց՝ նշանաբանը:

ՔԵՐՈԲ – Ի՞նչ նշանաբան, նա ազդանշան ասաց:

ՍԵՐՈԲ – Մեկ չի՞:

ՔԵՐՈԲ – (Հուսահատ տարածում է ձեռքերը:) Մե՛կ է…

ՍԵՐՈԲ – Տեսնո՞ւմ ես…

ՔԵՐՈԲ – Սրիկաներ, ուրեմն այսօր պայթեցնելու են դահլիճը…

ՍԵՐՈԲ – Հա՛, Ոչխարաբերդի…

ՔԵՐՈԲ – Ոչխարը դու ես… Ողջաբերդի…

ՍԵՐՈԲ – Մեկ չի՞…

ՔԵՐՈԲ – Բա ի՞նչ անենք, հը՞, ո՞նց խանգարենք… Ո՞նց ջրի երես հանենք դրանց:

ՍԵՐՈԲ – Ի՞նչ ջուր, ես լողալ չգիտեմ, Քերո՛բ ջան, կխեղդվեմ…

ՔԵՐՈԲ – Փոխաբերական իմաստով եմ ասում…

ՍԵՐՈԲ – Ա՛խ, հա՛…

ՔԵՐՈԲ – (Նորից հուսահատ տարածում է ձեռքերը:) Դե՛ լավ, լա՛վ, գնանք դպրոց, պատմենք ընկեր Լալայանին, Հրանտին, տղաներին, տեսնենք՝ ինչ խորհուրդ

են տալիս… Առանց նրանց, միևնույն է, լրտեսին բռնել չենք կարող, չի լինի…

ՍԵՐՈԲ – Պետք չէ, Քերո՛բ ջան… թող մե՛նք հերոսներ դառնանք, էլի, թող մեր մասին պատի թերթում գրեն, էլի… Այս անգամ ոչ մի ձայն չեմ հանի, ինչ ասես՝ կլսեմ: Երկուսով գնանք, էլի… Աղե՛կ…

ՔԵՐՈԲ – Քե՛զ հետ: Ես արդեն կուշտ եմ, կո՛ւշտ…

ՍԵՐՈԲ – Կո՛ւշտ, էդ ե՛րբ կերար, որ ես չտեսա… Իսկ ես սովից մեռնում եմ, Քերո՛բ ջան…

ՔԵՐՈԲ – Փոխաբերական իմաստով եմ ասում, ա՛յ տղա…

ՍԵՐՈԲ – Ա՛խ, հա՛… Ո՛նց ես էդ դասից փախա…

(Մթություն):

Պատկեր երրորդ

(Առաջին պատկերի դեկորները: Ավելացել են միայն գույնզգույն փուչիկներ, թղթե նոր սերպանտիններ: Այստեղ–այնտեղ կախված են կենդանիների նկարներ… Աշխույժ եռուզեռ է բեմի վրա: Վերջին նախապատրաստություններն են: Արագ, գործնական քայլելով ներս է մտնում Լալայանը):

ԼԱԼԱՅԱՆ – Հրա՛նտ…

ՀՐԱՆՏ – (Դահլիճից վերև է բարձրանում:) Լսո՛ւմ եմ, ընկե՛ր Լալայան…

ԼԱԼԱՅԱՆ – Կարո՞ղ ենք սկսել փորձը:

ՀՐԱՆՏ – Կտոր–կտոր:

ԼԱԼԱՅԱՆ – Սիրելի՛ Հրանտ, մինչև ե՛րբ կտոր–կտոր, վաղը Նոր տարվա հանդեսն է:

ՀՐԱՆՏ – Ի՞նչ անեմ, ընկե՛ր Լալայան, ես հո կտոր–կտոր չեմ լինելու, Ձմեռ պապին չկա, Ձյունանուշիկը…

ԼԱԼԱՅԱՆ – Դու Ձմեռ պապիի համար մի՛ անհանգստանա, ես պայմանավորվել եմ, նա ճիշտ ժամին կգա: Իսկ Ձյունանուշիկը որտե՞ղ է…

(Կուլիսներից ուժգին փռշտոց է լսվում):

ՀՐԱՆՏ – Այստեղ է…

ԼԱԼԱՅԱՆ – Անմիջապես տուն ուղարկիր, թող մոշի մուրաբայով տաք թեյ խմի և պառկի: Վաղը նրա փռշտոցը չլսեմ: Պա՞րզ է:

(Նորից փռշտոց է լսվում):

ՀՐԱՆՏ – Պա՛րզ է:

ԼԱԼԱՅԱՆ – Իսկ հիմա ի՞նչ կարող ենք դիտել:

ՀՐԱՆՏ – Նոր պար… Այս անգամ՝ վրացական… Սկսե՞նք:

ԼԱԼԱՅԱՆ – Սկսե՛ք:

ՀՐԱՆՏ – (Ձայն է տալիս:) Ցոլա՛կ…

(Անմիջապես հայտնվում է պարի խումբը: Նրանք վրացական մի կրակոտ պար են կատարում):

ԼԱԼԱՅԱՆ – (Ծափահարում է:) Ապրե՛ք, հիանալի է… Հաջորդը…

ՀՐԱՆՏ – Ընկե՛ր Լալայան, մեր Կարինեն է ուզում ելույթ ունենալ…

ԼԱԼԱՅԱՆ – Ուզում է երգե՞լ, պարե՞լ, թե՞ արտասանել:

ՀՐԱՆՏ – Չէ՛, այս անգամ ուզում է հանելուկներ ասել…

ԼԱԼԱՅԱՆ – Կարինե՛, ինչ հանելուկներ են, դո՛ւ ես հորինել, թե՛ էլի Սերոբի նման…

ԿԱՐԻՆԵ – Ի՞նչ եք ասում, ընկե՛ր Լալայան, ե՛ս եմ հորինել:

ԼԱԼԱՅԱՆ – (Դահլիճին:) Երեխանե՛ր, ես համոզված եմ, որ մենք իսկույն կգտնենք Կարինեի հանելուկների պատասխանները: Լսո՛ւմ ենք, Կարինե՛:

ԿԱՐԻՆԵ – Էն ինչն է, ինչը՝

Սպիտակ է ու անհամ, բայց քար չի,
Մատներիդ մեջ կհալչի…

ՁԱՅՆԵՐ – Կարկո՛ւտը, կարկո՛ւտը…

ԼԱԼԱՅԱՆ – Տեսա՞ր՝ երեխաները կռահեցի՞ն, Կարինե՛:

ԿԱՐԻՆԵ – Ո՛չ, իմ ասածը 13 կոպեկանոց պաղպաղակն է:

(Ծիծաղում են):

ԼԱԼԱՅԱՆ – Ուրի՞շ:

ԿԱՐԻՆԵ – Էն ինչն է, ինչը՝

Գարնանը ցանում են, աշնանը հնձում…

ՁԱՅՆԵՐ – Ցորե՛նը, ցորե՛նը…

ԿԱՐԻՆԵ – Չէ՛, վերաքննությունները:

(Ծիծաղ):

ԼԱԼԱՅԱՆ – Նման է, հետո՞…

ԿԱՐԻՆԵ – Էն ինչն է, ինչը.

Ոտքեր ունի՝ չի վազում, գլուխ ունի՝ չի շարժում…

ՁԱՅՆ – Արձա՛նը:

ԿԱՐԻՆԵ – Չէ՛, ծույլ աշակերտը:

(Ծիծաղ):

ԼԱԼԱՅԱՆ – Ճիշտ է: Ուրի՞շ:

ԿԱՐԻՆԵ – Էն ինչն է, ինչը՝

Ինքը փքված, մեջը՝ փուչ…

ՁԱՅՆ – Գնդակը…

ԿԱՐԻՆԵ – Չէ՛, մեր դպրոցական բուֆետում վաճառվող պոնչիկը:

(Ծիծաղ):

ԼԱԼԱՅԱՆ – Ա՛յ քեզ հանելուկ: Երևում է՝ դպրոցական բուֆետների թեման քեզ շատ է հուզում: Ուրիշ ի՞նչ կասես…

ԿԱՐԻՆԵ – Էն ինչն է, ինչը՝

Աման ունեմ մի պուճուր, մեջը երկու գույնի ջուր…

ՁԱՅՆԵՐ – Ձո՛ւն, ձո՛ւն…

ԿԱՐԻՆԵ – Կոկտեյլը:

(Ծիծաղ):

ԿԱՐԻՆԵ – Եվ վերջինը՝ էն ինչն է, ինչը՝

Չորս եղբայր են, ամբողջ տարին իրար հետևից ման են գալիս…

ՁԱՅՆԵՐ – Տարվա եղանակները…

ԼԱԼԱՅԱՆ – Այդ հո իսկույն կռահեցին…

ԿԱՐԻՆԵ – Չէ՛, ընկե՛ր Լալայան, դարձյալ չկռահեցին, ամբողջ տարին իրար հետևից ման եկող եղբայր-

ներն են անբաժան ծույլ ընկերներ Սերոբը, Քերոբը, Սամվելը և Մանվելը:

(Ներս են մտնում Սերոբն ու Քերոբը):

ՍԵՐՈԲ, ՔԵՐՈԲ – (Իրենց անունները լսելով:) Ներկա՛…

ԿԱՐԻՆԵ – Վա՛յ, բա որտե՞ղ են Սամվելն ու Մանվելը:

ՍԵՐՈԲ – Հարգելի պատճառով հիվանդ են…

ՀՐԱՆՏ – Իհարկե, հենց որ պետք է լինում հասարակական կարգով աշխատանք կատարել, նրանք անմիջապես հարգելի պատճառով հիվանդանում են:

ՔԵՐՈԲ – Հրա՛նտ, ընկե՛ր Լալայան, ես ձեզ հետ պետական կարևոր, խիստ գաղտնի գործ ունեմ:

ՍԵՐՈԲ – Մենք… լրտես…

ՔԵՐՈԲ – Լռի՛ր…

ԼԱԼԱՅԱՆ – Մի կողմ քաշվեք, ժամանակ գտաք… Հիմա ի՞նչ համար է կատարվելու, Հրա՛նտ:

ՀՐԱՆՏ – Հիմա կատարվելու է պարերգ… (Ձայն է տալիս:) Ցոլա՛կ, Նունե՛…

(Կատարվում է համարը):

ՔԵՐՈԲ – Երանի՛ ձեր հավեսին, Հրա՛նտ, երգում ու պարում եք, չիմանալով, թե ինչ է կատարվում աշխարհում:

ՀՐԱՆՏ – Իսկ ի՞նչ է կատարվում:

ՍԵՐՈԲ – Լրտես, Հրա՛նտ… Վրե՛ժ…

ՔԵՐՈԲ – Լռի՛ր, ասում եմ: Հրա՛նտ ջան, ընկե՛ր Լալայան, ամենայն լրջությամբ եմ ասում, վե՛րջ տվեք այս… այս անլուրջ երգ ու պարին: Երեխաներին պար–մարն ինչի՞ է պետք, ամեն մեկին իր տոպրակը տվեք, թող գնան… Իրենց համար երգեն ու պարեն:

ԼԱԼԱՅԱՆ – Այս տղային էլի ինչ–որ բան է պատահել…

ՔԵՐՈԲ – Այո՛, պատահել է, լրտես… Եվ ոչ թե մեկը, այլ երկուսը…

ՀՐԱՆՏ – Օ՛ֆ, երկու հատ արկածային գիրք է կարդացել, կրակն ենք ընկել ձեռքը, աչքին ամեն տեղ լրտեսներ են երևում…

ՔԵՐՈԲ – Սերո՛բ, խոսի՛ր, ես պայթում եմ…

ՍԵՐՈԲ – (Վախեցած։) Վա՛յ, ինչի՞ ես պայթում…

ՔԵՐՈԲ – Փոխաբերական իմաստով եմ ասում, ա՛յ տղա, պատմիր…

ՍԵՐՈԲ – Լրտես… Լրտեսներ… Այսօր երեկոյան Ոչխարաբերդի դահլիճը պայթեցնելու են…

ՔԵՐՈԲ – Ողջաբերդի, ոչխա՛ր, Ողջաբերդի…

ԼԱԼԱՅԱՆ – Ոչինչ չհասկացա։ Ի՞նչ ոչխար։ Ինչ է պատահել, մի կարգին բացատրեք։

ՔԵՐՈԲ – Ասեմ, ասեմ… Ուրեմն, Հրա՛նտ ջան, ընկե՛ր Լալայան, մի քանի օր առաջ մեր շենքի բակում կանգնած էի…

(Ինչ–որ երաժշտություն է հնչում։ Գուցե փողային նվագախումբը գա ու անցնի բեմով։ Նրա ձայնը խլանում է։ Միայն ձեռքերն են շարժում, Սերոբին վկա է բերում ու բացուխուփ է անում բերանը։ Երբ նվագն ավարտվում է, լսվում է նրա վերջին ռեպլիկը)։

…Ասաց, որ այս երեկո կպայթեցնեմ… Հիմա, ասում եմ, երկուսով դժվար է, եկե՛ք բոլորս միասին նախօրոք գնանք ու հենց հանցանքի վայրում բռնենք այդ լրտեսներին…

ՍԵՐՈԲ – Ու… Ու… Պատի թերթում կգրեն մեր մասին, չէ՞…

ՀՐԱՆՏ – (Ծիծաղում է:) Այդքան միամիտ լրտեսներ առաջին անգամ եմ տեսնում:

ՔԵՐՈԲ – Իբր թե խորամանկ լրտեսների շա՛տ ես տեսել… Եթե մենք չլինեինք…

ԼԱԼԱՅԱՆ – Հա՛, բայց ինչո՞ւ են դահլիճը պայթեցնում…

ՍԵՐՈԲ – Գ…գուցե ուրիշ հարմար բան չեն գտել: Ճիշտ չէ՞, Քերո՛բ…

ԼԱԼԱՅԱՆ – Վե՛րջ տվեք, տղանե՛ր, դա ծիծաղելի է և անհեթեթություն է: Կամ ինչ–որ մեկի տգեղ կատակը: Ինչ–որ մեկը հավանաբար ուզում է ձեզ…

ՀՐԱՆՏ – Հիմարի տեղ դնել…

ՍԵՐՈԲ – Հիմարի՞, փոխաբերակա՞ն իմաստով:

ՀՐԱՆՏ – Չէ՛, ինչո՞ւ, ուղղակի՛ իմաստով…

ՔԵՐՈԲ – Փոխաբերական իմաստով կլիներ՝ ֆռռացնել, հասկացա՞ր…

ՍԵՐՈԲ – Աղե՛կ… (Գլխով է անում:)

ՔԵՐՈԲ – Ի՞նչ աղեկ, ա՛յ տղա, աղեկ նշանակում է լավ:

ՍԵՐՈԲ – Լավ, բա հիմա լրտեսներին ի՞նչ անենք:

ԼԱԼԱՅԱՆ – Ձե՛ռք քաշեք, տղանե՛ր, ձե՛ռք քաշեք… Լուրջ բանով զբաղվեք: Ներկելու ահագին գործ կա…

ՔԵՐՈԲ – (Հանդիսավոր:) Կներե՛ք, ընկե՛ր Լալայան, բայց իմ խիղճն ու պարտքը ինձ թույլ չեն տալիս տիկնիկներ ներկելով զբաղվել, երբ մի ամբողջ գյուղի գլխին վտանգ է կախված: Չեք գալիս, միևնույն է, մենք կգնանք:

ՍԵՐՈԲ – Հա՛: Բայց էդ Ոչխարաբերդը որտե՞ղ է:

ՀՐԱՆՏ – Ողջաբե՞րդը... Ավտոբուսով տասնհինգ րոպեի ճանապարհ է դեպի Գառնի:

ՔԵՐՈԲ – Կներե՛ս, Հրա՛նտ, բան չունեմ ասելու, գե-րազանցիկ ես, բայց քեզնից երբեք հետախույզ դուրս չի գա: Ավտոբուսով ինչպե՞ս գնանք: Մեկ էլ տեսար այդ լրտեսները հենց նույն ավտոբուսի մեջ են: Մեզ որ տես-նեն՝ ի՞նչ կանեն... Դու ասա, ոտքո՛վ ինչպես գնանք: Դեպի հյուսի՞ս, թե՞ դեպի հարավ...

ՀՐԱՆՏ – (Ծիծաղը հազիվ զսպելով:) Դեպի արևելք: Դե որ վճռել եք, եկե՛ք, եկե՛ք, պատուհանից ցույց տամ: (Բերում է բեմեզրի մոտ:) Տեսնո՞ւմ եք այն շենքը...

ՍԵՐՈԲ – Հա՛, ես տեսա, ես տեսա...

ՀՐԱՆՏ – Դա գաջի գործարանն է: Ա՛յ, այդ գործա-րանի կողքին մի փոքրիկ արահետ կա, որն ավելախո-տի դաշտի միջով Ողջաբերդ է տանում: Բայց նորից եմ ասում, տղե՛րք, մի՛ գնացեք, մարդկանց մի՛ ծիծաղեցրեք ձեզ վրա...

ՔԵՐՈԲ – Դեռ կտեսնենք, թե ով ում վրա կծիծաղի, Հրա՛նտ... Դու ուղղակի վախենում ես...

ՍԵՐՈԲ – Ու երբ որ մենք... երբ որ մենք հերոս դառ-նանք, չ... չզարմանաս... դ...դու գնա՛, գնա՛ ներկի... ու... փուչիկ... փչի...

ԼԱԼԱՅԱՆ – Չեղավ, չեղավ, ժամանակը քիչ է: Հա-ջորդ համարը, Հրա՛նտ...

ՀՐԱՆՏ – Հաջո՞րդը... Հիմա ստուգենք ծրագիրը... (Լալայանի հետ ծրագիրն են նայում ու անձայն զրու-ցում են):

ՔԵՐՈԲ – Լսի՛ր, Սերո՛բ, տանն ո՞վ կա:

ՍԵՐՈԲ – Ոչ ոք:

ՔԵՐՈԲ – Պապա՞ն:

ՍԵՐՈԲ – Աշխատանքի է:

ՔԵՐՈԲ – Մամա՞ն:

ՍԵՐՈԲ – Հիվանդ է: Հիվանդանոցում է:

ՔԵՐՈԲ – Հիանալի է:

ՍԵՐՈԲ – Վա՜յ, ի՞նչն է հիանալի… Որ մաման հիվանդանոցո՞ւմ է… Փոխաբերակա՞ն իմաստով ես ասում, թե՞ ուղղակի…

ՔԵՐՈԲ – Ներողությո՛ւն, եղբա՛յր, շփոթվեցի: Ուզեցի ասեմ, որ հարմար է: Ուրեմն հենց հիմա շտապ գնա տուն, տանը ուտելու ինչ կա–չկա, լցրո՛ւ մի պայուսակի մեջ ու արի…

ՍԵՐՈԲ – Ի՞նչ…

ՔԵՐՈԲ – Ինչ կա–չկա՝ հաց, պանիր, երշիկ, պահածոներ… Եթե թթու կա, թթու էլ բեր, ախորժակ է բացում…

ՍԵՐՈԲ – Ո՛նց թե, էլ տուն չենք վերադառնալո՞ւ… Կծեծե՞ն…

ՔԵՐՈԲ – Վերադառնալու ենք, Սերո՛բ ջան, բայց վերադառնալու ենք որպես հերոսներ, պանծալի զավակներ, խիզախ հետախույզներ: Այդ ժամանակ ո՞ր ծնողը կնախատի կամ կծեծի իր հերոս որդուն՝ մի փոքր կտոր հաց ու պանրի համար…

ՍԵՐՈԲ – Իսկ ձեր տանը բան չկա՞, ի՞նչ է…

ՔԵՐՈԲ – Կա, Սերո՛բ ջան, ինչո՞ւ չկա, դեռ մի բան էլ ավելին, պապ կա, տատ կա, հորաքույր կա… Նրանք հենց ինձ տեսնում են, փակում են բոլոր պահարանների

դռները: Դե էլ ժամանակ չկորցնենք, ժամանակը ոսկի է, ինչպես ասում է ընկեր Լալայանը:

Ես քեզ կսպասեմ գաջի գործարանի մոտ: Կողմնացույցը չմոռանաս…

(Հրանտը ականջի ծայրով լսում է նրանց և խոսակցությունը շարունակում Լալայանի հետ):

ՀՐԱՆՏ – Շատ չէ, երկու ժամով մի ավտոբուս, ընկեր Լալայան, շատ եմ խնդրում:

ԼԱԼԱՅԱՆ – Հետաքրքիր տղա ես, Հրանտ, վաղը չէ մյուս օրն արդեն ուրախ տոնածառն է, գործերը կիսատ–պռատ, իսկ դու քեզ համար խաղ ես հորինում:

ՀՐԱՆՏ – (Խնդրելով:) Ընկեր Լալայան…

ԼԱԼԱՅԱՆ – Իսկ մեր այն կատակ–պարոդիան ճրբ եք փորձելու:

ՀՐԱՆՏ – Հենց տեղում էլ կփորձենք, ընկեր Լալայան… Հենց տեղում…

(Լալայանը հուսահատ ծիծաղելով համաձայնվում է):

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Պատկեր չորրորդ

(Գրեթե ամայի մի վայր: Մացառներ ու թփեր, մերկ ժայռեր, եթե ձյունոտ տարի է՝ եղյամով ծածկված: Քերոբը անհանգիստ հետ ու առաջ է քայլում: Հայտնվում է Սերոբը՝ ուսապարկով: Երաժշտությունը դետեկտիվ թեման է կրկնում):

ՔԵՐՈԲ – Վերջապես եկա՛ր:

ՍԵՐՈԲ – Հա՛…

ՔԵՐՈԲ – Գնո՛ւմ ենք:

ՍԵՐՈԲ – (Առույգ:) Գնում ենք:

ՔԵՐՈԲ – Տո՛ւր այստեղ կողմնացույցը…

ՍԵՐՈԲ – Չգտա, Քերո՛ւբ ջան:

ՔԵՐՈԲ – Չգտա՞… Այնպես էլ հանգիստ ասում ես: Հիմա ի՞նչ ենք անելու, հը՞: Առանց կողմնացույցի ո՞նց ենք գնալու, հը՞… դմբո՛:

(Ամեն «հը»–ի հետ քաշում է նրա կոճակից):

ՍԵՐՈԲ – Դե դու էլ ինչ ես՝ հը՛, հա հը… Էսքան ուտելու բան եմ բերել… Նույնիսկ որսորդական երշիկ եմ բերել…

ՔԵՐՈԲ – Ուտե՞լն ինչ կապ ունի, ա՛յ տղա, որսորդական երշիկը հո որսորդական շուն չէ, որ ճամփա ցույց տա…

ՍԵՐՈԲ – (Վիրավորված:) Է՛, հա՛, դրա՞ մեջ ինչ կա: Դեպի արևմուտք պետք է գնանք, չէ՞:

ՔԵՐՈԲ – Արևելք:

ՍԵՐՈԲ – Մեկ չի՞: Ես առանց կողմնացույցի էլ ցույց կտամ: Շատ լավ հիշում եմ. որպեսզի իմանաս, թե որտեղ է արևելքը, պետք է դեմքով կանգնես դեպի հյուսիս և ձեռքերդ աջ ու ձախ պարզես… աջ ձեռքդ ցույց կտա արևելքը:

ՔԵՐՈԲ – Տո՛, որսորդակա՛ն երշիկ… Դեպի հյուսիս դեմքով կանգնելու համար նախ և առաջ հյուսիսի տեղը պիտի իմանա՞ս, թե՞ չէ: Դու հյուսիսի տեղը գիտե՞ս:

ՍԵՐՈԲ – (Խեղճացած:) Ճիշտ որ, ո՛նց չէի մտածել… Վա՛յ, սպասի՛ր, Քերո՛ւբ ջան, արևելք–արևմուտքն ո՞ւմն է

պետք: Հրանտն ասաց՝ էս արահետը ուղիղ Ոչխարաբերդ է տանում, չէ՞…

ՔԵՐՈԲ – Չէ՛:

ՍԵՐՈԲ – Բա ո՞ւր:

ՔԵՐՈԲ – Ողջաբերդ…

ՍԵՐՈԲ – Օ՛ֆ, լավ էլի, Քերո՛բ, դու էլ ոնց որ ֆուտբոլի հաղորդավար լինես, մի բանը հարյուր անգամ կրկնում ես: Երկուստեք, հա երկուստեք…

ՔԵՐՈԲ – Դե լավ, գնացինք, Սերո՛բ: (Նայում է շուրջը:) Հարկավոր է շուտ տեղ հասնել և զգուշացնել ողջաբերդցիներին, դահլիճը չպետք է խորտակվի…

ՍԵՐՈԲ – Այո՛… Քերո՛բ, որ լրտեսներին բռնենք, մեզ մի–մի հեծանիվ կտան, չէ՞:

ՔԵՐՈԲ – Ի՞նչ հեծանիվ, ա՛յ տղա, ամեն մեկիս մի–մի «Վոլգա» կնվիրեն…

ՍԵՐՈԲ – Ավտո՞…

ՔԵՐՈԲ – Չէ, գնա՛… Իհարկե, ավտո, կբերեն ու ժապավենով կապած կնվիրեն մեզ: Ժապավենի վրա գրված կլինի՝ «Քերոբին և Սերոբին, վտանգավոր թշնամիներին վնասազերծելու համար»: Գո՞հ ես:

ՍԵՐՈԲ – (Երազկոտ:) Գո՛հ եմ… Ա՛յ թե նախանձից կտրաքի Հրանտը:

ՔԵՐՈԲ – Ուրեմն, առա՛ջ:

ՍԵՐՈԲ – Առա՛ջ… (Մի քանի քայլ են անում: Եվ հանկարծ Սերոբը ինչ–որ բան է վերցնում գետնից:) Վա՛յ, շիշ… շիշ…

ՔԵՐՈԲ – Ինչ է, մտադիր ես խանութ հանձնել և ստանա՞լ քսան կոպեկը…

ՍԵՐՈԲ – Մեջը բան կա, Քերո՛բ… Խցանով փակված է, բայց մեջը բան կա:

ՔԵՐՈԲ – Տուր տեսնեմ… (Վերցնում է, շուռումուռ է տալիս, նայում, գրպանից հանում է դանակը, բացում պտուտակահանը:) Հիմա կբացենք, կտեսնենք…

ՍԵՐՈԲ – (Ճչում է:) Վա՛յ, մի՛ արա, բա որ միջից «Բաղդադի գողը» կինոնկարի նման մի հսկա դուրս գա, ի՞նչ պատասխան կտանք:

ՔԵՐՈԲ – (Ծիծաղում է:) Ա՛խ, դու հետամնաց և հետամնացներից ամենահետամնացը: Քո գիտելիքները հո միայն կինոներից են: Սա գիտե՞ս ինչ է, գիտե՞ս… Երբ նավը խորտակվում է, խեղդվողները իրենց անունները գրում են, դնում մի այսպիսի շշի մեջ ու գցում ծովը, որպեսզի հետո մարդիկ գտնեն, կարդան ու հասկանան, թե ինչ է եղել…

ՍԵՐՈԲ – (Փռթկացնում է:) Էստեղ իսկի մի աղբյուր չկա, որ ջուր խմենք: Ո՞վ պիտի էս քարերի մեջ խեղդվի:

ՔԵՐՈԲ – Ու այդ խելքով էլ ուզում ես հետախո՛ւյզ դառնալ: Ուրեմն մինչև հիմա չգիտես, որ առաջ բոլոր մայրցամաքները ջրի տակ են եղել, և հենց այս արահետով հավանաբար հարյուրավոր առագաստանավեր են անցել: Հիմա մենք կպարզենք այս խորհրդավոր շշի գաղտնիքը:

(Խցանահանով հանում է խցանը):

ՍԵՐՈԲ – Վա՛յ, մամա՛ ջան… (Բղավելով ընկնում է գետնին ու փակում ականջները: Պայթյունի է սպասում, բայց զգալով, որ ձայն չկա, շրջվում, բացում է աչքերը,

նայում է վեր, հետո Քերոբին, որը չոփով մի թուղթ է հանում ու կարդում:)

ՔԵՐՈԲ – «Ես՝ անգլիացի ծովագնաց Հարրի Պետերսոնս, որ գնում էի շրջագայելու՝ հանուն բրիտանական կայսրության փառքի և տեսնելու, թե ինչ կա, ինչ չկա աշխարհում, նավաբեկության ենթարկվեցի: Մեր նավը խորտակվում է: Ցտեսությո՛ւն»:

ՍԵՐՈԲ – Ա՛յ քեզ բան:

ՔԵՐՈԲ – Ցտեսությո՛ւն... Իսկական անգլիական սառնասրտություն... Ա՛յ քեզ հերոս, խեղդվում է, բայց լաց լինելու փոխարեն ասում է՝ ցտեսություն:

ՍԵՐՈԲ – Քերո՛բ ջան, մի տո՛ւր այդ թուղթը:

ՔԵՐՈԲ – Ինչո՞ւ:

ՍԵՐՈԲ – Տուր նայեմ, էլի, հո չկերա... (Վերցնում է, շուռումուռ է տալիս:) Մի բան ասեմ, բայց էլի դմբո չասես, հա՞, Քերո՛բ ջան... Խնդրում եմ, դմբո՛ չասես, ո՛չ փոխաբերական, ո՛չ էլ ուղղակի իմաստով:

ՔԵՐՈԲ – Ասա՛, Սերո՛բ...

ՍԵՐՈԲ – Բա էդ անգլիացին ո՞նց է հայերեն գրել:

ՔԵՐՈԲ – Հայերե՞ն, մի՞թե ես հայերեն կարդացի, ինձ թվաց, թե անգլերեն էի կարդում: Տարօրինակ է... Ա՛խ, հա՛, էլի...

ՍԵՐՈԲ – Հը՛...

ՔԵՐՈԲ – Մեր հայերենը շատ հին լեզու է, Սերո՛բ, և շատ հավանական է, որ այդ անգլիացին հայերեն իմանար: Մի տեղ կարդացել եմ, որ անգլիացի մեծ բանաստեղծ Բայրոնն էլ է հայերեն իմացել:

ՍԵՐՈԲ – Ցա՛...

ՔԵՐՈԲ – Իհարկե… (Մի քանի քայլ է անում, կռանում, ինչ–որ բան է վերցնում գետնից։) Ահա, խնդրեմ, մի ապացույց ևս, որ այստեղ ծով է եղել…

ՍԵՐՈԲ – Էլի՞ շիշ է…

ՔԵՐՈԲ – Ո՛չ, ձկան կմախք… Ափսո՜ս, որ ժամանակը մեզ չի հասցրել այս ձկան գլուխը, Սերո՛բ, դա մեզ շատ բան կտար։ Եվ այնուամենայնիվ, թեև մենք ստույգ չենք կարող որոշել այս ձկան տարիքը, բայց մի բան պարզ է, որ սա ձուկ է. դա մեկ։ Երկրորդ. այս ձուկն ասում է, որ այստեղ ծով է եղել…

ՍԵՐՈԲ – Ո՞վ է ասում… Էդ անգլուխ ձուկը ո՞նց խոսեց հետդ։

ՔԵՐՈԲ – Փոխաբերական իմաստով եմ ասում, դմբո՛։ Ներողություն… (Նա հոտ է քաշում կմախքից։) Բախտի ինչպիսի՛ խաղ, հասկանո՞ւմ ես, այս ձուկն ապրել է մեզանից դարեր առաջ, լողացել է իր համար ու մտքով բոլորովին չի անցել, որ մի օր, որպես անցյալի լուռ վկա, կհայտնվի իմ ձեռքին… Այո՛, Սերո՛բ, պատկերացնո՞ւմ ես, դարեր են անցել, բայց այս բրածո ձկան հոտը դեռ մնում է, տե՛ս… (Սերոբին է մեկնում կմախքը։ Սերոբը հոտ է քաշում։)

ՍԵՐՈԲ – Ա՛խ, երանի՛ ես կերած լինեի, ի՛նչ հոտ է…

ՔԵՐՈԲ – (Կռանում, մի կմախք էլ է վերցնում։) Ահա մի ապացույց ևս… Ահա՛, ահա՛, էլի մի ապացույց…

ՍԵՐՈԲ – Դե գրո՛ղի ծոցը քո այդ ապացույցները… Ապացույցներ են, թող իսկական ձկներ լինեն, թող փափուկ մսերը վրան լինեն, թե չէ կրծած ոսկորներ ես գտնում և ուրախանում ոնց որ… ոնց որ…

ՔԵՐՈԲ – Ոնց որ շունը, հա՛… Դե ա՛ռ քեզ… (Ձեռքի կմախքները նետում է Սերոբի վրա։)

ՍԵՐՈԲ – Պա՛հ, էս էլ քե՛զ… (Բարձրացնում է ձեռքը, որպեսզի առաջին ապացույցը նետի ընկերոջ վրա, բայց այդպես էլ կանգ է առնում բարձրացրած ձեռքով։ Աչքերը սարսափ են արտահայտում, ծնոտը դողում է։) Վա՛յ, վա՛յ… վա՛յ…

ՔԵՐՈԲ – (Զարմացած նրան է նայում, ապա նրա հայացքի ուղղությամբ հետ է նայում ու ծնկները ծալվում են, մրմնջում է։) Վայրենինե՛րը…

(Բարձր քարի վրա կանգնած է դարչնագույն դեմք ունեցող, կարճահասակ մի մարդ՝ աջ ձեռքին երկար նիզակ։ Մազերը՝ սև, խառնիխուռն, գլխին ցցված փետուրներ։ Դարչնագույն դեմքը նաև ներկված է սպիտակ շերտերով և դաժանություն է արտահայտում)։

ՍԵՐՈԲ – (Մի փոքր քարի հետևում պառկած։) Տ… տեսնես տեսե՞լ է մ… մեզ…

ՔԵՐՈԲ – Ո…ոնց ո…որ չէ… փ…փախչենք…

ՍԵՐՈԲ – Ի…իսկ որ տ…տեսնի մ…մեզ, կ… կուտի՞…

ՔԵՐՈԲ – Ի…ինչ իմանաս, ն…նայած թե վ… վայրենիները ո՛ր ցեղին են պատկանում։ Գ…գուցե չու…չուտողներից է… Վա՛յ…

(Անտառի կողմից թմբուկի ձայն է լսվում՝ հետզհետե ուժեղանալով։ Հայտնվում է թմբկահարը։ Նա հագնված է ճիշտ առաջին վայրենու նման, նիզակի փոխարեն գոտուց կախված է երկար դանակ։ Ձեռքերի ափերով հարվածում է տամ–տամին, գորտի կռկռոցի նման ինչ–որ ձայներ է հանում ու հետն էլ պարում անճոռնի)։

ՍԵՐՈԲ – Վա՜խ, մամա՛ ջան, սրանք ուտողներից կլինեն:

(Լսվում է սարսափելի մի ճիչ):

ՁԱՅՆ – Oհայո՛, կիո՛, կիո՛…

ՍԵՐՈԲ – Ի՞նչ է ասում, ի՞նչ է ասում, Քերո՛բ ջան…

(Միանգամից հայտնվում են բազմաթիվ վայրենիներ, սկսվում է մի անճոռնի պար: Վայրենիները գալարվում են, ցնցվում են, հետո միանգամից բոլորը բարձրացնում են իրենց զենքերը):

ՁԱՅՆԵՐ – Oհայո՛, կիո՛–կիո՛… Մո՛ւմբո… մո՛ւմբո–դո՛ւմբո…

ՔԵՐՈԲ – Չէ՛, սրանք մեզ հում–հում կուտեն…

ՍԵՐՈԲ – Քերո՛բ ջան, ցավդ տանեմ, դու գրքեր շատ ես կարդացել, իրենց լեզվով ասա՝ հանձնվում ենք, հանձնվում ենք…

(Վայրենիները հանկարծ, միահամուռ գոռալով, ձեռքերը մեկնում են դեպի Քերոբն ու Սերոբը):

ՔԵՐՈԲ – Մեզ տեսան, փախի՛ր, Սերո՛բ… Մինչև բացատրեմ, կուտեն…

ՍԵՐՈԲ – Փախի՛ր, Քերո՛բ ջան, թե ողջ մնանք, կհանդիպենք դպրոցում…

(Փախչում են սարսափահար, վայրենիները փորձում են շրջապատել, բայց նրանք գոռալով փախչում են):



Մարիամ Մանասյան, 7 տ.

Պատկեր հինգերորդ

(Փակ վարագույրի կամ նախավարագույրի առաջ, մինչ փոխում են դեկորները և վերականգնվում է տոնածառի բեմը, տարբեր մուտքերից, սրտապատառ վազելով, հայտնվում են Սերոբն ու Քերոբը: Հետ–հետ նայելով վազում են, բախվում իրար ու սարսափում են):

ՍԵՐՈԲ – Վա՛յ, մամա՛ ջան, հանձնվում եմ… հանձնվում եմ… Վայրենի՛ ջան…

ՔԵՐՈԲ – Սերո՛ւբ, ախպե՛ր ջան, ուշքի՛ արի, ես եմ…

ՍԵՐՈԲ – Քերո՞ւբ, ո՞ղջ ես… Քո վայրենիներն ո՞ւր են… (Գրկախառնվում են:)

ՔԵՐՈԲ – Շա՛տ գիտեմ… Թե հիմա ձեռքս կընկնե՛ին… Ուր էր, ուր էր հիմա հայտնվեին…

ՍԵՐՈԲ – Պետք չէ, Քերո՛ւբ ջան, հանկարծ կլսեն, կգան:

ՔԵՐՈԲ – Բայց դրանց հերը լավ անիծեցինք, չէ՞, ինչ արեցին՝ չկարողացան մեզ բռնել…

ՍԵՐՈԲ – Տո՛, նրանք ո՞վ էին, որ մեզ բռնեն: Մեզ բռնե՞լ կլիներ… Մենակ թե ափսոս, որ այնտեղ մոռացա պայուսակս… Տանն ի՞նչ պատասխան եմ տալու՝ չեմ իմանում, սևս կտան…

ՔԵՐՈԲ – Բայց ասացիր մամադ տանը չի, չէ՞…

ՍԵՐՈԲ – Է՛հ, Քերո՛ւբ ջան, մայրիկիս բացակայության ժամանակ հայրիկս լիովին փոխարինում է նրան:

ՔԵՐՈԲ – Հա՛, լավ չէր, որ ես էլ շիշը մոռացա… Հիմա ո՞ւմ պատմես, ո՞վ կհավատա, որ նավաբեկության են-

թարկված ծովագնաց Հարրի Պետերսոնի նամակն ենք գտել, ապացույցներ ենք գտել, որ նախկինում գաջի գործարանի մոտ ծով է եղել… Ո՞վ կհավատա, որ վայրենիների ենք հանդիպել…

ՍԵՐՈԲ – Էհ, ինչ անուն կհանեինք, եթե չլինեին այդ անիծյալ վայրենիները, չէ՞… Ա՛խ, շատ չէ, թե մի հրացան լիներ, ես դրանց ցույց կտայի «Կիո՛, կիոն»: Էդ ո՛նց էին գոռում…

ՔԵՐՈԲ – Շատ վախեցա՛ր, Սերո՛բ…

ՍԵՐՈԲ – Չէ հա՛… (Քերոբը ծիծաղելով նայում է նրան:) Մենակ վերջում: Երբ որ ինձ նայեցին ու գոռացին, ինձ թվաց, թե իմ սեփական խորովածի հոտն առա…

ՔԵՐՈԲ – Պատկերացնում եմ, թե քո նիհար մսից, ինչ գարշահոտ խորոված կլիներ…

ՍԵՐՈԲ – (Վիրավորվում է:) Բա քո՞ մսից, բա քո՞ մսից, կզզվեին, քեզ իսկի չէին էլ մոտենա…

ՔԵՐՈԲ – Ի՞նչ, ի՞նչ, ո՞ւմ չէին մոտենա…

ՍԵՐՈԲ – Հենց քեզ:

ՔԵՐՈԲ – Վա՛յ, ինչի՞…

ՍԵՐՈԲ – Որովհետև սիրտները կխառներ, երևի հենց դրա համար էլ մեզ ձեռք չտվեցին: Քո միսն ուտե՞լ կլինի:

ՔԵՐՈԲ – Ո՞ւմ միսը, ո՞ւմ… Էդ ինչի՞ ուտել չի լինի… Ուրեմն իմ միսը քո մսի չափ էլ չկա՞…

ՍԵՐՈԲ – Իհարկե…

ՔԵՐՈԲ – Վա՛յ, հիմա ես քեզ…

ՍԵՐՈԲ – Չմոտենաս, կկծեմ… (Քաշքշում են իրար):

ՔԵՐՈԲ – Էդ ինչ ես անում, վայրենիներից բա՛ն սովորեցիր:

ՍԵՐՈԲ – Բա՛ց թող, լա՛վ, քո միսն ավելի համով է, լա՛վ, թող քեզ ուտեն… Պրծա՛նք…

ՔԵՐՈԲ – Ա՛յ, այդպե՛ս… Օ՛ֆ, հոգնեցի…

ՍԵՐՈԲ – Օ՛ֆ, ես էլ:

ՔԵՐՈԲ – Հա, բայց ի՞նչ ենք անելու, լրտեսների հերն էլ անիծած, ես համոզված եմ, որ մերոնք, միևնույն է, կբռնեն, գիտե՞ս՝ ինչ հետախույզներ ունենք:

ՍԵՐՈԲ – Շտիրլիցը՞…

ՔԵՐՈԲ – Այո՛, հանգիստ մնա… Բայց թե ընկեր Լա-լայանին, Հրանտին ո՞նց համոզենք, որ գնացել, եկել ենք: Կծիծաղեն մեզ վրա…

(Հայտնվում է մի ծերունի՝ ուսին երկու ավել):

ԾԵՐՈՒՆԻ – Ավե՛լ, ավե՛լ…

ՍԵՐՈԲ – (Վեր է թռչում:) Թյո՛ւ, վախեցա, ինձ թվաց, թե էլի վայրենիներն են:

ԾԵՐՈՒՆԻ – Ավե՛լ, ավե՛լ…

ՔԵՐՈԲ – Ըհը՛, մեր փրկությունը իր ոտքով եկավ:

ՍԵՐՈԲ – Ո՞վ:

ՔԵՐՈԲ – Ով չէ, ինչ՝ ավելը:

ՍԵՐՈԲ – Ուզում ես կախարդ պառավի նման վրան նստես ու թռչե՞ս, Քերո՛ւբ: Բա ե՞ս:

ՔԵՐՈԲ – Վա՛յ, չմեռնես դու, Սերո՛ւբ, մի ավել էլ դու վերցրու…

ՍԵՐՈԲ – Ա՛խ հա, փոխաբերակա՞ն իմաստով:

ՔԵՐՈԲ – (Ձայն է տալիս:) Ավե՛լ, ավե՛լ, այստեղ արի… (Ծերունին շուրջն է նայում:) Ավե՛լ, ավե՛լ, արի՛ այստեղ, արի՛… (Ծերունին մոտենում է:)

ԾԵՐՈՒՆԻ – Ի՞նձ հետ ես:

ՔԵՐՈԲ – Հա՛:

ԾԵՐՈՒՆԻ – Տղա՛ ջան, ասենք թե քո ձեռքին հիմա մի հավ լիներ, ես քեզ պիտի ասեի՝ լսում եմ, հա՛վ ջան, ի՞նչ ես ասում…

ՍԵՐՈԲ – (Քրքջում է:) Վա՛յ, վա՛յ, էս ի՛նչ ծանր օր էր քեզ համար, հա՛վ ջան…

ՔԵՐՈԲ – (Ինքն էլ է ծիծաղում:) Գնդակը ցանցի մեջ է: Մեկ–զրո՝ հօգուտ ձեզ, քեռի՛: Ինձ մի հատ ավել չե՞ք տա:

ԾԵՐՈՒՆԻ – Ա՛ռ, տղա՛ ջան… (Քերոբը վերցնում է:)

ՔԵՐՈԲ – Շնորհակալությո՛ւն:

ԾԵՐՈՒՆԻ – Ավել–պակասը կներես: (Հեռանում է:) Ավե՛լ, ավե՛լ…

ՔԵՐՈԲ – Հա՛, վայ, մոռացա, քեռի՛, քեռի՛, էս ավելը որտեղի՞ ավել է:

ԾԵՐՈՒՆԻ – Ողջաբերդի:

ՍԵՐՈԲ – Պա՛հ…

ՔԵՐՈԲ – Քեռի՛ ջան, շատ եմ խնդրում, էդ մի ավելն էլ ինձ տվեք և ուղիղ տուն գնացեք, հա՞:

ԾԵՐՈՒՆԻ – Ինչի՞:

ՔԵՐՈԲ – Ձեր գյուղի ղեկավարությանը զգուշացրեք, որ երեկոյան ժամը յոթին թշնամիները փորձելու են պայթեցնել ձեր դահլիճը:

ԾԵՐՈՒՆԻ – (Ծիծաղում է:) Վա՛յ, օյինբա՛զ, օյինբա՛զ, ով որ մեր դահլիճը պայթեցնի, բարեկամ կլինի: Ո՞ւր էր թե պայթեցնեին, որ տեղը նորը սարքեին…

ՔԵՐՈԲ – Լուրջ եմ ասում, քեռի՛: Դու զգուշացրու, էլի՛, քեզանից ի՞նչ է գնում: Իսկ որ լրտեսներին բռնեք, կասես, որ Քերոբն էր ասել քեզ:

ՍԵՐՈԲ – Եվ Սերոբը:

ԾԵՐՈՒՆԻ – Լա՛վ, տղե՛րք ջան, ինձ մի ասել է հասնում, կասեմ… Ծիծաղում են, թող ծիծաղեն… (Գնում է:) Ավե՛լ, ավե՛լ… Վա՛յ, էլ ինչի՞ եմ գոռում, երբ որ ավել չունեմ… Անտեր սովորություն…

ՍԵՐՈԲ – Ո՛ւֆ, լրտեսներից էլ պրծանք… Իսկ, Քերո՛բ ջան, էդ ավելներն ինչո՞ւ առար, ուզում ես բեմը մաքրե՞նք:

ՔԵՐՈԲ – Քո ուղեղը պետք է մաքրել, քո ուղեղը, Սերո՛բ ջան, սա ապացույց է, որ մենք Ողջաբերդ ենք հասել ու հետ եկել: Հասկացա՞ր… Դե հիմա գնացինք:

Պատկեր վեցերորդ

(Վարագույրը բացվում է: Սերոբն ու Քերոբը մտնում են բեմ ու մնում են քարացած: Բեմում ոչ ոք չկա: Ուղիղ մեջտեղում մի ցուցանակի վրա խոշոր տառերով գրված է. «Ողջույն քաջ հետախույզներ Քերոբին ու Սերոբին», իսկ վահանակից կախված է Սերոբի ուսապարկը):

ՔԵՐՈԲ – Վա՛յ:

ՍԵՐՈԲ – Ուսապարկս… Որսորդական երշիկը… (Մոտենում են. տախտակին փակցված են նաև կեսլիտրանոց շիշը, անգլիացի ճանապարհորդի ճմռթված նամակը, Քերոբի գլխարկը, աքաղաղի փետուրներ և մի երկար թուղթ:)

ՔԵՐՈԲ – (Մոտենում է, կարդում է։) «Ցուցահանդես՝ նվիրված Քերոբի և Սերոբի հետախուզական գործունեությանը»։ Էս ի՞նչ բան է, Սերո՛բ…

ՍԵՐՈԲ – Բ…բան չեմ հ…հասկանում… (Նույն րոպեին հնչում է տամ–տամի որոտը, լսվում են ճիչ–աղաղակներ, և բեմը լցվում է վայրենիներով։)

ՁԱՅՆԵՐ – Օհայո՛, կիո՛–կիո՛, մումբո՛–դումբո՛… (Վայրենիները պարում են, առաջ են մեկնում նիզակները, որ խորովածի սովորական շշեր են, ճչում են, շրջապատում Քերոբին ու Սերոբին և վայրենի աղաղակներով շարունակում պար գալ։)

ՍԵՐՈԲ – Վա՛յ, մամա՛ ջան, մենք շրջապատված ենք… Հանձնվում ենք, մենք ձերոնցից ենք… Ես էլ եմ վայրենի, հայ եմ, սպիտակ վայրենի եմ… Օհայո՛, կիո՛–կիո՛, մումբո՛–դումբո՛… ցումբո…

ՔԵՐՈԲ – Ձա՛յնդ կտրի, սպիտա՛կ վայրենի, դեռ չհասկացա՞ր… (Վայրենիներից մեկը հանում է դիմակը և դիմակի տակից երևում է Հրանտի դեմքը։)

ՀՐԱՆՏ – Օհայո՛, կիո՛–կիո՛… Մումբո՛, Քերո՛բ, Դումբո՛, Սերո՛բ…

ՍԵՐՈԲ – (Ուրախացած։) Վա՛յ, մերոնք են, էս Հրանտն է… Ա՛խ, Հրա՛նտ ջան, բայց ի՞նչ վայրենի ես…

(Ծիծաղելով ներս է մտնում Լալայանը)։

ԼԱԼԱՅԱՆ – Դե, բավական է, բավական է, վե՛րջ տվեք… Թեև պետք է ասեմ, որ կատակ–համարը լավ ստացվեց…

ՔԵՐՈԲ – Ստացվե՞ց, հա՞, բա ձեր արածն արած է, հա՞։ Սա, ընկե՛ր Լալայան, հակամանկավարժական արարք է։ Բա որ սիրտներս ճաքեր…

ՍԵՐՈԲ – Հա՛, հա՛, իմը կարծես թե արդեն մի քիչ ճաքել է… չխկչխկոցի ձայն է գալիս:

ՔԵՐՈԲ – Փոխաբերակա՛ն…

ՍԵՐՈԲ – Ախ, հա՛…

ԼԱԼԱՅԱՆ – Սիրելի՛ Քերոբ և սիրելի՛ Սերոբ, ես սկզբից դեմ էի, բայց հետո մտածեցի, որ ճիշտ են ձեր դասարանցիները: Խոստովանեք, որ նրանց նկատմամբ անարդար եք դուք: Ախր ինչի՞ է նման: Ինչ որ կազմակերպում են, դուք չեք մասնակցում: Ինչ լավ ու ազնիվ բան անում են, դուք ծաղրի եք ենթարկում: Չի կարելի այդպես, տղանե՛ր ջան: Ամեն ինչ անում եք, որպեսզի խուսափեք ձեր ընկերների, ընկերուհիների հետ լինել: Ամեն անգամ մի անհեթեթ բան եք հորինում, և նույնիսկ դասերը թողած՝ զբաղվում դրանով: Հենց հիմա ուրախ տոնածառի առիթով մի՞թե չէիք կարող մի հետաքրքիր բան մտածել, զվարճացնել երեխաներին: Չէ՞ որ դուք հիանալի, նույնիսկ չափազանց վառ երևակայություն ունեք: Միայն թե հարկավոր է ճիշտ ու խելացի օգտագործել այդ երևակայությունը և ոչ թե ինչպես այսօր, ընկնել երևակայական լրտեսների հետևից:

ՀՐԱՆՏ — Էդ ավելնե՞րն ինչի համար են, տղե՛րք:

ՍԵՐՈԲ – Ավելնե՞րը… Ավելնե՛րը… Մենք Ոչխարաբերդի, այսինքն՝ Ողջաբերդի էն բանում՝ դաշտում հավաքեցինք… Ասացինք՝ մաքրենք բեմը… Ավլենք…

ՀՐԱՆՏ – Հա՛, ի՛նչ էլ լավ կապել եք:

ՔԵՐՈԲ – Լա՛վ, պետք չէ, Սերո՛ւբ, պետք չէ… Ընկե՛ր Լալայան, ի՞նչ ասեմ, ինչ որ ասացիք, ճիշտ էր: Որ մի սխալ բան ես անում, դժվար է լինում հետ կանգնելը,

սխալները իրար հետևից գլորվելով գալիս են: Լավ: Հայրիկս ասում է՝ տղամարդը չպետք է երդվի. մի բան, որ ասաց, պիտի անի: Դրա համար էլ ես չեմ երդվում: Ուղղակի հավատացե՛ք, որ սրանից հետո…

ԼԱԼԱՅԱՆ – Սրտանց հավատում եմ, Քերո՛բ:

ՔԵՐՈԲ – Միայն մի բան. լրտեսների մասին ինչ որ ասացինք, ճիշտ էր, բայց մենք արդեն զգուշացրել ենք:

ՀՐԱՆՏ – Էլի սկսեցիր…

ՔԵՐՈԲ – Դե լավ, դա հետո կերևա… Իսկ հիմա ասացեք՝ ի՞նչ անենք, ինչ որ ասեք, կանենք: Փուչիկ փչե՞նք…

ԼԱԼԱՅԱՆ – Իսկ դուք որևէ սրամիտ բան չե՞ք կարող մտածել…

ՔԵՐՈԲ – Հիմա Սերոբի հետ կմտածենք… Հը՞, Սերո՛բ…

ՍԵՐՈԲ – Հը՛մ, ինձ մենակ մտածելու բան տվեք…

ՀՐԱՆՏ – Ընկե՛ր Լալայան, լա՛վ, բա ի՞նչ անենք, Ձմեռ պապին այդպես էլ չեկավ: Առանց Ձմեռ պապիի և Ձյունանուշի ի՞նչ Նոր տարի… Գոնե մի անգամ փորձեինք…

ԼԱԼԱՅԱՆ – Կգան, կգան, մի՛ անհանգստացի… Հիմա փորձելու ուրիշ ի՞նչ ունեք…

ՀՐԱՆՏ – Իր զենք ու զրահով մեզ է սպասում աճապարարը:

ԼԱԼԱՅԱՆ – Հրավիրի՛ր… Իսկ ես գնամ ու նորից զանգահարեմ Ձմեռ պապիին:

(Հրանտը ձեռքի շարժումով հրավիրում է աճպարարին, հաղորդում նրա անուն– ազգանունը: Սա գալիս է և սկսում է վարժություններ կատարել՝ օղակներով ու գնդակներով: Նախքան նրա հանդես գալը, Քերոբը

մոտ է կանչում Հրանտին, ինչ–որ բան է ասում: Հրանտը ծիծաղում է):

ՀՐԱՆՏ – Քերո՛ւբ ջան, հիանալի կլինի… Վա՛յ, Սերո՛ւբ ջան, ի՛նչ լավ բան եք մտածել: Փորձե՛ք:

(Քերոբն ու Սերոբը շտապ հեռանում են: Աճպարարի ելույթից հետո Հրանտին է մոտենում Ցոլակը):

ՑՈԼԱԿ – Պատրաստ է նաև մեր վերջին պարը: Սկսե՞նք:

ՀՐԱՆՏ – Սկսե՛ք, Ցոլա՛կ ջան:

(Ներս են մտնում պարողները և կատարում որևէ ազգային պար: Նրանց հեռանալուց հետո բեմը դատարկվում է: Որևէ պատրվակով բեմից հեռանում է նաև Հրանտը: Հնչում է մեղմ մի երաժշտություն և բեմ է մտնում Ձմեռ պապին: Ավելի ճիշտ՝ նրա հագուստով, կեղծամով ու գրիմով Քերոբը: Ձմեռ պապի Քերոբի ուսից կախված է նվերներով պարկը):

ՔԵՐՈԲ – (Ուսից ցած է բերում պարկը:) Օ՛հ, շատ հոգնեցի, ծերացել եմ… (Իբր նոր միայն նկատում է դահլիճի երեխաներին:) Օ՛, բարև՛ ձեզ, սիրելի՛ երեխաներ… Դուք ինձ էիք սպասում, հա՞: Ներողություն, որ ուշացա: Շատ ներողություն: Բայց, հավատացեք, ես այնքան էլ մեղավոր չեմ: Նախ՝ ծերացել եմ, ձեզ նման թեթևությամբ չեմ կարող շարժվել: Եվ հետո մի պատճառ էլ կա: Ինչպես գիտեք, ես գալիս եմ ծայր հյուսիսից, հավերժական սառույցների ու ձյան աշխարհից: Առաջ այդ վայրերում գրեթե մարդիկ չէին ապրում, և երեխաներ չկային, որ սպասեին ինձ, ու ես էլ նվերներ բաժանեի նրանց: Եվ ես այդ ամբողջ հսկայական տարածությունը

առանց կանգ առնելու էի անցնում: Իսկ հիմա ինքներդ էլ գիտեք, ամեն տեղ՝ «Հյուսիսային բևեռ» կայանից սկսած՝ կառուցվել են հարյուրավոր նոր քաղաքներ, նոր ավաններ, գործարաններ, հիդրոկայաններ, էլ չեմ խոսում Բայկալ–Ամուրյան հսկայական մայրուղու շինարարության մասին: Եվ ամեն տեղ ձեզ նման փոքրիկներ կան... Մի՞թե ես կարող էի անտարբեր անցնել նրանց կողքով: Իհարկե, չէի կարող: Դե, մինչև որ մի քիչ զրուցեցի նրանց հետ, բաժանեցի Նոր տարվա նվերները, մի փոքր ուշացա... Հա՛, չմոռանամ ասել, որ մի քիչ էլ Ձյունանուշիկն ուշացրեց. մրսել է ճանապարհին, խռպոտել է ձայնը: Բայց ի՞նքն ինչ եղավ, ձեզ մոտ հարավ է, տաք, հանկարծ հալված չլինի՞: (Ձայն է տալիս. «Ձյունանուշի՛կ, Ձյունանուշի՛կ... Լսվում է փռշտոց և բեմում հայտնվում է Սերոբը՝ Ձյունանուշիկի զգեստով, կեղծամով ու գրիմով: Նորից է փռշտում:) Առողջությո՛ւն, Ձյունանուշի՛կ:

ՍԵՐՈԲ – Շնորհակալությո՛ւն, պապի՛:

ՔԵՐՈԲ – Տեսնո՞ւմ ես՝ որքան երեխաներ են հավաքվել ու սպասում են մեզ: Ողջունի՛ր նրանց, Ձյունանուշի՛կ:

ՍԵՐՈԲ – (Թռչկոտելով Ձմեռ պապիի շուրջը՝ երգում է, կամաց–կամաց մոտենում բեմեզրին:)

Ես թիթեռ եմ, ոսկեթև եմ,
Թռչկոտում եմ, ա՛յ այսպես,
Ծաղիկներից հոտ եմ քաշում,
Բույր եմ առնում, ա՛յ այսպես:

Իսկ Ալիկը, չար բալիկը,
Երբ ուզում է ինձ բռնել,
Ես թռչում եմ, ես փախչում եմ…
Թեթև, թեթև, ա՛յ այսպես,
Ես թռչում եմ, ես փախչում եմ
Թեթև, թեթև, ա՛յ այսպես…

ՔԵՐՈԲ – Սիրելի՛ աղջիկ, դու, ինչպես միշտ, շփոթեցիր, երևի շոգից պտտվում է գլուխդ, դու թիթեռնիկ չես, դու Ձյունանուշիկ ես, ուրեմն Ձյունանուշիկի երգը երգիր…

ՍԵՐՈԲ – Ախ, հա՛…

Ես ընկնում եմ երկնքից,
Սպասում են բոլորն ինձ,
Ես փխրուն եմ ու քնքուշ,
Իմ անունն է Ձյունանուշ:

Վերջին երկու տողը միասին կրկնում ենք.

Ես փխրուն եմ ու քնքուշ,
Իմ անունն է Ձյունանուշ:

Ես ծածկում եմ սար ու ձոր
Փափուկ ձյունով սպիտակ,
Որ հարթ լինի ամենուր
Մանուկների ոտքի տակ:

Վերջին երկու տողը միասին կրկնում ենք:

Որ հարթ լինի ամենուր
Մանուկների ոտքի տակ:

Հիմա վերջին՝ երրորդ տունը.

Առեք դահուկ ու մական,
Սղղացեք, նսփեք սահնակ,
Մեղք եք, դասերը կգան,
Էլ չեք գտնի ժամանակ:

Վերջին երկու տունը կրկնում ենք…

ՔԵՐՈԲ – Սպասե՛ք, չկրկնե՛ք, մեր Ձյունանուշիկը երևի տաքության մեջ է, զառանցում է… Ո՞նց թե՝ մե՛ղք եք, դասերը կգա՛ն: Դասերը գազա՛ն են, պատի՛ժ են, ինչ են…

ՍԵՐՈԲ – Այսինքն՝ ճիշտը որ ասեմ… լեզվիցս թռավ: Պետք է լինի՝

Մեկ էլ դասերը կգան,
Էլ չեք գտնի ժամանակ…

ՔԵՐՈԲ – Ա՛յ, դա ուրիշ է… Ձյունանուշի՛կ, ապրե՛ս… Իսկ հիմա, սիրելի՛ երեխաներ, ես ձեզ փորձնական ձևով մի քանի նվերներ կբաժանեմ: Տեսնենք՝ ինչպես է ստացվում… Ձեզ խելոք պահեք, չաղմկեք, իրարից չփախցնեք, ձեր ձեռքերն ինձ չմեկնեք… և չմոտենաք ինձ: Ես ի՛նքս կմոտենամ… Ձյունանուշի՛կ, գնացի՛նք:

ՍԵՐՈԲ – Վախենո՛ւմ եմ…

ՔԵՐՈԲ – Մի՛ վախեցիր, անուշի՛կս, նրանք քեզ չեն ուտի… Նրանք քո իմացածներից չեն… (Թաքուն:) Իսկ եթե պետք լինի, վազելու քո ընդունակություններն հո ինձ հայտնի են: Գնացի՛նք: (Մեջտեղի կամրջակով իջնում են դահլիճ: Տոպրակը բռնել է Ձյունանուշիկը: Մոտենում են որևէ շարքի:)

ՍԵՐՈԲ – Պապի՛, պապի՛, ա՛յ այս թոռնիկները խելոք են երևում…

ՔԵՐՈԲ – Հիմա կպարզենք: Անուշի՛կ թոռնիկներ, միայն թե անկեղծորեն. ո՞վ է ձեր միջի ամենալավ սովորողը: Ձեզանից ո՞վ է գերազանցիկ… դո՛ւ, ի՛մ դստրիկ…

ԱՂՋԻԿ – Այո՛:

ՔԵՐՈԲ – Ապրե՛ս, ապրե՛ս, ոչ մի չորս չունե՞ս:

ԱՂՋԻԿ – Ո՛չ:

ՍԵՐՈԲ – Նվերը տա՛մ:

ՔԵՐՈԲ – Երբե՛ք: Եթե գերազանցիկ է, ծնողներն էլ նրա համար նվեր կառնեն: Մենք ինչո՞ւ պետք է նվեր տանք: Աչքիս լույսը չի: (Մոտենում է մի ուրիշ խմբի:) Սիրելի՛ բալիկներ, վարքից ի՞նչ թվանշան ունեք:

ՁԱՅՆԵՐ – Հի՛նգ, հի՛նգ…

ՔԵՐՈԲ – Ուրեմն դասերից չե՞ք փախչում, դասերին չե՞ք աղմկում, ծույլ չե՞ք, պատերին չե՞ք խզբզում, համեստ ու կարգապահ ե՞ք:

ՁԱՅՆԵՐ – Այո՛, այո՛…

ՍԵՐՈԲ – Բաժանե՞մ նվերները:

ՔԵՐՈԲ – (Երեխաներին:) Ապրե՛ք, ապրե՛ք… (Սերոբին, բայց բնականաբար, բարձր:) Նվերը նրանց ինչի՞ն է պետք, եթե առանց այդ էլ խելոք ու համեստ են: Նվերը, սիրելի՛ Զյունանուշիկ, գուցե թե փչացնի նրանց: Մեկ էլ տեսար մեծամտացան… Գործ չունենք:

ՍԵՐՈԲ – Բայց վերջապես ո՞ւմ պետք է տանք: Այստեղ բոլորն էլ, ցավոք սրտի, այսինքն՝ որքան էլ տարօրինակ լինի, կարծես թե խելոք ու կարգապահ են:

ՔԵՐՈԲ – Մեկն անպայման կգտնվի… Հույսդ չկտրես… (Որոնում է, մոտենում է բավականին անփույթ հագնված, խռիվ մազերով, անհանգիստ շարժումներով մեկին, որ դերասաններից մեկը պետք է լինի։) Սա կարծես թե հարմար է։ Բարև՛, սիրելի՛ փոքրիկ…

ՏՂԱՆ – Ասենք թե՝ բարև…

ՔԵՐՈԲ – Ահա, մոտեցումն արդեն հաճելի է, բնական… Ինչպե՞ս ես սովորում, գերազանցի՞կ ես։

ՏՂԱՆ – Ինչ է, էլ բան ու գործ չունե՞մ։

ՔԵՐՈԲ – Ուրեմն՝ հարվածայի՞ն ես։

ՏՂԱՆ – Հա՛, բայց դհոլի վրա եմ հարվածում։

ՔԵՐՈԲ – Ծխո՞ւմ ես, բալի՛կ ջան։

ՏՂԱՆ – Ո՛չ։

ՔԵՐՈԲ – Չարություն անո՞ւմ ես։

ՏՂԱՆ – Ո՛չ։

ՔԵՐՈԲ – Աղջիկների մազերից չե՞ս քաշում։

ՏՂԱՆ – Ո՛չ։

ՔԵՐՈԲ – Մեծերին լսո՞ւմ ես, հարգո՞ւմ ես ծնողներիդ։

ՏՂԱՆ – Այո՛։

ՔԵՐՈԲ – Վա՜յ, ա՛յ տղա, ուրեմն դու ոչ մի թերություն չունե՞ս։

ՏՂԱՆ – Ունեմ, միայն մեկը։

ՔԵՐՈԲ – Ահա, հետաքրքիր է, և ի՞նչ թերություն է դա։

ՏՂԱՆ – Ստախոս եմ։

ՍԵՐՈԲ – Ինչպես թե, ուրեմն այդ բոլոր ասածներդ…

ՔԵՐՈԲ – Ուրեմն ստախոս ես, հա՛… Հաճելի է լսելը… Ձյունանուշի՛կ, ես քեզ ասում էի, չէ՞, որ հույսդ մի՛ կտրի։ Հանի՛ր ամենալավ նվերը… Այս բալիկն ինձ դուր եկավ։

ՏՂԱՆ – Իհարկե, դուրդ կգամ, որովհետև հենց ինքդ ես ստախոս… Տղե՛րք ջան, բռնե՛ք դրանց, չե՞ք տեսնում, որ սրանք կեղծ մարդիկ են: Բա այսպիսի Ձյունանուշի՞կ կլինի, ոնց որ ծտերին վախեցնելու համար տնկված խրտվիլակ լինի: Բա այսպիսի Ձմեռ պապի՞ կլինի, որ գերազանցիկներին ու խելոք բալիկներին նվեր չի տալիս և ծույլերին ու ստախոսներին է գովում: Բռնե՛ք դրանց…

ՍԵՐՈԲ – Վա՛յ, մամա՛ ջան, ես փախա… (Թռիչքներ գործելով սլանում է բեմ:)

ՔԵՐՈԲ – Հանգի՛ստ, հանգի՛ստ, թոռնի՛կս… Մորուքիս ձեռք չտաս, իմ սեփականն է:

ՏՂԱՆ – Հիմա կտեսնենք՝ սեփակա՞ն է, թե՞ պետական… (Քաշում, պոկում է մորուքը, գլխից վերցնում է կեղծամը, վրայից հանում է քուրքը, և բոլորի առաջ հայտնվում է Քերոբը: Տղան սկսում է ծիծաղել բարձրաձայն, կողքը բռնած:) Վա՛յ, Քերոբն է, տղե՛րք, Քերոբն է… Ուրեմն Ձյունանուշիկն էլ Սերոբն էր: (Սերոբը հանում է կեղծամը:)

ՔԵՐՈԲ – (Ինքն էլ ծիծաղելով:) Բա ո՞վ է… Ընկեր Լալայանն ասաց՝ զբաղեցրեք մեր հանդիսականներին, մինչև որ իսկական Ձմեռ պապին ու Ձյունանուշիկը գան, և մեզ կարծես թե հաջողվեց դա, չէ՞:

ՏՂԱՆ – (Ծիծաղելով:) Ինչ ճիշտն է, ճիշտը… Ապրե՛ք դուք, Քերո՛ր և նմանապես Սերո՛ր:

(Քերոբը բեմ է բարձրանում, բռնում է Սերոբի ձեռքը, և նրանք դերասանների նման գլուխ են տալիս հանդիսականներին: Դահլիճը ծափահարում է: Ներս են

մտնում ընկեր Լալայանն ու Հրանտը: Նրանք սեղմում են Քերոբի ու Սերոբի ձեռքը):

ԼԱԼԱՅԱՆ – Կեցցե՛ք, տղաներ:

ՀՐԱՆՏ – Մենք նայում էինք կուլիսներից, շա՛տ ծի-ծաղելի էր…

ՍԵՐՈԲ – Իհարկե, ձեզ ի՞նչ կա, իսկ մեզ քիչ էր մնում բմբլահան անեին:

ՔԵՐՈԲ – Ի՞նչ արած, Սերո՛բ ջան, արվեստը զոհեր է պահանջում: (Նախաբեմի ձախ մուտքից հայտնվում է դերասանը:)

ՍԵՐՈԲ – (Նրան նկատելով՝ ցնցվում է:) Վա… վա… վա… վա…

ՔԵՐՈԲ – Քեզ ի՞նչ պատահեց, ա՛յ տղա:

ՍԵՐՈԲ – Լ… լ… լր… լ… լր… լր… տեսը…

ՔԵՐՈԲ – Ո՞վ… (Տեսնում է դերասանին, որը վստահ, փութկոտ քայլելով նրանց է մոտենում:) Ահա նա, հիմա էլ մեր ձեռքից չի փախչի…

ԴԵՐԱՍԱՆ – (Ժպտալով հանում է լայնեզր գլխարկը:) Բարև՛ ձեզ:

ՔԵՐՈԲ – Ա՛, պարո՛ն սպա, հարգանքներս… Բռնի՛ր դրան, Սերո՛բ… (Հարձակվում են, բռնում ձեռքերը:)

ԴԵՐԱՍԱՆ – (Զարմացած:) Սպասե՛ք, ի՞նչ եք անում, Քերո՛բ, բա՛ց թող, հարևա՛ն, սա էլ հալեպցի Սերո՛բն է… Ի՞նչ եք ուզում ինձանից…

ԼԱԼԱՅԱՆ – Ի՞նչ եք անում, տղաներ:

ՀՐԱՆՏ – Ոչինչ չեմ հասկանում:

ՔԵՐՈԲ – Հիմա կհասկանաք… (Դերասանին:) Հանգի՛ստ… հանգի՛ստ, ասում եմ… Ընկե՛ր Լալայան, Հրա՛նտ

ջան, ես ու Սերոբը որ ասում էինք, չէիք հավատում: Ահա այս մարդն է լրտեսը:

ԴԵՐԱՍԱՆ – Ես… խելագարվե՞լ եք, ինչ է…

ՍԵՐՈԲ – Հենց դուք… Դո՛ւ… Պարո՛ն սպա…

ՔԵՐՈԲ – Այո՛, այո՛, հենց այս մարդն է, որ իր բնակարանում ռադիոհաղորդիչ է պահում և մի ուրիշ լրտեսի հետ արտասահման հաղորդում մեր գաղտնիքները: Այս մարդն է, որ…

ԼԱԼԱՅԱՆ – (Սկսում է ծիծաղել:) Ո՞վ, ո՛վ, բա՛ց թողեք նրան, տղանե՛ր. բա՛ց թողեք, ասում եմ… Ա՛յ քեզ հիմարություն…

ՀՐԱՆՏ – Ա՛յ թե լրտես եք գտել, հա՛… (Քրքջում է:) Ախր ես գիտեի, որ կխայտառակվեք:

(Տղաներն ակամա բաց են թողնում դերասանին):

ՔԵՐՈԲ – Այսինքն՝ ինչպես թե լրտես չի: Բա ո՞վ է…

ԼԱԼԱՅԱՆ – (Շարունակելով ծիծաղել:) Ասեմ՝ թե ով է: Ձեր առջև է դերասանը, որը պետք է կատարի Ձմեռ պապիի դերը:

ՔԵՐՈԲ – Չի կարող պատահել…

ՍԵՐՈԲ – Բ… բա ինչո՞ւ էր մյուս լրտեսը նրան ասում. «Ա՛, պարո՛ն սպա, հարգանքներս»:

ԴԵՐԱՍԱՆ – Ահա թե ի՞նչ… Հիմա հասկացա… (Ծիծաղում է:) Ուրեմն ականջ եք դրել, հա՛: Մենք ընկերոջս հետ մեր նոր դերն էինք պատրաստում, ա՛յ պատանի հետախույզներ:

ՔԵՐՈԲ – Եթե այդպես է, եթե այդպես է, ինչո՞ւ էիք ուզում դահլիճը պայթեցնել…

ԴԵՐԱՍԱՆ – Ես… Ի՞նչ դահլիճ…

ՍԵՐՈԲ – Ոչխարաբերդի…

ՔԵՐՈԲ – Ողջաբերդի… Ձեր այդ ընկեր Մանվելին չասացի՞ք, որ երեկոյան ժամը յոթին պայթեցնելու եք դահլիճը…

ԴԵՐԱՍԱՆ – (Քրքջում է:) Վա՛յ, վա՛յ, էլ չեմ կարող…

ՔԵՐՈԲ – Ինչո՞ւ եք ծիծաղում, դե պատասխանե՛ք, է՛…

ԴԵՐԱՍԱՆ – Ախր ես իսկապես պայթեցրի դահլիճը… Միայն թե ծիծաղով, սիրելի՛ Քերոբ: Կներեք անհամեստության համար, բայց մեր ելույթից հետո դահլիճն, իրոք, ծիծաղից պայթում էր…

ՍԵՐՈԲ – Էլի՛ չեմ հասկանում, Քերո՛ւբ ջան, ո՞նց թե պայթեց:

ՔԵՐՈԲ – Փոխաբերական իմաստով է ասում, ա՛յ տղա:

ՍԵՐՈԲ – Ախ, հա՛, ո՞նց փախա ես էդ դասից… Չէ՛, էլ ոչ մի դասից չեմ փախչի… վե՛րջ:

ՔԵՐՈԲ – Ես ներողություն եմ խնդրում ձեզանից:

ՍԵՐՈԲ – Ես էլ:

ԴԵՐԱՍԱՆ – (Ժպտալով:) Դե ոչի՛նչ, ոչի՛նչ, տղանե՛ր, մոռանանք, պատահում է…

ԼԱԼԱՅԱՆ – Խնդրում եմ, հագեք Ձմեռ պապիի զգեստը, մեր երեխաները անհամբերությամբ ձեզ և ձեր նվերներին են սպասում:

ԴԵՐԱՍԱՆ – Մեծ սիրով: Հենց հիմա: Իսկ Ձյունանուշի՞կը որտեղ է:

(Կուլիսներից փռշտոց է լսվում):

ՀՐԱՆՏ – Տեղում է: Ձե՛զ է սպասում:

(Դերասանը հեռանում է: Քերոբն ու Սերոբը դեռևս կանգնած են գլխիկոր բեմի փոսը ծածկող տախտակի վրա):

ԼԱԼԱՅԱՆ – Դե լավ, տղաներ, գլուխներդ մի՛ կախեք: Սա ձեզ համար դաս կհանդիսանա և համոզված եմ, որ այսուհետև ամեն ինչ լավ կլինի:

ՀՐԱՆՏ – Ես որ կասկած չունեմ, Սերո՛բ ջան, Քերո՛բ ջան:

ՔԵՐՈԲ –Էհ, մեկ է, ես ամոթից ուզում եմ գետինը մտնել:

ՀՐԱՆՏ – Վե՛րջ տուր՝ ասում եմ, Քերո՛բ: Բոլորն էլ հասկացան, որ այս ամենը հումոր էր, կատակ, բեմադրություն, ներկայացում, այդպես չէ՞, երեխաներ:

ՔԵՐՈԲ – Չէ՛, միևնույն է, ես ուզում եմ գետինը մտնել… Եվ նույնն էլ քեզ եմ խորհուրդ տալիս, Սերո՛բ:

ՍԵՐՈԲ – Փոխաբերական իմաստո՞վ, Քերո՛բ ջան:

ՔԵՐՈԲ – Ո՛չ, այս անգամ ուղղակի իմաստով, լրիվ ուղղակի իմաստով:


ԼԱԼԱՅԱՆ – Դե որ այդքան սրտանց ուզում եք, մի բան պիտի անենք, մտեք…

(Սեղմում է ինչ–որ կոճակ: Հնչում է ուրախ երաժշտություն: Բեմի փոսը ծածկող տախտակը դանդաղորեն ցած է իջնում, իր հետ հետզհետե իջեցնելով Քերոբին ու Սերոբին, որոնք, ուրախ ժպտալով, ձեռքերով ողջունելով հանդիսականներին, անհետանում են փոսի մեջ):

ԼԱԼԱՅԱՆ – Սիրելի՛ երեխաներ, Նոր տարվա ուրախ տոնածառի գլխավոր փորձը համարում ենք ավարտ-

վածծ: Եթե գոհ մնացիք ներկայացումից, եկե՛ք ծափե-
րով շնորհակալություն հայտնենք մեր բոլոր մասնա-
կիցներին:

(Հնչում են ծափերը և ռիթմիկ երաժշտության տակ վերելակը նորից բեմ է բարձրացնում Քերոբին ու Սերո-
բին: Բեմում հայտնվում են բոլոր դերակատարները և գլուխ են տալիս հանդիսականներին):





Աշոտ Մանասյան, 7 տ.

ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ՓԱՅՏԻԿԸ

ԹԱԹՈՍ ՊԱՊԻԿՆ ՈՒ ՈՍՏԻԿՆԵՐԸ

«Լա՛վ,— ասաց ինքն իրեն Արտակը,— բայց չէ՞ որ կախարդ դառնալու համար նախ և առաջ հարկավոր է փայտիկ ունենալ: Սովորական կախարդական փայտիկ: Թե չէ ի՞նչ կախարդ՝ առանց կախարդական փայտիկի: Հազար անգամ լսել ենք, գիտենք, էլի, որ կախարդությունը կատարվում է միայն այն ժամանակ, երբ կախարդը բարձրացնում է գավազանը: Ուրեմն ինչ էլ լինի, հարկավոր է կախարդական փայտիկ գտնել: Բայց որտեղի՞ց գտնել...»:

Եվ Արտակը սկսեց մտածել: Նա երկար մտածեց: Մոտ կես ժամ: Բայց այդպես էլ ոչինչ չկարողացավ որոշել: Ի՞նչ անել, ո՞ւմ հարցնել: Հայրիկի՞ն, մայրիկի՞ն... Չէ, նրանք կասեն՝ դասերդ սովորիր, դատարկ–մատարկ բաներով մի՛ զբաղվիր: Նրանց հետ հնարավոր չէ լուրջ խոսել: Ինչ ասում ես, ծիծաղում են: Չէ՛...

Նա բակ իջավ, վճռելով ձայն տալ Մարինեին, նրան պատմել իր նպատակի մասին ու խորհուրդ հարցնել: Երկուսով ավելի հեշտ կլինի կախարդական փայտիկ գտնել:

— Մարինե՛,— բարձր ձայնով կանչեց նա:

Կանչեց ու անմիջապես էլ հիշեց, որ Մարինեն երեկ իր մայրիկի հետ Սևանի ափ է մեկնել հանգստանալու:

Բայց նա այնքան սրտանց էր ուզում տեսնել իր ընկերուհուն, որ նրան թվում էր, թե Մարինեն հիմա անպայման տանը կլինի: Նրան թվում էր, թե ինքն արդեն կախարդական մի աշխարհում է, ուր իրականանում են բոլոր երազները:

— Մարինե՛,— ավելի բարձր կանչեց նա:

Բայց երկրորդ հարկի պատշգամբի դուռը փակ էր: Արտակը տխրեց: «Չէ՛,— մտածեց նա ինքն իրեն,— առանց կախարդական փայտիկի ապրել չի լինի: Եթե հիմա փայտիկ լիներ, ինքը լիներ, ինքը կբացականչեր՝ «Որտե՞ղ ես, Մարինե՛, ես ուզում եմ տեսնել քեզ»: Եվ Մարինեն անմիջապես կհայտնվեր երկրորդ հարկի պատշգամբում»:

Դեռ հեռվից նա նկատեց Թաթոս պապիկին: Նա և՛ շենքի պահակն էր, և՛ դռնապանը, և՛ այգեգործը, և՛ հնոցապանը: Ամեն ինչ էր Թաթոս պապիկը: Հիմա նա ինչ–որ շատ զվարճալի գործով էր զբաղված: Ծնկել էր խոտին և իր առջև դրված ցյուղերից հյուսված զամբյուղի միջից ինչ–որ փայտիկներ էր ընտրում: Հետո վերցրեց այդ փայտիկներից մեկը, մոտեցավ փոքրիկ մի ծառի: Գրպանից հանեց երկար ու սուր դանակը ու խորը խազեր քաշեց ծառի վրա՝ մեկ ձախից աջ, մեկ էլ վերևից ներքև:

— Թաթո՛ւս պապիկ, չի՛ կարելի ծառը փչացնել,— ասաց Արտակը:

Թաթոս պապիկը ուսի վրայից նայեց Արտակին ու ժպտաց.

— Ես չեմ փչացնում, Արտա՛կ տղա,— ասաց նա:

— Իսկ մի՞թե կարելի է դանակով կտրել ծառը,— մեծավարի հարցրեց Արտակը:

Թաթոս պապիկը իր կտրած տեղում հետ տարավ ծառի կեղևը, դանակով կտրեց նաև իր հետ վերցրած ճյուղի ծայրը և խրեց կեղևի կտրվածքի մեջ: Հետո ինչ–որ բան քսեց կտրվածքի տեղում և ամուր փաթաթեց շորով: Այդ բոլորն անելուց հետո միայն նա շրջվեց դեպի Արտակը, նայեց նրան քմծիծաղով վերևից ներքև, կռացավ ու ասաց.

— Ես չեմ փչացնում, Արտա՛կ տղա: Ընդհակառակը: Սա կոչվում է պատվաստ: Չե՞ս լսել: Ես վայրի ծառի վրա ազնիվ ծառի ճյուղ եմ պատվաստում, կպցնում: Այս ճյուղը կաճի ու հիանալի խնձորներ կտա: Դու խնձոր սիրո՞ւմ ես:

— Սիրում եմ,— ասաց Արտակը:

— Ա՛յ, իսկ եթե այս մյուս փայտիկը կպցնեմ, մի քանի տարուց հետո հրաշալի, կարմրաթուշ դեղձեր կտա: Եվ ավելի զարմանալի բան ասեմ: Եթե այս երկու փայտիկները պատվաստեմ այ ա՛յս ծառին, մի փայտիկից կարմիր բալ կստացվի, իսկ մյուս փայտիկից՝ դեղին կեռաս:

— Ուրեմն, սրանք կախարդակա՞ն փայտիկներ են,— ուրախացած հարցրեց Արտակը:— Շատ եմ խնդրում, Թաթո՛ս պապիկ, մի հատը ինձ տուր, հա՞: Իսկ հետը ի՞նչ բառեր պետք է ասեմ…

— Ի՞նչ բառեր,— զարմացավ Թաթոս պապիկը:

— Դե, կախարդական, էլի,— ասաց Արտակը,— որ կախարդները սովորաբար ասում են: Դու մուլտիկներ չե՞ս նայում, որ ասում են «Ռապա–պիտա–տակա–կան», օրինակ:

Թաթոս պապիկը շատ էր ուզում չծիծաղել, բայց չէր կարողանում: Նա երկար ու անհաջող հազում էր, և աչքերից արցունքներ էին թափվում:

— Չէ՛, Արտա՛կ տղա,— վերջապես հազալով ասաց նա,— այստեղ ոչ մի կախարդություն չկա:

— Բա ո՞նց է նույն ծառի վրա և՛ կարմիր բալ լինում, և՛ դեղին կեռաս:

— Լինում է, էլի, սա կախարդություն չի, սա գիտություն է: Այսինքն՝ դե, գիտությունն էլ կախարդության նման բան է, էլի,— ասաց Թաթոս պապիկը, որովհետև Արտակը տխրել էր, իսկ ինքը չէր ուզում, որ Արտակը տխրի:

Ու նա պատմեց Արտակին անչափ հետաքրքիր բաներ, ասաց, որ պատվաստը կարելի է կատարել միայն այն ժամանակ, երբ բալը կարմրում է: Այսինքն, երբ ծառերն ուժեղ են: Ասաց, որ խոշոր, հյութալի մրգերից շատերը միայն ու միայն պատվաստի շնորհիվ են լինում: Որ այդ գործով հատուկ մարդիկ են զբաղվում, աշխատում, փորձեր կատարում: Որ այդ մարդիկ ստեղծում են մրգերի ցրտադիմացկուն, վաղահաս տեսակներ, այնպիսիները, որ աճեն նույնիսկ ցուրտ հյուսիսում: Այդ բոլորը պատմելիս Թաթոս պապիկն այնպես ոգևորվեց, որ մի քանի անգամ ինքն էլ այդ մարդկանց «իսկական կախարդ» անվանեց: Եվ Արտակը հարցրեց անմիջապես…

— Ուրեմն նրանք բոլորն էլ կախարդնե՞ր են, Թաթո՛ս պապիկ:

— Համարյա թե,— շվարած նայելով փոքրիկ տղային՝ սթափվեց Թաթոս պապիկը:

— Ուրեմն, դո՞ւ էլ ես կախարդ,— ակնածանքով հարցրեց Արտակը:

— Քիչ ու միչ,— համեստորեն պատասխանեց պապիկը:— Սրա կախարդանքը սովորելու մեջ է: Որքան սովորես, այնքան ավելի մեծ կախարդ կդառնաս:

— Ո՞ր բառերը,— հարցրեց Արտակը:

— Է՛, Արտա՛կ տղա,— գլուխն օրորեց Թաթոս պապիկը:— Դու էլ ի՞նչ ես կպել բառերից: Ոչ մի բառ էլ չկա: Ուղղակի պետք է սովորես, թե ինչի համար, ինչպես և երբ պետք է կատարել պատվաստը: Ահա ամբողջ կախարդությունը:

— Բա դու ինչո՞ւ էիր ինչ–որ բառեր ասում, երբ փայտիկը կպցնում էիր ծառին,— թերահավատությամբ հարցրեց Արտակը, համոզված, որ Թաթոս պապիկը երևի այնքան էլ բարի կախարդներից չէ և չի ուզում իր գաղտնիքը հայտնել ուրիշներին:

Ծերունին ծիծաղեց:

— Ես ասում էի՝ «Լավ կպիր, ոստի՛կ ջան, լա՛վ կպիր: Լա՛վ ծառ դարձիր, անուշ պտուղներ տուր, որ մարդիկ ուտեն և օրհնեն քեզ էլ, քո տնկողին էլ»: Դրանք միայն բարի խոսքեր են, Արտա՛կ տղա:

— Լավ բառեր են,— ասաց Արտակը,— բայց կախարդական չեն: Կախարդական խոսքերը, Թաթո՛ս պապիկ, պետք է անհասկանալի լինեն: Օրինակ՝ «Ռա–պա–պիտա–տակա–կան»:

— Հա, դե ինձնից ի՞նչ կախարդ,— ասաց Թաթոս պապիկը:— Ես երկրորդ դասարան եմ ավարտել: Հետո՝ ոչ մի կախարդություն էլ չկա, Արտա՛կ տղա, միայն սովորել կա և աշխատել կա:

«Զարմանալի պապիկ է,— մտածեց Արտակը՝ դեպի փողոց քայլելով,— կախարդական բաներ է անում, բայց ասում է, թե ինքը կախարդ չէ, կախարդական փայտիկներ է կպցնում ծառին ու ասում է, թե դրանք կախարդական չեն: Կամ շատ համեստ կախարդ է, կամ էլ չար ու ժլատ...»:



Սոնա Գասպարյան, 5 տ.

ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ

Բայց նա անմիջապես էլ մոռացավ Թաթոս պապիկին, երբ հենց իրենց տան դիմաց, փողոցների խաչմերուկում, տեսավ նիհար, բարձրահասակ մի միլիցիոների: Առաջ երբեք ինքն առանձնապես ուշադրություն չէր դարձնում միլիցիոների վրա, որովհետև այսօր նրա մտքից չէր հեռանում կախարդական փայտիկը, դրա համար էլ աչքերը ակամա հառվեցին միլիցիոների ձեռքին բռնած սև–սպիտակ շերտավոր փայտիկին:

Իսկական կախարդական փայտիկ էր:

Հենց որ միլիցիոները ձեռքի փայտիկը մեկնում էր ձախ՝ ավտոմեքենաները խուճապահար ձախ էին սլանում, հենց որ աջ էր մեկնում՝ աջ էին սլանում հնազանդորեն: Վարորդները ավտոմեքենաներից հանում էին գլուխները և ուշադիր, ասես հմայված հետևում փայտիկի շարժումին, որպեսզի սլանան նրա ցույց տված կողմը:

Արտակը կանգնել ու դյութված փայտիկին էր նայում:

Գուցե, իսկապես, հենց սա՞ է կախարդական փայտիկը: Եվ տենդորեն մտածում էր. իսկ եթե հանկարծ փայտիկը կամակորություն անի և մեկնվի վերև՝ ավտոմեքենաները օդ կբարձրանա՞ն: Նա երկար սպասեց, բայց ավտոմեքենաները օդ չէին բարձրանում: Հենց որ միլիցիոները դեպի վեր էր պարզում փայտիկը, ավտոմեքենաները միայն արգելակվում ու վախից անշարժանում էին տեղում:

«Չէ՛,— մտածեց Արտակը,— սա հավանաբար այնքան էլ ուժեղ կախարդական փայտիկ չէ»:

Եվ, այնուամենայնիվ, այդ ամենը շատ հետաքրքիր էր: Նա հայացքով հեռվից դիմավորում էր ավտոմեքենաներին, աշխատելով կռահել, թե ուր կուզենան գնալ նրանք, և փայտիկը, որ ճանապարհը նրանց ցույց կտա: Նա այնքան էր տարվել իր խաղով, որ զարմանքից ցնցվեց, երբ ականջի տակ լսվեց մի թավ ձայն.

— Երիտասա՛րդ, դուք ուզում եք անցնե՞լ փողոցը: Եկե՛ք, ես կուղեկցեմ ձեզ:

Նրա առջև կանգնած էր խաչմերուկի միլիցիոները: Երևի վախենալով, թե կախարդական փայտիկը կարող է փախչել իր մոտից, նա փայտիկը կաշվե փոքրիկ գոտիով իր ձեռքին էր կապել:

— Ո՛չ, քեռի՛,— կմկմաց Արտակը,— ես նայում եմ…

— Հա՛, իսկ ինձ թվում էր, թե ուզում եք անցնել փողոցը, երիտասա՛րդ,— ասաց միլիցիոները և ժպտալով ձեռքը գլխարկին տարավ:

Կախարդական փայտիկը օրորվում էր նրա դաստակից կախված:

Այդ ժպիտը ոգևորեց Արտակին, և նա հարցրեց ներքևից վերև:

— Քեռի՛, դուք կախա՞րդ եք:

— Ես,— զարմացավ, հետո ծիծաղեց միլիցիոները,— ինչի՞ց եք ենթադրում, երիտասա՛րդ:

— Բա ինչո՞ւ կախարդական փայտիկ ունեք,— հարցրեց Արտակը:

Միլիցիոները իր փայտիկին նայեց, հետո Արտակին, ասես զարմանալով, թե այդ փոքրիկ տղան ինչպե՞ս է կռահել, որ իր փայտիկը կախարդական է, հետո ծիծաղելով ասաց.

— Դե սա ի՞նչ կախարդական փայտիկ է: Սա, երիտասա՛րդ, պարզապես իմ օգնականն է: Առանց փայտիկի աշխարհում երթևեկությունը կարգավորող ոչ մի միլիցիոներ չկա: Ես և այս փայտիկը միասին հետևում ենք, որ ավտոմեքենաները չխախտեն կարգը…


Այդ ժամանակ մի ավտոմեքենա էր արագ սլանում, վարորդը պատուհանից հանել էր գլուխը և տեսնելով, որ խաչմերուկում ո՛չ միլիցիոներ կա, ո՛չ էլ կախարդական փայտիկ, ուզում էր արագ թափով շարունակել ճանապարհը: Այդ տեսնելով՝ միլիցիոները բարձրացրեց փայտիկը և սուլեց: Ավտոմեքենան անշարժացավ անմիջապես:

— Հանգի՛ստ գնացեք,— խստորեն ասաց միլիցիոները և փայտիկն անմիջապես ցույց տվեց, թե ինչպես պետք է գնա ավտոմեքենան: Եվ ավտոմեքենան հանգիստ անցավ նրա մատնանշած ճանապարհով:

— Դե՛, ինձ կներեք, երիտասա՛րդ,— ժպտաց միլիցիոները:— Ես աշխատանքի մեջ եմ:

Նա նորից կանգնեց խաչմերուկի կենտրոնում ու շարունակեց իր կախարդությունը: «Չեն ուզում իրենց գաղտնիքն ինձ ասել,— մտածեց Արտակը:— Բայց ոչինչ, ինչ էլ լինի, ես կունենամ իմ կախարդական փայտիկը»:

ՏԱՐՕՐԻՆԱԿ ԵՐԱԶԸ



Գիշերը նա անհանգիստ քնեց: Երազում սկզբում Թաթոս պապիկին տեսավ, որն իր փայտիկները հերթով վեր–վեր էր թռցնում կրկեսի հրապարակում: Թռցնում էր փայտիկները, իսկ վերևից մեծ ծառեր էին ընկնում: Մի ծառի վրա արագ–արագ մի ձմերուկ էր աճում, հավի պինդ խաշած ձվեր և չգիտես ինչու՝ մի զույգ կոշիկ: «Ա՛յ քեզ կախարդ,— ապշած մտածում էր Արտակը:— Իսկ ինձ խաբում էր, թե այդտեղ ի՞նչ կախարդություն կա»:

Հետո նա խաչմերուկի միլիցիոներին տեսավ, որը կանգնել էր ուղիղ, գլուխը բարձր, իսկ կախարդական փայտիկը մեկնել էր ներքև: Ավտոմեքենաները գալիս էին և նրա ոտքերի մոտ, թափքերը վեր ցցած՝ սուզվում էին գետնի տակ: Միլիցիոները այդպես՝ կախարդական փայտիկի օգնությամբ արագ–արագ գետնի տակ մտցրեց խաչմերուկի բոլոր չորս կողմերից եկող ավտոմեքենաները, հետո կողքից կախված կաշվե պայուսակը դրեց այն անցքի վրա, որտեղ անհետացել էին ավտոմեքենաները, նստեց պայուսակի վրա և նայելով Արտակին, աչքով արեց.

— Դե հիմա արի հանգիստ խոսենք, Արտա՛կ տղա,— ասաց նա:— Էլ մեզ չեն խանգարի:

«Նա իմ անունը որտեղի՞ց գիտի»,— անհանգստացավ Արտակը: Նա ավելի ուշադիր դիտեց միլիցիոնե-

րին և զարմանքով տեսավ, որ դա Թաթոս պապիկն է միլիցիոների հագուստի մեջ ծպտված, նայում է իրեն ու խնդմնդում: Եվ ամենաածիծաղելին ու ահավորն այն էր, որ Թաթոս պապիկի բեղի մի ծայրից կարմիր բալ էր կախված, իսկ մյուս ծայրից՝ դեղին կեռաս:

«Հա՛, հասկացա,— երազում մտածեց Արտակը:— Չէ՞ որ հայրիկը կիրակի օրը մեզ գյուղ է տանելու՝ զբոսանքի: Բայց ի՞նչ կապ ունի Թաթոս պապիկը մեր գյուղի հետ: Հա՛, հասկացա, երևի նա իր կախարդական փայտիկները մեր գյուղի եղեգնուտից է կտրում... Հանկարծ Թաթոս պապիկը չկռահի՞, որ ես հասկացել եմ նրա գաղտնիքը»,— անմիջապես մտածեց Արտակը: Նա փորձեց շրջվել, բայց վիզը ասես քարացել էր, չէր թեքվում: Փորձեց նայել միայն աչքի ծայրով, և սարսափով տեսավ, որ միլիցիոների հագուստի մեջ ծպտված Թաթոս պապիկը դեպի իրեն է մեկնել կախարդական փայտիկը: Փայտիկը երկարում–երկարում էր: Հիմա ուր որ է իրեն կհասնի: Բայց, չէ՛, անցավ գլխի վրայով: Արտակը բարձրացրեց աչքերը, որ տեսնի, թե ուր է ձգվում փայտիկը, երբ հանկարծ մի ահասարսուռ քրքիջ լսվեց և փայտիկը վերևից ուղիղ ընկավ Արտակի գլխին:

Արտակը վեր թռավ սարսափից, բացեց աչքերն ու անմիջապես էլ հասկացավ, որ այդ ամբողջ խառնաշփոթության պատճառը Նազիկ կատուն է: Կատուն ինչ–որ ճանճ հետապնդելիս, թռել էր Արտակի գլխին ու հիմա հանգիստ ննջում էր Արտակի վերմակի վրա՝ տղայի տագնապած կրծքի հետ արագ–արագ բարձրանալով ու իջնելով:

Դեռևս երազի ազդեցության տակ, բարկացած Արտակը մի հարվածով անկողնուց ցած նետեց Նազիկին: Վիրավորված ու վախեցած կատուն այնպիսի մի աղմուկ–աղաղակ բարձրացրեց և այնպիսի տարօրինակ ձայնով ճչաց, որ Արտակը կարող էր երդվել, թե կատուն հայերեն իրեն անվանեց «հիմար»:

— Հիմարը դու ես,— անկեղծ զայրույթով պատասխանեց Արտակը:

Բայց կատուն հավանաբար այլևս չուզեց շարունակել իր համար կասկածելի վերջ ունեցող այդ վիճաբանությունը և, միջոցների մեջ խտրություն չդնելով, պատուհանից դուրս փախավ:

Արտակը ժպտաց հաղթական, նորից հիշեց, որ հայրիկի հետ գյուղ են գնալու և վեր կենալուց առաջ մի վերջին անգամ փակելով աչքերը, մտքում ասաց. «Ես գյուղում կգտնեմ իմ կախարդական փայտիկը»:

ՆԿԱՐԻԶԸ

Արտակենց գյուղը Երևանին շատ մոտ էր գտնվում, բայց իսկական գյուղ էր: Ամեն ինչ կար՝ թե՛ հավ, թե՛ սագ, թե՛ խոզ ու կով, թե՛ մոծակ ու շուն: Իսկական շուն և ոչ թե քաղաքի շները, որոնցից ոչ վախենում ես, ոչ էլ՝ հարգում: Գյուղում գրեթե ամեն տուն իր թոնիրն ուներ, որտեղ երկար, սպիտակ լավաշ էին թխում: Դա շատ հետաքրքիր էր, դրա համար էլ գյուղ հասնելուն պես Ար-

տակը վազեց թոնրի մոտ և աչքերը պլշած պպզեց իր Շողիկ մորաքրոջ կողքին: Գլուխը սպիտակ թաշկինակով ամուր կապած Շողիկ մորաքույրը արագ շարժումներով լավաշ էր թխում: Նա խմորի տափակ շերտը թիակով մտցնում էր շիկացած թոնրի մեջ և ուղիղ մի վայրկյանից հանում՝ արդեն լավաշ դարձած: Շողիկ մորաքրոջ դեմքն էլ տեղ–տեղ կաս–կարմիր էր դարձել՝ թոնրի առջև նստելուց: Արտակն ուզեց մորաքրոջն ասել, որ նրա դեմքն էլ ոնց որ լավ թխած լավաշ լինի և նույնիսկ շարժեց շրթունքները, բայց ոչինչ չասաց: Կնեղանա մորաքույրը: Գուցե ցույց չտա, բայց կնեղանա:

— Ինչո՞ւ ես այս կրակի կողքին խաշվում, բալի՛կ ջան,— ասաց Շողիկ մորաքույրը:— Նկարիչ է եկել, գնա նայիր, քեզ համար հետաքրքիր կլինի:

— Նկարի՞չ,— հարցրեց Արտակը:— Իսկ որտե՞ղ է:

— Մեր հին եկեղեցու մոտ,— ասաց Շողիկ մորաքույրը:

Նկարիչը երկար, սպիտակ մազեր ուներ, որոնք ծածկել էին նրա ծոծրակը և փռվել ուսերին: Նա նստել էր ծալովի մի փոքրիկ աթոռի վրա՝ նկարակալի դիմաց, որի վրա ինչ–որ շրջանակ կար: Ոտքերի տակ թափված էին տասնյակ ճխլտված ներկապարկուճներ: Նկարիչը ձեռքին մի տախտակ ուներ բռնած, որի վրա խառնում էր ներկերը: Հետո նկարակալի վրայից աչքերը կկոցած, երկար, ուշադիր ու անշարժ նայում էր եկեղեցուն, և վրձնով ինչ–որ խազ էր քաշում կտավի վրա և նորից երկար, ուշադիր նայում նկարակալի վրայից:

Արտակն այդ բոլորն անմիջապես չտեսավ: Նա երկար ժամանակ կանգնել էր հեռվում՝ չհամարձակվելով

մոտ գնալ նկարչին: Հետո որոշեց խորամանկության դիմել: Ձեռքի փոքրիկ քարերը վեր–վեր էր նետում, և ամեն անգամ այնպես, որ քարերից մեկն ու մեկը մոտ ընկնի նկարչին: Ու թեև նկարիչը տեղյակ էլ չէր նրա գոյությանը, բայց այդպես կամաց–կամաց նետելով քարերը, նա շուտով հայտնվեց նկարչի թիկունքում, որտեղից հիանալի երևում էր ամեն ինչ: Նա նայեց եկեղեցուն, նրա հետևից երևացող խաղաղ, կանաչ բլուրներին, սպիտակ ուլունքաշարի պես սարն ի վեր ձգվող ոչխարների հոտին, երկնքում կախված արտույտներին: Այնքան գեղեցիկ էր այդ բոլորը, որ նրա կոկորդը քոր եկավ: Չգիտես ինչու, ուզում էր լաց լինել Արտակը:

Նա մի քիչ ավելի մոտ գնաց, կանգնեց նկարչի կողքին, այնքան մոտ, որ նույնիսկ լսում էր, թե ինչպես է նկարիչը կամացուկ ինչ–որ երգ մրմնջում… երկար ու տխուր մի երգ: Եվ նկարչի ուսի վրայից նկարին նայեց: Այն, ինչ տեսավ Արտակը, հեքիաթի նման էր: Նկարում և՛ եկեղեցին կար, և՛ հեռվում երևացող կանաչ բլուրները, և՛ ուլունքաշարի նման սարի վրա նետված ոչխարի հոտը, և՛ արտույտները՝ օդում: Բայց միաժամանակ կարծես թե բոլորովին ուրիշ էր. եկեղեցին և՛ եկեղեցի էր, և՛ եկեղեցի չէր, կանաչ բլուրներն էլ ասես ուրիշ էին: Եվ ամեն ինչը հեքիաթ լիներ ասես, պայծառ, լուսավոր հեքիաթ, որտեղից լսվում էր նաև նկարչի երկար, տխուր երգը:

Արտակի կոկորդը նորից քոր եկավ և նա հազաց ակամա:

Նկարիչը շրջվեց, նայեց տղային մի այնպիսի հայացքով, ասես վաղուց էր սպասում նրան և ժպտաց.

— Բարև՛ ձեզ,— ասաց Արտակը:

— Բարև՛, փոքրի՛կ,— ժպտաց նկարիչը:— Ի՞նչ ես անում այստեղ:

— Սա մեր գյուղն է,— ասաց Արտակը:— Հայրիկս այստեղ է ծնվել:

— Լավ տեղ է ընտրել,— ասաց նկարիչը:

Նա խոսում էր և շարունակում նկարել: Փայտե կոթով վրձինը մեկ խաղում էր նրա ձեռքին, մեկ անշարժանում, ասես մտածում էր և հանկարծ արագորեն ինչ-որ կետ էր դնում մի տեղ, որից նկարը ասես շարժվում, շնչում էր: Արտակը նայում էր հիացած, մատը բերանին, մտքում հարցնում էր հազար անգամ և վերջապես որոշեց բարձրաձայն հարցնել:

— Ներողություն,— ասաց նա, հիշելով, որ մայրիկը սովորեցրել է ուրիշին դիմելիս միշտ սկզբում ներողություն ասել:— Ներողություն, ձեր վրձինը կախարդակա՞ն է:

— Վրձի՞նը,— հարցրեց նկարիչը՝ շրջվելով ու զարմացած նայելով տղային:

Տղան գլխով արեց:

Նկարիչը շարունակում էր զարմացած նրան նայել և ժպտում էր: Կյանքում նա հազարավոր գովեստներ ու փառաբանություններ էր լսել իր հասցեին: Նա մեծ նկարիչ էր, նրա մասին գրում էին բոլոր թերթերը, բայց երբեք ավելի շոյված չէր զգացել իրեն, ավելի երջանիկ չէր զգացել: Նկարիչն ինքն էլ շփոթվեց ու կարմրեց երեխայի նման:

— Դժբախտաբար՝ ո՛չ,— ասաց նկարիչը:— Իմ վրձինը սովորական վրձին է: Իսկ ինչո՞ւ քեզ թվաց, թե կախարդական է:

— Նա հեքիաթ է նկարում,— ասաց տղան: Արտակն ուզում էր շատ մեծ, շատ գեղեցիկ ու շատ բարձր բան ասել, բայց բառերը չգիտեր: Նրա համար ամենահրաշալին հեքիաթն էր:

Նկարիչը, ընդհակառակը, շատ–շատ բառեր գիտեր, բայց քանի որ նրա համար ևս ամենահրաշալին հեքիաթն էր, մտածեց, նայեց նկարին, նորից նայեց տղային ու օրորեց գլուխը:

— Չէ, փոքրի՛կ,— ասաց նա,— սա շատ սովորական վրձին է: Կուզե՞ս քեզ տամ: Վերցրո՛ւ, վերցրո՛ւ, տե՛ս, ես շատ ունեմ:

Նկարիչը բաժակի միջից մի ուրիշ վրձին վերցրեց, և նկարում էր, և դարձյալ կախարդական, հեքիաթային գույներով պատվում էր կտավը:

— Ուզո՞ւմ ես՝ դու էլ նկարիր,— ասաց նկարիչը:

Նա առանց տեղից բարձրանալու, տղային մի հաստ ստվարաթուղթ մեկնեց և ներկեր:

— Նստիր ա՛յ այդ քարին, ստվարաթուղթը ծնկներիդ դիր ու նկարիր:

Արտակը նստեց ու, վրձինը թաթախելով կանաչ ներկի մեջ, նկարեց սարերը, հետո նույն կանաչով մի ոչխար նկարեց, որի գլուխը քառակուսի էր և սարից մեծ էր: Եվ էլ ոչինչ չնկարեց: Վրձինը բոլորովին էլ կախարդական չէր: Սովորական վրձին էր, ներկը չորանում էր արագ, չէր նկարում: Երևի նա բարձրաձայն հառաչեց, որովհետև նկարիչը շրջվեց դեպի տղան ու հարցրեց կամացուկ:

— Հը՛, չի՞ ստացվում, փոքրի՛կ:

— Չէ՛,— ասաց Արտակը։— Ես հասկացա, վրձինը կախարդական չէ։

— Դե, իհարկե,— ասաց նկարիչը և նրա ձայնի մեջ տխրություն ինչեց։— Ասում էի, չէ…

— Ես հասկացա,— ասաց Արտակը,— ուրեմն դուք եք կախարդը։

— Ճս,— նորից զարմացավ նկարիչը։— Ինչո՞ւ…

— Որովհետև շատ… շատ լավ եք նկարում։ Որովհետև այս վրձինը ձեր ձեռքին նկարում էր, իսկ իմ ձեռքին չի ուզում նկարել… Ուրեմն դուք կախարդ եք…

— Է՛, փոքրիկ, փոքրիկ,— հառաչեց նկարիչը։— Նա մի հայացք նետեց Արտակի նկարածին ու ժպտաց։— Երբ ես քո տարիքին էի, փոքրի՛կ մարդ, քեզանից վատ էի նկարում։ Չգիտեի էլ, թե ինչ բան է վրձինը։

— Իսկ ձեզ ո՞վ կախարդություն սովորեցրեց,— գործնականորեն հարցրեց Արտակը։

— Եթե կախարդություն բառի փոխարեն ասես նկարել, կասեմ, որ ինձ սովորեցրել է իմ նկարչության դասատուն և հետո՝ շատ–շատերը։ Բոլորը և ամեն ինչ սովորեցրել են ինձ,— ասաց նկարիչը։

Նա նայեց եկեղեցուն, պայծառ, լայն բացված աչքերով, նայեց լուռ ու այնքան երկար, որ Արտակն ակամա նկարչի աչքերին նայեց։ Նրանցից ամեն մեկի մեջ մի թեքված եկեղեցի կար, իսկ հեռվում երևում էին խաղաղ, կապույտ բլուրները։

— Ա՛յ, իսկական կախարդը,— ասաց նկարիչը։

— Ո՞վ…— արագ հարցրեց Արտակը։

— Նա, ով այս եկեղեցին է կառուցել,— ասաց նկարիչը։— Հազար երեք հարյուր տարի առաջ է կառուցել։ Բայց տես ոնց է մնացել, տես, տես, խոյակները, գմբեթները, տես կամարները, գծերին նայիր, գծերին։ Օ՛հ, ինչ գծեր են…

— Ուրեմն նա իսկակա՞ն կախարդ է եղել,— հարցրեց Արտակը։

— Իսկական…— դեռ հմայված ակամա՝ պատասխանեց նկարիչը։— Իսկական կախարդ։— Հետո Արտակին նայեց աչքերը կկոցած, ասես նոր միայն հասկանալով նրա հարցը։— Միայն թե չկարծես, թե քո գրքերի կախարդների նման, որ ասում են՝ թող այստեղ պալատ բարձրանա… Եվ պալատը իսկույն բարձրանում է։

— Բա ի՞նչ տեսակ,— մտահոգված հարցրեց Արտակը, զգալով, որ կախարդության գաղտնիքն իմանալու հույսը այստեղ էլ է չքանում։

— Աշխատող կախարդ,— ասաց նկարիչը,— նա ամբողջ կյանքում կառուցել է այս եկեղեցին, կառուցել է գիշեր–ցերեկ, հավատացել է իր գործին ու կառուցել է։ Զարմանալի մարդ է եղել այդ ճարտարապետը, փոքրի՛կ։

— Ուրեմն դո՞ւք էլ կախարդ չեք,— խղճահարությամբ ասաց Արտակը։

— Չէ՛, իհարկե, ես բոլորովին էլ կախարդ չեմ,— լրջորեն ասաց նկարիչը։

— Իսկ չե՞ք ուզում դառնալ,— հարցրեց Արտակը։

— Դեռ հույսս չեմ կորցրել,— ծիծաղեց նկարիչը։— Երբ քո տարիքին էի, ես էլ շատ էի ուզում կախարդ դառնալ, այնպիսի բաներ անել, որ ուրիշները չեն կարողացել։

— Հետո…

— Հետո մեծանում ես, սովորում ես, սկսում ես աշխատել և տեսնում ես այնքա՜ն բան ունես անելու, որ կախարդ դառնալու ոչ ժամանակ է մնում, ոչ էլ ցանկություն:

— Իսկ դուք չե՞ք ուզում, որ ձեր նկարները կենդանանան,— հարցրեց Արտակը:

— Շատ եմ ուզում,— ասաց նկարիչը,— նկարում, նկարում եմ, բայց ոչինչ չի ստացվում: Երևի ինչ–որ բան պակասում է:

Արտակը լուռ մտածում էր:

— Լա՛վ,— ասաց նա,— երբ ես գտնեմ կախարդական փայտիկը, գաղտնիքը ձեզ էլ կասեմ, լա՛վ:

— Խնդրում եմ,— ասաց նկարիչը՝ ուրախացած,— չմոռանաս ինձ, փոքրի՛կ:

Նա տանջվում էր, նա շատ էր ուզում հենց անմիջապես էլ ասել այդ փոքրիկ, որոնող մարդուն, որ այդ ամենը սուտ է, որ աշխարհում ոչ մի կախարդություն էլ չկա ու չի եղել, որ հեքիաթը մարդիկ են հնարել, որպեսզի հեշտ լինի ապրելը, հետաքրքիր լինի: Նա կարող էր ասել, որ կախարդությունը հենց աշխատանքն է, համառ, անզիջում, ստեղծագործ աշխատանքը: Նա ակնարկներով հենց այդպես էլ ասաց տղային, և ավելին ասել չէր կարող: Եվ միտք ունե՞ր արդյոք այդ ամենը բացատրել, երբ տղան, միևնույն է, ոչինչ չէր հասկանա, որովհետև չէր ուզում հասկանալ, որովհետև հավատում էր իր հեքիաթին: Մի՞տք ուներ նրա երազները փշրելը, երբ, միևնույն է, քիչ հետո, որոշ ժամանակ անց տղան

ինքն էր հասնելու դրան՝ տրորելով իր հին երազները և նոր երազներ հորինելով: Եվ ո՞վ գիտի ի վերջո, թե ինչը կա և ինչը չկա: Դու չես տեսնում, բայց նա տեսնում է: Նա հավատում է: Չէ՞ որ դու էլ ես անցել այդ ամենը և հիմա էլ հավատում ես հազար ու մի նոր բանի, որոնց վրա ուրիշները միայն ծիծաղում են:

— Փոքրի՛կ,— կանչեց նկարիչը տղայի հետևից:— Չմոռանաս ինձ, խնդրում եմ:

Տղան ուրախ ձեռքով արեց հեռվից:

ՓՈՔՐԻԿ ՀՈՎԻՎՆ ՈՒ ՍՐԻՆԳԸ

Նա շարունակում էր որոնել: Նույնիսկ հաղթահարելով վախը, նա մոտեցավ գյուղի եղեգնուտին, և մի պահ նրան թվաց, թե վերջապես գտնելու է իր փնտրածը: Գառների հոտը մակաղել էր քարերի արանքում ու խաղաղ շնչում էր: Արևոտ տաք օր էր, և օդը զնգում էր ձանձրույթից: Չգիտես որտեղից այստեղ հայտնված մի մենավոր վայրի տանձենու ստվերում բերանքսիվայր պառկած քնած էր գզգզված մազերով փոքրիկ մի տղա:

Բայց միայն թվում էր, թե քնած է: Արտակի ոտնաձայնը լսելով՝ նա կռթնեց արմունկների վրա ու շրջեց գլուխը:

— Վա՛յ, դո՞ւ որտեղից հայտնվեցիր,— հարցրեց նա:

Արտակը ծիծաղեց:

— Գետնի տակից:

— Ճի՞շտ,— հարցրեց տղան: Եվ որովհետև Արտակը շարունակում էր ծիծաղել՝ դիտելով տղայի զարմանքից վեր ցցած պեպենոտ քիթը, ավելացրեց,— չէ՛, ախր գիտես ի՞նչ. պառկել, հեքիաթ էի տեսնում մտքումս: Հասել էի այնտեղ, որ տղան շրջում է գլուխը ու տեսնում արքայազնին: Ու հանկարծ ոտքերի ձայն եմ լսում, շրջվում եմ ու տեսնում եմ քեզ:

Նրանք երկուսն էլ ծիծաղեցին ու հենց ծիծաղելով էլ ծանոթացան: Շատ անկեղծ տղա էր Լևոնը, այնքան անկեղծ, որ մի քանի րոպե չանցած Արտակն արդեն ակամա պատմել էր նրան իր բոլոր երազների մասին, Թաթոս պապիկի, միլիցիոների, ծերուկ նկարչի մասին, կախարդական փայտիկը գտնելու իր հույսերի մասին:

— Բախտդ բերել է,— ասաց նրան Լևոնը:— Կախարդական փայտիկը ինձ մոտ է:

— Ի՞նչ,— տեղից վեր թռավ Արտակը:— Որտե՞ղ է:

— Իմ գրպանում,— ձեռքով ծոցագրպանին խփելով՝ ասաց Լևոնը:

— Փչո՛ւմ ես,— ծիծաղեց Արտակը:

— Այո՛, փչում եմ, կախարդությունը հենց դրա մեջ է,— լրջորեն ասաց Լևոնը և ծոցագրպանից մի փայտիկ հանեց, որի վրա անցքեր կային:— Սա ի՞նչ է:

— Հասարակ շվի է,— հիասթափված ասաց Արտակը:— Ես դրանից այնքա՜ն եմ տեսել…

— Տեսնելը դեռ քիչ է, դու փորձիր նվագել…

Արտակը ձեռքն առավ շվին, բացեց բերանը, մոտեցրեց ու փչեց… Խեղդված օդից բացի ուրիշ ոչինչ դուրս չեկավ շվիի միջից: Նա նորից փչեց, որքան ուժ

ուներ, դեմքը կարմրեց լարումից, բայց շվին լուռ էր: Նա տարակուսանքով նայեց ընկերոջը և թոթվեց ուսերը: Լևոնը ինքնագոհ ծիծաղում էր…

— Հասարակ շվի է,— ծաղրեց նա Արտակին:— Ես դրանից այնքան եմ տեսել: Դե հիմա լսիր…

Նա շվին պարզապես շրթունքներին հպեց… Ու հանկարծ այնքան թեթև, այնքան քաղցր ձայներ դուրս եկան շվիի միջից, որ Արտակը զարմացած շուրջը նայեց: Որտեղի՞ց են այս կախարդական հնչյունները:

— Հը, ինչպե՞ս էր,— ծիծաղեց Լևոնը:— Դե հիմա տես. տեսնո՞ւմ ես այն երկու գառնուկին, որ հոտից բաժանվել ու դեպի եղեգնուտն են իջնում: Դե, տես… Հիմա ես կնվագեմ, ամբողջ հոտը հանգիստ կմնա իր տեղում, իսկ այն երկու գառնուկները հետ կդառնան ու կգան մեզ մոտ:

— Չէ՛ մի,— ասաց Արտակը:

Լևոնը նվագեց: Սկզբում ձայնը միայն գեղգեղում էր, ասես թրթռում էր տեղում, հետո ոստնեց, բարձրացավ ու տարածվեց կապույտ օդի մեջ՝ հանգիստ, սահուն, մեղմիկ… Գառնուկները խլշկոտեցին, բարձրացրին գլուխները ու մի պահ ականջ դրեցին, հետո նրանցից մեկը շրջվեց ու սկսեց դանդաղ, ասես դեռ ականջ դնելով՝ դեպի ծառը գալ: Երկրորդ գառնուկը նայեց նրան, մայեց, երևի ոչխարերեն ասաց, թե եղեգնուտում ավելի հետաքրքիր է, բայց քանի որ ընկերը շարունակում էր առաջ ընթանալ, քիչ տատանվելուց հետո ինքն էլ հետևեց նրան: Լևոնը շարունակում էր նվագել, նրա դեմքը երազկոտ արտահայտություն էր ստացել, պեպեննե-

րը ավելի էին խտացել քթարմատի մոտ, շրթունքները թեթևակի դողում էին: Նա շուրթերից հեռացրեց շվին, նայեց իր առաջ խոնարհ կանգնած գառնուկներին, հետո Արտակին նայեց ու ասաց.

— Տեսա՞ր:

— Մի՞թե հենց դա է կախարդական սրինգը,— ապշած հարցրեց Արտակը:

— Իհա՛րկե,— հաստատեց Լևոնը:— Սկզբում, երբ կտրեցի եղեգնուտում, սովորական շվի էր. ինչ անում էի՝ չէր նվագում, բայց այնքան նվագեցի, որ դարձավ կախարդական: Հիմա ես այս շվիով գառնուկներին հավաքում եմ տներից, արոտի եմ տանում, հիշեցնում եմ, որ ջուր խմելու հերթն է, որ պետք է նստել հանգստանալ, որ արդեն տուն գնալու ժամանակն է... Բայց գիտե՞ս ինչքա՜ն եմ սովորել, ինչքա՜ն եմ նվագել, մինչև որ կախարդական է դարձել...

— Ուրեմն հիմա լրիվ կախարդակա՞ն է:

— Չէ՛, ճիշտն ասած, դեռ շատ բան չեմ կարողանում: Հասկանո՞ւմ ես, մտքիս մեջ այնքան լավ է լինում, այնքան գեղեցիկ, բայց երբ նվագում եմ, այդքան լավ չի լինում:

— Դու հիանալի ես նվագում,— ասաց Արտակը:

— Չէ՛,— ասաց Լևոնը,— ես հո գիտեմ: Դեռ այնքան բան կա սովորելու. Թաթոս պապիկը, միլիցիոներ քեռին, ծեր նկարիչը... Բոլորն էլ ասում են սովորել է պետք: Հիմա էլ այս Լևոնը... Եթե կախարդություն է, էլ ի՞նչ սովորել: Ախր նրանցից ամեն մեկը արդեն կախարդ է՝ Թաթոս պապիկն այնպես է անում, որ նույն ծառի վրա

թե՛ կարմիր բալ է աճում, թե՛ դեղին կեռաս: Միլիցիոներ քեռու ձեռքի մի շարժումով բոլոր ավտոմեքենաները գնում են նրա ցանկացած ուղղությամբ: Լևոնը այնպես է նվագում իր շվին, որ գառնուկները հլու–հնազանդ են-թարկվում են նրան... Եվ բոլորն էլ ասում են, թե այդ-տեղ ոչ մի կախարդություն չկա, թե իրենք սովորել են պարզապես և շարունակում են սովորել... սովորել...

«Իսկ գուցե նրանք կախարդ են, բայց չգիտեն, որ կախարդ են, կամ չեն հավատում, որ կախարդ են,— մտածեց Արտակը:— Իսկ գուցե կախարդ են բոլոր մար-դիկ, եթե ինչ–որ գործ են անում և ավելի լավ են անում, քան ուրիշները: Ախր հենց այդ էր ասում այն ծեր երա-ժիշտը»:

ԵՎ ՆԱ ՀԱՆԿԱՐԾ ՀԻՀԵՑ...

Մարինեի հետ նրանք խաղում էին օպերայի բակում: Հետո տղան զարմանալի հնչյուններ լսեց, որ բաց ետ-նամուտքից էին գալիս, և քայլերն ուղղեց այնտեղ: Դռան մոտ ոչ ոք չկար: Ներս մտնելով, արագ տրոփող սրտով մութ միջանցքներով դեպի ձայները գնալով՝ Արտակը թանձր վարագույրի հետևում հանկարծ վառ լուսավոր-ված մի սրահ տեսավ: Շատ մարդիկ կային այնտեղ՝ ոտ-քի կանգնած, կամ նստած աթոռներին: Նրանցից յուրա-քանչյուրի ձեռքին մի երաժշտական գործիք կար՝ ծանոթ ու անծանոթ, տարօրինակ ու արտասովոր գործիքներ:

Գործիքներից ամեն մեկը մի ձայն էր հանում և այնպես խառնվել էին հնչյունները, որ ոչինչ չէր հասկացվում: Այնպիսի մի ժխոր էր, որ Արտակի գլուխը սկսեց ցավել. ինչ–որ բան ծվծվում էր, ինչ–որ բան որոտում, ինչ–որ բան երկար ու զիլ ճչում էր և ինչ–որ բան էլ թնդում ահավոր:

Բայց հանկարծ նիհար, կարճահասակ, այս նկարչի նման մազերը գլխի չորս բոլորը թափած մի մարդ, արագ, ջղային քայլերով սրահ մտավ, կանգնեց բարձր սեղանի հետևում և բարձրացրեց ձեռքը: Նրա ձեռքին բարակ ու փոքրիկ մի փայտիկ կար:

Եվ հանկարծ կատարվեց հրաշք:

Ժխորը մի ակնթարթում դադարեց: Բոլորը բարձրացրին գլուխները և հմայված նայեցին նիհար, կարճահասակ մարդուն: Նա ոչ մի բառ չասաց, միայն իջեցրեց ու ապա նորից բարձրացրեց փայտիկը, և հանկարծ հնչեց, ծավալվեց, տարածվեց նվագը: Այդպիսի նվագ կյանքում Արտակը չէր լսել: Դա հեքիաթ էր, շքեղ ու պայծառ հեքիաթ: Եվ այդ հեքիաթը ստեղծում էր փայտիկը: Այն մեկ շեշտակի վեր էր պարզվում, մեկ տատանվում էր համաչափ, մեկ լողում էր, ուղղվում հեռու, վերջին շարքերը և մեկ էլ իջնում էր կամացուկ: Եվ նվագն էլ նրա հետ, նրա կամքով, նրան հնազանդ...

Տղայի աչքերը վառվում էին հուզմունքից, նա ամբողջովին լսողություն էր դարձել և տեսնում էր միայն փայտիկը, փոքրիկ ու բարակ փայտիկը այդ գրեթե թզուկ մարդու ձեռքին, և նրա դեմքն էր տեսնում՝ ինչ–որ

ներքին լույսով ողողված, պայծառացած ու երանության մեջ, նրա թաց աչքերն էր տեսնում՝ ուղղված վեր և կիսաբաց շրթունքները, որոնք ինչ–որ երգ էին մրմնջում, թե բառեր…

«Դե, իհարկե, կախարդ է,— մտքում շարունակ կրկնում էր տղան,— դե իհարկե, կախարդ է»:

Նա չզգաց էլ, թե որքան ժամանակ էր կանգնած սրահի թանձր, փոշոտ վարագույրի հետևում և սթափվեց միայն այն ժամանակ, երբ փայտիկն անշարժացավ ու սրահում մարեցին կախարդական նվագի վերջին հնչյունները: Այնժամ նա դուրս վազեց շենքից, մի քանի անգամ մոլորվելով խառնաշփոթ միջանցքներում, և անշարժացավ ետնադռան մոտ: Եկան ու անցան բոլորը, ովքեր սրահում էին, բայց թզուկ կախարդը չկար: Արտակը կրկին ներս մտավ, հասավ վարագույրին ու տեսավ նրան: Մազերն արձակ մարդը ինչ–որ գիրք էր կարդում՝ հետն էլ երեխայի նման շարժելով շրթունքները:

Բայց ֆինչ. պարզվեց, որ նա էլ կախարդ չէր: Մարդը երկար ժամանակ քրքջում էր՝ ցնցելով մորուքը և անընդհատ հարցնում էր.

— Մի՞թե իսկապես ես կախարդի նման եմ: Իսկապե՞ս: Չէ՛, պստի՛կ, իսկապե՞ս…

Ու նորից քրքջում էր:

Եվ այդտեղ էլ Արտակը հարցրեց նրան, թե գուցե նա չգիտի, որ ինքը կախարդ է:

Եվ երաժիշտը հանկարծ տխրեց: Լռեց երկար ու ասաց տղային.

— Չէ՛, պստի՛կ, ես գիտեմ, որ կախարդ չեմ: Բայց ես շատ կուզենայի կախարդ լինել, պստի՛կ…

Այնինչ տղան համոզված էր, որ նա ամենակախարդն է իր տեսած բոլոր կախարդների մեջ:



Սոնա Գասպարյան, 4 տ.

ՄԻ՛ ՏԽՐԵՔ

— Ուրեմն, իսկական կախարդներ երևի ոչ մի տեղ չկան,— ասաց Արտակը հուսահատ:

— Երևի չկան,— համաձայնեց Լևոնը:— Ես էլ շատ եմ փնտրել, բայց ոչ մեկին չեմ հանդիպել: Երևի չկան: Իսկ սա,— ասաց նա՝ ցույց տալով սրինգը,— ինքս եմ կտրել եղեգնուտից ու նվագել սովորել: Կուզե՞ս քեզ էլ սովորեցնեմ: Շատ դժվար չի, նվագում ես, նվագում ես, ու մեկ էլ ստացվում է: Երբեմն էլ, ազնիվ խոսք, ոնց որ կախարդական լինի:

— Դու հրաշալի ես նվագում,— ասաց Արտակը,— էլի կնվագե՞ս ինձ համար:

— Իհարկե, կնվագեմ,— ասաց Լևոնը:— Ես հիմա կնվագեմ տուն գնալու եղանակը ու տես ոնց են մեր գառնուկները հետևելու մեզ:

Նա կրկին շրթունքներին հպեց սրինգը ու առաջ անցավ: Եվ գառնուկները աշխուժով բարձրացան տեղերից: Արտակը քայլում էր և կողքից փոքրիկ հովվին էր նայում հիացած, որի դեմքը նվագից երազկոտ էր դարձել մի տեսակ ու ոգեշնչված, և ինչ–որ չափով ծեր երաժշտին էր հիշեցնում: Նրանց հետևից, մանրիկ կտկտացնելով ու մայելով, քայլում էին փոքրիկ գառնուկները:

«Ինչ անենք, որ կախարդական փայտիկը չեմ գտնում,— մտածեց ինքն իրեն Արտակը:— Աշխարհն առանց այդ էլ շատ գեղեցիկ է»:

Նրանք անցնում էին եկեղեցու մոտով, և Արտակը տեսավ, որ նկարիչը հավաքում է իր կտավներն ու գույները: Եվ նկարիչն էլ նրանց տեսավ:

— Հը՛, ինչպե՞ս ես, փոքրի՛կ,— կանչեց նա հեռվից:— Որևէ նորություն կա՞:

Արտակը սպասեց, մինչև որ անցավ գառների հոտը, ու նկարչին մոտեցավ:

— Երևի իսկական կախարդներ ոչ մի տեղ չկան, և փայտիկ էլ չկա,— ասաց նա՝ ակամա ամաչելով:— Ոչ ոք չի լսել այս մասին: Ում հարցնում են՝ կամ ծիծաղում են, կամ իրենք էլ են փնտրում: Երևի չկան…

Նկարիչը ցած դրեց ձեռքի կտավները, կրկին բացեց իր ծալովի աթոռակը, նստեց ու սկսեց բլուրներին նայել, որ ասես հրդեհվել էին անցնող արեգակի շողերից: Եվ որովհետև նա տխուր էր ու շարունակում էր լռել, Արտակը հանկարծ ուզեց սփոփել նրան…

— Բայց դուք մի՛ տխրեք,— ասաց նա:— Ես էլի կփնտրեմ, լա՛վ…

Նկարիչը ժպտաց:

— Փոքրի՛կ,— ասաց նա,— ես վախենում եմ, որ այս աշխարհում դեռ շատ մարդիկ գտնվեն, որոնք ցանկանան ասել քեզ այն, ինչ դու չես ուզում լսել, ծիծաղեն քեզ վրա և համոզեն զուր տեղը՝ չփնտրել կախարդական փայտիկը: Ուրեմն ավելի լավ է, որ ես քեզ ասեմ ճշմարտությունը: Թեև համոզված չեմ, որ ամենաճիշտը բոլոր դեպքերում ամենալավն է:

Տղան ոչինչ չհասկացավ, բայց տխրեց:

— Նստի՛ր ինձ մոտ,— ասաց նկարիչը,— ես ուզում եմ քեզ մի հեքիաթ պատմել հայ մեծ նկարիչ Թորոսի մասին: Երբ նա էլ քեզ նման մի տղա է եղել:



ՀԵՔԻԱԹ

Մեզանից շատ–շատ դարեր առաջ, երբ հրաշքները դեռ այնքան էլ հազվադեպ չէին աշխարհում, Հայաստանի ծովափնյա փոքրիկ մի գյուղում ապրում էր փոքրիկ մի տղա՝ Թորոսը: Նա դպրոց էր գնում իր հասակակիցների հետ, իսկ դասերից հետո ծովափ էր իջնում ու թռչուններ նկարում ավազների վրա: Ամեն անգամ չար տղաները տրորում, ջնջում էին նրա նկարները, և շատ էր վշտանում Թորոսը: Մի անգամ, երբ նա շրջում էր ծովափին, մի հսկայական ծովային կրիա տեսավ, որին ալիքը ափ էր նետել: Չար տղաները շրջել էին կրիային,

և նա չէր կարողանում ծով վերադառնալ: Կչորանար, կմեռներ կրիան ավազների վրա, եթե փոքրիկ Թորոսը չխղճար նրան: Նա անմիջապես, թեև մեծ դժվարությամբ, բայց շրջեց հսկա կրիային և նրան օգնեց ծովը հասնելու: Իսկ երբ հետ էր դառնում, հանկարծ մի ձայն լսեց:

— Շնորհակալությո՛ւն, Թորո՛ս…

— Ո՞վ է,— զարմացած արձագանքեց Թորոսը՝ ավազների վրա զուր որոնելով ընկերներին:

— Այդ ես եմ, կրիան,— լսվեց ծովի միջից:— Բայց ես սովորական կրիա չեմ, այլ կախարդական և ուզում եմ երախտահատույց լինել քեզ: Ասա՝ ի՞նչ ես ուզում դու, և կկատարվի քո ցանկությունը:

«Երևի չար տղաներից մեկն է խոսում՝ ավազի մեջ թաղված»,— մտածեց Թորոսը և ծիծաղելով՝ թեթևամտորեն պատասխանեց.

— Եթե կախարդ ես, այնպես արա, որ կենդանանան իմ բոլոր նկարները:

— Լա՛վ, տղա՛ս, միայն տե՛ս, չզղջաս հանկարծ,— ասաց կրիան և անհետացավ ծովի խորքերում:

«Ա՛յ քեզ բան,— տարակուսեց Թորոսը:— Այն ո՞վ էր խոսում իսկապես: Երևի թվաց ինձ»: Քիչ հետո, խաղով տարված, նա մոռացավ այդ զրույցը և ավազի վրա մի թռչուն նկարեց, հետո սկսեց առյուծ նկարել: Բայց հանկարծ կողքին թպրտոց լսեց և շրջվելով տեսավ, որ իր նկարած թռչունը կենդանացել է: Թորոսը թռչունի մի ոտքը կարճ էր նկարել, իսկ մյուսը՝ երկար և մոռացել էր նկարել թևերից մեկը: Խեղճ թռչունը այս ու այն կողմ

էր նետվում ավազի վրա՝ անկարող թռչելու: Դա շատ զվարճալի էր:

— Իսկապե՛ս, կենդանանո՛ւմ են իմ նկարները,— հրճվեց Թորոսը և առյուծը կիսատ թողնելով, արագ-արագ սկսեց ավազի վրա զանազան թռչուններ ու կենդանիներ նկարել:

Իսկ երբ ուշքի եկավ, սարսափեց իր արածից: Ծովափը լի էր այլանդակ ու հրեշավոր կենդանիներով: Առյուծի հետևի ոտքերը չկային, և նա մռնչալով սողում էր ավազի վրա, ձիու գլխով շունը խրխնջում էր, ողորմելի սիրամարգի պոչով կատուն ուզում էր մլավել, բայց Թորոսը մոռացել էր նկարել նրա բերանը: Ավազների վրա քարշ էին գալիս ծուռ, այլանդակ ձևերով, միոտանի ու կույր բազմաթիվ կենդանիներ ու թռչուններ: Եվ ողջ այդ ահռելի գազանանոցը հարձակվում էր Թորոսի վրա:

— Դե կերակրի մեզ, թե չէ կուտենք քեզ,— ճչում էին նրանք:

Սարսափած Թորոսը իրեն մի կերպ ջուրը նետեց.

— Փրկիր ինձ, օ՛, իմաստո՛ւն կրիա,— կանչեց նա աղիողորմ:— Այս այլանդակ գազանները ուզում են հոշոտել ինձ:

Լսեց նրա աղերսը ծեր ու իմաստուն կրիան և հայտնվեց ջրերի վրա…

— Բայց չէ՞ որ դու էիր ուզում, որ կենդանանան քո բոլոր նկարները,— ասաց նա:

— Սխալվել եմ,— հեկեկաց Թորոսը,— ես կարծում էի՝ նկարել գիտեմ…

— Լա՛վ,— ասաց կրիան,— այսուհետև կկենդանանան քո միայն այն նկարները, որոնք ամենակատարյալը կլինեն,— և նորից անհետացավ ծովի խորքերում:

Հետ դարձավ Թորոսը և ուրախությամբ տեսավ, որ ավազների վրա այլևս ոչ մի հրեշ չկա: Նա թեթևացած շունչ քաշեց և շատ զգուշությամբ ու խնամքով մի աղավնի նկարեց: Սպասեց, սպասեց, բայց չկենդանացավ աղավնին: Նա նկարեց ու նկարեց նորից, գեղեցիկ ու իսկականին նման շատ կենդանիներ ու թռչուններ նկարեց, բայց չկենդանացավ նրանցից և ոչ մեկը:

Եվ հասկացավ Թորոսը, որ ինքը դեռ լավ չի նկարում, որ իրեն սովորել է պետք: Նա շատ սովորեց իր ուսուցիչներից, շատ գրքեր կարդաց և շատ պատկերասրահներում եղավ: Նա շատ օրեր ու գիշերներ անցկացրեց նկարակալի մոտ, նկարեց ու նկարեց համառ, հավատով ու ոգևորությամբ, բայց նրա նկարները չէին կենդանանում: Գալիս էին մարդիկ, հիանում էին նրա նկարներով, փառաբանում էին նրան և ասում, թե աշխարհում նրանից մեծ նկարիչ չկա: Բայց Թորոսը գիտեր, որ այդպես չէ: Նա գիտեր, որ ինքը դեռ չի հասել կատարյալին, որովհետև չեն կենդանանում իր նկարները:

Տարիներ անցան, մեծացավ Թորոս Ծաղկողը, ճերմակեցին մազերը, բայց նա չհուսահատվեց, անընդհատ սովորում էր ու աշխատում էր: Նա շրջեց աշխարհից աշխարհ, սովորեց աշխարհի մեծ նկարիչներից, վերադարձավ ու շարունակեց աշխատել այնպիսի հավատով ու ոգևորությամբ, որ բոլորը զարմանում էին:

Եվ մի օր, երբ նա աղավնի նկարեց, որն ավելի կատարյալ ու գեղեցիկ էր, քան ամենագեղեցիկ իսկական աղավնին, հանկարծ նրա նկարի աղավնին թևեր առավ, թռավ ու սկսեց ճախրել օդում:

Երջանկացավ Թորոս Ծաղկողը: Չէ՞ որ կատարվել էր նրա երազը: Նա սկսեց ուրիշ թռչուններ ու կենդանիներ էլ նկարել, բայց դրանցից բոլորը չէ, որ կենդանանում էին: Ոգի էին առնում միայն նրանք, որոնք ավելի կատարյալ ու գեղեցիկ էին, քան իրենց բնօրինակները:

Իսկ երբ կատարելապես տիրապետել էր նկարչության արվեստին, Թորոսը նոր միայն համարձակվեց մարդիկ նկարել: Նա յոթ փոքրիկ, սիրունիկ երեխաներ նկարեց: Նրանք կենդանացան և դարձան նրա զավակները: Եվ երկար տարիներ երջանիկ ապրեց մեծ նկարիչ Թորոս Ծաղկողը:

Վաղուց չկար նկարիչը, բայց երբ որևէ չքնաղ երեխաներ էին տեսնում, մարդիկ ասում էին.

— Տե՛ս, տե՛ս, ոնց որ Թորոսի նկարներից իջած լինեն:

Ու նրանից հետո աշխարհում դեռ ոչ մի նկարչի չի հաջողվել այնպես անել, որ կենդանանան իր նկարները: Երևի ոչ ոք չի կարողանում հասնել ամենակատարյալին ու ամենագեղեցիկին: Երևի ոչ ոք չի կարողանում այնպես նվիրված ու անձնազոհ աշխատել, ինչպես աշխատում էր Թորոս Ծաղկողը:


Բայց մարդիկ չեն հուսահատվում: Մարդիկ ձգտում են, մարդիկ սովորում են, սովորում ու աշխատում են…

* * *

Նկարիչը լռեց ու նայեց տղային:

— Հասկացա՞ր, փոքրի՛կ,— հարցրեց նա քնքշությամբ:

— Երևի հասկացա,— ասաց Արտակը:





Հայկ Քալանթարյան, 6 տ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉՈ՞Ւ 3
ԱՐՍԵՆ 4
ԱՐՏԱ՛Կ, ԿԱՏԱ՛Կ ԱՐԱ 5
Իմ մայրիկը 6
Իմ հայրիկը 8
Իմ տունը 11
Իմ տատիկը 13
Ալիսան 15
Ալիկը 17
Մարինեն 19
ԱԼԻԿ ԲԱԼԻԿԸ 23
Փոքրիկների համար երկու դեպք 23
Հայհոյել չի՛ կարելի 24
Մեկ օրում մեծացավ 26
Ինչո՞ւ 27
Խաղը 28
Թող անկյուն կանգնեցնի 30
Նա թթու է սիրում 31
Արդյոք նման են 33
Հազարին գումարած հազար 33
Դա Շողիկն էր 35
Արեգակը 37
Երազը 38
Ինչպես է սովորել 38
Ալիկը սովորել է ռուսերեն 40
Ձկների արցունքը 42
Կարապները 44

Այդքան էլ շատախոս 45
Գրական նախանձ 48
ՃԱՆԱՊԱՐՀԻՆ 51
ԵՐԿՈՒ ՀԱՂԹԱՆԱԿ 64
Ա՛Յ ԹԵ ԻՆՉՊԵՍ ԲՈՒԺՎԵՑ 77
ՎԱՐԴԳԵՍՆ ԻՄ ԸՆԿԵՐՆ Է 86
ԿՏՐԻՉԸ 93
ՎԱՉԵՆ 102
ԴՈՒ ԿՏԵՍՆԵՍ ԳՈՒՆԱՎՈՐ ԵՐԱԶՆԵՐ 111
Ա՛Խ, ՏԱՏԻ՛Կ,ՏԱՏԻ՛Կ... 119
ԷԼ ԻՆՉՈ՞Ւ ՄԱՅՐՍ ԿԱՐՈՒՄ ԷՐ ՈՂՋ ԳԻՇԵՐ 129
ԴՐԱ ԿԱՐՈՂԸ ՍԱՂ Ա՞ 136
ԱԼԵՔՍԻՆ 141
ԷԼԻ՝ ՁԻԱՎՈՐԸ ԴՈՒ ԵՍ... 150
ԼՐՏԵՍԸ 153
ՄԵԿ ՕՐ ԵՐԿՐԻ ՇՈՒՐՋԸ 164
Դեպի արևելք 164
«Նավը ընկղմվում է, ցտեսությո՛ւն» 167
Եվս մի ապացույց, որ այստեղ ծով է եղել 172
«Օհայո, կիո, կիո» 175
...Բայց քչերն են հետ գալիս 177
ՍԵՐՈԲԻ ԵՎ ՔԵՐՈԲԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ 181
ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ՓԱՅՏԻԿԸ 242
Թաթոս պապիկն ու ոստիկները 242
Խաչմերուկում 248
Տարօրինակ երազը 251
Նկարիչը 253
Փոքրիկ հովիվն ու սրինգը 261
Եվ նա հանկարծ հիշեց... 265
Մի՛ տխրեք 269
Հեքիաթ 271

ԱՐՏԱՀԵՍ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Գունավոր երակներ



Հրատարակչության տնօրեն՝ Է. Մկրտչյան
Գեղարվեստական խմբագիր՝ Ա. Բաղդասարյան
Սրբագրիչ՝ Ս. Մելքումյան
Համակարգչային ձևավորումը՝ Ա. Ավագիմյանցի

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84 1/16:
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 17.5 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 500 օրինակ:

«ԶԱՆԳԱԿ–97» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2
Հեռ.՝ (+37410) 23-25-28, ֆաքս՝ (+37410) 23-25-95
էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայք՝ www.zangak.am